ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՅՈԲԱՅ

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի տպագրությունը հովանավորելու համար:

Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts and
“Friends of the Matenadaran” Benevolent Fund
express their gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this book.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

GRIGOR TATEVATSI

COMMENTARY ON THE BOOK OF JOB

Edition of the Armenian text, Introduction and Notes
by Elya Saribekyan

Yerevan 2023

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ГРИГОР ТАТЕВАЦИ

ТОЛКОВАНИЕ НА КНИГУ ИОВА

Подготовка текста, введение и комментарии
Эли Сарибекян

Ереван 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ
ԼՈՒԾՄՈՒՆՔ ՅՈԲԱՅ

Աշխատասիրությամբ **Էլյա Սարիբեկյանի**

Երևան 2023

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Գ 885

Հրատարակվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Էռնա Մանեա Շիրինյան

Գ 885 Գրիգոր Տաթեւացի / Լուծմունք Յոբայ: Աշխատասիրությամբ Էլյա Սարիբեկյանի.-Եր.: Մատենադարան, 2023.- 296 էջ:

Գիրքը բովանդակում է հայ միջնադարյան եռամեծար եւ յոթնալույս վարդապետ Սբ Գրիգոր Տաթևացու՝ Հոբի գրքի լուծմունքի բնագիրը, որը հրատարակվում է ըստ ՄՄ թիվ 1115 ինքնագիր օրինակի: Բնագրին կից ուսումնասիրությունը համակողմանի ներկայացնում է Հոբի գրքի առանցքային խնդիրները, լուծմունքի հիմնական առանձնահատկությունները:

Գիրքը նախատեսված է աստվածաբանների, միջնադարագետների և առհասարակ աստվածաշնչյան մեկնություններով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-897-28-8
DOI:10.57155/XPIC1086
© Է. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ, 2023
© ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, 2023

ՆԱԽԱԲԱՆ

Հայոց դպրության ստեղծման, զարգացման պատմության ընթացքում նշանակալի եւ առանցքային դեր են ունեցել միջնադարյան վարդապետարաններն ու համալսարանները, որոնց շարքում առանձնանում է Սյունյաց դպրոցը: Սյունյաց մետրոպոլիտությունը, սկսած դեռ վաղ միջնադարից, կարեւորագույն դեր է խաղացել թե՛ հայ ինքնուրույն եւ թարգմանական դպրոցների ձեւավորման եւ զարգացման գործընթացում, թե՛ Եկեղեցու ներքին կյանքում[1]: «Երկոտասան գաւազանին»[2] գլուխ կանգնած Սյունյաց դպրոցը լծված էր թարգմանություններ կատարելու եւ աստվածաշնչյան մեկնություններ շարադրելու գործին: Սյունյաց դպրոցի ներկայացուցիչներից շատերն ունեն «անհաղթ», «քերթող» պատվանունները: Վաղ միջնադարում Սյունյաց Ծղուկ գավառի Շաղատ գյուղաքաղաքում հիմնված բարձր կարգի դպրոցն արդեն Ժ դարում փոխադրվում է Տաթեւի վանք եւ ձեռք բերում բարձրագույն դպրոց-համալսարանի համբավ: Հայտնի ներկայացուցիչներ են Անանիա Սյունեցին, Պետրոս Սյունեցին, Վրթանես

---

[1] Սյունյաց դպրոցի ստեղծման եւ հետագա զարգացման պատմությունն առավել մանրամասն տե՛ս **Մովսիսյան Ա. Խ.**, *Ուրվագծեր հայ դպրոցի եւ մանկավարժության պատմության (X-XV դարեր)*, Երեւան, 1958, էջ 79-161. **Խաչերեան Լ.**, *Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները միջնադարեան Հայաստանում եւ Կիլիկիայում (V-XVI դդ.)*, Լիզպոն, 1998, էջ 148-184. **Մաթեւոսյան Ա.**, *Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր*, Երեւան, 1998. **Մաթեւոսյան Ա.**, *Հայոց միջնադարյան համալսարանը*, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 1, Երեւան, 1984, էջ 62-71. **Զաքարյան Ս.**, *Հայ իմաստասերներ, մատենաշար 3, Գրիգոր Տաթեւացի*, Երեւան, 1998. **Զաքարյան Ս.**, *Միջնադարյան Հայոց համալսարանը*, «Հայագիտության հարցեր» հանդես, 3 (18), Երեւան, 2019, էջ 3-11:

[2] *Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց*, աշխ.՝ Կ. վրդ. Շահնազարեանցի, Թիֆլիս, 1910, էջ 309 (այսուհետ՝ **Ստեփաննոս Օրբէլեան**):

Քերթողը, Մաթուսաղան[3]*, Մաթուսաղայի աշակերտ Թեոդորոսը, Մովսես Քերթող Սյունեցին, նրա աշակերտ Ստեփանոս Սյունեցին, Ստեփանոսի քույր Սահակդուխտ Սյունեցին եւ այլք:*

Սյունյաց դպրոցը եւ Սբ Գրիգոր Տաթեւացին: *Սյունյաց նահանգի կենտրոն Տաթեւը, «ջահաւորեալ իբրեւ զարեգակն ի մէջ աստեղաց, երեւելի էր ի մէջ ամենայնի»*[4]*: Այն եղել է միջնադարի հոգեւոր-մշակութային ամենախոշոր կենտրոններից. «....զմեծ նախագահ տունն Սիւնեաց զՏաթեւ զանազան զարդուք եւ մեծամեծ սպասուք եւ գեղեցիկ կարգօք աստուածայնօք, եւ ելից բազմութեամբ կրօնաւորօք, անյաղթ փիլիսոփայիւք եւ աննման երաժշտօք եւ բանիբուն վարդապետօք եւ աստուածազգեաց ճգնաւորօք, նաեւ յոգնապատիկ արհեստաւորօք»*[5]*: Տաթեւի դպրոցի առաջնորդ վարդապետ Հովհան Որոտնեցու հոգեւոր զավակն ու լավագույն աշակերտներից էր Գրիգոր Տաթեւացին, ով «յառաջադէմ յամենայն ուսմունս»*[6]*, «անդադար յընթերցումն եւ ի գրել աստուածային իմաստից, եւ անձանձիր ի յաղօթս, եւ անպարապ ի ծնրադրութիւնս, /6ա/ աղքատասէր եւ օտարասէր, առատ ի տուրս աղքատաց»*[7]*, «ապշեցոյց զամենեսին առաւել, քան զիմաստունս Հելլենացւոց»*[8]*, «անյաղթ փիլիսոփա»*[9]*, «անզուգական եւ գերիմաստ վարդապետն մեր, որ եւ իսկ իբրեւ աղբիւր*

---

[3] **Ստեփաննոս Օրբէլեան**, էջ 112-113:

[4] Նույն տեղում, էջ 226:

[5] Նույն տեղում, էջ 312: ՍՄ 7823, թ. 23ա-28բ. «Ցաղագս արեւելեան վարդապետաց ի թուականիս մերոյ ՊԼԴ (1385 թ.) էր, յորժամ երեւեցան այն լուսաւոր վարդապետք ի Սիւնեաց վիճակի, փայլեցան որպէս արեգակունքն»:

[6] ՍՄ 6607, թ. 5բ:

[7] ՍՄ 6607, թ. 5բ-6ա:

[8] *Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ*, Փարիզ, 1860, էջ 51 (այսուհետ՝ **Թովմա Մեծոփեցի**): Նկատենք, որ Տաթեւի վանքը Ստեփանոս Օրբելյան պատմիչը բնորոշում է որպես «էր երբեմն երկրորդ Աթենք ի մէջ Հայոց», թերեւս այս է պատճառը, որ Սբ Գրիգոր Տաթեւացին (եւ ոչ միայն) համեմատվում է հույն իմաստասերների հետ. տե՛ս **Ստեփաննոս Օրբէլեան**, էջ 533:

[9] ՍՄ 1198, թ. 3ա. ՍՄ 1114, թ. 122ա:

յորդահոս ի բերանոյ նորա բղխէր զբանս լուսաւորս եւ լուսաւորէր զմանկունսն սրբոյ եկեղեցւոյս մերոյ լուսաւորչական»[10]*:*

Տաթեւի համալսարանի կյանքում Հովհան Որոտնեցու ներդրած կրթական նորույթների[11] *շարքն ամրապնդվում եւ է՛լ առավել է զարգանում Գրիգոր Տաթեւացու առաջնորդության տարիներին: Տաթեւացին Որոտնեցու մահից հետո ցանկանում էր վերադառնալ եւ մնալ Որոտնավանքում. «....զի զտեղի հոգեւոր ծնողին բարւոք համարէր, քան զեդէմական դրախտն»*[12]*: Սակայն կյանքը նրա համար այլ բան էր նախապատրաստել. Տաթեւի վանքում արդեն իսկ հիմնել էր «....զերիս ուսումնարանս, ի միումն ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութեանս, ի քաղցրալուր ձայնի եղանակաւ, մինչեւ անգամ յամենայն յերկրէ եւ ի քաղաքաց եկեալ պարապէին առ ոտս նորա: Եւ ի միումն նկարագրութեան պատկերահանութեան եւ զանազան նկարչութեանս: Եւ ի միւսումն զներքին եւ զարտաքին գրեանս, ի մասնաւորի զՀին եւ զՆոր Կտակարանս ներքին եւ արտաքին մեկնութեամբ եւ թար[գ]մանութեամբ, որպէս թէ եւ իսկ յորդաբուղխ աղբիւր ելանէր ի բերանոյ նորա բանս ախորժականս եւ քաղցրալուրս ոռոգէր /26ա/ զերաշտացեալ անդս հոգւոց կարօտելոց»*[13]*: Որպես ապացույց ունենալով Գրիգոր Տաթեւացու երկերը, որոնք նա դասդասել է ուսումնասիրվող նյութն աշակերտներին առավել հասու դարձնելու համար*[14]*, կարող ենք ասել, որ նույն սկզբունքը նա կիրառում է նաեւ համալսարանական կյանքից*

---

[10] ՄՄ 7823, թ. 23բ:

[11] Այս մասին տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր*, Կ. Պոլիս, 1741, էջ 6. **Մովսիսյան Ա. Խ.**, նշվ. աշխ., էջ 112-125. **Аревшатян С., Матевосян А.**, *Гладзорский университет – центр просвещения средневековой Армении*, Ереван, 1984, с. 29-44.

[12] ՄՄ 7823, թ. 25բ:

[13] ՄՄ 7823, թ. 25բ-26ա:

[14] Տե՛ս *Նստարք Հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ծեռամբ Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեան Տոսբեցւոյ Վարագայ վանուց վանականի*, Կ. Պոլիս, 1888, էջ 27. «....եւ ի չորս հատոր բաժանեցի, վասն դիւրութեան ընթերցողաց»:

ներս՝ զատորոշելով մասնագիտական-կրթական երեք տիրույթներ: Տարբեր ժամանակներում Սբ Գրիգոր Տաթեւացին ունեցել է 60-ից 200 աշակերտ, որոնց մասին վկայություններ կան թե՛ ձեռագիր հիշատակարաններում[15]*, թե՛ Թովմա Մեծոփեցի պատմիչի երկում*[16]*: Սրանք պարունակում են նաեւ տեղեկություններ, որոնց շնորհիվ կարելի է ճշտել Գրիգոր Տաթեւացու մահվան ստույգ թվականը: Մինչ այսօր Գրիգոր Տաթեւացու մահվան թվականը համարվել է կա՛մ 1409-ը, կա՛մ 1410 թվականը*[17]*: ՄՄ 1115 ձեռագրի հիշատակարանը մեզ հայտնում է, որ Սբ Գրիգոր Տաթեւացին «....ի թուականութեանս Հայոց ՊԾԷ*[18] *(857) ամի եկեալ մեր յերկիրս Քաջբերունի եւ ձմերեալ ի հրեշտակաբնակ վանքս Մեծոփոյ»*[19]*: ՄՄ 6607 ձեռագրում պահպանվում է Սբ Գրիգոր Տաթեւացու աշակերտ Մատթեոս Ջուղայեցու*[20]*՝ իր ուսուցչին*

---

[15] ՄՄ 3881, թ. 12ա-17բ:

[16] **Թովմա Մեծոփեցի**, էջ 51-52. *Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը*, հրատ. իւր առաջաբանով՝ Կ. Կոստանեանց, Թիֆլիզ, 1892, էջ 51-54:

[17] Ա. Մաթեւոսյանը նշում է 1409 թ. (տե՛ս **Մաթեւոսյան Ա.**, *Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ-ԺԵ դդ.)*, Ս. Էջմիածին, 1997, էջ 60-61), Ա. Ալպոյաճյանն անգամ հասցնում է 1411 թ. (տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, *Պատմութիւն հայ դպրոցի*, հտ. Ա, Գահիրէ, 1946, էջ 324), Ս. Գրիգորյանը՝ 1410 թ. (տե՛ս **Գրիգորյան Ս. Մ.**, *Պատմական քերականության հարցեր, Գրիգոր Տաթեւացի (14-15-րդ դդ.)*, Երեւան, 2002, էջ 18):

[18] Հայոց մեծ թվականով 857 թվականը համարժեք է 1407 թվականի դեկտեմբերի 10-ից 1408 թվականի դեկտեմբեր 9-ն ընկած ժամանակահատվածին. տե՛ս **Բաղալյան Հ.**, *Օրացույցի պատմություն*, Երեւան, 1970, էջ 384. Հավելված I, Համեմատական աղյուսակ հայոց ամիսների (ըստ հայոց Մեծ թվականի) առաջին օրվա հուլյան ամիսների հետ:

[19] ՄՄ 1115, թ. 123բ: Մեծոփավանքում գտնվելու մասին տե՛ս նաեւ ՄՄ 7823, թ. 26ա:

[20] Լեւոն Խաչիկյանն այն վերագրում է Մատթեոս Ջուղայեցուն. «հավանաբար Մատթեոս Ջուղայեցու կողմից գրված «Գրիգոր Տաթեւացու համառոտ կենսագրությունը». *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, կազմ.՝ Լ. Մ. Խաչիկյան, Երեւան, 1955, էջ 103-104: **Կարապիսյան Գ. վրդ.**, *Գրիգոր Տաթեւացի*, «Էջմիածին», ԺԲ, 1959, էջ 13-14. **Սուրբ Գրիգոր Տաթեւացի**, *Մեկնութիւն Յոհաննու աւետարանին*, աշխատ.՝ Ղ. աբդ. Զաքարյանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 7:

նվիրված դամբանականը, որտեղ նա գրում է. «Հանգեաւ երանելի մահուամբ ի վանքն Տաթեւոյ ի դեկտեմբերի ԻԷ (27), եւ թաղեցաւ ի տօնի մեծ առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, եւ եղեւ դասակից եւ պատուակից նոցին ի թվին ՊԾԸ (858)»[21]*: Մատթեոս Ջուղայեցու հաղորդած տեղեկության եւ Հոբի լուծմունքի գրման թվականների զուգադրումն ավելի է հստակեցնում Սբ Գրիգոր Տաթեւացու մահվան տարեթիվը: Հայոց մեծ թվականով ՊԾԸ (858) թվականը համարժեք է ներկա թվականով 1408 թվականի դեկտեմբերի 9-ից մինչեւ 1409 թվականի դեկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածին, այսինքն՝ Հայոց 858 թվականի Նավասարդի 1-ը համընկել է ներկա 1408 թվականի դեկտեմբերի 9-ին: Ուստի մահվան տարվա դեկտեմբերի 27-ը չի կարող լինել 1409 թվականը, քանի որ 1409 թվականի դեկտեմբերի 27-ն արդեն համապատասխանում է հայոց ՊԾԹ (859) թվականին: Ուրեմն, Սբ Գրիգոր Տաթեւացու մահվան թվականը՝ ՊԾԸ (858) թվի դեկտեմբերի 27-ը, ներկա թվականով համարժեք է 1408 թվականին: Այսու հստակ է՝ Գրիգոր Տաթեւացին մահացել է 1408 թվականի դեկտեմբերի 27-ին*[22]*, ինչը փաստվում է նաեւ Հ. Բադալյանի կազմած աղյուսակով*[23]*:*

Հոբի գիրքը: *Հայ եկեղեցական մատենագրության անքակտելի մասն է բազմաբովանդակ մեկնողական գրականությունը,*

---

[21] ՄՄ 6607, թ. 6ա:

[22] Այս տոմարական հաշվարկը քննարկել ենք պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր երջանկահիշատակ Ռաֆիկ Վարդանյանի հետ, ով հաստատել է սույն հաշվարկի ճշգրտությունը:

[23] Տե՛ս **Բադալյան Հ.**, նշվ. աշխ., էջ 384. Հավելված I, Համեմատական աղյուսակ հայոց ամիսների (ըստ հայոց Մեծ թվականի) առաջին օրվա հուլյան ամիսների հետ: Գեւորգ վրդ. Կարպիսյանը մահվան տարեթիվ է համարում 1409 թվականը՝ հաշվի չառնելով Հայոց տոմարի շարժականությունը. **Կարպիսյան Գ. վրդ.**, *Գրիգոր Տաթեւացի. կյանքն ու գործունեությունը*, «Էջմիածին», Գ, 1959, էջ 31 (հոդվածի էջերը՝ 25-32, հոդվածի շարունակությունը տե՛ս **Կարպիսյան Գ. վրդ.**, *Գրիգոր Տաթեւացի. երկերը*, «Էջմիածին», Դ, 1959, էջ 19-25):

որի հիմքում մեծավ մասամբ ընկած են Աստվածաշունչ մատյանի թաքնախորհուրդ էջերը: Մատենագրական այս գանձարանում իր պատվավոր տեղն ունի Սբ Գրիգոր Տաթեւացին, որի հսկայածավալ ժառանգության մեջ առանձնանում են աստվածաշնչյան գրքերի մեկնություններն ու լուծմունքները[24]*, որոնցից մեկն էլ Հոբի գրքինն է: Թե՛ արեւելյան եւ թե՛ արեւմտյան եկեղեցական հայրերն այս գրքին նվիրված աշխատություններ ունեն եւ փորձել են այն մեկնել կա՛մ ամբողջությամբ, կա՛մ մասնակի*[25]*: Ընդհանրական եկեղեցու կողմից ընդունված Աստվածաշնչի կանոնում մշտամնա է Հոբի գիրքը*[26]*: Հայ եկեղեցու ծիսամատյանների պատմական զարգացման տարբեր փուլերում Ճաշու ընթերցանության*[27] *նյութերում Հոբի գրքի հատվածները հաստատուն տեղ են ունեցել, դրանք կարդացվել են Մեծ Պահքի քառասնօրյա շրջանում՝ յուրաքանչյուր ուրբաթ օր: Հոբի գրքի «Ո՞վ է դա»-ի*

---

[24] Նրա թողած ժառանգության մասին տե՛ս **Կարպիսյան Գ. վրդ.**, *Գրիգոր Տաթեւացի. կյանքն ու գործունեությունը*, «Էջմիածին», Գ, 1959, էջ 25-59. **Գրիգորյան Ս. Մ.**, *Պատմական քերականության հարցեր*, էջ 20-23:

[25] Տե՛ս *Ancient Christian Commentary on Scripture. Old Testament*, VI. Job. Ed. By Manlio Simonetti and Marco Conti, gen. ed. Thomas C. Oden, USA, 2006.

[26] Աստվածաշնչի կանոնի մասին բազմաթիվ են ուսումնասիրությունները, նշենք մի քանիսը. **Ծահէ արք. Աճէմեան**, *Հայերէն Աստուածաշունչը (հայագիտական ուսումնասիրութիւններ)*, Երեւան, 2006, էջ 169-183. **Теръ-Мовсесянъ М.,** *Исторія перевода Библіи*, С.-Петербургъ, 1902, стр. 224-266. **Ծիրինյան Ս.**, *Սուրբգրային վկայակոչումները վաղ շրջանի հայկական որոշ երկերում եւ հունաբան թարգմանություններում*, «Էջմիածին», Զ, 2010, էջ 45-52. **Stone M.**, *Armenian Canon Lists I: The Council of Partaw (768 C.E.)*, The Harvard Theological Review, vol. 66, N 4 (Oct., 1973), pp. 479-486. **Stone M.**, *Armenian Canon Lists II - The stichometry of Anania of Shirak (c. 615 - c. 690 C.E.)*, The Harvard Theological Review, 1975, vol. 68, pp. 253-260. **Stone M.**, *Armenian Canon Lists III – The Lists of Mechitar of Ayrivank (c. 1285 C.E.)*, The Harvard Theological Review, 1976, vol. 69, pp. 289-300. **Stone M.**, *Armenian Canon Lists: 4 – The List of Gregory of Tat'ew (14th century)*, The Harvard Theological Review, 1979, vol. 72, pp. 237-244.

[27] Ճաշոցի մասին տե՛ս **Ռընու Ծ.**, *«Ճաշոց» գրքի ծագումն ու զարգացումը*, «Պատմա-բանասիրական հանդես», թ. 2, 1987, էջ 28-45:

հատվածը (Հոբ ԼԸ 1-ԼԹ 36) ընթերցվում է Միջինքին նախորդող երեքշաբթի օրը (ԻԳ օր), իսկ «Հեթում Բ. արքայի Ճաշոց»-ում այն տեղադրված է Հարության շաբաթ օրվա ճրագալույցի ընթերցանության նյութերում[28]*: «Ո՞վ է դա»-ի ԼԸ 4-7 համարները տեղ են գտել Գաբրիել եւ Միքայել հրեշտակապետների եւ երկնային զորքերի հիշատակության օրվա (շարժական) ճաշու ընթերցանության նյութերում: Հոբ Երանելու հիշատակության օրը կարդացվում է Հոբ ԽԲ 12-16 հատվածը:*

Այլ է խնդիրը, թե երբ է Հոբ Արդարի հիշատակության օրը մտել հայոց տոնացուցային համակարգ: Տոնացույց-Հայսմավուրքներում[29] *տոների ամսաթվերը դրված են ոչ միայն հայոց, այլեւ հուլյան տոմարի ամսաշարքերով: Բացառություն չէ Հոբի հիշատակության օրը, որի դեպքում եւս հայոց ամսաթվի կողքին նշվել է նաեւ հուլյանը*[30]*: «Տօնացոյց ըստ շաբաթուց»-ների*[31] *մեջ*

---

[28] *Հեթում Բ. արքայի Ճաշոցը*, հրատ. պատր.՝ Լ. Ալեքսանեան, Դ. Ղազարեան, Ս. Էջմիածին, 2019, էջ 211-212: Իսկ Հոբ Արդարի հիշատակի օրը դրված է Սայիս ամսին՝ «ԾԶ. Նորին Զ. Վերափոխումն Յովբայ արդարոյ եւ վկայութիւն սրբոյն Ակակիոսի Բիւզանդացւոյ» վերտառության ներքո: Թերեւս ազդվելով լատինական տոնացուցային դասավորումից՝ որոշ Հայսմավուրքներում Հոբի հիշատակության օրը դրված է Սայիս Զ-ին. տե՛ս ՍՍ 1511, թ. 475ա-477ա. Տաւն է Յոբայ Արդարոյ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Ե, կազմ.՝ Օ. Եգանեան, Երեւան, 2009, էջ 128: ՍՍ 1339, թ. 233ա-234բ. Յիշատակ Յոբա Արդարոյ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, կազմ.՝ հտ. Դ, Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, Երեւան, 2008, էջ 1002-1003:

[29] Ռ. Վարդանյանն այդպես է անվանում Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած «Հռոմ տաւնացոյցք»-ից մեկը, որը հետագայում հայերն անվանել են Յայսմաւուրք: Հովսեփ Կոստանդնուպոլսեցին տարեսկիզբ է ընտրել բյուզանդական տոնացուցային սկիզբը՝ սեպտեմբերի 1-ը. տե՛ս **Վարդանյան Ռ.**, *Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր)*, Երեւան, 1999, էջ 283:

[30] Տե՛ս **Վարդանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 585:

[31] Հովհաննես Իմաստասեր կաթողիկոսի կազմած «Կանոնք ընթերցուածոց»-ի նոր եւ համառոտ տարբերակն է, տե՛ս **Վարդանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 198:

Հոբ Արդարի հիշատակության օրը նշվել է Աստվածածնի Վերափոխման տոնի երրորդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը[32]: ԺԴ դարի եւ հետագա դարերի Ճաշոցներում Աստվածածնի Վերափոխման երրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի[33], երբեմն էլ շաբաթ օրը[34], Հովհաննես Մկրտչի եւ Հոբ Արդարի տոնը դրված է միասին: Օրերի դասավորվածությունը պայմանավորված է տոնական օրվա առաջնահերթությամբ, այսինքն՝ տվյալ դեպքում կարեւոր է ոչ թե շաբաթվա որ օրն է դրված տոնը, հատկապես երբ երկու օրերն էլ Աստվածածնի Վերափոխման երրորդ կիրակիին հաջորդող շաբաթվա մեջ են, այլ՝ որ երկու սրբերի հիշատակության օրերը տոնվել են միասին: Այն հանգամանքը, որ նշված դարերում Հովհաննես Մկրտչի եւ Հոբ Արդարի տոներն արդեն միասին են եղել, փաստում են նաեւ Գանձարանները[35]: ԺԸ դարից սկսած Սիմեոն Երեւանցու տոնացուցային փոփոխությունների շարքում եւս Հովհաննես Մկրտչի

---

[32] Առավել մանրամասն տե՛ս **Վարդանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 576-577:

[33] ՄՄ 4522, թ. 351ա-352ա. Հինգշաբթի. Յովհանու Կարապետին եւ Յոբայ Արդարոյն (Աղեթ, 1421 թ.). ՄՄ 4746, թ. 375ա-376բ. Հինգշաբթի. Յովաննու Կարապետին եւ Յոբայ Արդարոյն (Արճեշ, 1458 թ.):

[34] ՄՄ 4687, թ. 486ա-487բ. Շաբաթ աւր. Հոկտեմբեր ԻԹ. Յովհաննու Մկրտչին եւ Յոբայ Արդարոյն (Աղթամար, 1312 թ.). ՄՄ 7402, թ. 418բ-420ա. Շաբաթ. Յովհաննու Մկրտչին եւ Յովբայ Արդարոյ (1384 թ.). ՄՄ 7408, թ. 422բ-424ա. Շաբաթ. Յովհաննու Մկրտչի եւ Յոբայ (Ղրիմ, 1356 թ.):

[35] Տե՛ս ՄՄ 428, թ. 244ա-255ա (Վան, 1489 թ.). «Գանձ Յովաննու եւ Յոբայ արդարոյ» («Մկրտիչ»). ՄՄ 429, թ. 372ա-374ա (ԺՁ դ.). «Յովանու եւ Յոբայ ասայ» («Մկ[ր]տիչ»). ՄՄ 425, թ. 326ա-327բ (Արծկէ, 1466 թ.). «Յովաննու եւ Յոբայ Արդարոյն («Մկրտիչ»)». ՄՄ 5402, թ. 364ա-367ա (Խազան, 1497 թ.). «Յովաննու եւ Յոբայ». ՄՄ 2649, թ. 363բ-366բ (ԺԷ դ.). «ՃԼԲ. Գանձ Յովհաննու Կարապետի եւ յիշատակ Յոբայ»: Գանձարաններում այս գանձին հաջորդում է Նիկեո հայրապետներին նվիրված գանձը: Դատելով ԺՁ-ԺԷ դարերի Գանձարաններից՝ կարող ենք ասել, որ արդեն իսկ այս դարերում խնդրո առարկա տոները ամրագրված օր են ունեցել:

եւ Հոբ Արդարի տոները սահմանվեցին միասին[36]՝ *Վերափոխման երրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը*[37]*:*

Դժվար է ասել, թե ինչու են Հովհաննես Մկրտչի («Գլխատման», երբեմն նաեւ «Գլխի գյուտի» տոնը) եւ Հոբ Արդարի հիշատակության օրերը միասին դրվում տոնացուցային համակարգում. գուցե այն պատճառով, որ աստվածաշնչյան այս երկու կերպարներն էլ ե՛ւ տեսան Աստծուն, ե՛ւ լսեցին նրա ձայնը: Հոբի գրքի վերջին գլխում Երանելին ի՛նքն է վկայում Աստծու հայտնության մասին[38]*. «Ի լուր ականջաց* լսէի *զքէն յառաջագոյն, բայց արդ եւ ակն իմ* իսկ *ետես զքեզ» (Յոբ ԽԲ 5): Իսկ Նոր Կտակարանում՝ Քրիստոսի Մկրտության ժամանակ Հովհաննես Մկրտիչը նախ* տեսնում *եւ ճանաչում է մարմնով հայտնված Աստծուն (Հովհ. Ա 34, 36), ապա* լսում *Աստծու ձայնը երկնքից (Մատթ. Գ 17, Մարկ. Ա 11, Ղուկ. Գ 22)*[39]*:*

Աստվածաշնչյան այս գիրքը եբրայական բանաստեղծության կատարյալ նմուշ է, որը փառաբանում է Աստծու անպարագրելի մեծությունը, արդարությունը, իմաստությունը, ողորմածությունը, ամենագիտությունը, եւ միեւնույն ժամանակ բացահայտում է անհունի մեկ հյուլեն եղող մարդու տիեզերական ցավը, հավատարմությունն ու նվիրվածությունը Արարչին: Հոբի գրքի

---

[36] **Վարդանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 462-463, 588:

[37] *Տօնացոյց,* աշխատասիրութեամբ տեառն Սիմէօնի յոգնաջան եւ սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց, հտ. 1-2, Ս. Էջմիածին, 1774-75, էջ 239-240. «Հինգշաբթի՝ տօն է Յովհաննու Կարապետին եւ Յոբայ Արդարոյն»:

[38] Աստծու հայտնության դրվագին անդրադառնում է նաեւ Բարսեղ Կեսարացին. տե՛ս **Բարսեղ Կեսարացի**, *Գիրք պահոց,* աշխատ.՝ Կ. Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 305. *Ճառ Ի. Տեսութիւն Բարսղի եւ Գրիգորի զհաւատոյ:*

[39] Պետք է նշել, որ Եկեղեցու հայրերը երբեմն նախընտրում են աստվածաշնչյան այս երկու կերպարների, նրանց վարքի, գործի մասին խոսել միեւնույն թեմայի շրջանակում: Հմմտ. **Ս. Յովհան Ոսկեբերան**, *Ճառք, նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց,* աշխատ.՝ Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 165. *ԺԳ. Տեառն Յոհաւոր Ոսկէբերանի յաղագս եթէ չիք ինչ որ զառաքինութիւն վնասէ՝ աւրինակաւ սրբոցն:*

բովանդակային բաղկացուցիչներն են իրար հաջորդող բազմաթիվ հարցերը[40]*: Մեկնողական գրականության մեջ շեշտադրվում են հատկապես գրքում առկա գլխավոր եւ առաջնային թեմաները՝ չարի եւ բարու գոյության, Աստծուն հավատարիմ անհատի տանջվելու, փորձությունների ենթարկվելու խնդիրները, սատանայի դեմ պայքարելու ուղիները (իմաստությամբ եւ համբերությամբ զինվելով), բարի Աստծու կողմից չարի թույլատրումը*[41] *եւ այլ հարցադրումներ:*

Ո՞վ էր Հոբ Երանելին կամ Հոբ Արդարը: Աստվածաշնչի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Հոբ Երանելին եղել է Եդոմ երկրի մեծահարուստ իշխաններից մեկը: Հոբ Արդարի պատմական անձ լինելը հաստատելու համար հայ մեկնիչները հիմնվում են Եզեկիել մարգարեի[42] *եւ Հակոբոս առաքյալի*[43] *խոսքերի վրա, այսինքն՝ եթե Հոբի մասին խոսվում է նրա գրքից ուշ գրված Եզեկիելի մարգարեության մեջ, եւ այդ խոսքը Նոր Կտակարանում երկրորդվում է Հակոբոս առաքյալի կողմից, ուրեմն Հոբ Երանելին իրական, պատմական անձ է, ով ապրել*

---

[40] Հոբի գրքում առկա հարցական նախադասությունների, հարցերի տեսակների մասին տե՛ս **Ղուկասյան Ս. Վ.**, *«Հոբի գրքի» ինչու-որ հարցումները,* «Լրաբեր հասարակական գիտությունների», թ. 4, Երեւան, 2012, էջ 184-190:

[41] *Թեոդիցիա* (θεός-Աստված, δίκη-արդարադատություն բառերից) եզրույթը ԺԸ դարում առաջադրել է գերմանացի փիլիսոփա Գոթֆրիդ Լայբնիցը. տե՛ս *Essais de Théodicée sur la bonté de Dieu, la liberté de l'homme et l'origine du mal*, par Gottfried-Wilhelm Leibnitz, Amsterdam, 1734.

[42] «Եւ եթէ իցեն արքն այն երեքին ի միջի նորա, Նոյ եւ Յոբ եւ Դանիէլ, նոքա արդարութեամբն իւրեանց.... Եւ Նոյ եւ Դանիէլ եւ Յոբ ի միջի նորա իցեն, կենդանի եմ ես, ասէ Ադոնայի Տէր, եթէ իցէ ուստերք եւ դստերք նոցա մնասցեն. այլ նոքա արդարութեամբ իւրեանց զանձինս իւրեանց ապրեցուսցեն» (Եզեկ. ԺԴ 14, 20): Ըստ որոշ հեղինակների՝ աստվածաշնչյան այս հղումները բավարար փաստարկ են Հոբի պատմական անձ լինելը հաստատելու համար, սակայն որոշ մեկնիչներ կասկածի տակ են դնում սա. *Толковая Библия или комментарій на все книги Св. Писанія Ветхаго и Новаго Завета*, т. 4, изд. А. П. Лопухина, Петербургъ, 1904-1907, с. 5-6:

[43] «Ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամբերութիւնն Յովբայ լուարուք, եւ զկատարումն Տեառն տեսէք, զի բազմագութ է Տէր եւ ողորմած» (Յակ. Ե 11):

էր Եզեկիելի մարգարեության գրման ժամանակից (ն. Ք. Է-Զ դդ.) առաջ: Երբեմն էլ, հիմնվելով Եսայի մարգարեի՝ «Տեսե՞ք զիարդ կորեաւ՝ արդարն, *եւ չիք ոք որ անսայ սրտիւ. եւ արք արդարք բառնան, եւ ոչ ոք հայի. զի յերեսաց անիրաւութեան բառնայ արդար» (ԾԷ 1) խոսքերի վրա (որտեղ «արդարն» բառը, ըստ մեկնիչների, ակնարկում է Հոբ Արդարին), գրքի գրման ժամանակը եւ Հոբի ապրելու ժամանակաշրջանը զետեղում են մինչեւ Եսայի մարգարեի տարիները (ն. Ք. Ը դար):*

Հոբ Երանելու ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի հիշատակություն չկա հինկտակարանյան գրքերում. թերեւս պատճառն այն է, որ գրքի հեղինակը ցանկացել է այն դարձնել ընդհանրական մի պատմություն, որի միջոցով կկարողանա մարդկանց ցույց տալ Աստծու հանդեպ սիրո, անսասան հավատի, հավատարմության, չարին ընդդիմանալու, իմաստությամբ զինվելու եւ համբերությամբ հուսալու լավագույն օրինակ: Ելնելով Հոբի գրքում պահպանված որոշ տեղեկություններից, նաեւ Ծննդոց ԼԶ 32-33 եւ Ա Մնաց. Ա 44 համարների վկայություններից՝ որոշ ուսումնասիրողներ նրան համարում են նահապետական շրջանում ապրած պատմական անձ[44]*: Հայ մատենագիրներից Ստեփանոս Սյունեցին եւս Հոբի ապրած ժամանակաշրջանը համարում է նահապետական շրջանը. «Յազգէն յԱբրահամու էր երանելի նահատակն*[45]*՝ երրորդ կամ չորրորդ յԵսաւայ, եղեւ ի ժամանակս Մովսէսի, քանզի թէպէտ եւ էր Մովսէս հինգերորդ ի Յակոբայ, սակայն յաղագս բազմակեցութեան իւրոյ Յոբ եհաս ի ժամանակս Մովսիսի, թուի թէ եւ յելս որդւոցն Իսրայէլի*

---

[44] Տե՛ս *Толковая Библия или комментарій на все книги Св. Писанія Ветхаго и Новаго Завета*, т. 4, изд. А. П. Лопухина, Петербургъ, 1904-1907, с. 8-9:

[45] Այնքան ծանր եւ մարդկայնորեն անտանելի էին Հոբի կրած չարչարանքները, որ մատենագրության մեջ նրան *նահատակ* են անվանում:

յԵգիպտոսէ»[46]*: Ստեփանոս Սյունեցու այս միտքը կրկնում է նաեւ Սբ Գրիգոր Տաթեւացին եւ շեշտում Հոբի՝ Մովսես մարգարեի ժամանակակից լինելը. «Երանելին Յոբ՝ էր ի ժամանակս Մովսէսի, Ճ (100) ամաւ յառաջ՝ աւելի եւ կամ պակաս: Եւ բազմակեցութեամբ էհաս մինչեւ յելսն յԵգիպտոսէ»*[47]*:*

Մեկ-երկու տեղեկություն է պահպանվել Հոբի գրքի հայերեն մեկնություններում, որտեղ հիշատակվում է նրա ապրած երկրի, նրա գերեզմանի գտնվելու վայրի մասին: Համաձայն Ստեփանոս Սյունեցու մեզ հասած մեկնության փշրանքների՝ Հոբի գերեզմանը գտնվում է Արաբիայում. «Բայց զգերեզմանն Յոբայ այժմ յԱրաբիա ցուցանեն, եւ զտեղին, յորում նստէր ի հարուածսն»[48]*: Սբ Գրիգոր Տաթեւացին «Գիրք հարցմանց»-ում հստակեցնում է, թե ո՛րն է Օսիդ երկիրը, եւ որտե՛ղ է գտնվում Հոբ Արդարի գերեզմանը. «Ոմանք զՍիօն ասեն, եւ այլք՝ զԵդոմ, եւ այլք՝ զԱրաբիա, որ եւ անդ ասեն եւ այլք զգերեզման նորա լինիլ*[49]*: Այլ աշխարհն Օսիդ գաւառ է Եսաւայ, զի Օսիդն մի է յորդւոցն Եսաւայ,*

---

[46] *Ստեփանոսի՝ մեկնութիւն եւ սկիզբն Յոբայ,* բն. կազմ.՝ Յ. Քէոսէեան, «Մատենագիրք Հայոց» (այսուհետ՝ ՄՀ), հտ. Զ, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 112:

[47] *Գիրք հարցմանց,* հտ. Զ, պրակ ԻԲ, Երուսաղէմ, 1993, էջ 320: Ըստ Բաբելոնյան Թալմուդի՝ Հոբն ապրել է Մովսես մարգարեի ժամանակաշրջանում Եգիպտոսում: Եղել է փարավոնի երեք խորհրդականներից մեկը: Խորհրդականներից առաջինը՝ Բաղաամը, փարավոնին խորհուրդ տվեց սպանել հրեա նորածին տղաներին, երկրորդը՝ Իոտրոն, դեմ էր փարավոնի հրամանին, իսկ երրորդը՝ Հոբը, թեեւ դեմ էր փարավոնի տված հրամանին, սակայն լուռ մնաց, չառարկեց: Այս «լռության» պատճառով է, որ Աստված «պատժում» է Հոբին չարաչար փորձություններով. տե՛ս Babylonian Talmud: Sotah 11a:

[48] Տե՛ս ՍՍ 1879, թ. 75ա. ՍՍ 1981, թ. 208ա:

[49] Ինչպես նշում է նաեւ Ստեփանոս Սյունեցին:

յորոյ անուն կոչեցաւ երկիրն Օսիդ։ Եւ է՛ ի մէջ Արաբիոյ եւ Եդոմայ, զոր այժմ կոչի Թիլգուրան[50]*, ուր գերեզման նորա է»*[51]*։*

Հոբի գրքի լուծմունքը եւ Գրիգոր Տաթեւացին։ *Երբ ընդհանրության մեջ ենք դիտարկում որեւէ երկի ստեղծման շարժառիթը, գրման ժամանակը, պատմական դեպքերն ու իրադարձությունները, փորձում ենք համեմատել նույն դարերում ստեղծված մտավոր ու հոգեւոր այլ բնագավառների մշակութային արժեքների հետ (այստեղ՝ ի մասնավորի ձեռագրական նյութի հետ), ապա նման դեպքերում ակնհայտ է դառնում, թե ինչպես է մի գաղափարը գերիշխող դառնում գրեթե նույն ժամանակաշրջանում ստեղծված տարբեր աշխատությունների մեջ։ Այս երկի միջոցով*

---

[50] Թիլգուրանը նույն Թլկուրան տեղանունն է. Ավսիդ, Թըկուրան, Թիլկուրան, Թուլգուրան, Թուրկուրան, որը գտնվում է Մեծ Հայքի Աղձնիք աշխարհում. ավելի մանրամասն տե՛ս *Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 1, Երեւան, 1986, էջ 368 (Ավսիդ), 924 (Թլկուրան)։ Թերեւս այս է պատճառը, որ Հոբի հայրենիքը ոմանք համարում են Հայոց Միջագետքը. տե՛ս *Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ Սուրբ Գրոց*, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագոնց, հտ. Ա, Վենետիկ, 1819. Յաւելուած, գլ. Է, *Տեսութիւն պատմութեան երանելւոյն Յոբայ արդարոյ, առ ժամանակօք Մովսիսի*, էջ 379։ Հայր Ղեւոնդ Ալիշանը, խոսելով Հովհաննես Թլկուրանցու մասին, գրում է. «....Միջագետքի Թլկուրան կամ Թուլկուրան վայրում». տե՛ս *Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք հայոց ի Հ. Ղեւոնդեանց Վ. Մ. Ալիշան*, Վենետիկ, 1901, էջ 540։ Կ. Կոստանյանցը, խոսելով Հովհաննես Թլկուրանցու մասին, գրում է. «Մականուանը նայելով, նա ծնուել է Թլկուրան կամ Թուլգուրան աւանում, որ գտնւում է Հայոց Միջագետքում Տիարբէքիր կամ Ամիդ քաղաքից դէպի հարաւ....». տե՛ս **Կոստանեանց Կ.**, *Յովհաննէս Թլկուրանցին եւ իւր տաղերը*, Թիֆլիս, 1892, էջ 5։ Աստվածաշնչյան երկրորդ տեղին, ուր շեշտադրվում են Եդոմը եւ Օսիդը, Երեմիա մարգարեի Ողբում է. «Ցնծա դու եւ ուրախ լեր, դուստր Եդոմայեցւոց, որ բնակեալդ ես յերկրիդ Աւստացւոց. եկեսցէ բաժակս այս ի վերայ քո. յարիցես եւ արբցես, արբեսցիս եւ անդրէն դարձուսցես» (Ողբ Երեմ. Դ 21)։ Երեմ. ԻԵ 20 համարում, ի տարբերություն եբրայերեն բնագրի, հայերենում բացակայում են «երկրին Հուս» բառերը։ Երեմիայի մարգարեության եւ Ողբի մեկնություններում Մխիթար Գոշը «յերկիրդ աւստացւոց» բառակապակցությանը չի անդրադառնում. տե՛ս **Մխիթար Գոշ**, *Մարգարեութեանն Երեմիայի եւ նախադրութիւն նորին [ի] Մխիթարայ վարդապետէ Գոշ կոչեցելոյ մեկնութիւն համառաւտ*, բնագ. կազմ.՝ Ա. Բոզոյեան, ՄՀ, հտ. Ի, ԺԲ դար, Երեւան, 2014, էջ 413։

[51] Հմմտ. *Գիրք հարցմանց*, հտ. Զ, պրակ ԻԲ, էջ 327։

Սբ Գրիգոր Տաթեւացին փորձել է իր ապրած դժնդակ ժամանակաշրջանում աշակերտներին զինել համբերության եւ Աստծու հանդեպ հավատարմության լավագույն օրինակով՝ բազմաչարչար Հոբ Արդարի կյանքով:

Սբ Գրիգոր Տաթեւացին «Լուծմունք Յոբայ» երկը շարադրել է Մեծոփավանքում դասավանդելիս. «....եկեալ մեր յերկիրս Քաջբերունի եւ ձմեռեալ ի հրեշտակաբնակ վանքս Մեծոփոյ՝ ի սպասու դամբարանաց վարժապետացն սրբոց: Եւ ընթերցմամբ հաւաքեցի զդժուարալոյծ բանս Յոբայ եւ զմեկնչաց նորա...»: Հոբի գրքի լուծմունքի շարադրման համար Սբ Գրիգոր Տաթեւացին քիչ ժամանակ ուներ, քանի որ ընդամենը մի քանի ամսում (կամ մեկ ամբողջ տարի) նա պետք է Մեծոփավանքի սաներին դասավանդեր թե՛ գրչության արվեստ, թե՛ Հովհաննեսի Ավետարանի եւ թե՛ Հոբի գրքի մեկնություն. «....այլեւ սակաւ ինչ լուծումն Առիստակիսի եւ Գէորգեայ՝ ի խրատս գրչութեան, ընդ նմին եւ զքաղուածոյ մեկնութեանն Յովհաննու Աւետարանչի»: Հավանաբար ժամանակի սղությունն է եղել պատճառներից մեկը, որ Հոբի գիրքը շարադրել է ոչ թե որպես «դասական» մեկնություն, այլ որպես լուծմունք:

Ինչպես նկատեցինք, վերոբերյալ հատվածում՝ երկի հիշատակարանում, Սբ Գրիգոր Տաթեւացին նշում է մի կարեւոր հանգամանք եւս. այն է՝ ինչ առարկաներ է դասավանդել միջնադարի մեծանուն մանկավարժը Մեծոփավանքի սաներին՝ գրչության արվեստ, Հոբի գրքի եւ Հովհաննեսի Ավետարանի մեկնություն: Մեծոփավանքի սաներին դասավանդվող առարկաների ցանկի մասին հիշատակում է նաեւ Թովմա Մեծոփեցի պատմիչը. «....եւ զերիս գիրս մեկնեաց դասիւ՝ զԱւետարանն Յովհաննու աւետարանչին, զգիրս Յոբայ նահատակին եւ զգիրս գրչութեան երկոքեան վարդապետացն Գէորգայ Լամբրոնացւոյն եւ Արիստակէսի»[52]: Մանկավարժական գործունեության ընթացքում վարդապետի կիրառած ուսումնական մեթոդների մասին կրկին խոսում են այս երկու սկզբնաղբյուրները. «....ի գլուխս բաժանելով՝ վասն

[52] **Թովմա Մեծոփեցի**, էջ 52:

մտաւոր տեսութեան եւ ի զարդ ուսման, ի պէտս բեմասացութեան եւ ի խրատս զրուցատրութեան[53]*»: Ուսումնամեթոդական այս հնարքի շնորհիվ աշակերտները կարճ ժամանակահատվածում եւ առավել դյուրությամբ են ըմբռնել բարդ խնդիրներն ու հարցերը: Նրա կիրառած այլեւայլ մեթոդների մասին զուգահեռներ կարող ենք անցկացնել նրա դիմանկար-մանրանկարին*[54] *նայելով: Դասավանդման ընթացքում շնորհաշատ մանկավարժի շուրջն են համախմբվել նրա աշակերտները, ինչպես ընդունված էր անտիկ շրջանում*[55]*. «....հարց. Որպե՞ս ուսուցանելն էր կամ ուսանելն իմաստասէրն ի յամբիոնն ելանէր եւ խօսէր եւ ամէն ուսումնականքն պնակիտ եւ կաղամար ի ձեռն առեալ մօտն շուրջն նստէին եւ գրէին: Եւ երթեալ զօրն աշխատեալ, որչափ կարէին մեկնութիւն գրել, բերէին եւ ընթեռնուին առաջի վարդապետին, թէ ղորթ էր՝ վկայէր, եւ թէ այլազգ՝ է՛ր, որ խրատ տայր, է՛ր, որ ողորմէր, եւ է՛ր, որ գովէր»*[56]*: Սույն ուսուցման մեթոդն առավել ուշադրություն եւ կենտրոնացում էր պահանջում աշակերտից եւ նյութի մտերմիկ քննարկումն ավելի ընկալելի էր դառնում դասի մասնակցի համար: Մանրանկարում աչքի է զարնում նաեւ այն հանգամանքը, որ աշակերտների մի մասն ուշադիր լսում է ուսուցչին, մյուս մասը՝ նյութը քննարկում խմբովի: Տվյալ դեպքում մանկավարժը կիրառում է մերօրյա «խմբային» կոչված մեթոդը: Կարծում ենք պատահական չէ նաեւ ուսուցչին աշակերտներից մեծ պատկերելը*[57]*, որը նշան էր բաբունապետության:*

---

[53] Այստեղ այն պետք է հասկանալ որպես մեկնաբանություն, բացատրություն:

[54] ՍՍ 1203, թ. 14բ:

[55] Տե՛ս **Ճիրինյան Մ. Է.**, *Քրիստոնեական վարդապետության անտիկ եւ հելլենիստական տարրերը (հայկական եւ հունական դասական եւ բյուզանդական աղբյուրների բաղդատությամբ)*, Երեւան, 2005, էջ 104-106:

[56] ՍՍ 4268, թ. 271բ. Պատճառ գրոցն սահմանաց:

[57] Մեկ այլ մանրանկարում նման տարաչափությամբ է պատկերված նաեւ Երզնկայի նշանավոր բաբունապետ Կիրակոս Երզնկացին. տե՛ս **Բաղումյան Ջ. Ծ. վրդ.**, *Կիրակոս Երզնկացու՝ Սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները*, Երեւան, 2022, էջ 16 (ՍՍ 1379, թ. 160բ):

Լուծմունքի շարադրման օրինաչափություններից է հինկտակարանային տեղիների մեկնությունը նորկտակարանային տեղիներով, որը լայնորեն կիրառվել է հայ մեկնողական գրականության մեջ[58]*: Նման օրինակները կիրառվում են նույնիսկ այն դեպքերում, երբ մտքի թվացյալ անհամապատասխանություն կա: Մեկնողական նման եղանակը հայտնի է* ակկոմոդիզմ *կամ* ակկոմոդատիվ մեկնություն[59] *անվամբ, որի ծագման ու զարգացման հիմքերը հասնում են մինչեւ առաքելական շրջան: Մեկնության ակկոմոդատիվ*[60] *այս եղանակը երբեմն հանդիպում է լուծմունքում, ինչպես օրինակ՝ «Վեցից վշտաց փրկեսցէ....» (Յոբ Ե 19-20) խոսքերը Գրիգոր Տաթեւացին բացատրում է Նոր Կտակարանի լույսի ներքո՝ ծավալուն քարոզի ձեւով:*

Լուծմունքի աղբյուրները*: ԺԴ-ԺԵ դարերի* եռամեծար *եւ* եօթնալոյս *վարդապետ Սբ Գրիգոր Տաթեւացու Հոբի գրքի լուծմունքի ընդօրինակությունների կողքին Մաշտոցյան Մատենադարանում է պահվում նաեւ Սբ Գրիգոր Տաթեւացու «Լուծմունք Յոբայ» երկի համառոտ տարբերակը՝ ԺԸ դարի ժողովածուում (թերեւս համառոտումն էլ է արվել ԺԸ դարում)՝ «Գիրք, որ կոչի Յոբայ լուծմունք՝ արարեալ սրբոյն Գրիգոր Տաթեւացւոյն եւ համառօտեալ յումեմնէ աբեղայէ, բայց սկիզբն սորին գտցես ի վերջն.*

---

[58] **Ширинян М. Э. С.**, *Порядок книг Соломоновой трипартиты согласно раннехристианским, ранневизантийским и средневековым армянским толкователям* // Вестник Волгоградского государственного университета. Серия 4, История. Регионоведение. Международные отношения. 2022, т. 27, № 6, с. 237-254. **Քյոսեյան Հ.**, *Աստվածաշնչի մեկնությունը Ա-Ե դարերում*, Երեւան, 2018, էջ 38-39:

[59] Լատիներեն՝ accommodation. տե՛ս **Мень Ал.**, *Библиологический словарь*, т. 1, Москва, 2002, с. 40.

[60] Տե՛ս **Корсунксий И. Н.**, *Теорiя аккомодацiи въ отношенiи къ вопросу о Новозаветномъ толкованiи Ветхаго Завета*, «Чтения в Обществе любителей духовного просвещения» (ЧОЛДП), 1877, сент.-дек., с. 371-376. **Корсунксий И. Н.**, *Критическое разсмотренiе особенныхъ, более важныхъ случаевъ новозаветной цитацiи и толкованiя въ опроверженiе воззренiй теорiи аккомодацiи*, «Чтения в Обществе любителей духовного просвещения» (ЧОЛДП), 1879, 3, с. 245-270.

Ի վեցից վշտաց փրկեսցէ, քարոզ վասն փորձութեան սատանայի եւ չարութեան կանանց. իբրեւ զմի ի կանանց անզգամաց եւ լուեալ երից բարեկամացն զչարիսն»[61]*: Այս համառոտ բնագրին կից բացակայում են հիշատակարանային տվյալները: Ենթադրելի է, որ նշյալ ժողովածուում տեղ գտած՝ Սբ Գրիգոր Տաթեւացու* Սաղմոսաց *մեկնության,* Երգ երգոցի *մեկնության, նաեւ Սբ Գրիգոր Նարեկացու* Երգ երգոցի *մեկնության*[62] *համառոտումները միեւնույն հեղինակին են պատկանում:*

Սբ Գրիգոր Տաթեւացու «Լուծմունք Յոբայ» երկը Հոբի գրքի մեզ հասած ամբողջական մեկնություններից երկրորդն է: Առաջին ամբողջական մեկնությունը Հովհաննես Վանական Վարդապետ Տավուշեցունն[63] *է՝ «Համառաւտ մեկնութեան Յոբայ, հաւաքաց ձեռամբ Վանականի Վարդապետի»*[64] *կամ «Գիրք, որ կոչի մեկնութիւն Յոբայ, արարեալ ծաղկաքաղօրէն Վանական Վարդապետի հաւաքեցեալ ի Դաւթայ եւ ի Յիւսիքոսէ նրբիմաց վարդապետաց ի փառս Աստուծոյ եւ ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ»*[65]*:*

Հոբի գրքի լուծմունքն արժեքավոր է նախ եւ առաջ աղբյուրագիտական տեսանկյունից: Գրիգոր Տաթեւացին երկի հիշատակարանում ինքն է նշում, որ օգտվել է Վանական Վարդապետի եւ այլոց երկերից. «Եւ ժողովողն մեկնութեանս է Վանական Վարդապետն.... Եւ ընթերցմամբ հաւաքեցի զդժուարալոյծ բանս

---

[61] ՄՄ 1019, թ. 39ա-54բ. «Գիրք, որ կոչի Յոբայ լուծմունք, արարեալ սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյն եւ համառօտեալ յումեմնէ աբեղայէ. բայց սկիզբն սորին գտցես ի վերջն....»:

[62] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի,* հտ. Դ, կազմ.՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, Երեւան, 2008, էջ 67-78:

[63] ԺԲ-ԺԳ դարերի մեկնիչ-մատենագիր, ով աշակերտել է օրենսգետ Մխիթար Գոշին եւ նրանից ստացել վարդապետական աստիճան: Նրա գրչին են պատկանում բազմաթիվ հանրագիտարանային բնույթ ունեցող մեկնողական երկեր:

[64] ՄՄ 1166, թ. 1ա:

[65] *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա,* կազմ.՝Հ. Յակ. վրդ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 713-714:

Յոբայ եւ զմեկնչաց նորա....»[66]*: Մատենագիրը, օգտվելով ե՛ւ Վանական Վարդապետի, ե՛ւ իրեն նախորդող հեղինակների շարադրած Հոբի գրքի մեկնություններից, ստեղծել է յուրօրինակ երկլուծմունք: Անդրադառնանք այն հեղինակներին, որոնց երկերը կարող էին ազդեցություն ունենալ Սբ Գրիգոր Տաթեւացու լուծմունքի վրա:*

Ե դարի Ընդհանրական եկեղեցու հայր Իսիքիոս Երուսաղեմացու[67] *Հոբի գրքի մեկնության հունարեն բնագիրն առ այսօր կորած է: Երկի հայերեն թարգմանությունը պահպանվել է Հովհաննես Վանական Տավուշեցու Հոբի գրքի քաղվածո մեկնության շնորհիվ: Անշուշտ, Սբ Գրիգոր Տաթեւացին եւս, բազմաթիվ մեկնիչների նման, օգտվել է Իսիքիոս Երուսաղեմացու երկից (գուցեեւ արդեն միջնորդավորված ձեւով): Այդուհանդերձ, Իսիքիոս Երուսաղեմացու մեկնության հետ աղերսներն ավելի քիչ են Գրիգոր Տաթեւացու լուծմունքում, քան Հովհաննես Վանականի նույնանուն երկում:*

---

[66] ՄՄ 1115, թ. 123աբ:

[67] Ընդհանրական եկեղեցու հայրերից է, ճգնել է Պաղեստինի անապատներից մեկում, սերտել Աստվածաշունչը, Երուսաղեմի արքեպիսկոպոսի կողմից 412 թ. երեց է կարգվել: Ըստ Կյուրեղ Սկյութապոլսեցու վկայության՝ 428-429 թթ. մասնակցել է Երուսաղեմի Ս. Եվթիմոսի տաճարի օծմանը: Մահկանացուն կնքել է 450 թվականից հետո: Տե՛ս **Քյոսեյան Հ.**, *Եկեղեցու հայրեր, վարդապետներ (IV-VIII դդ.)*, Երեւան, 2007, էջ 190-192: «Իսիքիոս» անվան բացատրությունը գտնում ենք Հ. Սկրտիչ Աւգերեանի աշխատության մեջ. «...Հիւսիքիոս կամ Իսիքիոս, որ թարգմանի լռեալ կամ հանդարտեալ», «Գիտելի է նախ, զի անուն Հիւսիքիոս, որ է ըստ հունաց Իսիքիոս, գրի նաեւ Եւսիքիոս կամ Սիւքիոս եւ նոյն է ըստ անուանս Սուքիաս եւ ըստ նմին՝ որպէս ի վարս սրբոյն Սուքիասայ գրի ի մեզ, թէ նշանակ է հանդարտացեալ, զնոյն ասեն աստանօր եւ յոյնք, վասն Իսիքիոսի զօրականի (յորմէ եւ ի տաճկերէն Սուքութ ասի՝ լռիկն կամ լռութիւն)». տե՛ս *Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց. որք կան ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ Հայաստանեայց*, հտ. Ը, Վենետիկ, Ս. Ղազար, 1813, էջ 481, 483: Հր. Աճառյանը «Սուքիաս» անվանումը ստուգաբանում է. «Գրված է բազմազան ձեւերով, Սիւքիանոս, Սիւքիոս, Եւսիւքիոս, Եւսիք, Իսիքոս, Իւսիդոս, Իսիքիոս, Իւսիւքիոս, Հիւսիքոս... հուն. Ἡσύχιος անունից, որ նշանակում է «հանդարտ, խաղաղ». տե՛ս **Աճառեան Հր.**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ, Երեւան, 1948, էջ 591:

Ինչպես Իսիքիոս Երուսաղեմացին է իր երկում բազմիցս անդրադառնում Հոբի կենցաղավարությանը, համբերությանը, քաջությանը, այնպես եւ Գրիգոր Տաթեւացին, օգտագործելով Իսիքիոս Երուսաղեմացու մեկնողական մտքի արգասիքները, այդ դժնդակ դարում իր սաներին անընդմեջ սրտապնդում է Հոբի քաջության եւ համբերության օրինակներով: Եթե Իսիքիոս Երուսաղեմացու երկում որոշ նման հատվածներում մեկնությունները երկարաշունչ են, ապա Սբ Գրիգոր Տաթեւացին այն համառոտում է, երբեմն նույնիսկ արտահայտում մեկ բառով: Օրինակ.

Իսիքիոս Երուսաղեմացի	**Գրիգոր Տաթեւացի**
«Բազում ինչ մեզ Աստուած արձանս առ յօգտակար տեսիլս կանգնեաց, բազում եւ մեծամեծ իմաստասիրութեան ետ տարացոյցս»[68]:	«Բան. Արձան: Լուծումն. Որպէս քար կանգնեմք ի ճանապարհս»[69]:

Լ. Խաչիկյանը, խոսելով Եղիշեի «Արարածոց մեկնության»՝ Սբ Գրիգոր Տաթեւացու երկերի վրա թողած ազդեցության մասին, իրավացիորեն նշում է. «Տաթեւացին իր օգտագործած աղբյուրները ձեւափոխում է ըստ իր գիտական հայացքների, փոխում է նրանց շարադրանքը՝ այն համապատասխանեցնելով իր աշխատության առանձնահատկություններին, որը կազմված է հարցերի ու պատասխանների ձեւով: Հաճախ աղբյուրի որեւէ ամբողջական հատված Գրիգորը բաժանում է մի քանի կետերի, շարահյուսում այլ աղբյուրների տվյալներին եւ այլն»[70]:

Լրացնելով Լ. Խաչիկյանին՝ նշենք, որ այս երկում եւս, բոլոր մեկնություններն իրար կապելով, նա ստեղծել է յուրօրինակ մի

---

[68] Մեջբերումների ձեռագրային էջերը նշվում են ըստ հ. Քերովբէ Չրաքյանի աշխատության՝ *Իսիքիոսի Երիցու Երուսաղեմացւոյ Մեկնութիւն Յոբայ*, կազմ.՝ հ. Ք. Չրաքեանի, «Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց», Ե, Վենետիկ, 1913, էջ 134:

[69] ՍՄ 1115, թ. 8ա:

[70] **Խաչիկյան Լ.**, *Եղիշեի «Արարածոց մեկնությունը»*, Երեւան, 1992, էջ 212:

աշխատություն, որտեղ իր մտքերը բացատրելու համար հաճախ օգտագործել է տարբեր աղբյուրներ, խոսքը հասկանալի, դյուրընկալելի եւ պարզ դարձնելու նպատակով գործածել է ինքնաստեղծ բառեր, բառաբացատրության համար՝ նոր հոմանիշներ եւ այլն:

Այլ է Գրիգոր Տաթեւացու կողմից Հովհաննես Վանական Վարդապետ Տավուշեցու[71] *Հոբի գրքի քաղվածո մեկնությունից օգտվելու պարագան: Հոբի լուծմունքի հիշատակարանում Սբ Գրիգոր Տաթեւացին ինքն է նշում, որ օգտվել է Վանական Վարդապետի մեկնությունից: Վերջինիս մեկնությունը յուրօրինակ է իր տեսակի մեջ, քանի որ հենց այս քաղվածո մեկնության միջոցով են մեզ հասել Հոբի գրքի՝ Եփրեմ Ասորու*[72]*, Իսիքիոս*

---

[71] Հովհաննես Վանական Վարդապետ Տավուշեցին ապրել եւ գործել է ԺԲ-ԺԳ դարերում, աշակերտել է Մխիթար Գոշին: Նրա մատենագրական ժառանգության մեջ աչքի է ընկնում Հոբի մեկնությունը, որը քաղագրություն է Իսիքիոս Երուսաղեմացու, Եփրեմ Ասորու, Ստեփանոս Սյունեցու, Դավիթ Քոբայրեցու եւ այլ մատենագիրների նույնանուն երկերից: Նրա մասին առավել մանրամասն տե՛ս **Ոսկեան Հ.**, *Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը*, Վենետիկ, 1922. **Քյոսեյան Հ.**, *Ներածություն հայ եկեղեցական մատենագրության*, Երեւան, 2018, էջ 427-433. **Մուրադեան Պ.**, *Դավիթ Քոբայրեցին եւ նրա «պատճառները»*, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Ե, Երեւան, 1994, էջ 158-168:

[72] Եփրեմ Ասորու Հոբի մեկնության մասին տե՛ս **Վարդանեան Հ. Ա.**, *Սրբոյն Եփրեմի Մեկնութիւն եւ սկիզբն Յոբայ*, «Հանդէս ամսօրեայ», թիւ 10, Վիեննա, 1912, էջ 617-626, 666-674: Այս խնդրին անդրադարձել է նաեւ Ռընուն. տե՛ս **Renoux Ch.**, *Vers le commentaire de Job d'Éphrem de Nisibe*, Parole de l'Orient, vol. VI/VII, 1975-76, Liban, p. 63-68. Եփրեմ Ասորու հինկտակարանային մեկնություններին է նվիրված Հ. վրդ. Թորոսյանի հոդվածաշարը, որտեղ նա անդրադառնում է միայն Ծննդոց գրքի մեկնությանը. տե՛ս **Թորոսեան Հ. վրդ.**, *Ակնարկ մը Ս. Եփրեմի Հին Կտակարանին մեկնութեանց հայ թարգմանութեան վրայ*, «Բազմավէպ», 1925, էջ 3-9, 1927, էջ 33-37: Հոբի գրքի Եփրեմ Ասորու մեկնության հայ աղբյուրների վրա թողած ազդեցությունների մասին տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, *Եփրեմ Ասորու «Հոբի մեկնությունը» Եզնիկ Կողբացու աղբյուրներից*, «Բանբեր Մատենադարանի» (այսուհետ՝ ԲՄ),16, 1994, էջ 7-15. **Тер-Петросян Л.**, *Армения и Христианская Сирия, Культурные связи IV-V вв.*, Ереван, 2022, стр. 216-217, 223:

Երուսաղեմացու[73]*, Ստեփանոս Սյունեցու*[74]*, Դավիթ Քոբայրեցու մեկնություններից կատարված մեջբերումները, որոնց ամբողջական բնագրերն առ այսօր կորած են համարվում, ինչն արդեն նշեցինք: Մեզ հասած ձեռագրերում Վանական Վարդապետի երկի յուրաքանչյուր մեջբերման կողքին լուսանցքում կրճատ նշվել է տվյալ մատենագրի անունը, ինչպես օրինակ՝* Եւս, Եփր, Ստ, Վան *եւ այլն: Հաճախ հանդիպում ենք նաեւ* այլ, այլք *նշումներին, սակայն դեռեւս պարզ չէ, թե հատկապես ինչ հեղինակի կամ հեղինակների նկատի ունի*[75]*: ՄՄ հնագույն եւ ամբողջական 1166 գրչագրում յուրաքանչյուր հեղինակի մեկնությունից մեջբերվող հատվածի կողքին՝ լուսանցքում, Հովհաննես Վարդապետը նշում է անունը: Լուսանցային նմանօրինակ նշումներն այս եւ մյուս ընդօրինակություններում հասնում են մինչեւ ԼԳ գլուխը (այս ձեռագրում՝ մինչեւ 76ա թերթը)*[76]*: Սակայն պետք է նշել, որ եթե Վանականի սույն գրչագրում եւ մյուս ընդօրինակված ձեռագրերում լուսանցային նշումներ չկան Հոբ ԼԳ գլխից հետո, ապա դա չի նշանակում, որ մյուս թերթերում միայն Վանական Վարդապետի մեկնողական խոսքն է շարադրված: Հնարավոր է, որ մեզ հասած ձեռագիր-օրինակներում գրիչները բաց են թողել լուսանցային նշումները: Վանական Վարդապետի եւ Գրիգոր Տաթեւացու երկերը զուգադրելիս նկատելի է, որ Վանականի քաղվածո մեկնության մեջ համեմատաբար քիչ է հեղինակի ինքնուրույն մեկնությունը կամ էլ սեփական խոսքը միահյուսված է այլ*

---

[73] Այս մասին տե՛ս **Renoux Ch.**, *L'Église de Sion dans les Homélies sur Job d'Hésychius de Jérusalem*, REArm, XVIII, Paris, 1984, p. 135-146. **Ղրաքեան հ. Ք.**, *Իսիքիոսի Յովբայ մեկնութեան գրական արժէքը*, «Բազմավէպ», թիւ 7-8-9, 1912, էջ 399-408:

[74] Ստեփանոս Սյունեցու Հոբի գրքի մեկնության մասին առավել մանրամասն տե՛ս **Ղրաքեան հ. Ք.**, նշվ. աշխ., էջ ԽԱ-ԽԲ. **Քյոսեյան Հ.**, *Նշխարներ Ստեփանոս Սյունեցու Հոբի եւ Դանիելի մեկնություններից*, «Էջմիածին», Ա, 1998, էջ 95-105:

[75] Այս մասին տե՛ս **Սարիբեկյան Է.**, *Նոր բացահայտումներ Հոբի գրքի մեկնություններում (Վանական Վարդապետ, Գրիգոր Տաթեւացի)*, Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Երեւան, 2017, էջ 84-98:

[76] **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 26: Վանականի լուսանցային նշումներին անդրադառնում է նաեւ հայր Բարսեղ Սարգիսյանը. տե՛ս **Sargisean Basilio**, *Dei Tesori Patristici E Biblici Conservati Nella Letteratura Armena*, 1897, p. 46-48:

մեկնիչների խոսքերին: Դա ակնառու է հատկապես այն հատվածներում, որտեղ արդեն բացակայում են լուսանցային հղումները[77]*:*

Սբ Գրիգոր Տաթեւացու երկում երբեմն ուղղակի մեջբերումներ կան, որոնց շնորհիվ վերականգնվում է Վանական Վարդապետի ՄՄ 1166 ձեռագրի այն հատվածներում արված քաղվածքների հեղինակային պատկանելությունը, որտեղ լուսանցային նշումներ չկան: Ինչպես օրինակ՝

Վանական Վարդապետ	**Գրիգոր Տաթեւացի**
«Այսպէս խրատի ամենայն ոք. մի այլոց պատուհասիւ եւ թէ այնու ոչ խրատի՝ յանձն իւր գանեսցի, եւ թէ այնու ոչ խրատեսցի՝ մահու գանեսցի»[78]:	«Ասէ վարդապետն **Դաւիթ**. Աստուած երեք կերպիւ խրատէ զմարդ. նախ՝ այլոց պատուհասիւ, երկրորդ՝ թէ այնու ոչ խրատի՝ զանձն նորա գտնէ, երրորդ՝ թէ այնու ոչ ուղղի՝ ի մահուամբ խրատեսցէ»[79]:

Ինչպես տեսնում ենք, ակնհայտ է երկու հեղինակների օգտագործած աղբյուրի ընդհանրությունը: Սա եւս փաստում է մեր այն մտքի ճշմարտացիությունը, թե չնայած լուսանցային նշումների բացակայությանը՝ Վանական Վարդապետն իր աշխատության մյուս հատվածները մեկնելիս շարունակում է քաղվածաբար օգտվել մատենագիրների երկերից:

Ուշադրության է արժանի նաեւ Գրիգոր Տաթեւացու լուծմունքում Եփրեմ Ասորու՝ Հոբի գրքի մեկնության ցայժմ անհայտ հատվածից կատարված ուղղակի մեջբերման զուգադրումը Վանական Վարդապետի՝ Հոբի գրքի նույն համարների մեկնության հետ: Խոսքը վերաբերում է Հոբ ԽԲ 8-9 համարների մեկնությանը: Ինչպես նշեցինք, Վանականի մեկնության մեջ լուսանցային հղումները հասնում են մինչեւ Հոբ ԼԳ գլուխը: Երկու հեղինակների մեջբերումների համադրությունը մեկ անգամ եւս հաստատում է այն կարծիքը,

---

[77] Այս մասին տե՛ս **Սարիբեկյան Է.**, նշվ. աշխ., էջ 84-98:
[78] ՄՄ 1166, թ. 75բ:
[79] ՄՄ 1115, թ. 77աբ:

որ հայ իրականության մեջ գոյություն է ունեցել Եփրեմ Ասորու՝ Հոբի գրքի ամբողջական հայերեն մեկնությունը, որից էլ օգտվել է Վանական Վարդապետը (չի բացառվում նաեւ, որ Տաթեւացու օրոք եւս դեռ պահպանված կար):

Վանական Վարդապետ

«Եբաց զբերան իւր Յոբ եւ ասէ. Գիտես, ամենագէ՛տ, ոչ եթէ տէրութեանդ քում հակառակ կացի, այլ վասն զի նախատէին զիս բարեկամք իմ, յողորմութիւնդ քո ապաւինեալ խաւսէի աղերսիւ, եւ ա՛րդ, մի՛ յաձախէր առ իս հարցուածս մեծամեծս, զի ես հող եմ եւ մոխիր, ընդ չարին եւեթ գիտեմ մարտնչել. ոչ եթէ ընդ քեզ, Տէ՛ր, պատերազմիցիմ, ընդ սատանայի գիտեմ կռուիլ, իսկ ընդ քեզ ոչ ժպրհիցիմ խաւսել»[80]:

Գրիգոր Տաթեւացի

«Բան սրբոյն Եփրեմի. Հակառակել հոգւոյն է, մարտն՝ մարմնոյ, կռիւ՝ բանիւ: Մի՛ յաձախեցէր, որպէս Ադամ, զի ես հող եմ ե՛ւ յերկրէ, ե՛ւ տկար, ե՛ւ տգէտ, դու՝ երկնաւոր, ե՛ւ կարող, ե՛ւ իմաստուն, զի՞ հարցանես յինէն: Դու՝ բնութեամբ բարի, եւ ես՝ ստեղծմամբ, այլ չարն կամօք եւ գործով: Վասն այն ընդ նա կռուիմ եւ ոչ ընդ քեզ»[81]:

Շարունակենք այս շղթան: Երբեմն Վանական Վարդապետի քաղվածո մեկնության լուսանցային անհղում մեջբերումները Սբ Գրիգոր Տաթեւացու լուծմունքում բացահայտվում են հեղինակների անվանական նշումներով: «Բազէ տարածեալ զթեւս» (Յոբ ԼԹ 26) աստվածաշնչյան խոսքը մեկնելիս Գրիգոր Տաթեւացին մեջբերում է Փիլոն Եբրայեցու երկերից. «Որպէս ասէ Փիլոն վարդապետն Եբրայեցւոց. «Յաշխարհն հնդկաց, ընդդէմ հարաւոյ մայրեացն, ի վերայ օդոյն տարածեալ զթեւս անշարժ կայ բազէ. մինչ շարժի անտառն ի հողմոյ եւ աղաւնիքն անկանին յոստոցն՝ ի վերայ հարձակի»[82], *իսկ Վանական Վարդապետը նույն*

---

[80] ՄՄ 1166, թ. 97բ:
[81] ՄՄ 1115, թ. 116բ:
[82] ՄՄ 1115, թ. 99ա: Հմմտ. *Փիլոնի Եբրայեցւոյ Բանք երեք չեւ ի լոյս ընծայեալք,* աշխատ. հ. Սկրտիչ վրդ. Ալգերեանց, Վենետիկ, 1822. Յաղագս կենդանեաց, էջ 143:

այս հատվածը մեջբերում է առանց ուղղակի հղում կատարելու՝ «Կամ թէ քումէ իմաստութենէ եկաց. բազէ տարածեալ...»[83] *եւ շարունակում նույնությամբ:*

ՄՄ 1138 գրչագրում (1347 թ.) «Ի բանէն Յոբայ Բարսղի ասացել» սկսվածքով միավորում ի մի են բերված Հոբի գրքի՝ Բարսեղ Մեծի, Փիլոն Եբրայեցու, Որոգինեսի եւ Եփրեմ Ասորու մեկնություններից (կամ այլ միավորներից) քաղվածքներ (հեղինակային նշումները կատարված են լուսանցքում): Այս միավորում կա Փիլոն Եբրայեցուն վերագրվող մի հատված, որը բառացի կրկնված է Վանական Վարդապետի քաղվածո երկում, սակայն լուսանցքում հեղինակի անուն չկա: ՄՄ 1138 ձեռագրի սույն հատվածը ասես լրացնում է Վանական Վարդապետի օգտագործած երկերի ցանկը: Սբ Գրիգոր Տաթեւացու լուծմունքում գործածված ենք տեսնում այս միտքը, բայց ոչ բառացի[84]*:*

Փիլոն Եբրայեցի	**Վանական Վարդապետ**
«Բան. Երթեալ իցե՞ս յակն ծովու: Մեկնութիւն. Տեսէ՞ր, ասէ, զԼեւիաթան գնդակօքն արգելու զակն անդընդոց եւ այնչափ թողուցում ինչ, զի բաւական ծածկիլ իւրոյ մարմնոյն»[85]:	«Հասեալ իցե՞ս յակն ծովուն (հմմտ. Յոբ ԼԸ 16): Տեսէ՞ր, ասէ, զԼեւիաթան գնդակաւքն արգելու զակն անդընդոց եւ այնչափ թողացուցանեմ ինչ, զի բաւական ծածկիլ իւրոյ մարմնոյն»[86]:

Նույն այս միավորում տեղ են գտել Հոբի գրքի երեք համարների՝ Որոգինեսի անվամբ մեկնություններ, որոնք նույնությամբ գտնում ենք Վանական Վարդապետի երկում, իսկ Գրիգոր Տաթեւացին Որոգինեսի խոսքերն օգտագործում է հատվածաբար՝ միահյուսված իր մտքերին: Օրինակ՝

---

[83] ՄՄ 1166, թ. 89ա:
[84] Հմմտ. ՄՄ 1115, թ. 113բ:
[85] ՄՄ 1138, թ. 216ա:
[86] ՄՄ 1166, թ. 84ա:

Որոգինես	Վանական Վարդապետ	Գրիգոր Տաթեւացի
«Բան. Համբարեա՞լ կայցէ: Մեկնութիւն. Զդարպանդա դրանն բանալն Նեռինն հրամանաւ»[87]:	«Համբարեա՞լ կայցէ: ....ընդ որս իմանի եւ ժամանակ երեւելո Նեռինն զդարբանդայ դռանն բանալն Նեռինն հրամանաւ»[88]:	«Բան. Համբարեա՞լ են: Լուծումն. ....Տասներորդ՝ Նեռն, յորժամ բանայ զդուռն դարբանդաց»[89]:

Այսպիսի մեկ-երկու հատվածներ էլ վերաբերում են Բարսեղ Մեծի անվամբ մեջբերումներին, որոնք Սբ Գրիգոր Տաթեւացու երկում հեղինակային են, իսկ Վանական Վարդապետի երկում լուսանցային որեւէ նշում չկա: ՄՄ 1138 գրչագրում տեղ գտած վերոհիշյալ միավորի ոչ միայն խորագիրն է Բարսեղ Մեծին վերագրված, այլ նաեւ տվյալ հատվածի դիմաց լուսանցային նշումն է ցուցում Բարսեղ Մեծին:

Բարսեղ Մեծ	Գրիգոր Տաթեւացի
«Եթէ առ քեզ կարգեաց զլոյս առաւաւտուն: Մեկն. Այն, որ յառաջնումն աւուրն համասփիւռէր եւ ի Դ (4)՝ ակն տուընջեան եղեւ նախքան զքո գոյացութիւն»[90]:	«Զի՞նչ երկիր իցէ, յորում լոյսն ագանիցի: ....լոյսն համասփիւռ, յառաջնումն աւուր գոյացեալ, եւ զերիս գիշերն ի վերին արփին կցեալ՝ ըստ ոմանց, եւ կամ՝ ի դրախտն ժողովեալ, ըստ սրբոյն Բարսղի»[91]:

---

[87] ՄՄ 1138, թ. 216ա: Հմմտ. *Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդ ի Հայս, որ են մեկնութիւն Ծնունդոց, եւ Ելիս, եւ Ճառք ի Սամփսոն, ի Յովնան, եւ յերիս մանկունս կամ ի հրեշտակս*, աշխատ.՝ Հ. Սկրտիչ աթոռակալ վարդապետի Մխիթարեան Ալգերեանց, Վենետիկ, 1826, էջ 604:

[88] ՄՄ 1166, թ. 85ա:

[89] ՄՄ 1115, թ. 92ա:

[90] ՄՄ 1138, թ. 216ա:

[91] ՄՄ 1115, թ. 91ա: Հմմտ. *Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոց Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն*, Ճառ Բ, Վենետիկ, 1830, էջ 36, 39-40:

Հոբին, նրա համբերությանը, հավատին Բարսեղ Մեծն անդրադառնում է իր ճառերում, երբեմն մանրամասնում է աստվածաշնչյան դրվագները եւ փորձում նահապետի օրինակով ցույց տալ քրիստոնյայի իրական կերպարը, աստվածահաճո կենցաղավարությունը, որի մասին առավել ծավալուն մեկնաբանում է Իսիքիոս Երուսաղեմացին իր նշյալ երկում: Բարսեղ Մեծը գրում է. «Մի՞թէ ադամանդեայ էր Յոբայ սիրտն: Մի՞թէ ի քարանց էին արարեալ նորա աղիքն: Կոտորեցան նորա մանկունքն ի վայրկեան ժամանակի, առանց վիրի խորտակեալք ի տան ուրախութեան, ի ժամանակի վայելիցն, ի վերայ շարժեալ նոցա սատանայի զտունն: Եւ ոչ զսեղանն արեամբ շաղախեալ, եւ ոչ զմանկունսն զանազանապէս ըստ ժամանակի ծնեալս, հասարակ անկեալս կենացն վախճանաւ: Ո՛չ հառաչեաց եւ ո՛չ արձակեաց ձայն ինչ անտոհմիկ, այլ զհոչակելին զայն եւ առ ամենեսին գովեալ գոհութիւնն բարբառեցաւ՝ «Տէր ետ եւ Տէր առ, որպէս եւ Տեառն թուեցաւ, այնպէս եղեւ: Եղիցի անուն Տեառն աւրհնեալ» (Յոբ Ա 22): Մի՞թէ անախտակից էր այրն: Եւ զիա՞րդ, որ եւ յաղագս ինքեան ասէ՝ ես լացի ի վերայ ամենայն նեղելոյ (հմմտ. Յոբ Լ 25): Այլ մի՞թէ արդեաւք ստեաց զայս ասելով: Եւ համայն վկայէ նմա ճշմարտութիւնն, զի առ այլովք առաքինութեամբ եւ ճշմարտի էր: Քանզի՝ այր անբամբաս, արդար, սուրբ, ճշմարիտ (հմմտ. Յոբ Ա 1)»[92]*: Մեկ այլ ճառում խոսելով հավատի եւ գործերի մասին՝ նա վկայակոչում է նաեւ Հոբին. «Եւ առ արութիւն խրատեսցի ի Յովբայ, որ ոչ միայն առ ընդդիմութիւն կենաց փոխեցելոյ նմա աղքատ ի մեծատանէ եւ անորդի ի բարիորդութենէ ի միում վայրկեան ժամանակի եղեալ, եկաց մնաց նոյն ինքն անշարժ ամենայն ուրեք զանձինն խորհուրդս ողջ պահելով եւ բարեկամացն ի մխիթարութիւն եկելոցն եւ ի վերայ եղելոցն, եւ ձգելոց նմա զցաւականն ոչ զայրացաւ: Դարձեալ գիտելով զիարդ հեզ միանգամայն եւ մեծ անձն լիցի, որպէս զի ցասմամբ առ մեղսն վարեսցի,*

[92] *Գիրք պահոց,* Ճառ ԻԶ. *Յաղագս գոհութեան,* էջ 356-357:

իսկ զգաւնութեամբ առ մարդիկ գտցէ այնուհետեւ արի ըստ Աստուծոյ բարեգործութեանց, հեզ եւ անշարժ յառ թշնամեացն փոխատրութիւնս»[93]*:*

Մեկնողական ինքնուրույն գրականության ստեղծման իսկ օրերից, հայ մատենագիրներն իրենց մեկնությունները շարադրելիս օգտվել են թե՛ այլաբանական-խորհրդաբանական եւ թե՛ տառացի-բառացի մեկնողական մեթոդներից: Խնդրո առարկա լուծմունքը եւս կրում է այդ առանձնահատկության կնիքը: Գրիգոր Տաթեւացին, օգտվելով իրեն նախորդող մեկնիչների երկերից, երկնել է յուրատեսակ աշխատություն, որը մաս է կազմել Սյունյաց աշխարհի համալսարանական դասախոսությունների շղթայի:

Գրիգոր Տաթեւացու Հոբի գրքի մեկնության տեսակը լուծմունք է[94]*, ինչպես նշում է երկի վերնագրում՝ «Այս ինչ է լուծմունս գրոց մեկնութեանն Յովբայ»:*

Այն, չնայած իր մեծածավալ եւ ամբողջական լինելուն, աչքի է ընկնում կարճառոտ բացատրություններով. հեղինակը հնարավորին չափ սեղմ եւ բովանդակալից է շարադրել իր մեկնությունը: Ոճական առանձնահատկություններից է բառաբացատրությունը. երբեմն մեկ բառը մեկնաբանելու համար առանձնացրել է տարբեր վերնագրեր եւ փորձել տվյալ հարցի պարզաբանումը ներկայացնել առավել ընդարձակ: Մյուս յուրահատկությունն այն է, որ հեղինակը Հոբի գրքի ոչ բոլոր համարներն է ընդգրկել, այլ

---

[93] *Գիրք պահոց*, ՃառԻԳ. *Թուղթ առ սուրբն Գրիգոր Աստուածաբան՝ եպիսկոպոս Նազիազու՝ յաղագս վարուց*, էջ 330-331:

[94] Մեկնողական ժանրերի մասին տե՛ս **Անասյան Հ.**, *Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ.*, հտ. Ա, Երեւան, 1959. Ներածություն. **Անթապյան Փ.**, *Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ*, ԲՍ, 15, էջ 60-94. **Անթապյան Փ.**, *Վարդան Արեւելցի. կյանքն ու գործունեությունը*, գիրք Բ, Երեւան, 1989, էջ 175-215. **Շիրինյան Մ. Է.**, *Քրիստոնեական վարդապետության անտիկ եւ հելլենիստական տարրերը (հայկական եւ հունական դասական ու բյուզանդական աղբյուրների բաղդատությամբ)*, Երեւան, 2005, էջ 132-157. **Շիրինյան Մ.-Է.**, *Մեկնողական ժանրի կազմավորումը եւ զարգացումը Հայաստանում*, «Աշտանակ» հայագիտական պարբերագիրք, թիվ Գ, Երեւան, 2000, էջ 36-64:

միայն խրթին հատվածների կամ բառերի մեկնաբանությունները: Սբ Գրիգոր Տաթեւացին ընտրողաբար է անդրադառնում այն համարներին, որոնք, ըստ նրա, առավել դժվարընկալելի են իր սաների համար: Լուծմունքում նա բացատրում է նաեւ Հոբի գրքի՝ տարբեր մեկնողական երկերում առկա այն բարդ բառերի եւ հատվածների մեկնաբանությունները, որոնք օգտագործել են մեկնիչները՝ նյութը պարզաբանելու համար. վերջիններս Գրիգոր Տաթեւացու օրոք արդեն անընկալելի են եղել եւ իմաստային բարդություն են ներկայացրել: Այդ բառերը կամ բառակապակցությունները հաճախ աստվածաշնչյան բնագրի հետ կապ չունեն եւ երկերում տեղ գտած մեկնության բացատրություններ են:

Մեկնողական խոսքում կիրառվում են տարբեր հնարներ. երբեմն Աստվածաշնչի այլ գրքերից մեջբերված հատվածները հեղինակը մեկնում է երկարաշունչ ճառով, որպեսզի եւս մեկ անգամ ընդգծի Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանական ճշմարիտ տեսակետը, երբեմն էլ խոսքն արտահայտում է մեկ-երկու բառով: Նման դեպքերում աչքի է զարնում Գրիգոր Տաթեւացու վարպետությունը. նա կարողանում է հմտությամբ կամրջել՝ համադրել, զուգադրել հինկտակարանյան ու նորկտակարանյան տեղիները: Ինչպես մյուս մեկնողական երկերում, այստեղ եւս, Գրիգոր Տաթեւացին իր խոսքի ճշմարտացիության երաշխիք է համարում Աստծու խոսքը: Ըստ նրա՝ եթե մեկնվող հատվածը հաստատվում է Աստվածաշնչով, ապա այն ստուգապատում եւ ճշմարիտ է: Թերեւս Սբ Գրիգոր Տաթեւացին եւս առաջնորդվում է Վանական Վարդապետի այն խոսքերով, թե՝ «...ճշմարիտ են բանք ամենայն սրբոցն, որ ի Գիրս հաստատեալ է ի Հոգւոյն Սրբոյ առաւել քան ի մեռելոցն յարուցելոց»[95]:

Երբեմն Սբ Գրիգոր Տաթեւացու մեջբերած աստվածաշնչյան տեղիները ճշգրտությամբ չեն համընկնում բնագրի հետ. հավա-

[95] **Քէօսէեան Յ.**, *Էջեր Վանական վրդ. Տաւուշեցու մատենագրական ժառանգութիւնից, «Վանականի [...] նախերգան [ատենական?]/// եղող եւ զի էր նա յայսմ ժամանակի պայծառ քան զարեգակն»*, «Հանդէս ամսօրեայ», 2020, էջ 30:

նաբար նա անգիր հիշողությամբ է մեջբերել, հաճախ էլ Աստվածաշնչից ընտրված հատվածը ձեւակերպել է հարցումով, ապա՝ շարադրել մեկնաբանությունը:

«*Հարց.* Զի՞նչ տեղի խաւարի (ԼԸ 19)։ *Պատասխանի.* Նոյնպէս եւ տեղիք խաւարին բազում է, զոր ասեն վարդապետք տասն կերպիւ. նախ եւ առաջին՝ խաւարն անգոյ եւ սկզբնածին։ Եւ զի գոյութիւն ոչ ունի, եւ ոչ տեղիք, ասի, նման գոյացութեան՝ այլ պակասութիւն լուսոյ[96]։ Եւ ասէ Գիրն. Խաւար ի վերայ անդընդոց (Ծնն. Ա 2)։ Երկրորդ՝ տեղիք խաւարի խաւարասէր թշնամին, ասի։ Երրորդ՝ դժոխքն եւ տարտարոսք՝ տեղիք խաւարին սատանայի։ Չորրորդ՝ տունն Հրէից, որ խաւարեցաւ, ըստ այնմ. Զոր ասեմ ձեզ ի խաւարասէր տանս Յակովբայ, ասացէք ի լոյս հեթանոսաց (Ես. ԽԹ 6)։ Հինգերորդ՝ նեռն տեղի հանգստեան խաւարին։ Վեցերորդ՝ խաւարն արտաքին, ուր հանէ Տէր զմեղաւորս։ Եւթներորդ՝ խաւար անհաւատութիւնն է։ Ութերորդ՝ խաւար մեղքն է։ Իններորդ՝ խաւար տգիտութիւնն է եւ տրտմութիւն, զի անհաւատն եւ մեղաւորն եւ տգէտն տեղիք են խաւարի։ /92ա/ Տասներորդ՝ խաւարն զգալի, ուր Արեգակն ընթանայ միշտ լոյս է՝ ի վերին եւ ի ներքին կիսագունդս։ Այսքան վասն տեղոյ լուսոյ եւ խաւարի»[97]։

Ինչպես նշեցինք, տառացի-բառացի մեկնողական մեթոդի կողքին կիրառել է նաեւ խորհրդաբանական-այլաբանական մեթոդը:

«***Թէ ծով է աշխարհս*** (ԽԱ 22)։ Ծով կոչի աշխարհս վասն չորից. նախ՝ զի միշտ խռովութիւն է։ Երկրորդ՝ բազում կենդանիք գոն։ Երրորդ՝ ոչ զգամք զնաւս մեր։ Չորրորդ՝ ոմանք հասանին յեզր եւ բազումք ընկղմին մեղաւք եւ դաժան է նաւաբեկութիւն մեղաց վասն չորից. նախ՝ աստ հոգի ընկղմի եւ անդ՝ մարմին։ Երկրորդ՝ աստ մեղաց ծով եւ անդ՝ ջուր։ Երրորդ՝ անդ ժամանակեայ եւ աստ /113ա/ յաւիտենից։ Չորրորդ՝ նա ի կէանս յառնէ, եւ սա ի մահ տանջի յարութեամբն»[98]։

---

[96] *Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոց Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն,* Ճառ Բ, Վենետիկ, 1830, էջ 29-30:
[97] ՍՍ 1115, թ. 91բ-92ա:
[98] Նույն տեղում, թ. 112բ-113ա:

Հետեւելով հայ մեկնողական ավանդության «սկզբունքներին»՝ այս լուծմունքում եւս Սբ Գրիգոր Տաթեւացին նրբորեն ագուցել է այլաբանական ու բառացի մեթոդները:

Լուծմունքի առանձնահատկություններից են նաեւ մեկնաբանական ոչ միանման ոճն ու գործիքակազմը: Սովորաբար մեկնվող հարց-հատվածների համար տալիս է մեկից ավելի դասակարգված պատասխան-բացատրություն, որոնք բնորոշ են նրա գրեթե բոլոր երկերին:

Որոշ հատվածներ առանձնացրել եւ վերնագրել է մեկ կամ երկու բառով, որոնք ուղղակի կապ չունեն Հոբի գրքի բնագրային բառերի հետ, սակայն հանդես են գալիս որպես «մեկնության մեկնություն», եւ խորագրի ներքեւում մանրամասն շարադրել:

«***Վասն աբեղայից***[99]*:* Աբեղայ: [*Լուծումն.*] Նախ՝ թարքմանի հայր: Երկրորդ՝ քրիստոնեայ: Երրորդ՝ սրբասէր կամ սրբարար ի պատկեր երից անձանցն, զի ծնանի հոգէպէս եւ պատարագէ եւ սրբէ: Իսկ անարժանք խաբեբայ եւ կեղծաւոր եւ մամոնասէր կոչի»:

Ինչպես արդեն վերեւում նշեցինք, հեղինակը շարադրանքում հարկ է համարում անդրադառնալ նախորդ մեկնիչների երկերում օգտագործված եւ իր ժամանակի համար արդեն իսկ անհասկանալի՝ մեկնության արժանի բառերին, որոնք հաճախ հիմնավորում է աստվածաշնչյան մեջբերումներով:

Մեկնվող հատվածներում առկա են ոչ միայն աստվածաբանական լրացումներ, այլ նաեւ փիլիսոփայական եզրերի բացատրություններ, որոնք նպաստում են աստվածաբանական բառն ու միտքը առավել հստակ ընկալելուն. «....նախքան զստեղծանելն, որ է տեսութիւնն Աստուծոյ եւ ի ստեղծանելն եւ յետոյ՝ նախախնամելն: Զայսմանէ ասէ Պորփիւր[100]. Նախքան զբազումս, ի բազումս եւ ի վերայ բազմաց»[101]:

---

[99] Հմմտ. ՍՄ 1115, թ. 111բ:

[100] Տե՛ս *Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի. Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1833. «Դաւթի փիլիսոփայի Ներգինացւոյ Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի», պրակ Ը, էջ 275 (այսուհետ՝ *Ներածութիւն Պորփիւրի*): Բնագիրը տե՛ս նաեւ՝ ՄՀ, հտ. Գ, Ջ դար, պրակը Ը, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 240:

[101] ՍՄ 1115, թ. 77բ:

Սբ Գրիգոր Տաթեւացու լայն մտահորիզոնի, մեկնությունների եւ Աստվածաշնչի գրքերի բացառիկ իմացությունը եւ կիրառումը երեւում է նաեւ այս երկում, քանի որ բազմաթիվ կարեւոր տեղեկությունների ենք հանդիպում աշխարհագրության, աստղագիտության, բնագիտության եւ այլ ոլորտներից:

Երկում Գրիգոր Տաթեւացին իր խոսքի հաստատման համար առաջնային է համարում սուրբգրային վկայությունները[102]*: Սեփական խոսքը հաստատելու համար երբեմն նշում է՝ «ասեմ իմն վկայութեամբ»*[103]*, հաճախ էլ միեւնույն հարցի շուրջ նյութը չծանրաբեռնելու համար հղում է իր մյուս երկերին՝ «Գիրք հարցմանց»-ին, «Քարոզգրքեր»-ին, «Երգ երգոցի մեկնության»-ը եւ այլն, որոնցում տվյալ հարցերի մասին բացատրությունները երկարաշունչ են. «Եւ գտցես զայս ի Հարցմանց յերրորդ հատորն, ԺԹ համարին»*[104]*, «Վասն սգոյ տե՛ս ի Հարցմունք Ժ հատորն, ի Դ համարն»*[105] *կամ «Ի Քարոզն տե՛ս»*[106]*, կամ «Գտցես եւ զյատկութիւն ձիոց ի յԵրգս երգոցն, յեօթն համարն»*[107] *եւ այլն:*

Լուծմունքը համեմված է նաեւ բարոյախրատական, քրիստոնեական ճշմարիտ կենցաղավարության հորդորներով. «....պարտ է զհոգին ի յԱստուած [յ]անձնել ի ժամ մահուանն՝ ի յանդիմանութիւն նոցա, որք զմարմինն հոգան, թէ՛ թապութով, եւ փառաւք թաղեցէք, եւ զհոգին ոչ հոգան կամ զղջմամբ կամ խոստովանութեամբ»[108] *եւ այլն:*

Լուծմունքը կազմելիս Տաթեւացին օգտվել է փիլիսոփայական, աստվածաբանական թարգմանական եւ ինքնուրույն մեկնողական հարուստ ժառանգությունից, ինչի մասին են վկայում նրա մեջբերած բազմաթիվ օրինակները փիլիսոփաների, Ընդհանրական եւ Հայ եկեղեցու հայրերի աշխատություններից: Երկում

---

[102] ՄՄ 1115, թ. 109ա:
[103] Նույն տեղում, թ. 110բ:
[104] Նույն տեղում, 10բ, վերոնշյալը համապատասխանում է՝ *Գիրք հարցմանց*, հտ. Գ, պրակ ԺԹ, էջ 144-145:
[105] Նույն տեղում, թ. 12ա:
[106] Նույն տեղում:
[107] Նույն տեղում, թ. 99ա. հմմտ. **Գրիգոր Տաթեւացի**, *Երգ երգոցի մեկնությունը*, Երեւան, 2005, էջ 26-27:
[108] Նույն տեղում, թ. 19բ:

նկատելի է աստվածաբանական խնդիրների, ձեւակերպումների վրա Կապադովկյան հայրերի նորպլատոնական փիլիսոփայական հայացքների կնիքը: Սակայն օգտվելով իր նախորդների աշխատություններից՝ անգամ իմաստային նմանությունների, երբեմն բառացի կրկնությունների դեպքում էլ Գրիգոր Տաթեւացին ցուցաբերում է ինքնուրույն ոճ, միտք եւ մատուցման այլ եղանակ, որոնցում անխզելիորեն կապված են փիլիսոփայությունն ու աստվածաբանությունը[109]*: Այստեղ կարելի է նշել, որ փիլիսոփայական երկերի հայացումն ու դրանց ուսուցանումը դպրոցներում, վարդապետարաններում նպատակ ունեին խթանելու աստվածաբանական ինքնուրույն մտքի զարգացումը, պահպանումն ու փոխանցումը: Գրիգոր Տաթեւացու լուծմունքում եւս տեսանելի է փիլիսոփայական եզրույթների եւ գաղափարների միջոցով աստվածաբանական-դավանաբական ճշմարտությունների արտահայտումն ու մեկնաբանումը:*

Այս տեսանկյունից դիտելիս խնդրո առարկա երկը եւս բացառություն չէ, որում անխզելիորեն կապված են փիլիսոփայականն ու աստվածաբանականը: Այդ են վկայում հեղինակի ուղղակի մեջբերումները Սեկունդոս փիլիսոփայի[110]*, Արիստոտելի*[111]*,*

---

[109] Այս փոխազդեցության մասին է նշում նաեւ Գարեգին Ա-ն. «Եկեղեցական հայրերը, որոնց մեծագոյն մասը հեթանոսութենէ դարձի եկած եւ յունական մշակոյթի ու փիլիսոփայութեան մէջ կազմուած մտաւորական անձնաւորութիւններ էին, տեսակ մը զուգակցութիւն ստեղծեցին յայտնութենական եւ փիլիսոփայական աստուածպատկերացումներու միջեւ, յունական աստուածախօսային փիլիսոփայութիւնը պատշաճեցնելով քրիստոնէական Աստուծոյ անձնաւոր նկարագրին». **Գարեգին Ա**, *Աստուածաբանութիւն,* հտ. Գ, Կանադա, 2005, էջ 79:

[110] ՍՍ 1115, թ. 30ա:

[111] Նույն տեղում, թ. 65աբ: «Դարձեալ ասէ Արիստոտէլ վասն չափոյ տարերաց, եթէ՝ ջուրն տասնապատիկ պարզ է, քան զերկիր եւ թեթեւ, եւ օդն՝ հարիւրապատիկ, եւ հուրն հազարապատիկ, ուստի ի յայտէ, որպէս յորժամ տաս լիտր փայտն այրի՝ մին լիտր մնայ հողին, եւ այլն լուծանի»: «Հողմն կրկին է, նախ սաստիկ հողմ, որ երկոտասան ասէ Արիստոտէլ ի չորս կողմանց հնչեցեալ». հմմտ. *Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի. Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1833. **Արիստոտէլ**, *Յաղագս աշխարհի*, էջ 607-608, 612:

Պլատոնի[112]*, Պորփյուրի*[113]*, Փիլոն Եբրայեցու*[114] *երկերից։*

Վարդապետը եկեղեցու հայրերի աշխատություններից եւ գրվածքներից մեջբերումներ անելիս հիշատակել է Եփրեմ Ասորու[115]*, Եպիփան Կիպրացու*[116]*, Հովհան Ոսկեբերանի*[117]*, Բարսեղ Կեսարացու*[118]*, Կյուրեղ Ալեքսանդրացու*[119]*, Դիոնիսիոս Արիսպագացու*[120]*, Ստեփանոս Սյունեցու*[121]*, Դավիթ Վարդապետի*[122] *անունները, իսկ Հովհաննես Վանական Վարդապետի անունը նա հիշատակում է միայն երկի հիշատակարանում*[123]*։*

Սբ Գրիգոր Տաթեւացին լուծմունքը կիրառել է իր դասախոսությունների շղթան լրացնելու համար, քանզի այս եղանակով

---

[112] ՍՄ 1115, թ. 113բ: «Վասն որոյ ասէ Պղատոն ի *Տարբերութիւնս*. Բանական անմահ, բանական մահկանացու, անբան անմահ, անբան մահկանացու». հմմտ. *Ներածութիւն Պորփիւրի*, պրակք ԻԳ, էջ 320:

[113] Նույն տեղում, թ. 77բ: Խոսելով Աստծու գործերի երեք կարգերի մասին՝ մեջբերում է Պորփյուրի հետեւյալ միտքը. «....երեք է կարգ ճանապարհիւն Աստուծոյ, այսինքն՝ նախքան ստեղծանելն, որ է տեսութիւնն Աստուծոյ, եւ ի ստեղծանելն, եւ յետոյ՝ նախախնամելն: Զայսմանէ ասէ Պորփիւր. նախքան զբազումս, ի բազումս եւ ի վերայ բազմաց». տե՛ս *Ներածութիւն Պորփիւրի,* էջ 275: Բնագիրը տե՛ս նաեւ՝ ՍՀ, հտ. Գ, Ջ դար, պրակք Ը, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 240:

[114] Նույն տեղում, թ. 99ա: Այս օրինակի մասին վերը խոսեցինք, տե՛ս հղում 82:

[115] Նույն տեղում, թ. 116բ:

[116] Նույն տեղում, թ. 62բ-63ա:

[117] Նույն տեղում, թ. 63բ. «....ըստ ճշմարիտ վարդապետացն եւ Ոսկեբերանին, որ ասէ. «Կիրակէն ի մէջ գիշերի յարուցեալ զՔրիստոս եւ յինն ժամու ուրբաթուն աւանդեալ զոգին». հմմտ. *Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպօլսի Եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս*, Գիրք Գ, Ճառ ԼՁ, Վենետիկ, 1826, էջ 137:

[118] Նույն տեղում, թ. 91ա:

[119] Նույն տեղում, թ. 56ա:

[120] Նույն տեղում, թ. 56ա:

[121] Նույն տեղում, թ. 77ա:

[122] Նույն տեղում, թ. 77աբ: Մատենագիրը նկատի ունի Դավիթ Քոբայրեցուն, որի երկից մեջբերումներ ունի նաեւ Վանական Վարդապետը. տե՛ս **M. E. Shirinian**, *The Liber Causarum:* A Mediaeval Armenian Isagogical collection, Le Muséon, 2017, vol. 130 (1-2), p. 162.

[123] Նույն տեղում, թ. 123ա:

բացատրվում էր ոչ այնքան Աստվածաշունչն իր ամբողջության մեջ, որքան Եկեղեցու նշանավոր հայրերի մեկնողական երկերը, դրանցում առկա բարդ բառերի եւ բառակապակցությունների մեկնաբանություններն ու բացատրությունները՝ նպատակ ունենալով նպաստելու սրանց հղկված, կատարելագործված, բյուրեղացված ձեւով հմտորեն կիրառմանը, որովհետեւ նրա օգտագործած աղբյուրներից մեջբերումները զուտ բացատրական օղակ են եղել նախորդ մեկնությունները հասկանալու համար: Այս երկը նրա համար եւս մեկ առիթ էր՝ շեշտելու եւ ընդգծելու Հայ եկեղեցու դավանանքի ճշմարտացիությունը եւ կարեւորությունը:

Հին Կտակարանում Աստծու հայտնության ձեւերը (θεοφάνια) մարդուն տարբեր են եղել[124]*: Օրինակ՝ Մովսեսի (Ելք ԺԹ) եւ Եղիայի (Գ Թագ. ԺԹ) հետ Տերը փոթորկի ու ամպի միջից խոսեց, իսկ ահա Հոբի գրքում հստակ նշվում է՝ «տեսա եւ լսեցի» (Յոբ ԽԲ 5): «Գրիգոր ասէ. այլ մրրկով եւ ամպովք (տե՛ս Թիւք ԺԲ 5-8)»*[125]*: Աստծու հայտնությունը Հոբ Արդարին շարադրվում է ԼԸ-ԼԹ գլուխներում, որոնք առանձնահատուկ ուշադրության են արժանացել հայ մատենագիրների կողմից եւ հայտնի են «Ո՞վ է դա» պայմանական վերնագրով*[126]*՝ հիմք ընդունելով ԼԸ գլխի սկսվածքը:*

«Ո՞վ է դա»-ի մեկնություններ են մեզ հասել Եղիշեի՝ երկու

---

[124] Այս մասին տե՛ս **Աջապահեան Միքայէլ վրդ.**, *Աստուծոյ պատկերը Հին Կտակարանում*, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հտ. Բ, Երեւան, 1992, էջ 68-85. **Мень Ал. протоиерей**, Исагогика. Ветхий Завет, Москва, 1982, с. 115, 122, 127, 157.

[125] *Գիրք պահոց*, էջ 305. *Ճառ Ի. Տեսութիւն Բարսղի եւ Գրիգորի գիտաւատոյ*:

[126] «Ո՞վ է դա»-ի մեկնությունների մասին առավել մանրամասն տե՛ս **Սարիբեկյան Է.**, *Գրիգոր Տաթեւացու «Լուծմունք Յոբայ» երկը*, Սեղմագիր, Երեւան, 2015. նաեւ նույն հեղինակի, *«Ո՞վ է դա»-ի մեկնությունները հայ մատենագրության մեջ (համեմատական վերլուծություն)*, Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ (Երեւան, 2017 թ., նոյեմբերի 28-30), Երեւան, 2018, էջ 18-27:

տարբեր խմբագրություններով[127]*, Համամ Արեւելցու*[128]*, Գրիգոր Նարեկացու*[129] *անուններով: ԼԸ-ԼԹ գլուխների մեկնության հատվածներում կարելի է հանդիպել նմանությունների. դրանք ե՛ւ բառեր են, ե՛ւ ամբողջական նախադասություններ, ե՛ւ իմաստային նմանություններ: Սրան զուգահեռ պետք է նշել նաեւ, որ Գրիգոր Տաթեւացու մեկնությունը ոճական առումով, նյութի ընդգրկունությամբ, թեմաների բազմազանությամբ տարբերվում է նշյալ մեկնություններից, եռամեծար վարդապետը ցուցաբերել է նոր մոտեցում, հանդես եկել նոր խոսքով:*

---

[127] Ե դարի մատենագիր Եղիշեի գրչին են վերագրվում Յոբ ԼԸ-ԼԹ գլուխների մեկնողական ծեռագրական երկու միավորներ. **Եղիշէ**, *Վասն բանիցն Յոբայ, զոր խաւսեցաւ Աստուած ընդ Յոբայ եւ առողջացոյց զնա, Նորին՝ այլաբանութեամբ եկեղեցւոյն*, հրատ.՝ Յ. Քէոսէեան, ՄՀ, հտ. Զ, Ը դար, (Յաւելուած), Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 1006-1008, 1009-1011:

[128] Համամ Արեւելցին ապրել եւ գործել է Թ դարի երկրորդ կեսին: Նրա գրչին են վերագրվում մի շարք գործեր, այդ թվում «Ողվ է դա»-ի մեկնությունը, որը մեզ է հասել երկու տարբերակով. **Համամ Արեւելցի**, *[Համամայ ասացեալ մեկնութիւն Ողվ է դա-ի]*, Ա, Բ տարբ., հրատ.՝ Յ. Քէոսէեան, ՄՀ, հտ. Թ, Թ դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 449-533: «Համամայ ասացեալ մեկնութիւն «Ողվ է դա»-ի» բնագիրը, որն իրականում երկու տարբերակներով պետք է ներկայացված լիներ, սակայն ՄՀ-ում շփոթմամբ երկու տարբեր խորագրերի ներքո ներկայացված են միեւնույն բնագրով: Համամ Արեւելցու մասին տե՛ս նաեւ **Եղիայեան Բ.**, *Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու*, Ե գիրք, Ներածութիւն Հին Կտակարանի, Անթիլիաս-Լիբանան, 1976, էջ 1463. **Պողարեան Ն. եպս.**, *Հայ գրողներ Ե-ԺԷ դար*, Երուսաղէմ, 1971, էջ 128-130. **Կոստանեանց Կ.**, *Համամ Արեւելցի*, Վաղարշապատ, 1896. **Անանյան Ծ. աբդ.**, *Համամ Արեւելցի՝ մեկնիչ Սուրբ Գրոց*, «Էջմիածին», Ե, 2009, էջ 49-58. **Քյոսեյան Հ.**, *Ներածություն հայ եկեղեցական մատենագրության*, Երեւան, 2018, էջ 210-214: Տոնապատճառային «Չորորդ շաբաթին երեքշաբաթի աւուրն» ընթերցվածքների միավորի հիմքում ընկած է Համամ Արեւելցուն վերագրվող «Ողվ է դա»-ի մեկնությունը. առավել մանրամասն տե՛ս *Տօնապատճառ ժողովածու. Վարդան Հաղբատեցու, Վարդան Արեւելցու եւ Հովհաննես Գանձակեցու խմբագրությունները*, Բնագիր. Մասն Ա, հրատ. պատ.՝ Օհանջանյան Ա., Ս. Էջմիածին, 2016, էջ 11:

[129] **Գրիգոր Նարեկացի**, *Մեկնութիւն «Ողվ է դա»-ի ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ*, հրատ.՝ Յ. Քէոսէեան, ՄՀ, հտ. ԺԲ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 884-910: Հեղինակային պատկանելության խնդիրներին առնչվող հարցերի շուրջ տե՛ս **Թամրազյան Հր.**, *Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն Ողվ է դա-ի» երկը*, ԲՍ, 20, Երեւան, 2014, էջ 45-49. **Թամրազյան Ա.**, *Գրիգոր Նարեկացուն վերագրվող «Մեկնութիւն «Ողվ է դա»-ի» երկը*, Երեւան, 2019:

Վերոնշյալ մեկնությունների կողքին հետագայում ստեղծվում են Հոբի գրքի ամբողջական մեկնություններ, որոնցից մեկը քաղվածո է, իսկ մյուսը՝ լուծմունք: Արդեն ԺԴ-ԺԵ դարերում դասավանդման ընթացքում Սբ Գրիգոր Տաթեւացին նկատում է, որ առկա է նախորդ դարերի մեկնիչների երկերը հասկանալու խնդիր, ինչը վարդապետն իր այս լուծմունքում փորձում է լուծել՝ անդրադառնալով ոչ միայն Հոբի գրքում տեղ գտած բարդ բառերի բացատրություններին, այլ նաեւ Հոբի գրքի՝ հայ մատենագրության մեջ հայտնի մեկնություններում տեղ գտած բարդ եւ անհասկանալի արտահայտություններին: Իր ձեռքի տակ ունեցած նյութը մատենագիրը հմտորեն վերաշարադրել է, կապել ժամանակի բառ ու բանի հետ, որոշ բառերի համար կիրառել նոր հոմանիշներ՝ դյուրացնելով բարդ բառերի իմաստի ընկալումը: Իմաստային, բառային որոշ կրկնություններ բնավ չեն նսեմացնում Գրիգոր Տաթեւացու ահռելի աշխատանքը, այլ ընդգծում են նրա աստվածաբանական մտքի վերլուծական կարողությունն ու աշխատասիրությունը, փոխանցում նրա ողջ ջանքն ու եռանդը, շեշտադրում նրա մտահոգությունը: Հոբի գիրքը եւս մեկ առիթ էր Սբ Գրիգոր Տաթեւացու համար՝ հետագա սերունդներին Հայ եկեղեցու ճշմարիտ դավանանքը դասավանդելու եւ փոխանցելու:

***Լուծմունքի աստվածաբանական դիտանկյունը**: Գրիգոր Տաթեւացու Հոբի գրքի լուծմունքը ուշագրավ է աստվածաբանական-դավանաբանական ձեւակերպումներով, եզրույթներով: Այն մի տեսակ խտացնում է մատենագրի փիլիսոփայական, աստվածաբանական, դավանաբանական եւ պատմագիտական հայացքները: Հեղինակն իր փիլիսոփայական հայացքները հիմնականում ներկայացրել է «Գիրք հարցմանց»-ում, բանասիրական-լեզվական հարցերը՝ «Նորին Գրիգորի Լուծումն համառօտ ի խրատ գրչութեան Գէորգեայ վարդապետի» եւ «Նորին Գրիգորի աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ Լուծումն համառօտ դժուարիմաց բանից ի գիրս գրչութեան որոյ Արիստակիսի հռետորէ» մեկնողական երկերում:*

Վարդապետի այս արժեքավոր երկը՝ Հոբի լուծմունքը, աչքի է ընկնում աստվածաբանական հարցերի լայն ընդգրկմամբ,

ինչը կարեւոր է Հայ Եկեղեցու աստվածաբանական մտքի պատմության ուսումնասիրման համար: Լուծմունքը, չնայած համառոտ շարադրանքին, շոշափում է գրեթե բոլոր խնդիրները՝ երրորդաբանական, քրիստոսաբանական, փրկագործական, եկեղեցաբանական, վախճանաբանական, մարեմաբանական եւ այլն[130]*: Այս խնդիրները, մտքերը արծարծված են երկի տարբեր մասերում: Քանի որ երկի նպատակն այլ է եղել՝ դարեր հետո եւս մեկ անգամ «քաղվածաբար», «մեկնության մեկնության» միջոցով Հոբի գրքի կարեւորությունը վերհանելը, Հոբ Արդարի օրինակով առ Աստված համբերության եւ հույսի կրակը վառ պահելը, ապա սա ընդամենը միջոց եւ առիթ է եղել մերթ ընդ մերթ խոսելու, համառոտակի ձեւակերպելու աստվածաբանական խնդիրների այն շրջանակը, որը կարեւորել է: Զոր օրինակ՝ «Ինքն գիտէ զտեղի նորա» (Յոբ ԻԸ 23) համարը մեկնելիս Տաթեւացին քննարկում է Աստծու «տեղը» եւ անդրադառնում նաեւ Երրորդության անձերին, նրանց հավասարությանը եւ մեկ լինելուն՝ մեջբերելով նաեւ նորկտակարանյան տեղիներ. «....զի ոչ ոք լնու զՀայր, եթէ ոչ Որդին եւ անդրադարձեալ, նոյնպէս եւ զՀոգին իմացիս»*[131]*:*

Ուշագրավ է Գրիգոր Տաթեւացու՝ «Ասէ Տէր ցԵլիփազ» (Յոբ ԽԲ 7) հատվածի վերաբերյալ մեկնաբանությունը, որտեղ նա անդրադառնում է Սուրբ Երրորդության անձերին. «Հարց. Վասն է՞ր Հոգին ոչ խաւսի, այլ՝ Հայր եւ Որդի: Պատասխանի. Ոմանք կարծեն, թէ զայս Հոգին խաւսի առ Ելիփազ՝ որպէս կարգն ցուցանէ: Ասեմք, թէ ոչ: Նոյն ինքն Բանն է, որ խօսի առ Ելիփազ, /115բ/ որ սրտագէտ ցուցանէ զինքն եւ պատարագ խնդրէ: Այլ ասեմք, թէ Երրորդութիւնն խաւսի աստ. նախ՝ զի Հայր է որպէս միտք եւ Որդի՝ որպէս Բան եւ Հոգին՝ որպէս խաւսք: Արդ, թէ Հայրն խաւսի եւ թէ Որդի, Հոգւովն խաւսի: Դարձեալ ասեմք, թէ

---

[130] Աստվածաբանական խնդիրների մասին առավել մանրամասն տե՛ս **Սարիբեկյան Է.**, *Գրիգոր Տաթեւացու «Լուծմունք Յոբայ» երկում առկա աստվածաբանական խնդիրները*, Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք. Գիտական հոդվածների ժողովածու, ԺԱ, Երեւան, 2016, էջ 59-86:

[131] ՍՄ 1115, թ. 64բ:

որպէս Հայր կրկին խաւսեցաւ եւ Որդին այժմ կրկին խաւսի, նոյնպէս՝ եւ Հոգին Սուրբ. նախ՝ ի Յոբ բնակէր եւ խաւսէր, որպէս ինքն ասաց. Հոգի աստուածեղէն շուրջ զինեւ (Յոբ ԻԷ 3), եւ երկրորդ՝ ի Մովսէս բնակեցաւ եւ գրեաց եւ ի Սողոմոն, յԵզր դպիր եւ յայլսն»[132]*: Մեկ այլ հատվածում եւս հեղինակը ձգտում է Սուրբ Երրորդության անձերի մեկ լինելը ընդգծել. «Իմաստութիւնն Աստուծոյ, եւ հանճար՝ Որդին, եւ Հոգին Սուրբ, որ է անձնաւոր գոյացութիւն կատարեալ»*[133]*: Օգտագործվում են թե՛ էութենական եւ թե՛ գործունեական բազմաթիվ ստորոգելիներ, որոնց միջոցով նկարագրում է Աստծու էությունն ու բնությունը, գործերը. միայն Աստված է սուրբ, իր բնությամբ արդար է*[134]*, անեղ է նրա իմաստությունը*[135]*, անտեսանելի, անշոշափելի զորություն է*[136] *եւ այլն: Աստծու զորությունն արտահայտվում է երկու ձեւով՝ «....արարչական եւ արքունական: Եւ է արարչութեանն յոչէից առնել եւ զեղեալն խնամել եւ արքունական՝ տիրել եւ դատել»*[137]*: Նույն կերպ երկուսի է բաժանում Աստծու գործը՝ «....ողորմութեան եւ արդարութեան: Եւ ողորմութեամբն արար, եւ արդարութեամբն խնամէ եւ դատէ»*[138]*: Սուրբ Երրորդության յուրաքանչյուր անձ ունի իր «գործը». «....առնելն՝ Հօր, խնամել՝ Հոգւոյն եւ դատելն՝ Որդւոյ»*[139]*:*

Որդին համագոյակից է Սուրբ Երրորդության մյուս անձերին՝ «ի մէջ երից անձանց է ծնունդ ի Հօրէ», Նա էր աշխարհի լույսը. «լոյս Բանն Աստուած, միաւորեալ ի հոգի եւ ի մարմին երկրաւոր,

---

[132] ՍՍ 1115, թ. 115բ:

[133] Նույն տեղում, թ. 40ա: «Իմաստություն» եզրի Աստվածաշնչի Հոբի գրքի մի քանի տեղիների հետ առնչությունների մասին տե՛ս **Անանյան Ծ. աբդ.**, *Իմաստության (ինքնա)կենսագրությունը Առ. Ը-ի աստվածաշնչային եւ հարակից գրական աղերսները*, «Էջմիածին», Է, 2009, էջ 9-16: Շարունակությունը՝ «Էջմիածին», Ը, 2009, էջ 9-21:

[134] Նույն տեղում, թ. 35ա:

[135] Նույն տեղում, թ. 101ա:

[136] Նույն տեղում, թ. 59ա:

[137] Նույն տեղում, թ. 100բ:

[138] Նույն տեղում, թ. 100բ:

[139] Նույն տեղում, թ. 101ա:

որպէս անաւթ արեգականն, եւ լոյս ընդ աւդ միացեալ»[140]*: Հաշտարարն է Հոր եւ արարածների. «հաշտեցոյց զՀայր ընդ արարածս», միջնորդն է հրեաների եւ հեթանոսների, ասել է թե՝ հավատավորների եւ անհավատների. «հրէից եւ հեթանոսաց միջնորդ է», խաղաղություն դնողն է հրեշտակների եւ մարդկանց միջեւ. «հրեշտակաց եւ մարդկան խաղաղութիւն արար»: Քրիստոսի երկու բնությունների անխառն եւ անշփոթ միավորման մասին են հետեւյալ մտքերը. «Յաստուածութիւն իւր միացոյց զմարդկութիւնս»*[141]*, «չորեքնիւթեայ մարմինն եւ եռամասնեայ հոգին եւ Բանն միացեալ է: Եւ դարձեալ, մարմինն եւ Հոգին եւ միտք եւ Բան եւ Աստուած Բանն միացեալ»*[142]*:*

Նշանավոր վարդապետը փրկագործական տնօրինության հետ է կապում Մկրտությունը, որը «....զխորհուրդ տնօրէնութեանն Քրիստոսի. նախ՝ զկուսական արգանդին, զի հոգովն ծնանիմք ի կոյս աւազանէն: Երկրորդ՝ զմկրտութեանն ի Յորդանան, զի յերրորդութիւնն մկրտիմք եւ լինիմք շնորհօք որդիք Աստուծոյ»[143]*: Լուծմունքի այս հատվածում օգտագործում է տիպաբանական վերլուծություն, որը կապում է փրկագործության դրվագի հետ. «Եւ զայս ամենայն բարձրագոյն փրկութիւնս, որ լինելոց էր Քրիստոսիւ, ասէ յառաջագոյն ի դէմս Յոբայ հոգին. «Վեցից վշտաց փրկեսցէ եւ յեթներորդին ոչ հասցէ առ քեզ [չար]» (Յոբ Ե 19): /18բ/ Այսինքն՝ յորժամ հասարակ ազգ մարդկան ի վեցից չարեացս փրկեցաք՝ առա[ն]ձնակի չարն այլ ոչ մերձենայ ի մեզ»*[144]*:*

Անդրադառնալով Սուրբ Հոգու աստվածությանը՝ Գրիգոր Տաթեւացին այն վերահաստատում է աստվածաշնչյան չորս տեղիներով՝ Ծնն. Ա 2, Յոբ ԼԳ 4, Յովհ. Դ 24, Գործք Ե 4[145]*:*

---

[140] ՍՍ 1115, թ. 91ա:
[141] Նույն տեղում, թ. 36բ:
[142] Նույն տեղում, թ. 121բ:
[143] Նույն տեղում, թ. 57ա:
[144] Նույն տեղում, թ. 18ա:
[145] Նույն տեղում, թ. 75աբ:

Հինկտակարանյան Հոբի գրքում շունչ *եւ* ոգի *բառերի զուգադիր գործածմանը հանդիպում ենք հինգ անգամ՝ Է 15, ԺԲ 10, ԻԷ 3, ԼԲ 8, ԼԳ 4 տեղիներում, առաջին երեքը՝ Հոբի արտասանած խոսքերն են, իսկ մյուս երկուսը՝ նրա բարեկամ Եղիուսի: Առաջին երկու համարներում գործածվում են* ոգի *եւ* շունչ *եզրույթները, իսկ մյուսներում՝* հոգի *եւ* շունչ, *որոնցում* ոգի*-ն հավասարազոր է* հոգու*-ն: Ըստ երեւույթին, նկատի ունենալով այս համարները, Սբ Գրիգոր Տաթեւացին նույնացնում է* հոգի*-ն եւ* շունչ*-ը. «Իսկ որ ասէ՝ հոգի եւ շունչ. նախ՝ միեւնոյն է հոգի եւ շունչ (հմմտ. Փիլ. Ա 27, Ա Թես. Ե 23): Դարձեալ, հոգի է, որ յինքեան մնայ եւ շունչ, որ արտաքս հեղու (հմմտ. Է 15): Եւ դարձեալ. հոգի գոյացական անձն է եւ շունչ՝ շնորհաւքն Է (7) արփեան, վասն որոյ գիրք Աստուածաշունչ կոչեմք»*[146]*:*

Քրիստոսաբանության ու փրկագործության հետ սերտորեն կապված է մարեմաբանությունը: Սբ Գրիգոր Տաթեւացին երկում «Վասն Աստուածածին Կուսին եւ գերեզմանին» խորագիր է առանձնացրել, որտեղ տիպաբանական մեկնության միջոցով զուգահեռներ է անցկացնում Աստվածածին Կույսի եւ Քրիստոսի գերեզմանի միջեւ՝ դրանք ներկայացնելով քսան կետով[147]*: Խնդրո առարկա լուծմունքում մեկ այլ տեղ մատենագիրը Աստվածածնին համեմատում է անկեզ մորենու*[148] *հետ. «....կոյսն Աստուածածին ինամսեայ զԲանն Աստուած յորովայնին կրեալ,*

---

[146] ՍՄ 1115, թ. 75բ:

[147] Նույն տեղում, թ. 52ա-53ա:

[148] Միջնադարյան հայ մատենագիրներից շատերն են իրենց երկերում Աստվածամորը նմանեցնում անկեզ մորենուն, ով «յորովայնի զայդ հուր կրեաց». *Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ,* Վենետիկ, 1932, էջ 21. «Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ». *Երանելւոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի գովեստ ի Սուրբ Աստուածածինն եւ ի միշտ Կոյսն Մարիամ ըստ յորջորջման նորին. եւ ի Սուրբ Գրոց լուծմունք նոցին, հոգեւոր իմաստիւք,* կազմ.՝ Յ. Քէոսէեան, ՄՀ, հտ. Գ, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 392. *Զաքարիայի հայոց կաթողիկոսի ի փոխումն Աստուածամաւրն,* կազմ.՝ Յ. Քէոսէեան, ՄՀ, հտ. Թ, Թ դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 351:

որպէս ետես Մովսէս զաւրինակ մորենին ի հուրն վառեալ եւ անկէզ մնացեալ»[149]*:*

Հինկտակարանյան գրքերի մեկնություններում հեղինակները որոշ անձերի (նաեւ՝ իրերի) անվանումներում, խոսքերում, արարքներում խորհրդաբանորեն տեսնում են Քրիստոսին: Նմանապես Գրիգոր Տաթեւացին այս լուծմունքում Հոբին դիտարկում է որպես Քրիստոսի նախօրինակը[150] *կամ ստվերը Հին Ուխտում. «Բազում իրաւք Յոբ օրինակ էր Քրիստոսի, որպէս աստ ասէ, նախ՝ մարգարէութեամբ, թագաւորութեամբ եւ քահանայութեամբ»*[151]*՝ զուգահեռ անցկացնելով Քրիստոսի եռակի ծառայության հետ՝ մարգարեություն, թագավորություն եւ քահանայություն: Լուծմունքում Գրիգոր Տաթեւացին գրում է, որ Հոբը նաեւ Ադամի խորհուրդն ունի. «....ի խորհուրդն Ադամայ, որ անկաւ յերկիր փշաբեր. «Անկաւ Յոբ յերկիր եւ յաղբեւս» (Բ 7-8)*[152]*:*

Ուշագրավ է մեղքի մասին բացատրությունը: Մեղքը նախ բաժանում է երկու տեսակի՝ սկզբնական *եւ* ներգործական*: Սկզբնական մեղքից զուրկ էր միայն Քրիստոսը. «Ամենեւին սուրբ յաղտոյ միայն Տէր մեր, իսկ միօրայն ունի զմեղս սկզբնական ծնօղացն»*[153]*: Եվ այս սկզբնական մեղքից մաքրվում եւ ազատվում են միայն Մկրտությամբ, իսկ ներգործական մեղքը մարդու իսկ ներսում է գործվում, որի պատճառով կարող են կարճանալ մարդու կյանքի օրերը*[154]*: Խոսելով յոթ մահացու մեղքերի կամ ինչպես հեղինակն է գրում՝* գլխաւոր[155] *մեղքերի մասին, նախ մեղքերի յոթ լինելը կապում է հոգու՝ եռամասնյա եւ մարմնի՝ քառամասնյա լինելու հետ, որոնցից առաջին երեքը՝ հպարտությունը, նախանձը, բարկությունը, ապականում են հոգին, իսկ մյուս չորսը՝ ծուլությունը, որկրամոլությունը, ագահությունն ու*

---

[149] ՍՍ 1115, թ. 91ա:
[150] Հմմտ. հունարեն ὁ τύπος:
[151] ՍՍ 1115, թ. 118բ:
[152] Նույն տեղում, թ.16ա:
[153] Նույն տեղում, թ. 41ա:
[154] Նույն տեղում:
[155] Նույն տեղում, թ. 20բ. «Զի թէպէտ մասնաւոր բազում են մեղք եւ անթիւք, այլ սոքա է (7) գլխաւոր մեղք են»:

բղջախոհությունը, ապականում են մարմինը. «...յեւթն մոլութիւնքն, որովք սատանայ վշտացոյց զմարդիկ եւ չարութեամբ կորոյս: Վասն զի հոգի մարդոյն Գ (3) մասն ունի, այսինքն՝ բան, ցասումն եւ ցանկութիւն, եւ մարմինն ի չորից տարերց է խառնեալ: Վասն որոյ եւթն են գլխաւոր մոլութիւնք մահացու, այսինքն՝ հպարտութիւն, նախանձ եւ բարկութիւն: Այս Գ (3) չարութեամբս զհոգիս մեր կորուսանէ սատանայ: Իսկ ծուլութիւն, որկորստութիւն, ագահութիւն եւ բղջախոհութիւն, չորք սոքա մարմնական չարութիւնք են: Եւ մահու չափ կոչին, զի աստ զմարմինս մեր մեռուցանեն եւ անդ՝ զհոգի եւ զմարմին ի մահ յաւիտենից տանջեն»[156]*:*

Սբ Գրիգոր Տաթեւացին լուծմունքն օգտագործում է որպես զենք՝ ընդդեմ այլախոհների: Երկում զատորոշում է հերետիկոս *եւ* հերձուածող *եզրույթները՝ բացատրելով. «Հերետիկոս է, որ զԱստուած հայհոյէ եւ հերձուածող՝ զխաչ, զեկեղեցի եւ զայլն»*[157]*: Առանձնակի անդրադառնում է հերձվածողների առաջ քաշած խնդիրներին. «....զի Աստուած էր խաչեալն եւ նա՛ է զաւրութիւն Աստուածընկալ Խաչին, ընդդէմ է Նեստորի մարդադաւանի եւ երկաբնակ աղանդոյն Քաղկեդոնի»*[158]*: Խորհուրդ է տալիս տարբերել ուղղափառներին չարափառներից. «Յերից, նախ՝ ի վկայութեանց Սուրբ Գրոց: Երկրորդ՝ «Ի պտղոյ նոցա ծանիջիք» (Մատթ. Է 16, 20), ասէ Տէր: Երրորդ՝ ի հոգիս լսողաց, որ կանգնէ եւ հաստատէ՝ ճշմարիտ է եւ որ վնասէ եւ չար է՝ սուտ է եւ հերձուած»*[159]*:*

Հընթացս Հոբի գրքի խոսքերի մեկնության՝ լուծմունքում մատենագիրն անդրադառնում է նաեւ հրեշտակաբանության, վախճանաբանության, Երկրորդ գալստյան եւ Ահեղ դատաստանի,

---

[156] ՍՍ 1115, թ. 20բ:
[157] Նույն տեղում, թ. 11բ:
[158] Նույն տեղում, թ. 90բ:
[159] Նույն տեղում, թ. 109ա:

արարածների ապականության, ազատության, տառապանքի խնդիրներին, առաքինություններին, աղոթքին եւ այլ հարցերի[160]*:*

Լուծմունքի բանասիրական որոշ հարցեր: *Սբ Գրիգոր Տաթեւացու երկն արժեքավոր է նաեւ բանասիրական տեսանկյունից, ինչպես ինքն է նշում իր «Գիրք հարցմանց»-ում. «....դարձեալ պիտանի է ի ստուգաբանութիւնս բանի, զի թէ ոք զամենայն լեզուս գիտիցէ, ոչ ինչ բառի կարօտանայ: ....զի լեզու կոչի գործիք խօսիցն»*[161]*: Ուշագրավ է, որ ինչպես նրա մյուս երկերում, այստեղ եւս, ի թիվս շատ հարցերի, խիստ առաջնային խնդիր է նաեւ բառային մեկնաբանությունն ու ստուգաբանությունը: Քանի որ բառերն ունեն ներքին իմաստներ, առաջնային եւ երկրորդային իմաստները շարադրանքում ընդգծելու համար հեղինակը տարբեր հնարներ է օգտագործել՝ նոր բառեր ստեղծել, նոր հոմանիշով բացատրել, իր ժամանակին կիրառելի հասկանալի օտարաբանությամբ գրել եւ այլն: Այս ամենը նա արել է, որ բառի իմաստը ճիշտ ընկալվի տվյալ մտքի շրջանակում, քանի որ, ինչպես ինքն է նշում, երբեմն գրիչների կամ տգետ ընթերցողների կողմից խաթարվում կամ աղավաղվում էր ոչ միայն բառիմաստը, այլ նաեւ միտքը. «Ճշմարտից իմաստն ի ներքոյ բառիցն եւ գրոցն է ծածկեալ: Եւ սոքա այլայլին ի տգէտ գրչաց եւ ի գնչու եւ ի տգէտ ընթերցողաց. յայտ է թէ եւ բանն այլայլի ի նոցանէ»*[162]*: Լուծմունքում գտնում ենք որոշակի բառեր, որոնք տվյալ ժամանակի լեզվամտածողության կնիքն են կրում, զոր օրինակ՝ «թոպոլոց»-ը*[163]*, որը ՆԲՀԼ-ում բացատրվում է «գործի հարկանելոյ եւ կոճոպելոյ,*

---

[160] Տե՛ս **Սարիբեկյան Է.**, *Գրիգոր Տաթեւացու «Լուծմունք Յոբայ» երկում առկա աստվածաբանական խնդիրները*, էջ 59-86:

[161] *Գիրք հարցմանց*, հտ. Զ, պրակ Է, 297:

[162] ՄՄ 1115, թ. 196բ:

[163] Բարբառային բառարաններում գտնում ենք «թոպան» բառը, որը որոշակի իմաստային նմանություն ունի Սբ Գրիգոր Տաթեւացու գործածած «թոպոլոց» բառի բացատրության հետ, սակայն, այնուամենայնիվ, դրանք տարբեր արմատներ են: Տե՛ս Թոպան – ՆՆ. Հարդ, դարման. տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան*, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հտ. 2, Երեւան 2002, էջ 580:

տոփիչ, գաւազան կամ գործի յօտելոյ», իսկ Գրիգոր Տաթեւացին մեկնողական այլաբանական մոտեցմամբ այն մեկնաբանում է որպես «թափոցն է ծառին», ընդ որում «թափոց»-ի[164] *բացատրությունը չկա ՆԲՀԼ-ում: Որպես նորաբանությունների*[165] *օրինակ կարելի է նշել աւդընթաց*[166]*, աւդապատիր*[167] *բառերը: Լուծմունքում հանդիպում ենք նաեւ օտարաբանությունների, որոնք կիրառվում են նույն իմաստով, ինչ տվյալ լեզվում, օրինակ՝* թապութ *բառը, որը* Միջին հայերենի բառարան*-ը բացատրում է. «արաբերեն, պարսկերեն tabut-դագաղ»*[168]*, Գրիգոր Տաթեւացին նույն իմաստով է գործածում. «որք զմարմինն հոգան՝ թէ՛ թապութով եւ թէ՛ փառօք թաղեցէք»*[169]*:*

Թեեւ եռամեծար վարդապետի սույն գրվածքը աստվածաբանական-մեկնողական է, այդուհանդերձ այստեղ եւս նա կիրառել է գեղարվեստական պատկերավոր, համեմատական նկարագրություններ՝ «Որպես ջուր խողովակով ի վերուստ իջուցեալ այնքան ի բարձունս ելանէ, նոյնպէս կսկիծ սրտին ի գագաթն ելեալ եւ ծանրացեալ իջեալ ընդ աչքն՝ լինի արտասուքն եւ գլորի ի վայր: Այսպէս արտասուօք աղօթքն ելեալ ի յերկինս, գլորէ թշնամին մեր յերկիր, որպէս նետաձիգ եղեալ զթռչունս յերկիր գլորեմք»[170]*: Կամ մեկ այլ օրինակ, երբ խոսում է սկզբնական մեղքի մասին. «....յանցաւոր եղեւ Ադամ եւ ամենայն ծնեալքն ի նմանէ, որպէս արմատ ծառոյ ապականեալ, եւ ստեղունքն չորացեալ»*[171]*:*

---

[164] Թափուցք - Վն. Ծառից թափված խակ կամ ճիճվոտ պտուղ: *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հտ. 2, Երեւան, 2002, էջ 92:

[165] Բանասեր-տաթեւացիագետ Ս. Գրիգորյանի գտած նորաստեղծ բառերի շարքում բացակայում են այս երկի բառերը, քանի որ վերջինս չի անդրադարձել այս երկին. տե՛ս **Գրիգորյան Ս.**, *Պատմական քերականության հարցեր*, էջ 83-86:

[166] ՄՄ 1115, թ. 117ա:

[167] Նույն տեղում, թ. 106բ:

[168] ՄՀԲ, էջ 235:

[169] ՄՄ 1115, թ. 19բ:

[170] Նույն տեղում, թ. 45ա:

[171] Նույն տեղում, թ. 56բ:

Սբ Գրիգոր Տաթեւացու՝ Հոբի գրքի մեկնության ձեռագրերի ամփոփ նկարագրությունը: *Խիստ կարեւոր է, որ մեզ է հասել Սբ Գրիգոր Տաթեւացու՝ Հոբի գրքի լուծմունքի ինքնագիրը, ինչպես նաեւ բազում ընդօրինակություններ, որոնք պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (20 ձեռ.), Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ձեռագրատանը (9 ձեռ.), Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը (2 ձեռ.), Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը (1 ձեռ.) եւ Զմմառի ձեռագրատանը (3 ձեռ.)*[172]*: Պահպանված ձեռագրերի հիմնական մասը թվագրում են ԺԷ դարով, մի քանիսը՝ ԺԸ դարով, թվով 9 ձեռագրեր ԺԵ դարասկզբի ընդօրինակություններ են: ԺԵ դարի ձեռագրերը գրեթե նույնությամբ պահպանել են Սբ Գրիգոր Տաթեւացու մտքերն ու բառերը, սակայն արդեն ԺԷ դարի ձեռագրերում կարելի է նկատել որոշակի կրճատումներ, բառերի փոփոխություններ:*

ԺԵ դարից մեզ հասած ամբողջական ձեռագրերից են ՄՄ 1114, ՄՄ 5615 եւ ՄՄ 5657 գրչագրերը, իսկ ՄՄ 8964 ձեռագիրը կիսատ է մնում, այն հասնում է մինչեւ «Դարձեալ վասն խոստովանութեան» վերտառությունը, այսինքն՝ Հոբ ԽԲ 3 համարի մեկնությունը:

ՄՄ 3939 գրչագիրը ԺԵ դարում է գրվել: Որոշ թերթեր ընկած են, որի հետեւանքով բնագրի բնականոն ընթացքը խաթարվում է: Կան անընթեռնելի բառեր: Ձեռագիրը վերանորոգվել է ԺԹ դարում կամ Ի դարասկզբին:

Մյուս ձեռագրերը հիմնականում ԺԷ դարի ընդօրինակություններ են, որոնցից ՄՄ 1774 գրչագիրը կիսատ է: Այն հասնում է մինչեւ «Վասն խաւարի» վերնագիրը՝ «....եւ տեղի խաւարի բազում է, զոր ասեն վարդապետք Ժ (10) կերպիւ///»:

ՄՄ 1170 ձեռագիրը նույնությամբ համընկնում է լուծմունքի հիմք բնագրին: Այն ժողովածու է, բաղկացած է երկու տարբեր ձեռագրերից, որոնցից առաջինը պարունակում է Վանական Վարդապետի՝ Հոբի գրքի քաղվածո մեկնությունը, իսկ երկրորդը՝ Սբ Գրիգոր Տաթեւացու՝ Հոբի գրքի լուծմունքը: Ա ձեռագրի

---

[172] Սույն ձեռագրերի ամբողջական ցուցակը տե՛ս Հավելվածում:

2ա թերթում հետագայում կատարված մի նշում կա (հավանաբար այս երկու ձեռագրերն իրար հետ կազմողի նշումն է)՝ «Այս ինչ գոյ ի գրքոջս այս – նախ՝ մեկնութիւն Յոբայ, արարեալ Վանական վարդապետին Հայոց: Երկրորդ՝ սորին քաղուածու Գրիգորի Տաթեւացւոյ արարեալ»:

Նույնն է պատկերը նաեւ ՄՄ 1171 ձեռագրում: Սրանք որեւէ փոփոխություն կամ խմբագրում չեն պարունակում, եթե վերջինս թվագրում ունի՝ 1628 թ., ապա առաջինը հիշատակարան չունի, թվագրվում է ԺԷ դարով: ՄՄ 1173 գրչագիրը եւս խնամքով արված ընդօրինակություն է՝ ԺԷ դարում Աստվածատուր սարկավագի ձեռքով:

Բնագրային ճշգրտումներ: *Սբ Գրիգոր Տաթեւացու նպատակը թերեւս Վանական Վարդապետի քաղվածո մեկնության «մեկնություն» ուսուցանել-գրելն էր կամ ավելի ճիշտ է ասել՝ Վանական Վարդապետի երկի հիման վրա դասախոսելը եւ իր դասախոսությունների համար սեղմագրեր պատրաստելը Մեծոփավանքի սաների համար: Այս է պատճառը, որ լուծմունքում գտնում ենք այնպիսի բառերի բացատրություններ, որոնք ոչ թե Հոբի գրքի բնագրային բառերն են, այլ Վանական Վարդապետի մեկնության մեջ առկա, նրա կամ մեկ այլ մատենագրի գործածած բառերը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ Սբ Գրիգոր Տաթեւացու բնագիրը համեմատել ենք Վանական Վարդապետի ՄՄ 1166 ձեռագրում տեղ գտած Հոբի գրքի քաղվածո մեկնության հետ, հղում կատարել հատկապես այն հատվածներում, որոնք առկա են Վանականի երկում:*

Այստեղ հարկ է անդրադառնալ Գրիգոր Տաթեւացու լուծմունքի կառուցվածքային առանձնահատկությանը, այն է՝ երկը բաժանել մասերի եւ ենթամասերի, վերնագրել դրանցից յուրաքանչյուրը: Ի դեպ, գլխաբաժանումները կամ ենթագլխաբաժանումները կապ չունեն Աստվածաշնչի Հոբի գրքի գլուխների բաժանման հետ:

Բնագրում ծանոթագրել ենք այն հատվածները, որոնք Սբ Գրիգոր Տաթեւացին հղում է որեւէ հեղինակի երկին կամ իր իսկ հեղինակած մյուս աշխատություններին:

Աստվածաշնչյան տեղիները նշել ենք բնագրում՝ կլոր փակագծերում։

Հոբի գրքից մեջբերվող յուրաքանչյուր բառի, մտքի կամ նախադասության դիմաց չենք կրկնել Յոբ *բառը, այլ նշել ենք միայն գլուխը եւ համարը։*

Ցանկերը կազմել ենք բնագրի հենքի վրա։

Բնագրի կազմության սկզբունքը։ *ՄՄ 1115 ձեռագիրը, ինչպես արդեն վերը նշվեց, Սբ Գրիգոր Տաթեւացու ինքնագիր-ձեռագրերից է։ Ուստի եւ բնագիրը հրատարակում ենք այս ձեռագրի հիման վրա՝ առանց այլ ձեռագրերի հետ համեմատության։*

Ձեռագրում հանդիպում ենք եւ-ի գրության երկու ձեւերի՝ եւ, և։ Բնագիրը չծանրաբեռնելու համար նախընտրել ենք դարձնել միօրինակ՝ եւ։

Բնագրում անփոփոխ ենք պահպանել օ-աւ տարբերակները, ինչպես օրինակ՝

ցօն-ցաւն, ամօթ-ամաւթ, աղօթք-աղաւթք եւ այլն։

Հանդիպում է նաեւ է-ե-ով գրության երկու ձեւն էլ, օրինակ՝

Էսայի – Եսայի։

Օթեվանք *բառի գրությունն այսպես է հանդիպում Տաթեւացու բնագրում։*

Քառակուսի փակագծերում ավելացրել ենք այն բաց թողնված տառերը, որոնք ակնհայտ են, ինչպես օրինակ՝

ստ[ե]ղծման։

Քառակուսի փակագծերում ենք նշել նաեւ աստվածաշնչյան մեջբերումների մեջ եղած տառի կամ երբեմն բառի բացթողումները՝

Աստղ քան զաստղ առաւել [է] փառաւք (Ա Կորնթ. ԺԵ 41)։

Երբեմն հեղինակը Վանական Վարդապետի բառաբացատրության ժամանակ պահպանել է բառի գրության այն ձեւը, որը հանդիպում է նաեւ Վանականի երկում, ինչպես օրինակ՝ վոհմակ։

Աշխատանքին կից ունենք Հավելված, որտեղ ներկայացված է Հոբի լուծմունքը պարունակող ձեռագրերի ցանկը։

Աստվածաշնչյան տեղիների ցանկում նշված չեն Հոբի գրքից կատարված մեջբերումները։

Սույն հետազոտությունն ավելի շատ հարցեր կարող է առաջադրել քննարկման համար, սակայն հուսանք, որ արված աշխատանքը եւ այս լուծմունքի հրատարակումը օգտաշատ կլինեն աստվածաշնչյան մեկնություններով զբաղվողների եւ առհասարակ մեկնողական գրականությամբ հետաքրքրվողների համար:

* * *

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում գրքի խմբագիր պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էռնա Մանեա Շիրինյանին օգտաշատ դիտարկումների, աջակցության համար:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հակոբ Քյոսեյանին գիտական արժեքավոր խորհուրդների համար: Օգտակար եղան նաեւ իմ գործընկերների, մտերիմների կարծիքները, որի համար շնորհակալություն եմ հայտնում:

Է. Սարիբեկյան
պատմական գիտությունների թեկնածու

ԱԾԱԿԵՐՏԻ ԵՌԱՄԵԾԻ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑԻՈՅ ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻ
ՀԱՄԱՌՕՏ ԼՈՒԾՄՈՒՆՔ ԴԺՈՒԱՐԻՄԱՑ ԲԱՆԻՑ
Ի ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳԸՐՈՑՆ ՅՈԲԱՅ
ԵՒ Ի ԲԱՆՍ ՄԵԿՆՉԱՑ

ԱՅՍ ԻՆՉ Է Ի ԼՈՒԾՄՈՒՆՍ
ԳՐՈՑ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՆ ՅՈՎԲԱՅ

ՌԱՋԻՆ. Չորս յատկութիւն սիրոյ՝ թէ Աստուածաշունչ է գիրքն Յոբայ: Եւ Յոբ անունն նշան սուրբ կենդանեաց՝ հոգեպէս ի մեզ: Պատուել զաւր ծնողեանն: Պատարագն Ժ (10): Եղեւ իբրեւ զօրս զայս: Թէ ի փորձանս ետ զՅոբ: Աստուած որպէ՞ս խօսի ընդ դեւս: Թէ արդա՞ք են որդիքն Յոբայ: Դեւք զտարերս ոչ կարեն փոխել: Մերկ եկի. Տէր ետ եւ Տէր առ: Կամք եւ հանճար: Մորթ ընդ մորթոյ: Յերկինս նայեցան: Զեւթն աւր ոչ խօսեցան: Եւ աստ առաջին խաւսքն Յոբայ: Որ անէծ զաւրն եւ ըզգիշերն: Մեգ է մարմինն: Որք վիժինն: Վասն մահու: Փոքր եւ մեծ անդ: Թէ յետ մահու հանգչի հոգին կամ չարչարի:

Կրկնեալ Ելիփազու: Թէ ժողովիմք ի հոգւոյն: Զաւրութիւն առիւծու: Մրջմնառեւծն: Դողումն եւ սոսկումն: Անկումն հրեշտակաց: Ցեցն եւ որդն ի մեղս առակեալ: Ի նոյնս՝ քարոզ վասն փորձութեանց մեղաց: Ի բանն. վեցից վշտաց փրկեսցէ զքեզ Ժ (10) կերպիւ:

Առաջին. ի նոյն ինքն Յոբ: Թէ զմարմինն ետ եւ զոգին պահեաց: Նստաւ յաղբեւս: Ամք փորձանացն: Եւ թէ Քրիստոս վեցիւք փրկեաց: Եւթն բան խաչին: /2բ/ Եւթն առաքինութիւնքն: Եւթն մոլութիւնք: Եւ վեց շարժմունք: Եւ վեց աւուր գործ: Եւթն հասակ մարդոյ, եւ եւթն հասակ մարդոյ եւ եւթն դարք կենցաղոյս: Ի նոյնս դարձեալ քարոզ վասն փորձութեան եւ չարութեան կանանց: Կին անզգամ եւ տգէտ: Եւ տկար են դեւք: Եգինք եւ էշք մատակք: Եւ հերձուածողք: Ծնունդն Յոբայ ի մեզ: Հարուածք բոլոր մարմնոյն: Խեցեաւ քերէր: Բան կնոջն: Չորս է անզգամն, եւ

լկտին, եւ չարություն կանանց: Նախ՝ ի բնական իրաց, եւ յաւրինակաց, եւ ի Սուրբ Գրոց, եւ յարտաքին իմաստնոց, եւ այլն:

Բ. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ: Վասն թուոյց համարոյն, որ տեսանի յեւթն դար կենցաղոյս: Եւ յեւթն օր արարչութեան: Տեսէք զճանապարհս: Վասն չորից երթամք առ հիւանդս: Նստելն եւ յիշելն: Փորձութիւնք են վարք մարդկան: Եւ գիշերն ծանրանայ հիւանդն: Ոստայն է կեանքս: Չորս ինչ անցեալ եւ ոչ գտանի եւ չորս մեծութիւն ետ մեզ: Եւ զիս քեզ ոսոխ:

Կրկնեալ Բաղդատայ: Ճառս Բաղդատայ նշանակէ զանկումն սատանայի եւ զնորոգումն Ադամայ: Եւ վասն հպարտութեան յատկութեան, թէ հանապազ պարտ է խաւսել զբարիս: Առաջինն սակաւ, քան զվերջինն: Նեխութիւն յաշխարհէ:

/3ա/ **Գ. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ՅՈՎԲԱՅ**: Թէ զի՞նչ է կրկնելն: Նկատէ ի խորհուրդ չորրորդ աւուրն եւ չորրորդ դարուն: Աստուծոյ արդարութիւն: Վասն լերանց: Ընդդէմ աստեղաց կնքէ: Վերասցի քան զիս: Հզօր է՝ բռնանայ: Բերան իմ ամբարշտէ: Վասն բարկութեան: Միջնորդն Աստուծոյ: Վասն հեծութեան: Հող ահեղ գերեզմանի: Վասն յղութեան մարդոյ եւ խաւար մեռելոց: Եւ վասն խաւարի: Եւ վասն լուսոյ:

Կրկնեալ Սովփարայ: Անանց յիշատակ սրբոց: Վասն Յոբայ նորոգմանն: Եւ վասն աղօթողաց: Եւ ի հանդերձեալն տեսութիւն Ժ (10) մըտաւք աստ կայ:

Դ. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ: Չորս եւ հինգ ճառս ի խորհուրդ Ե (5) շաբթոջն եւ վասն հինգ դարուն: Ընթանալով ընթանան: Արդ եւ դուք մարդիկ էք: Արդարն ի կատականս: Եւ չորս է չափ փորձանաց: Վասն Յունանու: Վասն իմաստութեան Աստուծոյ: Թագաւորք են առաքեալք: Ստուերք մահու: Վասն բժըշկաց եւ մխիթարչաց: Եւ սկզբնական մեղք: Ջի թուեալ է ժամանակն: Վասն յարութեան: /3բ/ Եւ յետ մահու ծաղկի հոգին: Քարինք սուրբք թաւալեցան: Եւ տանջանք դժոխոց:

Կրկնեալ Ելիփազու: Կրկին ճառս Ելիփազու: Վասն անկման դիւաց: Այլ եւ բնութեանս: Ոմն զձեռն, ոմն զոտն: Իմաստունք եմք: Անկումն սատանայի: Որ վզեցաւ ասէ:

Ե. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ՅՈԲԱՅ: Հինգ եւ վեցերորդ ճառս ի խորհուրդ վեց դարուն: Հարիւրաւորն: Չորս կերպիւ բանն անընդունելի է: Վարսից իմոց փետտեաց գիս: Լեղին Դ (4) ինչ նշանակէ: Արիւն եւ ջուրն: Քուրձն չորս ինչ նշանակէ: Թէ կամաւ մեռաւ: Վասն լալոյ: Վասն վկայից եւ դպրութեան գրոյն: Վասն ճանապարհաց մահուն եւ յարութեան: Եւ վեց զարմացումն: Եւ օտարք են դեւք: Լոյսն մերժեալ ի խաւարէ: Զմահ կոչեցի հայր: Չորս մտաւք:

Կրկնեալ անդրէն Բաղդատայ: Սահուն հիշումն բարի է վասն չորից: Լոյս եւ ճրագ: Թաքուցեալ տոռունք: Արմատ եւ հունձք: Յետինք, որ ի ԱԺ (11) /4ա/ ժամուն մտին յայգին:

Զ. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ՅՈԲԱՅ: Վեց ճառս, վեց աւուրն եւ վասն վեց դարուն: Թէ մոլորեցայ: Խաւարումն խաչին: Եւ չարչարանքն: Ուրացութիւն Պետրոսի: Հարճ եւ աղախին: Վասն որդւոց: Մարմինն Քրիստոսի: Ողորմեցարուք ինձ: Վասն գըրոյ: Վասն յարութեան:

Կրկնեալ Սովփարայ: Վասն ծաղկանց: Ամբարշտաց բեկումն: Հուր անշէջ: Թէ վասն է՞ր գրեցան բանք սոցա:

Է. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ: Ունի զխորհուրդ է (7)-անց: Վասն հասարակաց պատուհասի: Վասն գիտութեան եւ հանճարոյ: Եւ կարծեաց եւ այլոց: Փոշիմանիլ յետ մահու: Ի մեռեալս ազատ: Որպէս մահակիցք եմք Քրիստոսի: Վասն Աստուածածին կուսին եւ գերեզմանին. Ի (20) գլուխ:

Կրկնեալ Ելիփազու: Վերջին ճառս Ելիփազու: Ամբարհաւաճն ի բարձանց նայել: Եւ տեսութիւն Աստուծոյ որիշ է: Եւ արեգական: Յատկութիւն բարի գործոց:

Ը. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ: Ութ ճառն է Յոբայ վասն մտաց: Զվեց շարժումն տե՛ս Աստուծոյ եւ հրեշտակաց: /4բ/ Չորիւք մերձիմք առ Աստուած: Հօտ եւ հովիւք: Անկումն դիւաց: Կամաւ եւ ակամայն: Մեղաց խաւարն: Թէ յետ յարութեան է հատուցումն:

Կրկնեալ Բաղդատայ: Վասն սկզբնական մեղաց: Վասն սրբութեան սկզբնականին: Վասն ապականութեան եւ ազատութեան արարածոց: Թէ ամենայնիւ նմանեաց ի մեզ: Եւ սքանչելիք յղութեան:

Թ. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ: Ինն ճառս վասն աստուծաբանութեան: Չորս է խաւսել եւ լռել: Եւ զօրութեան Աստուծոյ: Եւ դժոխք: Թէ նախ զերկիրս ասէ: Եւ երկինքն շրջի: Անձրեւ կանուխ: Աւդոյ եւ ջրոյ: Վասն լուսաւորաց: Ծարժի երկիր: Վասն որոտմանց:

Ժ. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ: Տասն ճառս Կենդանի Տէր: Հին աւրէնքն: Չորս կերպ արդարութեան: Մեղք բարեկամացն: Անհաս է Աստուած: Սուտ բանն եւ գործ: Մեղք եւ տանջանք: Սարդն: Վասն մեծատանց: /5ա/ Թէ մեռելոյն աչքն ի բաց մնայ: Ծափն: Տիւ եւ գիշեր: Վասն զարդուց երկրի: Երկիր եւ ի նմանէ հաց եւ այլն: Գետք եւ աղբիւրք: Իմաստութիւն եւ հանճար: Անհնար տեսութիւն: Անդունդք: Վասն մահուն Քրիստոսի: Առ եւ տուրք: Պատուական նիւթք: Եւ մաքրութիւն աւելորդ ծորմանց: Վասն գրաւականաց: Վասն տեղւոյն Աստուծոյ: Վասն տեսութեան Աստուծոյ: Եւ ի ներքոյ նորա են ամենայն արարածք: Չափ տարերաց եւ հողմոց: Վասն հոգոց:

Կրկնեալ Յոբայ: Ճառս այս արտաքոյ թուոց է եւ պատմէ զառաջին կեանքն իւր, թէ լռեցին բարեկամքն: Վասն ճրագաց: Գլուխն ոտից խոնարհեցաւ: Վասն թագաւորաց: Յոտն յառնել: Մատն ի բերան դնել: Վասն որբոց եւ այրեաց: Վասն կշռոց: Վասն հասակի մարդոյ: Վասն ծառոց: Ծարաւն: Եւ ծիծաղելն: /5բ/ Աչ եւ ձախ: Լայն է ոտք բանսարկուին: Հաւատ եւ յոյս: Մարմինն պատմուճան է հոգւոյ: Վասն փոփոխման: Չնայել ի կոյս: Վասն

օգնութեան բնութեանս: Վասն կշռոց Աստուծոյ: Ոտք կոչի մարմինն: Թէ միտք աչացն հետեւի՝ մոլորի: Վասն շնութեան: Վասն ուղիղ դատաւորի: Վասն մեծատանց: Եւ վնաս մեծութեանց: Վասն փոփոխմանց: Ձեռն համբուրել եւ խաչ առնուլ: Վասն հիւրասիրութեան: Վասն մեղաց: Ցորեան եւ գարի: Վասն փշոյն եւ անիծից: Եւ աստ դադարումն Յոբայ, զի բարկացաւ Ելիուս: Վնաս է բամբասանաց: Վասն բարկութեան: Եւ վասն ծերոց:

Կրկնեալ Ելիուսայ: Առաջին ճառս Ելիուսայ կրկնէ զդառնութիւն սրտին ի բանն: Եւ յանդիմանէ զբարեկամսն: Գտաք զիմաստութիւն, եւ հնացուցին յինքեան:

Կրկնեալ Ելիուսայ: Երկրորդ ճառս՝ ի յանդիմանութիւն Յոբայ: Վասն գինւոյ: Վասն աչառելոյ: Եւ չարախօսելոյ: Բանք եւ խաւսք: Վասն հոգւոյն Աստուծոյ: /ճա/ Չորից բանս չէ պարտ լսել: Թէ հաւիտենական է Աստուած: Սպառնալիք եւ խոստմունք: Վասն կերակրոյն Յոբայ: Վասն խոստովանութեան օգտութեան: Վասն գործոցն Գ (3) կերպիւ:

Կրկնեալ Ելիուսայ: Երրորդ ճառս վասն դատաստանին է: Լուռ, լուռ վասն ջրոյ: Արդարոց ընկեր: Վասն հատուցմանց: Յորս գտայց ի նոյն դատեցայց: Վասն դատաստանին Աստուծոյ: Վասն քրէական մեղաց: Վասն տեսութեան Աստուծոյ: Վասն հրաշիցն Աստուծոյ, որ անքնին է եւ փառաւոր: Ծածուկ գործոց յայտնի հատուցումն: Դարձեալ վասն խոստովանութեան: Եւ կամօք ապաշխարել:

Կրկնեալ Ելիուս: Չորս ճառս, թէ վասն է՞ր այնքան լռեաց Յոբ: Եւ յանդիմանէ զՅոբ: Վասն աստուածաբանութեան: Որչափութիւն աշխարհի: Վասն մարդկան փրկութեան: Վասն չար գործոց: Եւ չէ պարտ գործել զչար: Ամենակալն:

Հինգերորդ ճառս յանդիմանէ զՅոբ: Վասն խոնարհութեան գովութիւն: Չորս է բանին ճշմարտութիւն: Նշան տարաժամ մահուն: Վասն կաշառոց: Եւ հզօր է Աստուած: Թէ զմեծագործութիւնքն պատմէ յերկար բանիւ: Վասն լրոյ: /ճբ/ Վասն որոտման եւ բարբառոյն Աստուծոյ: Վասն ձմերան: Ցօղն: Եղեամն: Ձիւն եւ

ա[ա]նձրեւ: Եւ կարկուտ: Հանդերձն Յոբայ: Հազար բան: Փայլաձուն եւ Արուսեակն: Եւ թէ արդարութեամբ դատի:

Ի նախերգան: Յամպն եւ ի մրրիկն: Չորս են բազումք: Բարի են յոյժ: Եւ բաղդատի Ադամայ: Եւ օրինակ է Տեառն: Վասն Է՞ր յամպոյն: Ո՞վ է դա: Եւ դերանուն: Պնդեա զմէջդ: Սիրտ եւ գլուխն սկիզբն է: Եւ հիմն: Վէմ անկեան: Չափ երկրի: Վասն անկմանն սատանայի: Խանձարուր: Ալիք: Առաւելութիւն Քրիստոսի, քան զմարգարէիցն: Հողն կաւ: Կարգն աստուածախօսութեան: Վասն դժոխոց: Վասն լուսոյ: Զի՞նչ երկիր իցէ: Վասն խաւարի: Զի՞նչ տեղի խաւարի: Վասն ԲԺ (12) տանջանաց: Վասն ձմերան, եւ այլն: Վասն ուսուցչաց: Վասն անձրեւաց: Վասն բազմաստեղաց եւ Հայկն: Վասն կայծականց: Ո՞վ ետ կանանց իմաստութիւն: Վիշապք: Ագռաւք: Վասն աւազանին: Ցիռն: Միեղջերուն: Ասիդն եւ Նէեսայն: Վասն ձիոյ եւ խաչին: Պատերազմի, եւ զինուց, եւ այլն: Վասն բազէից: Դիտել ընդ հարաւ: Թէ կամաւ /7ա/ մեռաւ: Արփի եւ եթեր: Վասն անգեղ եւ արծուեաց:

ԺԱ. ՄԵՏԱՍԱՆ ԹԻՒՍ ԱՅՍ ԸՍՏ ԿԱՐԳԻ ՅՈԲԱՅ ՃԱՌԻՑՆ Է: Վասն դատաստանին Աստուծոյ եւ խնամոցն: Եւ իմաստութեան Աստուծոյ: Եւ թէ Որդին ուսոյց զդատաստանն: Մի անգամ խօսեցայ եւ ոչ եւս:

Դարձեալ կրկնեալ Տեառն առ Յոբ: Վասն Է՞ր խաւսի այս: Երկրորդ թիւս ի կարգ հարցմանց Տեառնէ: Ոչ այդպես: Կրկին վկայից: Բարեաւ ոչ հաղթի չար: Վասն ամաւթոյ: Եւ չորս մտօք է հարցմունս Տեառն: Կէտ երկակենցաղ: Եւ գազան: Ցանկութիւնն վիշապ է: Կուսութիւն նոճ է եւ ամուսնութիւն՝ ցրդի: Տուտն եւ ագի: Վասն ջլաց: Սատանայ ցուցանի ի վերին դասուց: Վասն պրտուի: Վասն հեղեղաց: Վասն Յորդանանու: Զգլուխն ջախեաց: Սուրբք չորիւք յաղթեն զթշնամին: Հաւ եւ աղուէս: Վասն կերակրոց: Խալամն: Վասն ատամանց: Պղինձն: Գայլախազն: Վասն եղբայրութեանց: Վասն փռնչելոյ: Վասն Արուսեկին: Վասն Նեռինն եւ կարապետք նորա: Վասն ծխոյ: Լոյսք բանից: Թէ որպես ճանաչեմք

զբանս ուղղափառ եւ չարափառ: Սիգաճէմ է առիւծ: Զարդասէր են կանայք: Վասն անդամոց: Վասն Լեւիաթանին: Երեք է կեանք, եւ զօրութիւն, եւ գիտութիւն: Սալ դարբնի: Խլըրտալ: /7բ/ Պա՞րտ է անիծել զսատանայ եւ զայլազգիս, թէ ոչ: Զէնք: Վասն փայտի: Վասն աբեղայից: Թէ ո՞րք հանեն զդեւս: Վասն ոսկւոյ եւ չարեաց նորին: Թէ բանսարկուն աստուածանալ կամեցաւ: Ուխտն: Թէ ծով է աշխարհս: Վասն վիշապաց: Վասն կետոսաց: Վասն Լեւիաթանին: Զի՞նչ է չարութիւն բանսարկուին: Թէ որպես խաբեաց զդեւս: Թէ ի բարձունս հայի: եւ կիսամեռ օձ:

ԺԲ. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ: Վասն կամաց եւ կարողութեանն Աստուծոյ: Երեւելիք եւ աներեւոյթք: Զամենայն ինչ գիտէ: Վասն խոստովանութեան: Թէ չէ պարտ ծածկել: Էական աստուածութիւն: Ասէ Տէր ցելիփազ: Թէ վասն է՞ր հոգին ոչ խօսի: Վասն քահանայութեան Յոբայ: Վասն եւթն զգայութեանց: Քրիստոս զուարակ կոչի, եւ ոչխար, եւ գառն: Խորհուրդ տնօրէնութեան Քրիստոսի: Թէ ունիմք զկերպն Քրիստոսի եւ զկերպն Ադամայ: Վասն մխիթարութեան: Մէն մին որոջքն: Վասն աճելոյ հօտին: Բաղդատութիւն Յոբայ եւ Տեառն: Վասն միութեան հաւտին: Վասն է (7) դարուց: Վասն լծոց եզանց: Մեծ ձայնք: Վասն եւթանց Ժ (10) կերպիւ: Կրկին են որդիքն: Վասն Գ (3) դստերացն ԲԺ (12) կերպիւ: Վասն գեղւոյ: Վասն ժառանգութեան: Վասն կենացն Յոբայ: Վեհագոյն միութիւն Քրիստոսի: Խորհուրդ չորիցն Ի (20) թուով: Վասն ծերոց: Խորհրդով արդարանալ: Վասն Յարութեան, ընդ որս Տէր յարուցէ: Վասն ճշմարիտ հաւատոց: Վասն ազգին Յոբայ: /8ա/

ԱՇԱԿԵՐՏԻ ԵՌԱՄԵԹԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑԻՈՑ ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՄԱՌՕՏ ԼՈՒԾՄՈՒՆՔ ԴԺՈՒԱՐԻՄԱՑ ԲԱՆԻՑ Ի ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳԲՐՈՑՆ ՅՈԲԱՅ ԵՒ Ի ԲԱՆՍ ՄԵԿՆՉԱՑ

Բան. *Ներգործական իմն*[1]*:*

Լուծումն. Մաքուր եւ հոգեւոր սիրոյն չորս յատկութիւն դնէ աստ. նախ՝ ներգործական ասէ, որ ի կատարումն տանի: Երկրորդ՝ թափանցիկ, մինչ ի մանգնիտ քարն երեւի: Երրորդ՝ անխառն մնայ: Չորրորդ՝ ջերմ է բնութեամբ, որ ըզցուրտն հալէ եւ զլուծն պնդէ:

Բան. Ըսքինոս:

Լուծումն. Փայտ սրեալ՝ ընդ հարութեամբ ի միւսն հուր վառի:

Բան. Արծանս:

Լուծումն. Որպէս քար կանգնեմք ի ճանապարհս:

Բան. Երրորդ կամ չորրորդ:

Լուծումն. Զի մինն կռապաշտ եղեւ՝ Յակոբ, Ղեւի, Կահաթ, Ամրամ, Մովսէս: Հինգերորդ՝ եւ աստուածաշունչ է գիրքն Յոբայ վասն չորից: Նախ՝ վասն վկայութեան առաքելոյ: /8բ/ Երկրորդ՝ զի Եզեկիել յիշէ: Երրորդ՝ զի ի սրբագրենացն է: Չորրորդ՝ զի յեկեղեցիս ընթեռնումք: Միանգամայն զգիրս եբրայեցւոցն ԻԲ (22) համարեն. հինգ՝ ըզՄովսէսին, ութ՝ մարգարէիցն, եւ Թ (9)՝

[1] Հմմտ. ՄՄ 1166, թ. 1ա: Այսպիսի սկսվածք ունի նաեւ *Գիրք հարցմանցը*. հմմտ. **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք հարցմանց*, Երուսաղէմ, 1993, էջ 2 (այսուհետ՝ *Գիրք հարցմանց*):

սրբագիրք: Ամիթ[2] եւ Թիլգուրան[3] կոչեն այժմ զտեղին Յովբայ, զոր Վասիտ կոչեն: Խուժադուժն վայրենին է: Յոբ անունն չորս ինչ նշանակէ. նախ հայր լսի: Երկրորդ՝ համբերող: Երրորդ՝ վիհ: Չորրորդ՝ խորհուրդ, զի յինքեան ունէր զխորհուրդն Ադամայ եւ զՔրիստոսին: Աստուածապաշտ նա է, որ բանիւ եւ գործով պաշտէ: Տասն են ուստերք եւ դստերք, ոչխարք եւ ուղտք՝ ԺՌ (10000) հազար, եզինք՝ Ռ (1000), էշք մատակ եւ ծագ նոցա՝ հազար, զթիւ Ժ (10)-եկին ունելով: Հազար՝ զկատարեալ պարգեւն, երկոտասան՝ զգերակատարն նշանակէ:

ՆՇԱՆ ՍՈՒՐԲ ԿԵՆԴԱՆԵԱՑ Ի ՄԱՐԴՆ

Այսինքն՝ որոճն, եղջերն, կճղակն, ատամն, որձուցն ի պորտն: Իսկ ի մարդս ոչ է այսպիսի նշան ի մարմինն, այլ ի հոգին: Որոճ է ընտրել մտաւքն զբարի եւ զչար: Իսկ եղջերն՝ յաւատ եւ յոյսն: Իսկ կճղակն՝ ուղիղ ընթացք պատուիրանին եւ ի ձեռս ողորմութիւն: Ատամն՝ պահք եւ աղոթք: Որձուցն՝ ողջախոհն եւ արդարն: Որ ոք զսոսա ունի ի հոգին իւր՝ սուրբ է, եւ որ ոչ ունի՝ անսուրբ է եւ պեղծ: Նախ՝ զհոգեւոր մեծութիւն գործոց, եւ ապա՝ զմարմաւոր: Երկրորդ՝ զի իմանալին նախ է, քան զգալին: Երրորդ՝ զի իմանա/9ա/լին մնայ եւ զզգալին գնայ: Չորրորդ՝ զի վասն իմանալոյն եւ զգալին էառ: Արիական խորհուրդքն է (7) առաքինութիւնքն են: Իսկ աճեցական է բանն, հոգին եւ մարմին:

---

[2] Ամիդի տեղակայման մասին տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Պատմութիւն*, մասն առաջին, Երուսաղէմ, 1869, էջ 17. **Վարդան Աշխարհագիր**, *Աշխարհացոյց*, Կ. Պոլիս, էջ 517 (տպակից է **Երեմիա Մեղրեցու** *Բառգիրք հայոց գրքին*). **Ինճիճեան վրդ. Ղուկաս**, *Ստորագրութիւն հին Հայաստանեայց*, նահանգ երրորդ, Աղձնիք, Վենետիկ, 1822, էջ 75-84. **Երուանդ Քասունի**, *Ամիդ (Տիարպէքիր) Տիգրանակերտ (Ֆարղին) շփոթը հայ պատմագրութեան մէջ*, Պէյրութ, 1968, էջ 27:

[3] Թիլգուրանը նույն Թլկուրան տեղանունն է. Ավսիդ, Թըկուրան, Թիլկուրան, Թուլգուրան, Թուրկուրան, որը գտնվում է Մեծ Հայքի Աղձնիք աշխարհում. ավելի մանրամասն տե՛ս *Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 1, Երեւան, 1986, էջ 368 (Ավսիդ), 924 (Թլկուրան):

Տեսանելիք եւ լսելիք ի հեռուստ ճանաչեն՝ իմաստասէրք են, եւ ճաշակելիք եւ շօշափելիք խառնելով ճանաչեն՝ շինականք են եւ թանձրագոյնք, եւ հոտոտելիքն միջակ, զհոտն ի հեռաստանէ եւ խառնելով ճանաչէ, որպէս երկորոճ ուղտն:

Բան. Գլէին:

Լուծումն. Ծածկէին եւ յաղթէին զարեգակն: Նախ՝ զի արեգակն ի գիշերի ծածկի: Երկրորդ՝ միայն մարմնոյ է լոյս: Երրորդ՝ եւ զգալիս միայն: Չորրորդ՝ անցաւոր լոյս:

Բան. Հարթուցեալք:

Լուծումն. Որ է փախուցեալք:

Հարց. Զի՞նչ է պատուել զաւր ծնընդեանն:

Պատասխանի. Բազում ունի խորհուրդ. նախ՝ զի հասարակ շինականք ի ծնընդեան զաւակաց զմին աւրն պատուեն՝ տղարարք կոչելով: Իսկ թագաւորք զնոյն առնէն ուրախութիւն, ուտել եւ ըմպել եւ հեշտութիւն մարմնոյ, որպէս փարաւոն առնէր եւ Հերովդէս: Երկրորդ՝ եւ արդարք առնեն ընդդէմ սմին, ի յամաւթ չարին, որ հնարեցաւ ի ձեռն մեղացն՝ մահուամբ բառնալ զմարդկութիւնս. այլ հրամանաւն Արարչին՝ ծնանդեամբ տեւէ եւ յերկարէ բնութիւնս: Վասն որոյ ի Ծնընդեան աւուրն /9բ/ Ժողովին եւ աւրհնեն զԱստուած եւ մարմնով ուրախանան, որպէս Յոբայ ուստերքն եւ դստերքն միաբանեալ գային եւ խրախ լինէին, ասէ Գիրն (հմմտ. Ա 4): Երրորդ՝ Ժողովին եւ գոհանան զԱստուծոյ, որ յոչընչէ գոյացոյց զմարդն եւ յարգանդէ խաւարին ի լոյս եբեր եւ ետ մեզ զինչս մարմնական: Վասն որոյ ի յընչիցն պատարագ մատուցանելով Աստուծոյ եւ զաղքատս կերակրելով՝ գոհանան զԱստուծոյ: Չորրորդ՝ ի խորհուրդ յարութեան մերոյ, որ վերստին գոյացուցանէ ի խաւարէ, գերեզմանին ի լոյս հանէ եւ ուրախութեամբ զարդարէ եւ փառաւորէ: Վասն որոյ այսաւր Ժողովեալ փառս եւ պատիւս տամք Աստուծոյն մերոյ, որ յաւիտեան զփառաւորիչս իւր փառաւորէ:

Հարց. Վասն է՞ի Յօբ յետ խրախութեան Ժ (10) պատարագաւ սրբէր զորդիսն եւ մի զուարակ՝ վասն մեղացն (հմմտ. Ա 5):

Պատասխանի. Նախ՝ զի Ժ (10) էին թուով՝ Է (7) ուստերք եւ Գ (3) դստերք, ըստ թուոյ նոցա մատուցանէր: Երկրորդ՝ ի սրբութիւն Ժ (10) զգայարանաց նոցա: Երրորդ՝ ի խորհուրդ Ժ (10)-աբանեան օրինացն՝ Ժ (10) պատարագ մատուցանէր, եւ ըստ նմանութեան Քրիստոսի՝ մի զուարակ, որ վասն մեղաց մերոց մեռաւ, զի ըստ օրինացն եւ ըստ Աւետարանին կայր: Չորրորդ՝ ի խըրախութիւն գինւոյ Ժ (10) մեղս գործի, այսինքն՝ բազմակերութիւն, բ (2)՝ արբեցութիւն, գ (3)՝ զմայլումն զգայութեանց, դ (4)՝ փափկութիւն մարմնոյ, ե (5)՝ փոփոխէ զխորհուրդն, զ (6)՝ այլայլէ զբանն, է (7)՝ այլեւ զգործն, ը (8)՝ զիմաստութիւն յիմարս, թ (9)՝ /10ա/ զհանդարտն խռովէ, ժ (10)՝ պատուիրանացն Աստուծոյ հեղգութիւն գործէ: Վասն որոյ ասէ առաքեալն. «Մի՛ արբենայք գինւով, յորում զեղխութիւն է» (Եփես. Ե 18): Վասն այն Յոբ Ժ (10) պատարագաւ սրբէր զԺ (10) մասնաւոր մեղսն, որ գտանի յարբեցութեան, եւ մի զուարակ՝ ի սրբութիւն վասն ակամայիւ խորհրդոյ մեղացն, զոր աղաւթէ մարգարէն. «Ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս» (Սաղմ. ԺԸ 13-14): Խէդ աչքն տկարն է:

Բան. Վարձկանքն:

Լուծումն. Ասպատակքն (Ա 17):

Բան. Երկաթն:

Լուծումն. Կինն եւ բարեկամքն:

Բան. Եղեւ օրս այս (Ա 6):

Լուծումն. Վեց մտաւք է. նախ՝ զի ոչ գիտեմք զփորձանացն օր: Երկրորդ՝ զի պատերազմի օրն է Յոբայ: Երրորդ՝ զի ամենայն աւր արարած է Աստուծոյ: Չորրորդ՝ յորում զխորհուրդն ծանեաւ: Հինգերորդ՝ զի յամենայն օր մարտնչի ընդ մեզ: Վեցերորդ՝ օր ճգնութեան եւ խնդութեանն ասէ: Սենեքերիմ ասէր ի դիմաց

թշնամոյն. «Բարձից իբրեւ զձուս զամենայն մարդ» (Ես. Ժ 14): Ռ Ռ (1000 1000)-ն Ճ (100) բիւր է, եւ բիւր բիւրն՝ անթուելի է մեզ:

Բան. Սատանայ (Ա 6):

Լուծումն. Հակառակ լսի եւ աստ մատնիչ ասէ:

Բան. Դեգերել:

Լուծումն. Տարակուսել կամ ակն ունել՝ թոյլ տալն, երկրորդ՝ կամքն է Աստուծոյ: Որպէս լսէ սատանայ զձայնն, այլ ոչ տեսանէ զերեսն, նոյնպէս եւ մեղաւորք ի դատաստանին: Սոյնպէս ապաշխարողք յեկեղեցւոյ արտաքսին:

Բան. Ընդ ծառայն իմ (Ա 8):

Լուծումն. Հակառակ նայեցար:

Բան. Պսակ գեղեցկութեան:

Լուծումն. Եզեկիէլ ասէ. «Այն է, որ Սադիէլ կոչէ, որ է աջ Աստուծոյ» (Եզեկ. ԻԸ 12)[4]: /10բ/

Բան. Սարդիոն:

Լուծումն. Ճիկագոյն եւ արիւնատեսիլ է եւ թափանց եւ դեղ առողջութեան նա եթող զայս ամենայն:

Բան. Յերեսս ոչ օրհնէ (Ա 11, Բ 6):

Լուծումն. Հայհոյէ անամաթ կամ ոչ յիշէ ի շրթունս: Փորձութիւնքն սատանայի բովէ եւ մրրիկ, եւ տէգ առ մարդիկ:

Հարց. Ընդէ՞ր ետ ի ծեռս:

Պատասխանի. Վասն Ջ (6) պատճառի. նախ զի առաւելացի վարձք նորա: Երկրորդ՝ զի ծածուկ համբերութիւն նորա յայտնի լիցի ամենեցուն վարժարան: Երրորդ՝ զի ուսցի զխոնարհութիւն: Չորրորդ՝ զի ախոյեան լիցի եւ յաղթեսցէ զիպարտացեալն սատանայ: Հինգերորդ՝ զի զկերպ հնոյն Ադամայ յինքեան բերցէ ախտիւ անկմամբն: Վեցերորդ՝ զի լիցի եւ պատկեր Քրիստոսի,

---

[4] Նույնի մասին տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր*, Կ. Պոլիս, 1741, գլ. ՃԽԷ. Յայլմէ քարոզ հրեշտակապետացն ի բան, որ ասէ տեսիլն, էջ 580-583 (այսուհետ՝ *Ամառան*):

որ անմեղութեամբ դատապարտեցաւ եւ յառաջին փառս դարձոյց զնախաստեղծն ծնունդօք իւրովք:

ՎԱՍՆ ԽՕՍԻՑ ԱՍՏՈՒԾՈՅ[5]

Հարց. Աստուած ո՞ղպէս խօսի ընդ դիւին:

[Պատասխանի]. Նախ՝ հրեշտակօք ասէ: Երկրորդ՝ անմարմին ձայնիւ[6]: Երրորդ՝ ասեն վարդապետք, թէ երէքկին է բան, այսինքն՝ մտաց, բերանոյ եւ գործոյ: Արդ, բանիւ մտաց խաւսի Աստուած ընդ հրեշտակս եւ ընդ հոգիս մեր եւ բանիւ բերանոյ՝ խօսի ընդ մարդոյ, եւ բանիւ գործոյ խօսի Աստուած ընդ դիւին, նաեւ հրեշտակք ընդ սատանայի, որպէս որոտ եւ կայծակունք հրոյ ի վերայ նոցա: Ըստ այնմ. «Որոտաց Տէր յերկնից» (Սաղմ. ԺԷ 14): Եւ գտցես զայս ի Հարցմանց յԳ (3) հատորն, ԺԹ (19) համարին[7]:

Բան. Հապա:

Լուծումն. Ահա, մի՛ յապաղէք:

Բան. Վոհմակ[8]:

Լուծումն. Բանակ խաւարին տաշտաւոր եղջիւրոյ[9], Ժ (10) որդիք նորա, եւ օձահալած է: Այծեամն՝ սրատես եւ երագ, որ մին շունն դադարի, միւսն՝ առնու: Այրիք աղքատք հայհոյեն զմեզ եւ զգործիս մեր գողանան: /11ա/ Ի յերկրէս այլ հանէ զմեզ, որպէս ի յերկնից:

Լուծն է հարկ եզանցն: Դեւ մի կամ ինքն սատանայ գայր գուժկան Յոբայ:

Աղեղն՝ յամպս, նշան է հաշտութեան Աստուծոյ, որպէս զինուորք զլարն ի վայր ունին եւ զփայտն ի վեր:

---

[5] Հմմտ. ՍՍ 1166, թ. 4բ-6բ:

[6] Հմմտ. *Ներածութիւն Պորփիւրի,* պրակ Է, էջ 274. «....ձայն անմարմին է»:

[7] *Գիրք հարցմանց,* հտ. Գ, պրակ ԺԹ, էջ 144-145. տե՛ս նաեւ *Ամառան,* գլ. ՂԱ, ՂԲ. Նորին քարոզ վասն ձայնական աղօթից ի բանն, էջ 351-353:

[8] Հմմտ. ՍՍ 1166, թ. 6բ. «Հապա վոհմակք խաւարեայք...»:

[9] Հմմտ. նույն տեղում:

Հարց. Որդիքն Յոբայ, որ մեռան, արդարք են, թէ՞ ոչ:

[Պատասխանի]. Երեւի թէ ոչ, զի յուտել եւ յըմպել մեռան, որ է մեղք: Այլ ես ասեմ, թէ ի կարգի արդարոցն են նոքա վասն Գ (3) պատճառի. նախ՝ զի հայր նոցա բարեպաշտութեամբ սնուցանէր զնոսա եւ վըկայեցաւ առ Աստուած կենդանի գոլ: Երկրորդ՝ զի յամենայն աւուր պատարագաւ սրբէր զնոսա: Երրորդ՝ զի ձեռամբ թշնամոյն նահատակեցան, որպէս այլ մարտիրոսք: Եւ սոյնպէս ամենայն սպասաւորք նորա եւ ծառայքն, որք սրով եւ հրով վախճանեցան:

Իսկ այնմ, որ ասեն թէ «յարբեցութիւն մեռան» պատասխանեմք, եթէ զամենայն աւուր արիւն պատարագացն սրբէր, իսկ զայնմ աւուր՝ արիւնն իւրեանց[10]:

Հարց. Կարե՞ն դեւք զտարերքս փոփոխել կամ հուր իջուցանել:

Պատասխանի. Ոչ կարեն դեւք զտարերքս փոփոխել եւ ո՛չ հուր եւ ո՛չ շանթս, ո՛չ այլ ինչ ի տարերացս առնել, որպէս կարծեն ոմանք: Այլ ինքեանք լինին հողմ եւ հուր, զի հրեշտակս լուսոյ կերպարանին (հմմտ. Բ Կորնթ. ԺԱ 14), որպէս ասէ առաքեալ, առ ի վնասել մարդկան, որպէս ի վերայ տանն Յոբայ արարին:

Բան. Երկուց պատարագն Աբելի:

Լուծումն. Կա՛մ Բ (2) անգամ եղեւ, կա՛մ ի մին պատարագն կրկին մատոյց: /11բ/ Ասպատակ ձիաւորքն է, որ աւար առնեն: Հերետիկոս է, որ զԱստուած հայհոյէ եւ հերձուածող՝ զխաչ, զեկեղեցի եւ զայլն: Այնպէս հնձեաց զանդ քո, որ հասկ մի ոչ եթող:

---

[10] Հովհան Ոսկեբերանի ճառերում արյամբ սրբվելու մասին հանդիպում ենք հետաքրքիր համեմատության. «Զի եթէ որդիսն Յոբայ սրբէին ողջակէզքն՝ որչափ եւս առաւել՝ արիւնն Քրիստոսի». տե՛ս **Ս. Յովհան Ոսկեբերան**, *Ճառք, նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց*, աշխատ.՝ Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 220. *Ի. Երանելւոյն Յոհաննու Ոսկիբերանի ասացեալ վասն մխիթարութեան տղայ ննջեցելոց*:

Բան. Թոպոլոց[11]*:*

Լուծումն. Թափոցն է ծառին: Հին տերեւ առաքինութիւն է կամ այլ զաւակ ծնանի: Երիցագոյն է միտք եւ կրսեր զգայարանք: Մարմինս մերկ ծնանի եւ մերկ ի հող դառնայ: Իսկ հոգին անմեղ ստեղծանի եւ սրբութեամբ անմեղ դառնայ առ Աստուած: Եւ մեղքն յետոյ պատահէ մեզ որպէս զգեստ:

Բան. Պատառեաց զհանդերձ (Ա 20):

Լուծումն. Սին՝ վասն սգոյ, եւ դարձեալ՝ զի մերկ մարտիցէ[12]: Եւ տե՛ս, զի նախ ի մեծութենէն աղքատացաւ եւ ապա յաղթեաց թշնամոյն: Նոյնպէս եւ Տէր մեր աղքատացաւ ի յերկրի եւ յանապատել եւ ապա յաղթեաց փորձողին: Իսկ Ադամ, որ ի մեծութեան էր՝ յաղթեցաւ ի նմանէ: Օրինակ մեզ են դոքայ:

Բան. Տէր ետ եւ Տէր էառ (Ա 22):

Լուծումն. Նախ՝ ազատեաց զիս ի հոգոց: Երկրորդ՝ Տէր էառ, որ դարձեալ տայ եւ ոչ թշնամին: Երրորդ՝ ջատագով լինի զԱստուծոյ, թէ չեմ զրկեալ:

ՎԱՍՆ ԿԱՄԱՑ ԵՒ ՀԱՃՈՅԻՑ[13]

Հարց. Զի՞նչ է կամք եւ հաճոյք:

Պատասխանի. Երկոքին կամացն է, այլ՝ զանազանին: Նախ՝ կամքն հասարակ է, եւ հաճելն՝ առանձին: Բդ (2-րդ)՝ հաճելն ի կամացն է, եւ ոչ կամքն՝ ի հաճելոյն: Երրորդ՝ կամաց կատարումն հաճելն է: Չորրորդ՝ կամքն սկիզբն է սիրոյն, եւ հաճելն՝ կատարումն: Զհրեշտակս որդիք, որպէս այն երկիրպագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ, ասեն որդիք Աստուծոյ: Չարութիւնն կոյր ստացուած է, /12ա/ որ կուրացնէ զմիտքն, եւ գուբ, զի որչափ փորէ, ինքն ի խոր ընկղմի: Գուբն զոր փորեաց, ինքն ընկղմեաց:

---

[11] Հմմտ. ՍՍ 1166, թ. 8ա:
[12] Հմմտ. ՍՍ 1166, թ. 8բ. «....զի մերկ ընդ մերկ մարտիցէ»:
[13] Հմմտ. ՍՍ 1166, թ. 9ա:

Բան. Սորթ ընդ մորթոյ (Բ 4):

Լուծումն. Չորս միտք է. նախ՝ զառողջութիւն ընդ մարմնոյ ասէ: Երկրորդ՝ ստացուածք ընդ մարմնոյն: Երրորդ՝ մաշկեղէն հանդերձն Ադամայ: Չորրորդ՝ մարմին եւ արիւն եւ հոգի ընդ ստացուածոցն, որ մին զմին ծածկեն, թէ վասն է՞ր յոգին չէտ հրաման, եւ թէ վասն է՞ր զբոլոր մարմինն եհար, եւ քերէր խեցեաւ, եւ թէ նստաւ յաղբեւս, եւ ցին, եւ արծիւ, եւ զժամանակ փորձանաց՝ յերկու Քարոզ փորձութեանցն տե՛ս[14]:

Կշտամբելն յանդիմանելն է:

Ըմբշամարտն մերկամարտն է:

Լեգէոն զբազմութիւնն ասէ:

Բան. Հրաժեշտ:

Լուծումն. Դարձումն, կամ հրաժարումն: Անընդգամն Դ (4) կերպիւ է, ի Քարոզն տե՛ս[15] եւ զայլն:

Բան. Անցք անցին (Բ 10):

Լուծումն. Պատահքն է:

Վասն սգոյ տե՛ս ի Հացմունք Ժ (10) հատորն, ի Դ (4) համարն[16]:

Բան. Յերկինս նայէին (Բ 13):

Լուծումն. Չորս իմն ցուցանէ: Նախ՝ ի տեսիլ նորա, որ յերկինս է: Երկրորդ՝ զի յերկնից կարծէին զցաւն: Երրորդ՝ յուսահատէին ի նմանէ: Չորրորդ՝ ի զարմացումն տեսողաց, թէ որպէ՞ս հատոյց Աստուած: Զեւթն աւր ոչ խօսեցան առ Յոբ եւ տարակուսեալ նստան ի վերայ հողոյ (հմմտ. Բ 13):

---

[14] **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք քարոզութեան, որ կոչի Չմեռան հատոր*, Կ. Պոլիս, 1740, գլ. ԻԴ. Յայլմէ դարձեալ քարոզ վասն պահոց եւ փորձանաց սատանայի, էջ 132-139 (այսուհետ՝ *Չմեռան*). գլ. ԻԵ. Նորին Գրիգորի քարոզ վասն փորձանաց ի բանն Յոբայ, էջ 139-144:

[15] *Չմեռան*, գլ. ՀԹ. Նորին քարոզ վասն աղօթից ի բանն Ղուկասու...., էջ 360-361:

[16] *Գիրք հարցմանց*, հտ. Ժ, պրակ Դ, էջ 670-671:

Բան. Երկեւան[17]*:*

Լուծումն. Արատ մտացն է: Լեզուաւն անէծ զօրն եւ սրտիւն աւրհնեաց զԱստուած: Մեղաց օրն այն է, որ մեք չար գործովք շինեմք՝ փայտ, խոտ, եղէգն (հմմտ. Ա Կորնթ. Գ 12) /12բ/ եւ ճարտարապետ չար իշխանն: Որպէս բարին՝ յորժամ ոսկի եւ արծաթ (հմմտ. Ա Կորնթ. Գ 12) շինեմք եւ ճարտարապետ՝ Հոգին: Արդ, անէծ զաւր ծնանդեան վասն չորից. նախ՝ վասն խիստ ցաւոցն: Երկրորդ՝ զչար աւրն, որ մեք ստեղծանեմք: Երրորդ՝ զի դարձուցուք զնոսա ի սիրոյ աշխարհի: Չորրորդ՝ մի՛ ողբայք զայս, որ սկիս[զ]բն սորա ասեմ եւ անգոսնեմ ասէ:

Եւ գիշեր է (Գ 4). նախ՝ չար խորհուրդն: Երկրորդ՝ սկզբնական մեղք: Երրորդ՝ գիշեր՝ է տրտմութեամբ ծնունդն: Չորրորդ՝ գիշեր՝ է սատանայ, զոր Յոբ եւ Երէմայ անիծանեն:

Մէգ (հմմտ. Գ 5) կոչէ զմարմինն. նախ՝ զի ծածկեաց զաստուածութիւնն: Երկրորդ՝ զի չարչարանք Տեառն տրտմութիւն եղեւ բանսարկուին: Երրորդ՝ զի փութով աճէ: Չորրորդ՝ զի հովանի է հաւատացելոց: Եւ տարեկան է Քրիստոս. նախ՝ զի եթող զպարտիս մեր: Երկրորդ՝ զի ազատեաց զմեզ:

Տբէթի ԻԱ (21) Մկրտութիւն Տեառն մինչ ի Նիսան ԺԵ (15) ամիս է, որ աւելի է, քան զերեք ամ քարոզութեանն[18]:

---

[17] Հմմտ. ՄՄ 1166, թ. 13ա:

[18] «... զի մկրտեալ Տէր մեր յունուար ի Զ եւ ի Տբեթի ԻԱ եւ աստի մինչ ի հրեական Զատիկն աւելի են, քան զաւուրս երից ամսոցն, այս, զոր ամիս կոչէ միաբանին ասացուածքս Յոբա (Յոբ Բ 13) ընդ մարգարէութիւնս Եսաեայ (հմմտ. Ես. ԿԳ 4, ԺԳ 6, նաեւ նկատի ունի՝ Ես. ԼԴ 8), զի աւր հատուցման Աստուծոյ մերոյ յայտ է, թէ Քրիստոսին, որ յաւուր խաչելութեան հատոյց մատնչին....». տե՛ս ՄՄ 1166, թ. 14ա: Թեեւ Վանական Վարդապետի քաղվածո մեկնության՝ ՄՄ 1166 ընդօրինակության մեջ լուսանցային հղումը Իսիքիոս Երուսաղեմացունն է, սակայն Հ. Չրաքյանի հիմք-ձեռագրում փոքր-ինչ տարբեր է այս հատվածը. «Վասն զի քարոզելով Տեառն սակաւ ամիսս՝ յաւել ի տարիս. քանզի քարոզել յետ մկրտութեանն սկսաւ նոյնժամայն յորժամ մկրտեցաւն, բայց ոչ եմք անտեղեակ ժամանակին, զոր կատարէ ի սկզբանէ եկեղեցի՝ զտէրունական մկրտութեան զտօնն: Եւ ապա զիրէական զատիկն՝ յորում ելեալ հալաձէր զվաճառականս եւ զառգնօղսն, եւ ապա այլ զատիկ առնուն յետ նորա, զոր հանդերձ աշակերտօքն ի Սիովն ի վերնատանն կատարեաց, յորժամ եւ զիւր զատիկն

Բան. Խալամ (Խ 26):

Լուծումն. Ոսկր գլխոյն:

Ձհիլէն մանրամաղ փոշի ասեն[19]:

Որք վիժին կրկին պակասութիւն է. նախ՝ զի գլոյսս ոչ տեսանեն: Երկրորդ՝ ի պատկերն Աստուծոյ ոչ գան: Եւ Բ (2) առաւելութիւն ունի. նախ՝ զի անցաւ ի խաւարէ ի խաւար ընթանան: Երկրորդ՝ առանց մեղաց:

ՎԱՍՆ ՄԱՀՈՒ[20]

Բան. Ընդ թագաւորս հանգչէի (Գ 14):

Լուծումն. Դ (4) միտք է. նախ՝ ընդէ՞ր ողբայք զմահս իմ, զի ընդ թագաւորս հանգչէի: Երկրորդ՝ ընդ խորհրդականս լաւ էի գնացեալ, քան ընդ ձեզ կեցեալ: Երրորդ՝ ո՞ւր են թագաւորք եւ մեծացեալքն ոսկով: Չորրորդ՝ ցուցանէ, թէ թագաւորք ընդ թագաւորս ժո/13ա/ղովին, եւ խորհրդականք՝ առ նմանս իւրեանց:

Բան. Յետ դարձուցանելոյն (հմմտ. Գ 16):

Լուծումն. Մարմինն ի հող դառնայ, եւ հոգին ի վեր ելանէ: Եւ դարձեալ որպէս փուք ի տիկս կամ ցորեան ի կապիճս:

Բան. Փոքր եւ մեծ (Գ 19):

Լուծումն. Նախ՝ գեղով, որ է գործով: Երկրորդ՝ Բ (2) ուժով, որ է մտաւք: Երրորդ՝ զաւրութեամբ մարմնոյ: Չորրորդ՝ հասակով, զի թէպէտ ամօք երեսնամեայ յառնեն ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի, այլ ոչ համահասակ, զի ոչ առաւել հսկայ

եցոյց, զի ասաց՝ եթէ ի նմին գիշերի ըմբռնեն զնա, որ ի խաչն հանեն: Ձի յորժամ համարեսցիս սակաւ ինչ ամիսս՝ գտցես աւելի քան զտարին, զոր եւ յիշեաց եւ Յովբ, իբրեւ ի հոգեւորական մարգարէութենէն շնորհս ընկալեալ....». տե՛ս *Իսիքիոսի Երիցու Երուսաղէմացւոյ Մեկնութիւն Յոբայ*, կազմ.՝ Հ. Ք. Չրաքեան, *Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց*, Ե, Վենետիկ, 1913, էջ 308-310 (այսուհետ՝ **Իսիքիոս Երուսաղէմացի**):

[19] Հմմտ. ՍՍ 1166, թ. 14բ-15ա:

[20] Հմմտ. ՍՍ 1166, թ. 15ա:

լինի եւ ոչ ամենեւին փանաքի, այլ ի յիւր մարմնոյն չափն յառնէ առաւել եւ նուազն հաւասարել:

Բան. Մահ մարդոյ հանգիստ է (Գ 22):

Լուծումն. Յետ մահու բարի հոգոյն հանգիստ է Գ (3) կերպիւ. նախ՝ զի հանգչի ի բարի գործս իւր: Երկրորդ՝ հանգչի յուսով պսակացն, զի յոյս նոցա լի է անմահութեամբ (հմմտ. Իմաստ. Սող. Գ 4), ասէ Սողոմոն: Երրորդ՝ հանգչի ի շնորհացն Քրիստոսի եւ յաղօթից սրբոց, որ ի սուրբ եկեղեցիս կատարի:

Ընդդէմ այսմ. «Մահ մեղաւորին չար է» (Սաղմ. ԼԳ 22), որպէս ասէ Դաւիթ: Այսինքն՝ յետ մահու մեղաւոր հոգին չարչարի Գ (3) կերպիւ. նախ՝ չարչարի ի մեղաց իւրոց, զոր գործեաց, զի աստ խղճիւն չարչարէր եւ անդ՝ բացարձակ: Երկրորդ՝ չարչարի ակնկալութեամբ դատաստանին եւ տանջանաց հրոյն: Երրորդ՝ չարչարի, զի ոչ կարէ ապաշխարել կամ զդուռն ողորմութեան գտանել ինքեամբ, որպէս ասէ Սողոմոն. «Փայտն յոր կողմն անկցի, ի նոյնն կացցէ՝ եթէ ի հիւսիսոյ, եւ եթէ ի հարաւոյ» (Ժողով. ԺԱ 3):

Զմեռեալն ասէ փայտ, հիւսիսն զատելութիւնն Աստուծոյ ասէ եւ հարաւ՝ զջերմութիւն սիրոյն: /13բ/

ԿՐԿՆԵԱԼ ԵԼԻՓԱՋՈՒ[21]

Բան. Ժողովեալքս ի Հոգւոյն:

Լուծումն. Որք ժողովին ի յուսումն բանից՝ ի Հոգւոյն է, զի նա է քնոող:

Բան. Զօրութիւն առիւծու (Դ 10):

Լուծումն. Չորս մտօք է. նախ՝ զՅոբ ասէ առեւծ վասն թագաւորութեան, եւ մատակ առեւծ՝ զքաջութիւն ոգւոյն, եւ վիշապ՝ զուղղութիւն մտացն: Երկրորդ՝ դարձեալ Յոբ եւ կինն, եւ որդիքն: Երրորդ՝ սրտմտութիւն եւ ախտ, եւ ամբարտաւանութիւն յոգւոյդ

[21] Հմմտ. ՍՍ 1166, թ. 16ա:

շիջաւ: Չորրորդ՝ թագաւորական միտք եւ քաջ հասակդ, եւ բարձր կամքդ ասէ:

Բան. Մրջիւն առեւծն սատակեցաւ (Դ 11):

Լուծումն. Որպէս իշառեւծն, նոյնպէս եւ զայս ասեն. նախ՝ վասն Յոբայ ասէ, զի մեղաւոր է եւ արդար ձեւանայ: Երկրորդ՝ սատանայ՝ առեւծ առ մեղաւորս, եւ մրջիւն՝ առ արդարս: Երրորդ՝ ամենայն, որ կեղծաւորք են, եւ տկար ի բանս եւ ի գործս, եւ զօրեղ եւ սուրբ ձեւանան:

Տե՛ս՝ Դողան ոսկերքն, ասէ, սոսկան հերք, խռովի մարմին, ամբոխի խորհուրդ, երկնչին միտք (հմմտ. Դ 14-15): Ես այսպէս՝ երազ տեսի եւ ոչ պատմեցի: Նոյնպէս դու յերազի բաջաղեցար[22], այսինքն՝ ցնորեցար ստութեամբ, ասէ: Հրեշտակաց անկումն խընայելոյ պատճառ եղեւ մարդկան. նախ՝ զի անմարմինք էին: Երկրորդ՝ զի յայլմէ ոչ խաբեցան: Երրորդ՝ զի ոչ զղջացան:

ՎԱՍՆ ՑԵՑՈՑ ԵՒ ՈՐԴԱՆՑ Ի ՄԵՂՍ ԱՌԱԿԵԱԼ

Բան. Եհար զնոսա եւ եղեն որպէս ծործ
ցեցակեր (Դ 19, հմմտ. նաեւ ԺԹ 28):

Լուծումն. Նախ՝ որպէս ցեց ի ծործոյ ծնեալ, սոյնպէս մեղքն ի մէնջ յառաջ եկեալ: Երկրորդ՝ որպէս ցեցն ի նմին կերակրի, սոյնպէս մեղք ի մեզ ի հոգի եւ ի մարմինս կերակրի եւ սնանի: /14ա/ Երրորդ՝ որպէս ցեց ապականէ զծործ, սոյնպէս եւ մեղքն ապականէ զմասունս հոգւոյն եւ մարմնոյ՝ ի յորս լինի: Չորրորդ՝ որպէս յետոյ երեւի ցեցն, եւ մեղքն եկամուտ է ի մեզ: Հինգերորդ՝ ցեցն ի հանդերձէն է եւ անանման է նմայ. նոյնպէս եւ որդն անանման է

---

[22] ՍՍ 1166, թ. 32ա. «....վայրապար դաւդիս բանիւք բաջաղեալ». ՍՍ 1166, թ. 40բ. «....ընդդիմանալ Աստուծոյ բաջաղեցաւ, հպարտացաւ առաջի Ամենակալին...». տե՛ս նաեւ **Իսիքիոս Երուսաղէմացի**. «Վասն զի յարուցեալ յերազոցն՝ ոչ ինչ տեսանէի ի բաջաղմանց...», «....քանզի ոչ արդարք են, այլ բաջաղեալ են վասն քո այս բանք», «Ընդունայն եւ զուր բանիւք բաջաղի....», էջ 367, 368, 566 եւ այլն:

մարմնոյն: Սոյնպէս եւ մեղքն ի մէնջ է եւ անման է մեզ: Վեցերորդ՝ ցեցն եւ որդն ի մարմնոյն եւ յօտար իմն պատճառէ ծնանի, եւ մեղքն ի մէնջ եւ յարտաքին պատճառ է ներգործութիւն, այսինքն՝ ի սատանայէ կամ ի մարդկանէ: Եօթներորդ՝ յանգէտս երեւի ցեցն եւ որդն: Սոյնպէս եւ մեղքն զանխուլ եւ խաբէութեամբ ներգործի: Ութերորդ՝ ցեցն եւ որդն յօտար մարմին ոչ ապրի: Սոյնպէս եւ մեղքն ելեալ ի մէնջ, յայլ տեղիս ոչ մնայ: Ըստ այնմ չարն ելեալ եւ շրջեալ ոչ գտանէ տեղի, ասէ, դարձայց անդրէն ի տուն իմ (Է 10) եւ այլն:

Բան. Առ սակաւ եկաց ի լռութեան:

Լուծումն. Որ զէ (7) օր լռեցին եւ զարմանայր ի վերայ հարուածոցն Յոբայ:

Բան. Մեծամեծս եւ փառաւորս (Ե 9-10):

Լուծումն. Որպէս ի կարգ դասէ ի յերկինս եւ ի յօդս, ի մարդիկ եւ ի միտս մարդկան:

Այլ գրելոց եմք վասն սոցա յառաջիկայդ: /14բ/

ՆՈՐԻՆ ՔԱՐՈԶ ՎԱՍՆ ՓՈՐՁՈՒԹԵԱՆՑ ՄԵՂԱՑ Ի ԲԱՆՆ ՅՈԲԱՅ, ՈՐ ԱՍԷ. ՎԵՑԻՑ ՎՃՏԱՑ ՓՐԿԵՍՑԷ ԶՔԵԶ, ԵՒ ՅԵՒԹՆԵՐՈՐԴՈՒՄՆ ՈՉ ՄԵՐԾԵՍՑԻ ԱՌ ՔԵԶ ՉԱՐ

այրն համբերութեան եւ քաջ նահատակն ճգնողութեան երանելին Յոբ ասէ, ուրեմն, ի բանս իւր. Վեցիցս ի վշտաց փրկեսցէ զքեզ, եւ յեւթներորդումն ոչ մերձեսցի առ քեզ չար (Ե 19-20):

Կրկին իմանամք զխրատն Աստուծոյ առ մարդիկ հասեալ: Առաջին՝ է խրատ ուղղութեան, երկրորդն՝ տանջանք ապականութեան: Առաջինն է ծառայից եւ սիրելեաց իւրոց, երկրորդն՝ ատելեաց եւ թշնամեաց նորին: Վասն առաջնոյն ասէ մարգարէն. «Երանի մարդոյ զոր խրատես դու, Տե՛ր» (Սաղմ. ՂԳ 12): Վասն երկրորդին ասէ առաքեալ. «Ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ» (Եբր. Ժ 31): Իսկ բանն, որ ասէ. *Վեցից փրկեսցէ, յեւթներորդին՝ ոչ [մերձեսցի առ քեզ] չար,* բազում ունի տեսութիւն, զոր մեք ասեմք Ժ (10) կերպիւ: Առաջին՝ ի նոյն ինքն յերանելին Յոբ. Զի յորժամ թոյլ ետ Աստուած է (7) փորձութեամբ փորձեաց զնա սատանայ: Առաջինն՝ կիզումն ոչխարաց, զի ի կերպ հրոյ եղեւ սատանայ եւ այրեաց զնոսա: Երկրորդ՝ եզանցն: Երրորդ՝ իշուցն: Չորրորդ՝ ուղտուցն, զորս կորոյս առհասարակ: Հինգերորդ՝ խաշնարած ծառայիցն: /15ա/ Վեցերորդ՝ տարաժամ մահ որդոց եւ դստերացն, որ ի միասին ի սեղան էին բազմեալ: Հողմ եղեւ սատանայ եւ կործանեաց զտունն ի վերայ նոցա: Եւ ինքն եղեալ ի կերպարանս գուժկանի եւ պատմէր Յոբայ: Եւ նայ յամենայնին գոհանայր զԱստուծոյ. Տէր ետ եւ Տէր առ, եղիցի անուն Տեառն աւրհնեալ (Ա 22): Եւ յորժամ այս վեց վըշտովքս ոչ կարոց յաղթել զՅոբ, դարձեալ հրաման առնու սատանայ, զի առանց հրամանին Աստուծոյ ոչ կարէ վնասել զմարդ եւ ոչ զանասուն, որպէս հրաման առին ի Տեառնէ եւ ապա մտին ի խոզսն: Եւ

ասէ Աստուած. Տամ զմարմին նորա ի ձեռս քո, այլ զոգի նորա պահեսցես (Բ 6-7): Եւ ապա եհար սատանայ զբոլոր մարմինն Յոբայ յոտից մինչեւ ցգլուխ կեղ եւ խոց, թարախ եւ որդնալից արարեալ: Նախ՝ զի բոլոր մարմին պսակեսցի: Երկրորդ՝ զի բոլոր ամենայն անդամօքն յաղթեսցէ զսատանայ:

Եւ նա նստեալ յաղբեւս, եւ առեալ խեցի քերէր զթարախն, եւ նմանեաւ հողոյն զնմանն մխիթարէր:

Եւ աստ լինի Գ (3) հարց. նախ՝թէ վասն է՞ր ետ Աստուած զնա ի ձեռս փորձողին, զի գիտէր, որ արդար էր:

Պատասխանի. Ասեմք վասն Դ (4) պատճառի: Առաջին՝ զի գիտասցէն ամենեքեան զարդարութիւն նորա, որք ոչն գիտէին: Երկրորդ՝ զի սատանայ յամօթ լիցի, /15բ/ որ յաղթեցաւ ի նմանէ: Երրորդ՝ զի մի կարծիցեն, թէ տկար էր Յոբ, եւ Աստուած ակն առնու եւ սիրէ զնայ, որ չէ արժան սիրելւոյ: Չորրորդ՝ ի յօրինակ Քրիստոսի, որ այնպէս դատապարտեաց եւ յաղթեաց զսատանայ, որպէս ի հնումն Յոբ:

Երկրորդ հարց. Վասն է՞ր ասաց Աստուած, թէ՝ «Զոգի նորա պահեսցես» (Բ 7):

Պատասխանի. Ասեմք վասն Ե (5) պատճառի. նախ՝ զի թէ զմիտքն եւ զկամքն, եւ զխորհուրդն կորուսեալ էր զՅոբայ, յայնժամ դիւրապէս յաղթէր սատանայ: Երկրորդ՝ զի հրաման է աստուածային սահմանեալ, զի թէպէտ կամեսցի սատանայ, ոչ կարէ յոգին մարդոյ մերձենալ, զի թէ կարէր, զամենայն հոգի կորուսանէր: Եւ թէ ոք ասիցէ. ապա վասն է՞ր զհոգիս մարդկան տանջէր ի դժոխս, ասեմք՝ եթէ ի վերայ արդար հոգւոյ ոչ ունի իշխանութիւն սատանայ, այլ մեղաւորք անձնիշխան կամօք հնազանդին նմայ, վասն որոյն զհոգիսն ի դժոխս տանջէ, եւ զմարմինն աստ լլկէ: Երրորդ՝ պատճառ պահապան ոչխարին եթող զգայլն, զի մի պատճառեսցէ, թէ այլ ոք վնասեաց զնայ: Չորրորդ՝ զի յորժամ ըմբռնէ զհոգի ուրուք, խաւսել տայ բազում անպատշաճ բանս հայհոյութեան: Հինգերորդ՝ ասաց ապականեայ

զկաւն, որ է մարմինն, այլ զոսկին մի կողոպտել, որ ի նմա է, այսինքն՝ հոգին, զի անապական է բնութեամբ եւ ի պատկերն Աստուծոյ (հմմտ. Իէ 15-16): /16ա/ Այլ վա՛յ է մեզ եւ եղուկ Ռ (1000) բերանով, զի սատանայ զմարմինն Յոբայ ապականեաց եւ զհոգին պահեաց: Իսկ մեք զմարմինս մեր պահեմք եւ զոգիս ապականեմք զանազան մեղօք:

Երրորդ հարցումն. թէ վասն է՞ր նստաւ ի յաղբիւսի:

Ասեմք. այն է, որ բովանդակ մարմինն այնպէս խոցեալ էր կեղով եւ լուծեալ ի շարաւ եւ ի թարախ, որ ոչ կարէր յոտիցն կալ կամ սողալ ուրեք եւ ոչ ըմբռնիւր յայլմէ: Վասն որոյ նստաւ ի փողոցն եւ յաղբեւսն՝ անհնարին հարուածով: Այլ ըստ մտաց ունի վեց խորհուրդ. նախ՝ զի աղբիւսէ մարմինս եւ վաղվաղակի յաղբեւսն երթայ, ըստ այնմ. «Հող էիր եւ ի հող դարձցիս» (Ծնն. Գ 20): Երկրորդ՝ զի այնչափ խոնարհեցաւ, զի յաթոռոյ իւր անկաւ ի հեզութիւն եւ յաղբեւսն: Երրորդ՝ զի մարմնոյն յիշեցուցանէ զնոյն բնութիւն եւ ոչ այլ ինչ աւելի: Չորրորդ՝ զի վայելէր իսկ նմա, որպէս զհատ ցորենոյ, թաղել յաղբ եւ պարարտացեալ հասցէ ի հունձս պտղաբերութեան: Հինգերորդ՝ ընդդէմ հպարտացելոյն, որ խորհէր դնել զաթոռն իւր յամպս եւ անկաւ յերկիր: Նա խոնարհեցաւ յերկիր եւ ել յերկինս: Վեցերորդ՝ ի խորհուրդն Ադամայ, որ անկաւ յերկիր փշաբեր. Անկաւ Յոբ յերկիր եւ յաղբեւս (Բ 7-8): Այս առաջին միտք, որ ասէ առ Յոբ. Վեցից վշտաց փրկեսցէ զքեզ, եւ յեւթներորդին.... (Ե 19): /16բ/

Երկրորդ միտք. Ի յայս բանէս հաստատեն ոմանք, թէ եւթն ամք են վշտացն Յոբայ, եւ ապա յամպոյն եւ ի մրրկէ խօսեցաւ Աստուած ընդ նմա եւ բժշկեաց զնա, եւ զամենայն ինչս եւ զմեծութիւնս կրկին ետ նմա քան զառաջինն: Զի Գիրք Սուրբ ըզթիւն ոչ յայտնէ, այլ ասէ, թէ. Բազում ժամանակք անցին ի վերայ (Բ 9):

Եւ այս վասն կրկին պատճառի ոչ յայտնեաց Հոգին Սուրբ զկէտ ժամանակին. նախ՝ վասն մերոյ աւգտի, զի որ յետոյ փորձելոց էին, մի ծուլասցին զտիւ եւ զգիշեր համարելով ի կէտ նորին, եւ թէ յերկարէր, քան զՅոբայն, հուսահատ լինէին ի փրկութիւնն: Երկրորդ՝ զի գիտասցուք, թէ Յոբ ոչ միայն զախտս եւ

զհարուածսն յաղթեաց, այլեւ քան ըզժամանակսն գեր ի վերոյ եղեւ: Յայսմանէ ուսեալ եւ մեք ի վիշտսն մի վհատեսցուք, զի որքան յերկարի ժամանակն, նա մեզ առաւել վարձք տայ Աստուած, մին՝ վասն նեղութեանն, զոր կրեմք եւ մին՝ վասն յերկարութեան ժամանակին, որ համբերեմք: Եւ նոյն Աստուած, որ Յոբայ օգնեաց, կարող է եւ մեզ օգնել, եւ փրկել: Ըստ այնմ, որ զփորձ առեալ, կարող է եւ փորձանաց օգնական լինել: Այս երկրորդ, որ ասէ. Վեցից վշտացս փրկեսցէ.... (Ե 19):

Երրորդ մեկնութիւն բանիս տեսանի ի նոյն գիրսն Յոբայ: Առաջին՝ որ ասէ. Փրկեսցէ զքեզ /17ա/ ի սովի (Ե 20): Զի գիտէր Յոբ, թէ. «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ» (Մատթ. Դ 4-5): Եւ «Երանի, որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան» (Մատթ. Ե 6), որպէս ասէ Աւետարանն: Երկրորդ՝ ասէ. Ի պատերազմի ի ձեռաց սրոյ պահեսցէ (հմմտ. Ե 14, 20): Այսինքն՝ զինու համբերութեամբն եւ հեզութեամբ եւ գոհութեամբ յաղթեաց զպատերազմն սատանայի: Նոյնպէս եւ մեզ պարտ է առնել: Երրորդ՝ Ի լեզուէ չարեաց փրկեսցէ (Ե 21), ասէ: Այսինքն՝ զի չար լեզու կնոջն եւ բարեկամացն ոչ յաղթեաց զնա: Չորրորդ՝ ասէ. Մի՛ երկիցես ի չարեաց ի վերայ եկելոց (Ե 21): Այսինքն՝ զի զկորուստ ընչիցն գոհութեամբ տարաւ եւ զորդւոց մահն որպէս պատարագ Աստուծոյ մատոյց: Հինգերորդ՝ ի գազանաց մի երկիցես (Ե 22-23): Այսինքն՝ զի աստուածպաշտութեամբն ամրացեալ էր եւ արտաքոյ քաղաքին նստէր զայնքան ժամանակն, եւ ոչ երկնչէր ո՛չ յերեւելի եւ ո՛չ յաներեւոյթ գազանաց, որպէս եւ այլ հարքն սուրբք զառիւծ եւ զայլ գազանս ընդելացուցին: Վեցերորդ՝ ասէ. Զանաւրէնս եւ զամբարիշտս արհամարհես (Ե 22): Այսինքն՝ որ անարգեաց զսատանայ եւ զբարեկամսն իւր, որ գործակից էին սատանայի: Եւթներորդ. Ապա եղիցի խաղաղութիւն տան քո (Ե 24): Եւ կրկին է տունն, այսինքն՝ ներքին եւ արտաքին: Այն, որ արտաքին է՝ որպէս կինն, ստացուածն եւ տեղիքն, յորս բնակիմք, տուն կոչեմք: Եւ երկրորդ՝ տուն ոգոյս է մարմինս մեր: Յորժամ սոքա ի խաղաղութեանն են, «լինիմք

սուրբ տաճար Աստուծոյ» (հմմտ. Բ Կորնթ. Զ 16): /17բ/ Եւ Գ (3) կերպիւ է խաղաղութիւն. նախ՝ զի մարմինն հոգւոյն հնազանդի, զի նա Տէր է, եւ սա՝ ծառայ: Երկրորդ՝ զի արտաքին զգայութիւնն ներքին զգայութեանցն հետեւեսցի: Երրորդ՝ յորժամ ներքին մասունք հոգւոյն, այսինքն՝ ցասումն եւ ցանկութիւնն, հնազանդեսցի բանական մասինն: Եւ այսպէս ներքին եւ արտաքին տունն Յոբայ առողջացաւ եւ շինեցաւ զաւակաւք եւ ծառայիւք եւ ամենայն ընչիւք, վասն այն ասէ ի դէմս նմա. Վեցից վշտաց փրկեցից, եւ յեթներորդին.... (Ե 19): Այսպէս երրորդ միտք բանիս ի դէմս Յոբայ տեսանի:

Դարձեալ չորրորդ միտք՝ մարգարէանայ ի դէմս Տեառն մերոյ, որ ի վեցերորդ աւուրն ստեղծ զԱդամ, եւ յանցանելն նորա զպատուիրանաւն դատապարտեաց: Նոյն Տէրն մեր ի վեց դարուն երեւեցաւ մարմնով ի Կուսէն եւ ի վեց աւուր ուրբաթուն չարչարեցաւ, եւ վեց յեղանակաւ փրկութիւն շնորհեաց մարդկան ազգի: Նախ եւ առաջին՝ փրկեաց զմեզ ի մեղաց, ըստ այդմ, որ ասէ յԵբրայեցւոցն. «Սրբութիւն մեղաց մերոց արարեալ ի վերայ սրբութեան խաչին» (հմմտ. Եբր. Ա 3): Եւ Աւետարան ասէ. «Կոչեցաւ անուն նորա Յիսուս, զի փրկէ զժողովուրդ ի մեղաց» (Մատթ. Ա 21): Երկրորդ՝ փրկեաց ի ծառայութենէ օրինացն եւ անիծիցն: Որպէս ասէ Պօղոս. «Առաքեաց Աստուած զՈրդին իւր, որ եղեւ ի կընոջէ եւ եմուտ ընդ օր[ի]նօք, զի զորս ընդ օրինաւքն /18ա/ իցեն, գնեսցէ» (Գաղ. Դ 4-5), այսինքն՝ ազատեսցէ: Եւ դարձեալ ասէ Գաղատացիսն. «Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինաց, եղեալ վասն մեր անէծք, զի գրեալ է, անիծեալ ամենայն, որ կախեալ կայցէ զփայտէ» (Գաղ. Գ 13-14): Երրորդ՝ փրկեաց ի բուռն ծառայութենէ սատանայի, ըստ այնմ, որ ասէ ի դիմաց Հաւր. «Փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի, եւ փոխեաց յարքայութիւն Որդոյ իւրոյ սիրելոյ» (Կող. Ա 13): Չորրորդ՝ փրկեաց ի ձեռաց մահու, որպէս ասէ Պօղոս. «Եթէ մահուամբն իւրով խափանեաց զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն՝

զսատանայ, եւ ապրեցուսցէ զայնոսիկ, որ մահուն երկիւղիւ հանապազ կային վտարանդեալք ի ծառայութիւն» (Եբր. Բ 14): Հինգերորդ՝ փրկեաց զհոգիս ի տանջանաց դըժոխոց եւ եհան զամենեսեանն զարդարս եւ զմեղաւորս՝ ըստ առաքելոյ. «Ե՛լ ի բարձունս խաչին՝ գերեաց զգերեալս ի սատանայէ էառ աւար առհասարակ» (Եփես. Դ 8-9, Սաղմ. ԿԸ 19): Եւ Դաւիթ ասէ. «Լուաւ զհեծութիւն կապելոց, եւ ազատեաց զորդիս մահապարտեաց» (Սաղմ. ՃԱ 20): Վեցերորդ՝ փրկեաց ի դիւապաշտ մոլորութեանց եւ էած յաստուածպաշտութիւն ճշմարիտ հաւատոց, որպէս ասէ յետ յարութեանն. «Երթայք մկրտեցէք զամենայն հեթանոսս, ուսուցէք նոցա պահել զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ» (Մատթ. ԻԸ 20): Եւ զայս ամենայն բարձրագոյն փրկութիւնս, որ լինելոց էր Քրիստոսիւ, ասէ յառաջագոյն ի դէմս Յոբայ հոգին. «Վեցից վշտաց փրկեսցէ, եւ յեւթներորդին ոչ հասցէ առ քեզ [չար]» (Ե 19): /18բ/ Այսինքն՝ յորժամ հասարակ ազգ մարդկան ի վեցից չարեացս փրկեցաք, առա[ն]ձնակի չարն այլ ոչ մերձենայ ի մեզ:

Հինգերորդ միտք բանիս այն է, որ եաւթն բան խաւսեցաւ Տէր մեր ի վերայ խաչին եւ յեւթն չարէ փրկեաց զմեզ: Առաջին բանն է, որ ասաց. «Հա՛յր, թո՛ղ սոցա, զի ոչ գիտեն զինչ ասեն» (Ղուկ. ԻԳ 34): Եւ մեզ ուսոյց, զի եւ մեք աղօթեսցուք ի վերայ թշնամեաց մերոց: Եւ յայսմ բանէ վէմք պատառեցան: Եւ մեզ պարտ է յորժամ լըսեմք զբանս զայս, եթէ իբր զքարէ սիրտք մեր ի վերայ թշնամեացն, փոխի եւ պատառի ի լաւութիւն: Երկրորդ բան ասաց ընդ աւազակն. «Այսաւր ընդ իս իցես ի դրախտին» (Ղուկ. ԻԳ 43): Եւ այս ցուցանէ, թէ Քրիստոս զարքայութիւնն միայն նոցա տայ, որ ընդ նմա չարչարին կամ ապաշխարութեամբ, կամ այլ իւիք: Եւ ի բանիցս այս մեծ սքանչելիք եղեն, զի յորժամ դժոխայինքն լսեցին զբանս զայս, զամենայն հոգիս մարդկան ի յետս դարձուցին, զորս զրկեալ էին: Ապա, ուրեմն, քան զդժոխայինքն չար են, որք լսեն զբանս զայս եւ ոչ դարձուցանեն զորս զրկեալ են յայլոց: Եւ ոչ թէ միայն պարտէ զայլոցն դարձուցանել, այլեւ

զիւրն բաշխել, որպէս Քրիստոս զարքաութիւնն աւազակին բաշ-
խեաց: Երրորդ բանն ասէ ցմայր իւր. «Ահա՛ որդին քո» (Յովհ. ԺԹ 26): Եւ զՅոհաննէս. «Ահա՛ մայր քո» (Յովհ. ԺԹ 27): Սին՝ զմեծ սէրն նշանակէ, զի ոչ էր մոռացեալ զմայր իւր մինչ ի չարչարանքն եւ միւս՝ զի վասն մօրն ոչ իջաւ ի խաչին, այլ յետոյ հանգեաւ /19ա/ ի գերեզմանն: Եւ մեզ զօրինակ, որք թողեալ եմք զսէր աշխարհիս եւ ի կարգ քահանայութեան հրաւիրեալ, չէ պարտ վասն մարմնաւոր ծնօղաց թողուլ զխաչն, որ է ապաշխարանք, այլ պարտ է հանգչիլ ի հաճոյքն Աստուծոյ: Եւ յայսմ բանէ մեռեալք յարեան ի գերեզմանաց: Նոյնպէս եւ մեզ պարտ է յառնել ի մեռելութենէ մեղաց: Չորրորդ բանն. «Էլի՛, էլի՛, լամա սաբաքթյանի, որ է. Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս» (հմմտ. Մատթ. ԻԷ 46, Մարկ. ԺԵ 34), որպէս թէ տուեր (այսպէս) զիս: Եւ այս զխոնարհութիւնն ուսուցանէ մեզ, զի ի մէջ վշտաց եւ նեղութեանց աղօթեմք առ Աստուած: Եւ յայսմ բանէ արեգակ խաւարեցաւ: Արեգակն զփառք աշխարհիս ցուցանէ, եւ խաւարելն՝ զնախատինքն: Զայն ուսուցանէ մեզ, թէ ի վերջք կենցաղոյս փառքն ի նախատինքէ փոխելոց, եւ ուրախութիւնն՝ ի տրտմութիւնն: Հինգերորդ բանն ասաց. «Ծարաւի եմ» (Յովհ. ԺԹ 28): Բ (2) իրք ուսուցանէ. նախ՝ թէպէտ յոյժ չարչարեցաւ Քրիստոս, այլ փրկութեան մարդկան ծարաւի էր եւ յօժար՝ առաւել չարչարիլ, երկրորդ՝ թէպէտ մէք քաղց եւ ծարաւ կրեմք, յիշեմք զքաղց եւ զծարաւն Քրիստոսի եւ մխիթարեմք: «Եւ յորժամ ետուն քացախ եւ լեղի խառնեալ, ոչ կամեցաւ ըմպել» (հմմտ. Յովհ. ԺԹ 29-30): Այս ցուցանէ զԲ (2) ազգ փորձութիւնք սատանայի՝ քացախն զմեղաւորաց վիշտն, եւ լեղին՝ զմեղաց փորձութիւնն: Զի յորժամ զքացախ չարչարանացն ըմպեմք, զլեղի մեղացն ոչ ըմպեմք: Վեցերորդ բանն ասէ. «Ամենայն ինչ կատարեալ է» (Յովհ. ԺԹ 28): Այսինքն՝ թէ ամենայն գրեալք վասն իմ ի մարգարէսն կատարեցաւ: Զայն ցուցանէ, թէ յօր մահուանն մերոյ պարտ է ամենայն ինչ կատարեալ լինել՝ /19բ/ թէ կտակագիր, թէ ապաշխարանքն եւ այլն: Եւ բանիւս այս շարժեցաւ երկիր: Ուսուցանէ մեզ յամենայն ժամ շարժիլ ի չարեաց ի բարիս, ապա թէ ոչ ի մահուան ժամ

պարտ է շարժիլ ի բարիս: Եւթներորդ բանն. «Հա՛յր, ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ» (Ղուկ. ԻԳ 46): Ուսուցանէ մեզ, թէ պարտ է զհոգին ի յԱստուած [յ]անձնել ի ժամ մահուանն՝ ի յանդիմանութիւն նոցա, որք զմարմինն հոգան, թէ թապութով եւ փառաւք թաղեցէք, եւ զհոգին ոչ հոգան կամ զղջմամբ, կամ խոստովանութեամբ: Եւ յայս է (7) բանէս վարագոյր տաճարին պատառեցաւ: Ուսուցանէ, թէ պարտ է յօր մահուն զամենայն գիր պարտեաց պատառել, այլեւ պարտ է զամենայն ծածկոյթ մեղաց պատառել եւ յայտնել խոստովանութեամբ: Այս է որ ասէ. Վեցից վշտաց փրկեսցեն զքեզ, եւ յեւթներորդին ոչ մերձեսցին առ քեզ չար (Ե 19-20):

Վեցերորդ միտք բանիս՝ տեսանի առ մեզ հասարակ մարդիկ: Եւ դարձեալ դարձցուք ի հարուածն Յոբայ, զի եւթեամբ փորձեաց զնայ սատանայ՝ չորսն անբան կենդանեաւք, որպէս ցուցաւ, եւ Գ (3)-ն՝ բանական, այսինքն՝ ուղտուցն եւ եզանցն, եւ իշուց, եւ ոչխարացն կորուստ. սոքա անբանք էին: Իսկ բանականն՝ որպէս որդւոցն եւ ծառայիցն եւ մարմնոյն հարուածն Յոբայ: Արդ անբան կենդանիքն /20ա/ նշանակեն ի մեզ զԴ (4) անբան առաքինութիւնս մեր, որ է խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն եւ արդարութիւն: Եւ անբանք ասին սոքա, զի եւ յանբան կենդանիս տեսանին, որպէս ուղտն խոհեմ է, առեւծն արի, տատրակն ողջախոհ, արագիլն արդար: Իսկ բանական մարդիկքն նշանակեն ի մեզ զերեք բանական եւ աստուածային առաքինութիւնս, որ է՝ հաւատն եւ յոյսն, եւ սէրն: Զի սոքա յԱստուծոյ են առ մեզ իջեալ եւ բանականացս միայն պարգեւեալ: Եւ նախքան զգալն Քրիստոսի՝ զեաւթնեքին առաքինութիւնս այս սատանայ բարձեալ էր ի մարդկանէ, զի զհաւատն եւ զյոյսն, եւ զսէրն մարդիկ ի կուռս էր կապեալ: Նոյնպէս եւ զխոհեմութիւն, եւ զարիութիւն, եւ զողջախոհութիւն, եւ զարդարութիւն ի հակառակն կոյս փոխարկեալ, այսինքն՝ զհաւատս աստուածպաշտութեան եւ զգործս բարութեան զրկեալ ի մարդկանէ, եւ անհաւատութեամբ եւ չար գործօք զմարդկային ազգս վըշտացուցեալ: Իսկ յորժամ Բանն Աստուած մարմնով երեւեցաւ ի յերկրի, ուսոյց

մեզ զհաւատս աստուածպաշտութեան եւ զգործս ուղղութեան, որպէս ասէ առաքեալն. «Քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան, զի ուրացուք զամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւն, եւ ամենայն աստուածպաշտութեամբ եւ սրբութեամբ կացցուք յաշխարհի» (Տիտոս Բ 11-12): Աստուածպաշտութեամբ ասելն զհաւատ եւ զյոյս, եւ զսէր ցուցանէ, իսկ սրբութեամբ ասելն զԴ (4) զառաքինութիւնն նշանակէ, որպէս ցուցաւ: Եւ այսպէս ի վեց եւ յէ (7) վշտացս փրկեաց զմեզ Քրիստոս գալստեամբ իւրով եւ ուղղափառ հաւատով, եւ մաքուր վարուք կեալ ի վերայ երկրի: /20բ/

Է. Եթներորդ միտք բանիս տեսանի յեւթն մոլութիւնքն, որովք սատանայ վշտացոյց զմարդիկ եւ չարութեամբ կորոյս: Վասն զի հոգի մարդոյն Գ (3) մասն ունի, այսինքն՝ բան, ցասումն եւ ցանկութիւն, եւ մարմինն ի չորից տարերց է խառնեալ: Վասն որոյ եւթն են գլխաւոր մոլութիւնք մահացու, այսինքն՝ հպարտութիւն, նախանձ եւ բարկութիւն: Այս Գ (3) չարութեամբս զհոգիս մեր կորուսանէ սատանայ: Իսկ ծուլութիւն, որկորստութիւն, ագահութիւն եւ բղջախոհութիւն, չորք սոքա մարմնական չարութիւնք են: Եւ մահու չափ կոչին, զի աստ զմարմինս մեր մեռուցանեն եւ անդ՝ զհոգի եւ զմարմին ի մահ յաւիտենից տանջեն: Վասն սոցա գրէ Յո[վ]հաննէս ի կաթողիկէքն. «Են մեղք, որ մեղք են եւ են՝ որ մահու չափ են» (Ա Յովհ. Ե 17): Զի թէպէտ մասնաւոր բազում են մեղք եւ անթիւք, այլ սոքա է (7) գլխաւոր մեղք են, զոր սերմանեաց սատանայ ի մարդիկ՝ երեքն հոգեկան եւ չորսն մարմնական, որպէս ցուցաւ: Իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս յայսպիսի մեղացս կրկին կերպիւ սրբեաց զմեզ եւ արդարացոյց. առաջին՝ մկրտութեամբ սուրբ աւազանին եւ երկրորդ՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ: Զի մկրտութիւնն սրբէ յամենայն սկզբնական եւ հասարակ մեղաց, եւ խոստովանութիւնն արդարացուցանէ յառանձին եւ ներգործական մեղաց. եթէ ներելի եւ եթէ մահացու, որպէս ասէ առաքեալ յԵփեսացւոցն. «Երբեմն մեռեալ էիք ի մեղս ձեր, այժմ կենդանի եղէք ի Քրիստոս» (Եփես.

Բ 5, հմմտ. Կող. Բ 13): Այսպէս ի վեց եւ յէ (7) վշտաց փրկեաց զմեզ Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Ը. Ութերորդ միտք բանիս, որ ասէ. Վեցից վշտաց փրկեսցէ զքեզ (Ե 19): Տեսանի ի վեց շար/21ա/ժումն մարմնոյս, զի ամենայն մարմին եռակի տարորոշէ ըստ իմաստասիրացն[23], այսինքն՝ զի ունի երկայնութիւն, լայնութիւն եւ խորութիւն: Եւ սոքա իւրաքանչիւր ոքս ունին կրկին ծայրք, ուստի յառաջ գան վեց շարժմունք: Սոյնպէս ի վեր եւ ի վայր՝ այս երկայնութենէ, յաջ եւ յահեակ՝ այս լայնութենէ, յետեւ յառաջ՝ այս խորութենէ: Եւ այս վեց շարժմամբ մարմնոյս զամենայն բարիս եւ զչարիս գործեն մարդիկք: Դարձեալ, այլ կերպիւ վեց շարժումն է մեղաց, այսինքն՝ ի վեր շարժիմք հպարտութեամբ, ի վայր՝ ծուլութեամբ, յառաջ շարժիմք՝ սիրեցեալ զչարիս եւ յետ՝ ատեցեալ զբարիս, եւ յաջ շարժիմք հոգեկան մեղօք, եւ յահեակ՝ մոլորիմք մարմնական չարեաւք: Վասն այսմ խրատէ Սողոմոն. «Մի՛ յաջ խոտորիր, եւ մի՛ յահեակ» (Առակ. Դ 27): Եւ առաքեալ ասէ. «Վասն զինուն արդարութեան, որ ընդ աջմէն եւ ընդ յահեկէն» (Բ Կորնթ. Զ 7-8), եւ մարգարէն վկայէ. «Անկցին ի կողմանէ քումմէ հազարք եւ բիւրք ընդ աջմէ քումմէ, որ առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին» (Սաղմ. Ղ 7): Սոքա են վեցեկի վիշտք, որ սատանայ մարմնական մեղօք չարչարէ զմեզ: Իսկ եաթն դնէ հոգւոյն չարութիւնքն, զի հոգին պարզ է եւ մի, եւ հետեւի շարժմանց մարմնոյն: Եթէ ի բարիս եւ եթէ ի չարիս, զայն կոչէ եւթներորդ շարժումն ի վերայ վեցեկի շարժմանց մարմնոյն: Եւ այսպէս փրկեաց զմեզ Քրիստոս ի վշտաց վեց շարժմանցս ասացեալ: Զի ուսոյց մեզ ընդդէմ հպարտութեանն՝ զխոնարհութիւնն եւ ծուլութեանն՝ զարիութիւնն, սիրել զբարիս եւ ատել զչարիս, եւ ամենայն մեղաց ընդդէմ զարդարութիւն գործել թէ՛ հոգեկան եւ թէ՛ մարմնական, որպէս ցուցաւ ի վերոյ: /21բ/

---

[23] Հմմտ. **Նեմեսիոս Եմեսացի**, *Յաղագս բնութեան մարդոյ*, առաջ., հմմտ. բն. եւ ծնթ.՝ Կ. Մոսիկյանի, Երեւան, 2019, էջ 141:

Թ. Իններորդ միտք բանիս, որ ասէ. Վեցից վշտաց փրկեսցէ զքեզ (Ե 19): Տեսանի առ վեց աւուր գործս շաբաթու, զոր սա վիշտ ասէ եւ Սողոմոն՝ զբաղումն չար: Ըստ այնմ. «Զբաղումն չար ետ որդւոց մարդկան զբաղել նովաւ» (Ժողով. Ա 13): Եւ զի ասաց Աստուած ի յՕրէնքն. «Զվեց օր գործեսցես եւ յեւթներորդին՝ հանգիցես, զի շաբաթն հանգիստ լսի եւ հանգիցես, եւ ծառայք քո, եւ անասունքն ի լծոյ, եւ երկիր ի գործելոյ, զի եւ նոքա ստեղծուածք են Աստուծոյ» (հմմտ. Ելք Ի 10-11): Կամեցաւ զհանգիստ նոցա: Իսկ մեզ փոխեցին առաքեալքն ի յաւուր կիրակէի հանգչիլ: Մին՝ ի մարմնական գործոյ դադարել եւ մին՝ զհոգեւոր գործս կատարել եւ հոգով հանգչիլ: Եւ ի կիրակէն Դ (4) կերպիւ լինի հանգիստ հոգւոյ. նախ՝ ի գիշերին հսկմամբ կանխել յաղօթս եւ ի պաշտօնն Աստուծոյ, եւ այնպէս զհոգին հանգուցանել, զի որքան աղօթեմք, այնքան զհոգիս մեր հանգուցանեմք: Երկրորդ՝ զքարոզ վարդապետաց լսել եւ զձայն Աւետարանին, եւ այնու խրատել զմեզ: Երրորդ՝ զմեղս խոստովանել եւ հանգչիլ ի խղճէ մտաց: Չորրորդ՝ զպատարագն սուրբ տեսանել եւ հաղորդել՝ կա՛մ մարմնով, կա՛մ մտօք, կա՛մ յուսով, կա՛մ հաւատով, եւ հանգչիլ ի Քրիստոս: Եւ այս է, որ ասէ. Վեցից վշտաց փրկեսցէ (Ե 19): Յորժամ ի գործոց վեց աւուր շաբաթուն հանգչիմք ի կիրակէի եւ զհոգեւոր գործն կատարելով՝ ո՛չ հասցեն առ մեզ չարք յէ (7) աւուրն: /22ա/

Ժ. Տասներորդ միտք բանիս տեսանի յեւթն հասակ մարդոյս: Եւ յեւթն դար կենցաղոյս ամենայն մարդկան. նախ՝ զի եւթն հասակ է ամենայն մարդոյ, որ է՝ տղայ, մանուկ, պատանեակ, երիտասարդ, հասակ, ալեւոր, ծեր: Տղայ է եւթնամեան, մանուկ՝ ԺԴ (14)-ամեայն, պատանեակ՝ Ի (20)-ամեայ, որ զԺ (10) պատեաց, երիտասարդն՝ երեք տասն է, հասակն՝ ԽԵ (45), իբր թէ հասաք ի չափ լրման եւ աճման, ալեւոր՝ Կ (60)-ամեայն, ծերն, որպէս եւթանասուն կամ Ջ (80): Եւ իւրաքանչիւր հասակի վիշտ եւ մեղանչումն գոյ մեզ, յորժամ ի վեց հասակէն փրկէ զմեզ, ի յեւթներորդումն ոչ հասանի առ մեզ չար: Դարձեալ է (7) դար կենցաղոյս ամենայն մարդկան, զի զայս կեանքս է (7) դար ասեն

Գիրք Սուրբք եւ ութերորդ՝ զհանդերձեալն, որպէս ասէ Սողոմոն. «Տո՛ւք բաժինս է (7), այլեւ ութիցս» (Ժողով. ԺԱ 2): Եւ է առաջին դարն Ադամայ, երկրորդն՝ Ենովքայ, երրորդն՝ Նոյի, չորրորդն՝ Աբրահամու, հինգերորդն՝ Մովսէսի: Իսկ վեց դարն՝ յորում ծնաւ Քրիստոս եւ փրկեաց զմեզ ի յապականութեանց մերոց, որպէս ասէ մարգարէն Դաւիթ. «Առաքեաց զբան իւր եւ բժշկեաց զնոսա, եւ փրկեաց յապականութեանց իւրեանց» (Սաղմ. ՃՁ 20): Եւ յայնմհետէ դարն քրիստոնէից՝ մինչ ի կատարած աշխարհի: Եւ այլք ի վարդապետաց այսպէս թուեն. առաջին դարն՝ յԱդամայ մինչեւ ի Նոյ, երկրորդն՝ ի Նոյէ մինչեւ ցԱբրահամ, երրորդն՝ յԱբրահամէ մինչեւ ի Դաւիթ, չորրորդն՝ ի Դաւթէ մինչեւ ցգերութիւնն բաբելացոց, /22բ/ հինգերորդ՝ ի գերու[թ]ենէն մինչ ի Քրիստոս, վեցերորդ՝ ի Քրիստոսէ մինչ ի կատարած աշխարհիս, եւթներորդ՝ մեռելոց դարն, ութերորդ՝ յարուցելոցն է եւ անդի կենացն: Այս է, որ մարգարէաբար ասի ի գիրս Յոբայ. Վեցից վշտաց փրկեսցէ (Ե 19), այսինքն՝ ի վեց դարու կենցաղոյս: Եւ յէ (7) ո՛չ մերձեսցի առ քեզ չար (Ե 20): Յետ աստի կենացս, այսինքն՝ չար մահուն, որ լինելոց է չարեաց եւ մեղաւորաց, որպէս ասէ Դաւիթ. «Մահ մեղաւորին չար է» (Սաղմ. ԼԳ 22), զի չարեօք կեայ ի վերայ երկրի եւ չարեօք մեռանի, եւ նոյն չարեօքն յառնէ ի գերեզմանէն: Զի զոր ինչ սերմանէ ոք, նոյն եւ բուսանի՝ եթէ ցորեան եւ եթէ գարի: Իսկ յորժամ բարի եւ սրբութեամբ կեայ ի վերայ երկրի, եւ բարւոք մահուամբ մեռանի, որպէս ասէ Դաւիթ. «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց» (Սաղմ. ՃԺԵ 15): Եւ նոյնպէս բարի գործովն յառնէ ի գերեզմանէն, եւ լուսեղէն ամպօք ելանէ ընդ առաջ Քրիստոսի յերկինս եւ այնպէս. «Յամենայն ժամ ընդ Տեառն լինիցի» (Ա Թես. Դ 16), ասէ առաքեալ: Որում եւ զմեզ արժանի արասցէ Քրիստոս տեսութեան իւրոյ եւ անճառ գթութեան, եւ նմա փա՛ռք յաւիտեանս. Ամէն: /23ա/

ՆՈՐԻՆ ՔԱՐՈՋ ՎԱՍՆ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ԵՒ ՉԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՆԱՆՑ Ի ԲԱՆՆ ՅՈՎԲԱՅ. ԻԲՐԵՒ ԶՄԻ Ի ԿԱՆԱՆՑ ԱՆԶԳԱՄԱՑ ԽՕՍԵՑԱՐ

Հաջ զաւրավարն հաւատոյ եւ անկեղծաւոր իմաստասէր մարգարէն Յոբ, նպատակն համբերութեան եւ աւրինակն ճշմարտութեան, որ զամենայն փորձանս սատանայի համբերութեամբ յաղթեալ, վերջին չար՝ զկինն, յարուցեալ ընդդէմ նմա, վասն որոյ պատասխանեաց. Իբրեւ զմի ի կանանց անզգամաց խօսեցար (Բ 10) եւ այլն:

Ասեն վարդապետք. Ո՛չ գիտեմք զժամանակն, թէ ե՞րբ տայ զմեզ ի հանդէս հանդիսադիրն մեր, եւ ոչ զժամանակն, թէ ե՞րբ խնդրէ ի մարտ ախոյեանն զմեզ[24]: Վասն որոյ պարտ է յամենայն ժամ պատրաստ լինել մեզ վասն Բ (2) իրաց. մին՝ վասն մահուն եւ միւս՝ վասն փորձութեանց, զի երկոքեան դոքա իբրեւ զորոգայթ հասանեն ի վերայ մարդոյ: Վասն սոցա ասէ Դաւիթ. «Պատրաստեցայ եւ ոչ խռովեցայ» (Սաղմ. ՃԺԸ 60): Նոյնպէս եւ Աբրահամ, յորժամ կոչեաց Աստուած ի փորձութիւն, ասէ. «Ահասիկ եմ, Տէ՛ր» (Ծնն. ԻԲ 2): Այսպէս եւ Յոբ պատրաստ էր ի մարտ պատերազմին, յորժամ հրամանն էառ սատանայ ի Տեառնէ: Եւ այս Բ (2) իրս ցուցանէ. նախ՝ զի տկար էր սատանայ, եւ երկրորդ՝ զի տգէտ: Տկար էր, զի առանց հրամանին Աստուծոյ ոչ իշխեաց կորուսանել զինչքն Յոբայ: /23բ/ Նոյնպէս առանց հրամանի Տեառն ոչ իշխէին մտանել ի խոզսն (հմմտ. Մատթ. Ը 30-32, Մարկ. Ե 13, Ղուկ. Ը 32-33): Ցուցանէ այս, զի առանց թոյլ տա-

---

[24] Հմմտ. *Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք* թարգմանեալ ի յունէ ի հայ բարբառ ի հինգերորդ դարու, աշխատ. եւ ծանօթ. ի լոյս ընծայեաց հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1907, էջ 290-291. **Բաղումյան Զ. Ծ. վրդ.**, *Կիրակոս Երզնկացու՝ Սուրբ Եվագր Պոնտացու երկերի լուծմունքները*, Երեւան, 2022, էջ 222. տե՛ս նաեւ *Զմեռան*, գլ. ԻԵ. Նորին Գրիգորի քարոզ վասն փորձանաց ի բանն Յոբայ...., էջ 141-142:

լոյն Աստուծոյ ոչ իշխեն դեւք վնասել զմարդիկ, կա՛մ ի ներս մտանել եւ լլկել, կա՛մ այլ ինչ չար առնել, թէպէտ կամին միշտ զվնասս մարդկան: Իսկ տգէտ յայն երեւի, զի պատերազմեցաւ ընդ Յոբայ: Զի թէ գիտէր, որ յաղթէր Յոբ զնա, ոչ պատերազմէր ընդ նմայ: Նոյնպէս ամենայն սրբոց պատերազմի եւ ոչ գիտէ, թէ յաղթեն զնայ: Ապա յայտ է, զի սատանայ եւ դեւք ոչ գիտեն զառաջիկայն, թէպէտ եւ սուտ ի ձեռն կախարդաց ասեն խաբելով զմարդիկ, զմերձաւորն, որ լինելոց է ի ճարտարութենէ մտացն եւ փորձիւ գիտելով: Այլ առաջիկայն եւ խորհուրդ մարդկան Աստուծոյ միայն է գիտելի եւ ո՛չ հրեշտակաց, եւ ո՛չ դիւաց, եւ ո՛չ մարդկան: Եւ է (7) ասեն լինել զփորձութիւնքն Յոբայ: Եւ ասէ գիր զառաջին փորձութիւնն. Հարկի[ք] ելանցն [եզանցն] վարէին, եւ էշք[ն] մատակք արածէին առ նոքաւք: Եկին գերէվարք եւ գերեցին զնոսա, եւ զմանկունսն կոտորեցին սրով (Ա 14-15): Այս է ըստ մտացն, զի խրատ ընկալցուք եւ զգուշացուք. յորժամ հարկիք եզանցն, այսինքն՝ քահանայք ի գործ պատուիրանին իցեն, էշք մատակք առ նոսա մի արածեսցին, այս է՝ կանայք փափկասէրք առ նոսա մի մերձեսցին ի յուտել եւ յըմպել, զի մի սատանայ յարձակեսցի ի վերայ նոցա, եւ զեզանց եւ զիշուց ցանկութիւնն գործեսցէ ի նոսա, եւ գերի վարեսցէ մեղօք: Բայց զմանկունքն, /24ա/ որ տհասն են մտօք կամ հասակով, կոտորեսցէ զնոսա սրով, այսինքն՝ զի ատամունքն սատանայի զէն եւ նետք են, եւ լեզուք նոցա, որպէս սուր սուսեր, զի յորդորէ զնոսա ի ցանկութիւնս եւ ապականեսցէ զհոգիս նոցա: Այս առաջին փորձութիւնն Յոբայ:

Տեսցուք զերկրորդ գլուխն, որ ասէ. Հուր անկաւ յերկնից եւ այրեաց զհօտս եւ զհովիւսն (Ա 16): Սատանայ ո՛չ կարէ շանթս ընկենուլ եւ ո՛չ փայլատակունս առնել, եւ ո՛չ այլ տարերք կարէն փոխել, որպէս ասեն տխմարք: Այլ ինքն ի նմանութիւն հրոյ անկեալ ի վերայ հօտիցն եւ այրեաց զնոսա, որպէս ասէ. «Արկցես ի վերայ նոցա զկայծակունս հրոյ» (Սաղմ. ՃԼԹ 11): Եւ զայս արար թշնամին, զի Յոբ հայհոյեսցէ զԱստուած, որպէս թէ բարկացեալ է եւ յերկնիցն հրով այրէ զինչս նորա: Այլ նա ուրախացեալ, գոհանայր զԱստուծոյ առաւել ես, որ զբոլոր հօտն իմ այրեաց հրով:

Այլեւ զայն ուսուցանէ մեզ հոգէպէս, եթէ հովիւք են քահանայք, եւ ոչխարք՝ ժողովուրդք, ոչ է պարտ արտաքոյ բանակի լինել. զի եթե ելցեն ի հովանոյ իմանալի վիմէն եկեղեցոյ՝ հրով պատեալ ապականին քահանայք եւ ժողովուրդք այնու հրովն, որ ասաց Տէրն. Անկեալ յերկնից իբրեւ զփայլակն (Ա 16):

Իսկ երրորդն՝ եկին հրեշտակք եւ ասեն. Հեծեալք պատեցին երիս առաջս եւ գերեցին զուղտսն եւ զմանկունսն կոտորեցին սրով (Ա 17): Արդ ուղտն, զի ծամածուռ է եւ ոչ կատարեալ կճղակահերծ, նշանակէ զհեթանոսս եւ զհերձուածողս, /24բ/ որ ընթեռնուն զՍուրբ Գիրս եւ ոչ կարեն իմանալ, թէ որ երից անձանցն է եւ որ միոյ բնութեան, որպէս Սաբէլ եւ Արիոս եւ նմանք նոցին[25]: Նոյնպէս եւ ի տնօրէնութիւնն Քրիստոսի ոչ գիտեն զմիաւորութիւնն անբաժանելի, որպէս Նեստոր եւ քաղկեդոնիք, զի ոմանք Բ (2) բնութիւնս բաժանեն եւ ոմանք՝ Բ (2) անձինք եւ Բ (2) կամք, եւ Բ (2) գործք: Զոր Բանն Աստուած միաւորեաց զբնութիւնս մեր ընդ իւրում աստուածութեանն, նոքա բաժանեն, զի բաժանեսցին ինքեանք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն: Եւ առաքեալ. «Մի Տէր, մի Քրիստոս, մի Որդի» (հմմտ. Ա Կորնթ. Ը 6) խոստովանի, եւ նոքա յերկուս որոշեն, զի որոշեսցին ի նմանէ: Եւ որք մանկունք են մտօք եւ մաւտին առ նոսա՝ նոքա դիւրաւ գերին ի նոցանէ վասն

---

[25] Հմմտ. *Գիրք հարցմանց*, հտ. Բ, պրակ ԺԳ, էջ 80. «Որպէս Սաբէլ յաջ խոտորեալ՝ ի մի բնութիւն եւ ի մի անձն ժողովեաց զԵրրորդութիւնն սուրբ: Եւ ընդդէմ նմին Արիոս ի ձախ խոտորեալ Գ (3) անձինք եւ Գ (3) բնութիւնս որոշեաց». տե՛ս նաեւ *Ձմեռան*, գլ. ՃԾԴ. Նորին դարձեալ քարոզ վասն Սրբոյ Հոգւոյն, ի բանն, որ ասէ «Քանզի ճաճանչէ Աստուծոյ զօրութեանն եւ ծագումն փառաց ամենակալին (Իմաստ. Սող. Է 27), էջ 710. «Այլ մեք զմիջին ճանապարհն գնալով, ոչ յաջ խոտորիմք, եւ ոչ յահեակ. զի ոչ որպէս Սաբէլ միաւորեմք, եւ ոչ որպէս Արիոս բաժանեմք»: Նմանօրինակ միտք կարդում ենք նաեւ Սահակ Վարդապետի երկերից մեկում. «Եւ ոչ չարիմացն Սաբէլ Լիբեացի, որ զԵրրորդութիւնն միանձն համարեցաւ լինել ըստ մոլորութեանն Հրէից, եւ ոչ երիս կատարեալ անձինս ըստ քրիստոնէական հաւատոց: Եւ ոչ մոլեկանն Արիոս, որ ասաց մեծ զՀայր, եւ կր[տ]սէր եւ արարած՝ զՈրդի, եւ ոչ խոստովանեաց համագոյ զԵրրորդութիւնն». տե՛ս **Սահակ Վարդապետ (Մռուտ),** (Թ դար), *Բացայայտութիւն*, Երուսաղէմ, 2012, էջ 4-5:

պարզմտութեանն իւրեանց: Եւ կոտորին սրով լեզուի նոցա ուսեալք զչար հերձուածս նոցա: Այս երրորդ փորձութիւնքն:

Իսկ չորրորդ՝ կործանումն ուստերաց եւ դստերացն Յոբայ, զի Ժ (10) էին ծնունդքն՝ Է (7) որդիք եւ երեք դստերք: Նախ՝ զի տասն մատամբ ձեռացն զպսակ բանիցն նուիրէր Աստուծոյ: Եւ զպսակ տարոյն բաշխէր աղքատաց: Փոխանակ այնմ Ժ (10) պսակի խօսուն յականց եդ ի գլուխ նորա: Եւ դարձեալ, զի այսքան թիւ սիրելի եւ գովելի է աշխարհական սովորութեանց, ասեն՝ Աստուած տայ քեզ Է (7) որդի եւ Գ (3) դստերք: Ըստ այնմ. «Ամուլն ծնաւ եւթն, եւ բազմածինն նւազեաց ի ծնընդոց» (Ա Թագ. Բ 5): Արդ, մտաւոր տեսութիւնն Է (7) են ի մեզ արիական խորհուրդք առաքինութեան, երեքն աստուածային, որ է՝ հաւատ, յոյս /25ա/ եւ սէր, եւ չորսն՝ մարդկային, որ է՝ խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն եւ արդարութիւն: Իսկ աճեցող եւ ծնընդագործ յերեք դէմս որոշին ի մեզ, այսինքն՝ հոգի եւ մարմին, եւ բանս մեր: Այսոքիկ են ի մեզ Է (7) որդիք եւ Գ (3) դստերք բարեգործութեան: Այսոքիւք սիրեմք զԱստուած եւ պտղաբերիմք[26]: Եւ զայսոսիկ կործանէ ի մէնջ սատանայ եւ կորուսանէ: Այս չորրորդ փորձութիւնքն:

Հինգերորդ փորձութիւնքն՝ հարուածք մարմնոյն Յոբայ. Զի սատանայ եհար չարաչար կեղով յոտից մինչեւ ցգլուխն (Բ 7-8): Եւ բոլոր մարմինն ի թարախ, ի շարաւ եւ յորդունս փոխեցաւ եւ ոչ մնաց ողջանդամ, բայց միայն հինգ զգայութիւնքն, որ գործիք էր հոգւոյն: Եւ ձեռքն, որով քերէր զթարախն եւ յաղօթս տարածէր, եւ բերանն, որով խաւսէր՝ աւրհնէր զԱստուած, եւ ձայնն մնաց նոյն, որով ճանաչէին զնա: Եւ այլ մարմինքն ամենայն ապականեցաւ: Եւ այս վասն Դ (4) պատճառի. նախ՝ զի զբոլոր այգին ապականեաց չարն, զտերեւն կերաւ եւ զփայտն ծակոտեաց, բայց զողկոյզն հատանել ոչ կարաց: Երկրորդ՝ եհար զամենայն անդամսն, զի զբոլոր ամենայն անդամսն պսակեսցէ: Երրորդ՝

[26] Հմմտ. **Իսիքիոս Երուսաղէմացի**, էջ 169. «Ես զիմս (սիրտ) պտղաբերեմ օրինօք Աստուծոյ»:

եհար զբոլոր անդամսն, զի բոլոր ամենայն անդամքն պատարագ լիցին Աստուծոյ: Չորրորդ՝ զի ոչ միայն ձեռաւք եւ բանիւ, այլ ամենայն անդամօքն յաղթեսցէ չարին. Եւ առեալ խեցի քերէր զթարախն (Բ 8): Նախ՝ զի կաւովն քերէր զկաւն: Երկրորդ՝ խեցովն սրբէր զամանն խեցեղէն, որ թրծեալ էր զօրութեամբ հրով Հոգւոյն Աստուծոյ: /25բ/ Երրորդ՝ ազգակցաւն զազգակիցն մխիթարէր: Չորրորդ՝ խեցեաւ քերէր զմարմինն եւ աղօթիւք սրբէր զմիտսն: Եւ ոչ կոչեաց բժիշկ. նախ՝ զի ցաւն ի վեր էր, քան զամենայն հնարս բժշկութեան բժշկաց: Երկրորդ՝ զի ոչ կամեցաւ Յոբ ի մարդկանէ աւգնականութիւն առնուլ. զի ո՛չ դեղք ի մարմին մերձեցաւ եւ ո՛չ մխիթարութիւն բարեկամաց ի սիրտն, զի օգնութիւն եւ մխիթարութիւն նա ի վերուստ ընկալաւ յԱստուծոյ: Այս հինգերորդն է:

Վեցերորդ փորձութիւնք՝ բարեկամացն, որք եկին յայլ եւ յայլ երկրէ մխիթարել զնայ, եւ սկսան բամբասել եւ նախատել զնա. նախ՝ զի տեսին զթագաւորն յաղբեւս անկեալ եւ զտունն կործանեալ վաղվաղակի, եւ զվերս սաստիկս: Կարծեցին, թէ մեղաւոր էր եւ վասն որոյն պատժեցաւ: Երկրորդ՝ զի սատանայ շարժեաց զնոսա ի բամբասանս արդարոյն, զի բարկացի եւ հայհոյութիւն խօսեսցի: Եւ այնպէս յամենայն կողմանց ըմբռնել, նախատէին զնայ, որպէս յըմբշամարտսն է տեսանել. զի բազումք յարեան ի վերա միոյն, եւ ոմն զոտն, եւ ոմն զձեռն, ոմն զականջն, ոմն զկզակն ըմբռնէր: Որ զոտն ըմբռնէր, այն էր, որ ասէին, թէ ոչ գնացեր յաւրէնս Աստուծոյ: Եւ որ զձեռն՝ այն էր, որ ասէին, ոչ գործեցէր զարդարութիւն: Եւ որ զականջն՝ այն էր, թէ չես լսել զվկա[յ]ութիւնն Աստուծոյ: Եւ որ զկզակն՝ այն էր, որ առնուին զբան նորա եւ նորին բանիւն յանդիմանէին զնայ, որպէս զնորին նետն առեալ՝ դարձեալ ի նա ձգէին: Այսպէս Յոբ կրկնէր, զի կամէր յանդիմանութեամբ ուղղել եւ խրատել զնայ, եւ նոքա կրկնէին, զի կամէին ընկրկել եւ գլորել եւ յաղթել զնա: Դարձեալ Յոբ խօսէր զամենայն մարգարէական հոգովն վասն տնօրէնութեանն Քրիստոսի: Եւ նոքա խօսէին վասն ամբարըշտաց ի դէմս

Յոբայ. նախ՝ /26ա/ զանկումն եւ զկործանումն առաջին ամբարշտին սատանայի, եւ ապա՝ զկիրք եւ զպատուհաս ամենայն ամպարիշտ մարդկան եթէ աստ եւ եթէ ի հանդերձեալն: Այս վեցերորդ փորձութիւնն:

Եւ յորժամ այսու ոչ կարաց յաղթել զնայ, ապա ածէր ի վերայ զէ (7) փորձութիւնն ի ձեռն առեալ զկինն՝ զառաջին սուրն, որով մարտեաւ ընդ Ադամայ: Եւ ասէ ընդ միտս իւր Դ (4) բան. նախ՝ թէպէտ սա հաստատուն մնաց, ոչ է հզօրագոյն, քան զԱդամ: Երկրորդ՝ թէպէտ մեծատուն է Յոբ, այլ զդրախտն ոչ ունի: Երրորդ՝ թէպէտ արդար է սայ, այլ զփայտն կենացն նա ունէր: Չորրորդ՝ թէպէտ աստուածապաշտ է սայ, այլ Ադամ ընդ Աստուծոյ խօսեալ վայելէր, զնա ի ձեռն կնոջն խաբեցի, եւ սա ոչ կարէ ընդդիմանալ ինձ: [Ե]ւ ի վերայ այսմ բանի [Եւ ի վերայ այսմ բանի][27] երիս ինչ քննելի է. նախ՝ թէ զի՞նչ էր բան կնոջն: Երկրորդ՝ զի՞նչ է անզգամն: Երրորդ՝ զի՞նչ է չարութիւն կանանց: Տեսցուք զառաջինն, թէ զի՞նչ է բան կնոջն: Բայց նախ գիտելի է, զի ոչ յինքենէ խօսի կինն: Եւ յայտէ անդի, զի ի կործանումն ընչիցն ոչ խօս[ե]ցաւ եւ ոչ ի մահ որդւոցն, զի պատշաճ էր այնպիսի խօսել: Այլ յայտ է, որ ի բանսարկուէն խաւսեցաւ, որպէս մոլեգնեալք խաւսին ի դիւաց, կամ որպէս օձն, որ ընդ Եւայի խաւսեցաւ: Նոյնպէս եւ կինն Յոբայ ասէ զառաջինն կակղութեամբ, զի խաբեալ կարասցէ. Ահաւադիկ յիշատակ քո ապականեցաւ յերկրէ (Բ 9): Զզաւակսն կորուսաք եւ այլ ոչ ունիմք ակն ծնանելոյ, թագուհիս ի դրանէ ի դուռն շրջիմ եւ ոչ ոք ողորմի ինձ եւ այլ սոյնպիսիս: Եւ ապա՝ զխստագոյնն. Ասա բան ինչ ի Տէր, եւ վճարեսցիս (Բ 9-10): Այսինքն՝ զայս գտանեմ համառօտ /26բ/ դեղ ախտիցդ: Ասա բան ինչ հայհոյութեան: Ի [եւ՞] կամ ցասուցեալ Աստուած սպանցէ զքեզ: Եւ կամ ի հայհոյելն զԱստուած յագեսցի թշնամին, եւ մահ ածցէ ի վերայ քո: Այս էր բանք կնոջն անըզգամի, վասն որոյն Հոգին զանուն նորա ոչ գրեաց, զի անըզգամ խօսեցաւ: Եւ անդէն ոչ ետ նմա պատասխանի, այլ յերկար հայեցեալ

[27] Կրկնվել է գրչի կողմից:

ի նա. նախ՝ զի երեսքն հայելի է սրտին, երբեմն զտրտմութիւնն ցուցանէ, երբեմն՝ զուրախութիւնն, երբեմն՝ զցանկութիւնն, երբեմն՝ զբարկութիւն: Այլ աստ յերկար նայիլն զբարկութիւնն նշանակէ: Դարձեալ յերկար հայի ի կինն եւ տեսանէ զաւծն թաքուցեալ ի ներքոյ լեզուի նորա: Եւ ապա ասէ. Իբրեւ զմի ի կանանց անզգամաց խաւսեցար (Բ 10):

Բ. Տեսցուք զերկրորդ գլուխն, թէ զինչ է անզգամն: Գիտելի է, զի անզգամն բառ Դ (4) կերպիւ լսի. նախ՝ ի Սուրբ Գիրս անզգամն է ամբարիշտն եւ անաստուած: Ըստ այնմ. «Ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած» (Սաղմ. ԺԳ 1): Երկրորդ անզգամն ասի յարտաքին գիրս տգէտն: Ըստ այնմ՝ որ անըզգամութիւնն ընդդէմ խոհեմութեանն բաժանի: Երրորդ՝ անըզգամն ստուգաբանելով ասի՝ անզգայ, այսինքն՝ զի ոչ ունի զգացումն եւ իմացումն ի բարիս: Չորրորդ՝ ասի անըզգամն ի վարդապետաց լկտի եւ յանդուգն, որ է լիրբ եւ անամօթ: Արդ, որ ասէ Յոբ. Իբրեւ զկին մի յանզգամաց խօսեցար (Բ 10): Նախ զայս ասէ, եթէ բազում կանայք անզգամութեամբ խօսեցան եւ խօսին դեռեւս, որպէս եգիպտացի կինն, որ Յովսէփայ պոռնկութիւն խոստանայր: Այլեւ Դալիլա կինն /27ա/ Սամփսոնի մատնէր այլազգեացն եւ կորուսանէ զնա (հմմտ. Դատ. ԺՁ գլ.): Այլեւ Հերովդիադա, որ խնդրեաց զգլուխն Յովհաննու Մկրտչի, եւ Հերովդէս գլխատեաց զնա (հմմտ. Մատթ. ԺԴ գլ.): Այլ դու որպէս զԵւա խօսեցար, որ եհան զազգս մարդկան ի դրախտէն. թողեալ զԱրարիչն եւ հաւանեցաւ խրատու օձին: [Ե]րկրորդ՝ զայս ասէ, իբրեւ զմի ի կանանց լկտեաց խօսեցար: Զի կին լկտի չորս իրօք վնասէ զմարդ. նախ՝ զի սիրէ զքսակ առն, եւ յայտ է, զի յաղքատանալն թողուն զայրն: Երկրորդ՝ զսեպհական անկողինն ոչ պահէ, այլ շնութեամբ ապականէ զինքն եւ զայր իւր, եւ զայն դէմն, ընդ որում շնացաւ: Երրորդ՝ զհալալ մանկունսն որդի շնութեան եւ պոռնըկութեան խառնէ: Չորրորդ՝ ինքն զպսակն աւրհնութեան քակէ եւ յանէծս փոխէ, որպէս ասէ առաքեալ. «Պատուական է ամուսնութիւն եւ սուրբ՝ անկողինք, բայց զշունս եւ զպոռնիկս դատի Աստուած» (Եբր. ԺԳ 4): Այլ դու քան զնոսա առաւել

անըզգամեցար, զի կին, որ շնայ մարմնով՝ առն իւրում մեղանչէ, իսկ որ շնայ մտօք՝ յԱստուած մեղանչէ: Ո՛վ կին, ես մարմնով տկար եմ եւ հոգվս առողջ: Դու մարմնովդ ողջ ես, մտօքդ ընդէ՞ր տկարացար (հմմտ. Բ գլ.): Դարձեալ յորժամ թագաւորէի եւ յամենայն կողմանց փառաւորեալ, դու ստիպէիր հանապազ աւրհնել զԱստուած: Այժմ վասն է՞ր յորդորես ի հայհոյել, ո՛վ անմիտ: Թէ ասացեալ էիր, թէ հայհոյեա զԱստուած եւ ապրեաց, դեռեւս ոչ հաւանէի քեզ, իսկ այժմ ասես հայհոյեա՛ եւ մեռի՛ր: Լաւ է ինձ ո՛չ հայհոյել եւ ո՛չ մեռանել: Այս եղբարք խրատ գըրեցաւ մեզ մի՛ ամենեւին գինւոյ եւ կնոջ լսել, այլ ամենեւին զպատճառն հատանել ըստ Տեառն Բանին. «Եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ, խլեա ի քէն» (Մատթ. Ե 29) եւ այլն: /27բ/

Իսկ զի՞նչ է, որ ասէ. Զբարիս ի ձեռանէ Տեառն ընկալաք, չարեացս ընդէ՞ր ոչ համբերիցեմք (Բ 10): Այսինքն՝ զհասարակաց բարիս ետ զկեանս, զլոյս, զհոգի, զմիտս, զմարմին եւ զայլն, այլեւ՝ զառանձին բարիս, այսինքն՝ զմեծութիւն, զթագաւորութիւն, զիշխանութիւն, զզաւակս եւ զայլսն: Քանի՞ աշխատաւորք են եւ չունին մեծութիւն, քանի՞ ամուսնացեալք են եւ չունին զաւակք: Ահա զայս ամենայն ետ մեզ Աստուած վասն մեծութեան իւրոյ եւ որ ետն, նոյն էառ, վասն փառաց իւրոց: Արդ մեք համբերութեամբ փառաւորեմք զնայ, զի դարձեալ «զանապականութիւնն տացէ մեզ Աստուած» (հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 50): Ասէ Սուրբ Գիրն. Յայսմ ամենայնի պատահելոցս՝ ոչ մեղաւ Յոբ շրթամբք իւրովք առաջի Աստուծոյ (Բ 10, հմմտ. նաեւ Ա 22): Ապա յայտ է, զի ոչ ինչ մեղաւ՝ ո՛չ բանիւ եւ ո՛չ մտաւք, եւ ո՛չ գործաւք: Զի լեզուն հայելի եւ թարգման է խորհրդոցն, զի որ ի սիրտն յըղանայ՝ լեզուն ծնանի: Եւ դարձեալ այսմ վկայէ առաքեալ. «Թէ որ բանիւ ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ եւ այնու ճանաչի, թէ սանձահարեալ է զամենայն անդամս իւր» (Յակոբ. Գ 2): Ապա յայտ է, եղբա՛րք, զի բանս, որ խօսիմք, սրտին թարգման է եւ գործոցն թարգման է՝ եթէ բարի եւ եթէ չար: Թէ բարի է խօսքս մեր, յայտ է, թէ եւ սիրտն բարի է եւ ծածուկ գործն բարի է, եւ թէ չար է լեզուն,

չար է եւ գործքն, եւ չար խորհուրդն, զի «Յաւելուածոյ սրտին խօսի լեզուն» (Ղուկ. Զ 45), ասէ Տէր: Այս երկրորդ գլուխն վասն անզգամին:

Գ. Տեսցուք զերրորդն, թէ զի՞նչ է չարութիւն կանանց: Եւ ցուցանի այս Դ (4) կերպիւ. նախ՝ ի բնական իրաց: Երկրորդ՝ յօրինակաց: Երրորդ՝ ի վը/28ա/կայութեանց Սուրբ Գրոց: Չորրորդ՝ յարտաքին իմաստնոց: Եւ նախ՝ ի բնական իրաց յայտնի է չարութիւն կանանց ի Դ (4) իրաց, այսինքն՝ զի առնէ զմարդն ցուրտ եւ թոյլ, յիմար եւ թշնամի: Արդ առաջինն, որ է ցուրտ, զի կինն ի ծախ կողէն առաւ յԱդամայ: Այլեւ յարգանդի մօրն ի ծախ կողմն բեղմնաւորի, որ է ցուրտ: Եւ որպէս մարմնովն ցրտացուցանէ, նոյնպէս հոգովն ի սիրոյն Աստուծոյ եւ յայլ հոգեւոր բարեաց սպառէ: Վասն որոյ աղաչէ յԵրգսն. «Եկ հարաւ եւ շնչեա ի պարտէզ իմ» (Երգ Դ 16), զի հալեսցին ցրտութիւնք: Երկրորդ՝ առնէ թոյլ, զի ասեն իմաստունք, թէ որպէս շունչ ուղտուց զփուշն կակղացնէ, սոյնպէս շունչ կանանց զմարդն, զի կինն թոյլ է եւ տկար: Եւ որպէս տկարանայ մարդն մարմնով, նոյնպէս տկարանայ հոգով եւ ծուլանայ յամենայն առաքինութեանց: Վասն որոյ յուլիցն եւ ծուլիցն փակեալ է դուռն առագաստին: Երրորդն՝ առնէ յիմար, զի հեշտութիւն ցանկութեանն ելեալ ի խելապատակն եւ կլանէ զբանական մասն, որպէս ծուխ զլուսանցն խաւարէ: Եւ որպէս գինով արբենան, նոյնպէս մոլեալն ախտիւ, զի ոգիք ըմբռնեալք ի մեղս, ի մտաց եւս անկանին: Յաղագս այսոցիկ ընթերցումն եւ լոյս Սուրբ Գրոց զգիջութիւն ախտին ցամաքեցուցանէ: Չորրորդ՝ առնէ թշնամի Աստուծոյ սոյնպէս, զի իւրաքանչիւր մեղք մին մին զգայութեանց են ուտել, ըմպել եւ այլն: Իսկ կին չար զամենայն զգայութիւնսն ըմբռնէ, այսինքն՝ զտեսանել, զլսելն եւ զայլն: /28բ/ Եւ սոյնպէս արտաքուստ եւ ներքուստ ըմբռնեալ ի շնութիւն, վասն որոյ ասէ առաքեալ. «Ծնացողք, ո՞չ գիտէք, զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ Աստուած» (Յակոբ. Դ 4) եւ այլն: Եւ Աւետարանն ասէ. «Կին ածի, եւ ոչ կարեմ գալ» (Ղուկ. ԺԴ 21) ի կոչումն երկնաւոր: Ապա յայտ է ի բնական իրաց չարութիւն կանանց:

Բ. Երկրորդ՝ տեսանի ի յօրինակաց վեցից, այսինքն՝ զի չար կինն գուբ է եւ սուր, ցին եւ սոսինձ, կէս եւ մրուր: Առաջին գուբ է, զի որքան փորէ ոք զգուբն, ինքն ի խոր իջանէ, նոյնպէս որք պոռնկին՝ ի խորս անդընդոց իջանէն, որպէս ասէ Դաւիթ. «Գուբն, զոր փորեաց եւ պեղեաց, ինքն անկցի ի խորխորատն» (Սաղմ. Է 16): Եւ թէ զի՞նչ է գուբն, այլուր ասէ Դաւիթ. «Մտցեն ի ներքոյ անդնդոց երկրի, մատնեսցին սրոյ, եւ բաժինք աղուեսուց եղիցին» (Սաղմ. ԿԲ 10-11): Երկրորդ օրինակ՝ որպէս սուր է կինն, որ ըմբռնելիքն ողորկ է եւ միւս ծայրքն սուր եւ վնասող: Նոյնպէս եւ կին չար արտաքոյ հեշտ է եւ բարի ցուցանի, այլ ի ներքս քարշեալ, սուր է երկսայրի, որ սպանանէ զմարմինն եւ զհոգի: Երրորդ օրինակ՝ կինն ցինն է խորհրդոց, որ մերժեաց զարծիւն ի բունոյն, այսինքն՝ զԱդամ ի դրախտէն, սոյնպէս զամենայն բարձրաթռիչ խորհուրդս երկնաւոր հանէ ի մտաց մարդոյն եւ խորհի զչար ցանկութիւնն: Չորրորդ օրինակ՝ կինն սոսինձ է քաջահաս, որով մածնուն թեւք արծուեաց, այսինքն՝ միտքն թագաւորէ որպէս արծուի, եւ Բ (2) թեւքն՝ կամքն եւ իմացումն, եւ չար կինն տէր լինի կամաց մարդոյն եւ բարի իմացմանն եւ խափանէ զնոսա: Հինգերորդ օրինակ՝ զի կէս է կինն մարդոյ, զի կէս թարգմանի, եւ սատանայ կիսովն առաւել յաղթէ զկէսն. որպէս ծառոյն կէսն չոր լինի եւ բոլորն չորանայ, եւ ի խոց անդամոյն՝ միւսն խոցանայ: /29ա/ Վեցերորդ օրինակ՝ մրուր է կինն, զի որքան հեռաւոր է մարդն՝ յստակ է եւ պարզ որպէս գինի, իսկ մերձաւոր եղեալ կնոջ՝ պղտորի եւ ապականի կա՛մ մտօք եւ կա՛մ ցանկութեամբ: Վասն նոցա ասէ. «Սակայն մրուր նորա ոչ սպառեսցի, եւ արբցեն զնա» (Սաղմ. ՀԴ 9): Աստ՝ զմրուր մեղաց եւ անդ՝ զմրուր տանջանացն անսպառելի: Ապա յայտ եղեւ չարութիւն կանանց ի յօրինակաց:

Գ. Երրորդ՝ տեսանի ի Սուրբ Գրոց վկայութեանց. նախ՝ զի ասէ նոյն ինքն երանելին Յոբ. Ուխտ եդի աչաց իմոց չհայել ի կոյս (ԼԱ 1): Որպէս Տէրն հրամայէ. «Որ հայի ի կին առ ի ցանկալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում» (Մատթ. Ե 28): Զի թէպէտ գործն խափանեցաւ վասն տեղոյն եւ ժամանակին, այլ սրտին շնութիւնն կատարեցաւ ի ցանկութեամբ տեսութիւնն:

Երկրորդ՝ ուսուցանէ Սողոմոն. «Մի՛ հայիր ի չար կին, զի մեղր կաթէ ի շրթանց նորա, եւ կատարածն դառնագոյն է քան զլեղի» (Առակ. Ե 2-3): Այսինքն՝ զի քաղցր բանիւք ըմբռնէ ի գործն եւ յետ գործոյն, վաղ կամ անագան, ի խղճէ մտացն չարչարի եւ դառնանայ քան զլեղի որպէս Ամոնին եղեւ (հմմտ. Բ Թագ. ԺԳ գլ.): Երրորդ՝ ասէ նոյն Սողոմոն. «Կին չար զարանց պատուականաց զոգիս որսայ» (Առակ. Զ 26): Զի որպէս շուն որսայ զերէվայրիս, նոյնպէս կինն որսայ զմարդկան հոգիս: Չորրորդ՝ ասէ. «Կին չար ընդառաջ լինի պոռնիկ կերպարանօք» (Առակ. Է 10) եւ մոլորեցոյց զնա, որպէս զարջառ ի սպանումն եւ որպէս շուն ի տոռն, զի զբազումս տապաստ էարկ յերկիր եւ անթիւ են սպանեալքն ի կնոջէ: Եւ ճանապարհք դժոխոց են տուն նորա, որ տանին ի շտեմարանս մահու, զի որպէս ճանապարհն ի քաղաքն ածէ, /29բ/ եւ կին պոռնիկ ի դժոխքն եւ ի մահն յաւիտենից: Հինգերորդ՝ ասէ նոյն Սողոմոն. «Իբրեւ գինդ ոսկի ի քիթ խոզի, այնպէս է կնոջ չարի գեղեցկութիւն իւր» (Առակ. ԺԱ 22): Նախ՝ զի ընդ աղբ մեղաց թաւալէ: Երկրորդ՝ զի անպատշաճ է այնպիսոյ գեղն: Երրորդ՝ զի ատելին բարուք սիրելի ոչ լինի այնպիսի գեղովն: Վեցերորդ՝ դարձեալ ասէ. «Մի՛ տար զմեծութիւն կանանց, եւ մի՛ զկեանս քո, եւ մի՛ զմիտս քո ի խորհուրդս յետինս» (Առակ. ԼԱ 3): Զի որպէս որդն փայտի է վնասակար, նոյնպէս կորուսանէ զայր կին չար, այսինքն՝ զի զկեանքն եւ զմեծութիւնն, եւ զմիտքն, եւ զզօրութիւնն կորուսանէն աստ եւ անդ՝ ի հուրն յաւիտենական այրեն: Զոր եւ ասէ Յոբ ի դիմաց չար կանանց. Եթէ զօրութիւն է ի պարանոց նորա (ԻԱ 13): Այսինքն՝ զի ի սադրելոյ սատանայի, զարդասէր կանայք զարդարեն զպարանոց եւ զդէմս իւրեանց ապականացու զարդուք վասն չորս պատճառի. նախ՝ ի գայթակղութիւն երիտասարդաց: Երկրորդ՝ ի մոլութեան տռփումն անձանց իւրեանց վասն բղջախոհ ցանկութեան: Երրորդ՝ զի թակարդ եւ խայծ լինին որսորդին սատանայի, զի նովաւ ըմբռնէ զմիտս եւ զհոգիս արանց սրբոց, որք թեթեւութեամբ յերկինս թռչին, զի զնոսա որսասցէ: Չորրորդ՝ վասն ամբարհաւաճութեան, որ սերմանեալ է ի նոսա սատանայ, զարդարեն զինքեանս

եւ անհաճ լինին հանդերձից եւ տանց, եւ կերակրոց, եւ արանց եւ այլն: Վասն այն ասէ. Առաջի նոցա մահ եւ կորուստ ընթանայ (հմմտ. ԻԸ 22): Ոչ միայն մահ մարմնոյ, այլ մահ եւ կորուստն յաւիտենից տանջանաց: Դարձեալ ասէ Յոբ. Սրտմտութիւն եւ անժոյժ բարկութիւն է պղծել զկին առն (ԼԱ 11-12), որպէս գողոց եւ սպանողաց, եւ շնացողաց: Երկրորդ՝ բարկութիւն է հոգեւոր առաջնորդաց եւ կանոնաց: Չորրորդ՝ (երրորդ) բարկութիւն դատաստանին Աստուծոյ, որ լինելոց է շնացողաց այրումն հրոյ եւ լալ աչաց, որպէս ասէ հուր /30ա/ այլոյ: Մի՛ է գործ շնութեան, եւ պղծութեանն՝ չորեքկին. նախ՝ իւր եւ կնոջն այն: Եւ երկրորդ եւ երրորդ՝ տանց նոցա եւ անկողնոցն, զի մի մարմին են, եւ պղծեցաւ անկողինն սուրբ: Չորրորդ՝ թէ լիցի զաւակ նոցա, շնութեան են որդիք: Այլեւ ի Դ (4) կողմանէ վառ ի սրտմտութիւն բարկութեան ի վերայ նոցա. նախ՝ կնոջ առն, զի ասէ Սողոմոն. «Բուռն է նախանձ առն զկնոջ իւրոյ, եւ ոչ հանդարտէ ի դատաստանի» (Առակ. Զ 34), եւ ոչ միայն մարդոյ, այլեւ գազանք եւ անասունք վասն իգին պատառեն զմիմեանս: Երկրորդ՝ բարկութիւն մարմնաւոր դատաւորաց եւ իշխանաց: Վասն այն սուսէր ընդ մէջ են ածել ի վրէժխնդրութիւն չարագործաց, որպէս ասէ առաքեալ. «Մի՛ խաբիք, ո՛չ շունք, ո՛չ պոռնիկք, զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն» (Ա Կորնթ. Զ 9-10), եւ ոչ ապականութիւն՝ զանապականութիւն: Այսոքիկ վկայութիւնք են ի Սուրբ Գրոց վասն չարութեան կանանց:

Տեսցուք եւ զչորրորդն՝ յարտաքին իմաստնոց զչարութիւն կանանց. նախ՝ զի Սեկունդոս փիլիսոփոսն[28], որ ասաց, թէ ամենայն կին բոզ է, եւ մայրն յուր աստ կացեալ: Եւ յորժամ բազում ժամանակք անցին ի վերայ, եկն այլակերպեալ առ մայրն փորձիւ, եւ ի յանկողինքն ասէ՝ ո՞չ ասացի, թէ ամենայն կին բոզ է: Եւ

[28] Սեկունդոս փիլիսոփայի մասին տե՛ս **Տաշեան Յ. վրդ.**, *Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք*, մաս Ա, Վիեննա, 1895, էջ 162-228. **Տաշեան Յ. վրդ.**, *Սեկունդոս Իմաստասէր*, ՀԱ, թիւ 4, 1894, էջ 114-117, *Սեկունդոս Իմաստասէր. Բ*, ՀԱ, թիւ 5, 1894, էջ 149-154, *Սեկունդոս Իմաստասէր. Գ, Դ*, ՀԱ, թիւ 7, 1894, էջ 203-208, *Սեկունդոս Իմաստասէր. Ե*, ՀԱ, թիւ 8, 1894, էջ 233-239:

մայրն ի յամօթոյն մեռաւ[29]: Եւ նա հատեալ զլեզուն, զի ոչ խօսեցաւ ի կեանս իւր, այլ գրով եհարց զթագաւորն Ադրիանոս եւ ասէ՝ կին է ցանկութեանց տեղի, ընտանի գազան, հանապազորդ կռիւ[30] եւ այլն: Երկրորդ՝ էտես միւս փիլիսոփոսն կին մի կախեալ ի ծառոյ եւ ասէ. Երանի՛ թէ ամենայն ծառքս սոյնպէս պտուղ բերէին: Երրորդ՝ ցԹէովնաս[31] կին հարցուկ հարցին, թէ՝ ամուսնացեալ ոք յորժա՞մ մտցէ ի տաճարն: Ասէ. եթէ յիւր կինն ի վառեալ է զամենայն անդամս նորա վասն միոյ մասին հեշտութեան, զի չար անդամն զհոգի եւ զմարմին այրէ ի տանջանսն յաւիտենից /30բ/ նոյն օրն: Ապա թէ՝ յօտար կին մի՛ մտցէ բնաւ յաւիտեանս: Չորրորդ՝ որ ետես իմաստասէրն ի գործ շնութեան, ասէ. Ո՛չ է դա քեզ մահ, մահկանացո՛ւ, այլ անմահ չար[32]: Զի ի քաղաքական օրէնս կարգեցին հեթանոսք, որ զգողս եւ զշունս, եւ զչարագործս պատժեն, եւ զբարեգործս պատուեն, որպէս ասէ առաքեալ. «Հեթանոսք, որ զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործեն» (Հռոմ. Բ 14), գրեալ զօրէնս ի սիրտս իւրեանց ըստ վկայութեան մտաց իւրոց:

Արդ այս է չարութիւն կանանց, որպէս ցուցաւ ի բնական իրաց եւ յօրինակաց ի Սուրբ Գրոց եւ յարտաքին իմաստնոց՝ փոքր ի շատէ ասացեալ: Եւ դու մի՛ ասել, եթէ ես իմաստուն եմ եւ հզօր, ոչ յաղթուիմ: Դու չես իմաստուն, քան զՍողոմոն, որ զամենայն խրատս գրեաց մեզ. ե՛ւ գինի, ե՛ւ կանայք հեռացուցին յԱստուծոյ զնա: Եւ ո՛չ եւս հզօր, քան զՍամսոն, որ իշոյ մի ծնօ-

---

[29] Այս հատվածը տե՛ս **Տաշեան Յ. վրդ.,** *Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք*, մաս Ա, Յաւելուած, էջ 295-296:

[30] Այս հատվածը տե՛ս *Բանք խրատուց նախնի իմաստասիրաց*, Սոփերք հայկականք. Ա, Խօսք Սեկունդոսի Իմաստասիրի առ Ադրիանոս կայսեր (էջ 63-70), Վենետիկ, 1853, էջ 67:

[31] Թէովնասի մասին տե՛ս նաեւ *Սրբոյ Քերթողահօր մերոյ Մովսէսի Խորենացւոյ նախակրթութիւն հռետորական ասացեալ Գիրք պիտոյից*, Ս. Ղազար, 1796, էջ 26-27:

[32] Այս միտքը նույնությամբ արտացոլված է «Գիրք հարցմանց»-ում. տե՛ս *Գիրք հարցմանց*, հտ. Ե, պրակ ԼԳ, էջ 277:

տով զՌ (1000)-սն էսպան, եւ նա ի կնոջէ տկարացաւ, եւ այլազգիքն բրեցին զաչս նորա եւ գերի վարեցին, եւ անդ մեռաւ: Մի՛ ասել, թէ հալալ կին է: Տե՛ս, թէ հալալ կինն Ադամայ զինչ վնասեաց զնա: Բարի ոք է հալալ ամուսնութիւն, այլ կին չար՝ ոչ է պահէ սուրբ զանկողինն, զի անժամն եւ անճանապարհն հալալ ամուսնութիւնն ի շնութիւն փոխարկի: Մի՛ ասէր, եթէ ի մէջ մարդկան բնակեմ, զի զմարդիկ շահեցայց: Ասեմ քեզ, եթէ զի Աստուած ցրուեսցէ զոսկերս մարդահաճաց, եւ «զի՞նչ է օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի եւ զանձն իւր տուժեսցէ» (Մատթ. ԺԶ 26) եւ այլն: Դու մի՛ բնակէր ի մէջ չարեաց, զի մի զխեղդ ոգւոց նոցա ընդունիցիս եւ զչարիս նոցա ուսցիս:

Ապա ուրեմն, թէ աշխարհականաց խոտելի է շնութիւնն, քեզ, որ կարգաւորդ ես, ընդէ՞ր է ընտրելի: Եթէ հեթանոսք ատեն զշունս, դու վասն էր սիր/31ա/ես: Եթէ հայելն արտաքուստ շնութիւն է համարեալ, եւ դու յորժամ մերձակայ լինիս հանապազ, զի՞նչ է լինելոց: Եթէ յերազի փորձիմք կորուստ է անձին, ապա ի յարթնութեանն ո՞ր հուր այրեսցէ զմեզ: Եթէ մտօք ի խորհուրդն նեղէ զմեզ, զգայութեամբ հպիլ որքա՞ն հեռանամք յԱստուծոյ: Եթէ առանց գինւոյ մոլիմք ցանկութեամբ, յորժամ զուշակորոյս գինին ըմպեմք եւ աչօք պակշոտիցիմք, զի՞նչ լինիցի կատարածն մեր: Զի այժմ սոյնպէս զամենայն կարգ շփոթեալ տեսանեմք քահանայք ի մէջ քաղաքի եւ գեղի շրջեալք, եւ կանայք ի վանորայս բնակեալ սեղանակից միմեանց եւ տնակից եղեալ: Եւ զո՞րն ասեմ կամ յիշեմ, զոր ինչ գործեսցի ի նոսա ծածուկս եւ յայտնիս: Մի՛ խօսեսցի բերան իմ զգործս որդոց մարդկան, ըստ մարգարէին. «Այլ ո՞ տայր ինձ թեւս աղաւնոյ» (Սաղմ. ԾԴ 7), զի հեռացեալ տարաշխարհիկ լինէի ի չար առաջնորդաց եւ կարգաւորաց ազգիս մերոյ: Յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Փրկիչն ամենայնի, որում փառք յաւիտեանս. Ամէն:

Այս երկոքին քարոզքս գրեցաւ ի կարգ լուծմանցս: Այժմ հետեւեսցուք առաջի եդեալ բանին: /31բ/

Բ. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ՅՈԲԱՅ[33]

Նախ՝ գիտելի է վասն թուոց համարոյդ, զի յորժամ եբաց զբերանն եւ անէծ զօրն, ոչ է առաջին ի պատասխանիս չարեաց, զի այն է առաջինն, որ կնոջն պատասխանեաց անզգամի: Այլ այս երկրորդ է՝ ի վերայ այնմ կարգի: Եւ դարձեալ երկրորդ է ըստ մտաց, զի զառաջին օր ստեղծմանն ոչ անէծ, այլ զերկրորդ օրն, որ է մեղաց օրն եւ դատապարտութեանն Ադամայ: Ապա յայտնի առաջին բանն է, որ խօսեցաւ առ բարեկամսն. այլ սա երկրորդ է, զի նախ խօսեցաւ ընդդէմ կնոջն եւ ապա՝ ընդդէմ բարեկամացն: Եւ զամենայն թիւ համարոյդ այսպէս իմա:

Արդ ասաց զառաջին ճառն ի խորհուրդ առաջին դարուն եւ առաջին աւուրցն արարչութեան, յորում բարեկամքն Յոբայ նստան զեւթն օր լուռ՝ ըստ եւթն աւուրցն, մինչ չէր ստեղծեալ Ադամ: Եւ անէծ զօրն, յորում անիծաւ մարդն, եւ գիշերն, յորում սկզբնական մեղօք ծնաք: Նաեւ անդ ասէ զխաւարումն Արուսեկին եւ անէծ զնա եւ զգործն նորա, զոր մինչ ի կատարած առնելոց էր: Անդ ասաց. Զմահ մարդոյն հանգիստ (Գ 22-23), որ ասացաւ մահու մեռանիցիս (հմմտ. Ծնն. Բ 17), եւ յետ մահու՝ մինչեւ յօր դատաստանին յիշատակեաց: Վկայեաց եւ Ելիփազ զմեղանչումն նախաստեղծին եւ զարմատաքի խլելն (Դ 7): Այլեւ ասէ՝ զանկումն ըստ նմանութեան ցեցոյ (Դ 19), եւ զբժշկութիւն /32ա/ մարդկան ի վեցից վշտաց, եւ յեւթանց կենցաղոյս, եւ հասեալ ի գերեզման, եւ ժողովեալ ի հունծ, եւ ի շեղջս կալոյն ամփոփեալ: Եւ այսոքին յառաջին ճառն: Իսկ աստ ասէ զնոյն խորհուրդ վասն ցաւոց նախնոյն Ադամայ եւ ի հող դառնալ: Այլեւ զկեանք մարդոյ ի վերայ երկրի փորձութեամբ եւ այլն: Այլեւ զմեծութիւն մարդոյն

[33] Հմմտ. ՍՄ 1166, թ. 20ա:

եւ զայցելութիւն վերստին, եւ զսրբութիւն մեղաց, որ եղեւ գալըստեամբ Փրկչին: Դարձեալ անդ ասաց Ելիփազ՝ Ծծեսցի զօրութիւն (Ե 5-6), աստ ասէ՝ Զարիւն իմ ծծէ (Զ 4): Անդ՝ Զօրութիւն առիւծու շիջաւ (Դ 10), աստ՝ Իբրեւ զհոտ առիւծու կերակուր իմ (Զ 7): Անդ՝ Պերճութիւն վիշապաց (Դ 10), աստ՝ Միթէ ծո՞վ իցեմ կամ վիշա՞պ (Է 12): Անդ՝ Երթիցես ի գերեզման (Ե 26), աստ՝ Եղիցի քաղաքն իմ գերեզման (Զ 10) եւ այլն:

Բան. Ամենայն առաքինութիւն[34]*:*

Լուծումն. Աստուածային թէ մարդկային, հոգեւոր կամ մարմնաւոր եւ չորս յատկութիւն դնէ համբերութեան:

Բան. Կշռելով (Զ 1):

Լուծումն. Թէ ոք մտօք կշռէ՝ ցաւս իմ ծանր է, քան զբարկութիւնս, այլեւ բանքդ ձեր ծանր են:

Բան. Քան զաւազ ծովու (Զ 3):

Լուծումն. Ի ծովու սկսաւ զբանս, ակնարկէ ի գործ երկրորդ աւուրն, յորում եղեն ծովք: Այլեւ ի դարն ջրհեղեղի, որ ծովացաւ աշխարհ: Յեզերս ծովու է աւազ. նախ՝ զի պահապան է ծովու, երկրորդ՝ զի ալիքն թարս են:

Բան. Նետք Տեառն (Զ 4):

Լուծումն. Հարուածն ի Յոբ, այլեւ ի Դաւիթ՝ ցաւք, եւ ի յԱդամ՝ ալիք: Ցիռ եւ եզն զինքն կոչէ, զի ազատէր ի բեռանց մեղաց /32բ/ եւ գործունեայ առաքինութեանց: Եւ խնդրէր կերակուր զդատաստանն Աստուծոյ: Այլեւ «Ծանեաւ եզն զտածիչ իւր, եւ էշ՝ զմսուր տեառն իւրոյ» (հմմտ. Ես. Ա 3): Աղ իմաստութիւն է բանի եւ անհամ է, որ զերկրաւորս խօսի:

[34] Հմմտ. ՍՄ 1166, թ. 20ա:

Բան. Հոտ առիւծոյ (Զ 7):

Լուծումն. Ամենայն շաղղակեր գազանի բերան հոտեալ է: Այլեւ ասեն, թէ ի գլուխն առիւծու հոտ կայ եւ իջանէ ի բերան նորա[35]: Տե՛ս, զի գերեզմանք սրբոցն եւ յիշատակն պարիսպ է եւ օգուտ մարդկան:

Բան. Հեղեղատ (Զ 17):

Լուծումն. Զնոյն ջրհեղեղն ակնարկէ:

Բան. Տեսէք զճանապարհս (Զ 19):

Լուծումն. Նախ՝ տեսէք եւ ամաչեցէք: Երկրորդ՝ տեսէք եւ պարտական գտջիք: Երրորդ՝ տեսէք զվարս նոցա: Չորրորդ՝ տեսէք, զի անցաւորք են գանձք, եւ ոյք յուսան ի մեծութիւն: Վասն չորից երթան առ հիւանդս. նախ՝ հարցանելոյ: Երկրորդ՝ բժշկելոյ: Երրորդ՝ խրատելոյ: Չորրորդ՝ ի նմանէ լսելոյ: Վասն առաջնոյն ասէ. Անողորմ հասէք (Զ 21): Վասն երկրորդին. Ոչ խնդրեմ ինչ ի ձէնջ (Զ 22): Վասն երրորդին. Ուսուցէք (Զ 24): Վասն չորրորդին. Խոտան են բանք ճշմարիտք (Զ 25):

Բան. Ուրեմն (Զ 25):

Լուծումն. Այսինքն՝ որպէս երեւի:

Բան. Նստարուք (Զ 28):

Լուծումն. Նախ՝ մարմնով ասէ: Երկրորդ՝ դադարեցէք ի հակառակութեանց: Երրորդ՝ ի չար ընթացից: Չորրորդ՝ ի բարին հանգէք: Նոյնպէս եւ մեք, թէպէտ զգայութիւնքս զբաղին. մեք ի յածումն չար խորհրդոցն ասացուք, եթէ՝ դադարեցէք եւ մի խորհիք անիրաւ, այլ պատուիրանին Աստուծոյ ուշ ունիցիք:

---

[35] Հմմտ. ՍՍ 2101, թ. 69բ-70ա. հմմտ. *Գրիգոր Մագիստրոսի թղթերը*, Աղէքսանդրապոլ, 1910. ԽԸ. Առ Կիրակոս յոյն դպիր, էջ 53. «Այսպէս եւ շաղղակերք եւ գազանական հաւք եւ չորքոտանիք բոլոր....»: Բնագիրը տե՛ս նաեւ Գրիգոր Մագիստրոս, բն. կազմ. եւ ծնթ.՝ Գ. Սուրադյանի, ՄՀ, հտ. ԺԶ, ԺԱ դար, Երեւան, 2012, էջ 347:

Բան. Կոկորդ (Զ 30):

Լուծումն: Բերան մտաց եւ չորս իրօք /33ա/ դառնամք ի չարեաց. նախ՝ յիշելով զդատաստանին հատուցումն չարեաց եւ բարեաց: Երկրորդ՝ յոյս դնել առաջի զՔրիստոս: Երրորդ՝ օրինակ առնուլ զբազում սուրբս: Չորրորդ՝ ուշ ունել պատուիրանացն Աստուծոյ եւ Սուրբ Գրոց:

Բան. Փորձութիւնք են վարք (Է 1):

Լուծումն: Նախ՝ զի լի է պատահարօք եւ վշտօք: Երկրորդ՝ զի անհաստատ է: Երրորդ՝ դիւրափշրելի է անօթ: Չորրորդ՝ ի վնասն փոխի ստէպ ստէպ:

Բան. Հարթուցեալ (Է 2):

Լուծումն. Փախուցեալ կամ թաքուցեալ: Գիշերն ծանրանայ հիւանդն վասն չորից. նախ՝ ներքին եւ արտաքին մութն միաբանի: Երկրորդ՝ խորհուրդն առաւել պատերազմի: Երրորդ՝ յիշատակ տանջանաց յորդի: Չորրորդ՝ զգայարանքն փակեալ է եւ խորհուրդն ոչ յոք թափի: Ոստայն է կեանքս, զի մինչ ի կատարած հէնքն է, եւ յամենայն օր՝ թելն:

Բան. Որպէս անիւ (Է 4):

Լուծումն. Նախ՝ արեգակն որպէս անիւ շրջի: Երկրորդ՝ տիւ եւ գիշեր որպէս անիւ է մեզ: Երրորդ՝ հասակ մեր ի տղայութենէ ի ծերութիւն: Չորրորդ՝ կեանքս մեր ի մօրէ առ մայր, այսինքն՝ ի հողէ ի հող շրջի: Դարձեալ, մեծութիւն եւ աղքատութիւն, առողջութիւն եւ հիւանդութիւն, եւ այլն որպէս զանիւ շրջի: Դաւիթ ասէ. «Աստուած իմ, արա զնոսա որպէս զանիւ» (Սաղմ. ՁԲ 14): Եւ Սողոմոն. «Ընկրկեսցի անիւն ի գուբ» (Ժողով. ԺԲ 6):

Բան. Կեանք իմ թեթեւագոյն են, քան զխօսս (Է 6):

Լուծումն. Չորս ինչ անցեալ ոչ գըտանեմք. նախ՝ հասակս մեր: Երկրորդ՝ ժամանակն եւ կեանք: Երրորդ՝ բանս խօսեցեալ: Չորրորդ՝ գործն արարեալ: Փուք, ասէ, զգայական շունչս: Եւ Դաւիթ. «Եղէ ես որպէս տիկ ի պարզի» (Սաղմ. ՃԺԸ 83), ասէ:

Բան. Դժոխք (Է 10):

Լուծումն. Երբեմն գերեզմանին ասէ, երբեմն՝ զտանջանք հոգւոց: /33բ/

Բան. Ծով կամ վիշա՞պ եմ (Է 12):

Լուծումն. Ի նոյն խորհուրդ երկրորդ աւուրն է, որ արար զծովս եւ անէծք օձին:

Բան. Մահիճք (Է 13):

Լուծումն. Որպէս ի մահ իջանիմք եւ ընկողմանիք:

Բան. Զի՞նչ է մարդ (Է 17):

Լուծումն. ՁԱդամ եւ զհասարակ բնութիւնս ասէ: Եւ մեծութիւնն՝ չորս կերպիւ. նախ՝ զԱդամ: Երկրորդ՝ հայելովն ի մեզ: Երրորդ՝ բանն մարմին եղեւ: Չորրորդ՝ ի հանգիստ դասելով զհամանմանս իւրեանց՝ զծեր ընդ ծեր, զտղայ առ տղայ եւ այլն:

Բան. Տողունս (Է 19):

Լուծումն. Լորձունք, որ կլանեմք, որ ցուցանէ զվիշտ եւ զաղէտ կենցաղոյս:

Բան. Զիս քեզ ոսոխ (Է 20):

Լուծումն. Յերեք դէմս. նախ՝ որպէս բարեկամքն կարծեն: Երկրորդ՝ վասն քո վկայութեանդ հակառակիմ: Երրորդ՝ այլք կարծեն ոսոխ, թէ ներէ հպարտացն բամբասել զարդարս:

Բան. Եւ արդ, յերկիր դառնամ (Է 21):

Լուծումն. Որպէս հրամայեցէր. «Հող էիր եւ ի հող դարձցիս» (Ծնն. Գ 19): Այս երկրորդ ճառն Յոբայ:

Ա. ԿՐԿՆԵԱԼ ԲԱՂԱՏԱՅ ՍՕՔԵՑԻՈՅ

Ճառս Բաղդատայ նկատէ զանկումն Ադամայ, այլեւ՝ զսատանայի: Եւ դարձեալ՝ զնորոգումն Ադամայ ի դէմս Յոբայ: Ոգի մեծաբանութեան Ադամ խօսեցաւ, նա դատեցաւ ի Տեառնէ: Այլեւ պրտու եւ բանջար հնձեալ Ադամ էր: Նոյնպէս վասն բանսարկուին ասէ. Խոնաւութիւն յարեգականէ ելցէ (Ը 16) եւ այլն: Եւ

զամենայն պատարագ ամբարշտի ոչ ընկալցի (Ը 20), եւ յարկ ամբարշտի ոչ են (Ը 22): Իսկ զնորոգումն Ադամայ մարգարէանայ ի դէմս Յոբայ. նախ՝ զի ասէ. Դարձուցէ քեզ զյարկն արդարութեան (Ը 6): /34ա/ Երկրորդ՝ վերջինքն առաւել, քան զառաջինն: Երրորդ՝ ասէ. Ոչ մերժէ Տէր զանմեղն Ադամ (հմմտ. Ը 20):

ՎԱՍՆ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ[36]

Չար է հպարտութիւն. նախ՝ զի առաջին ծնունդ է բանսարկուին: Երկրորդ՝ խոտորումն է բանականին: Երրորդ՝ զՏէր հակառակ ունի (հմմտ. Առակ. Գ 34), ասէ Սողոմոն: Չորրորդ՝ զի արտաքսեաց զսատանայ ոչ միայն յերկնից, այլեւ յերկրէ: Դարձեալ յատկութիւն հպարտին չորս ի մարմինն է. նախ՝ ի պարանոցն, որպէս աքաղաղ վերացեալ ունի: Երկրորդ՝ ի յաչքն երեւի. «Որ ամբարտաւան էր աչօք» (Սաղմ. Ճ 5), ասէ Դաւիթ: Երրորդ՝ ի յընթացս ոտիցն: Չորրորդ՝ «Ի գործս ձեռացն ցուցանէ» (հմմտ. Սաղմ. Հ 4), որպէս աղօթէ Դաւիթ. «Մի՛ եկեսցէ ոտք ամբարտաւանի եւ [ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ]» (Սաղմ. ԼԵ 12): Իսկ ի միտս եւ ի բանն վեց է նշան. նախ՝ զայլոց չարն մտածէ եւ զիւր՝ բարիսն: Երկրորդ՝ զի անհաւան է այլոց: Երրորդ՝ անկարեկից է: Չորրորդ՝ պարսաւադէտ է: Հինգերորդ՝ անհնազանդ է: Վեցերորդ՝ ընդդիմախօս է ամենեցուն:

Բան. Մեծաբան (Ը 2-3):

Լուծումն. Կա՛մ զպարծելն ասէ, կա՛մ զերկարելն: Չորս բան հանապազ պարտ է խօսել. նախ՝ զօրէնս Աստուծոյ: Երկրորդ՝ զաղօթս: Երրորդ՝ զօգտակարս: Չորրորդ՝ զիմաստութիւն:

---

[36] Հմմտ. ՍՍ 1166, թ. 24աբ:

Բան. Առաջինն սակաւ, քան զվերջինն (Ը 7):

Լուծումն. Նախ՝ ի դէմս Ադամայ: Երկրորդ՝ Յոբայ եղեւ: Երրորդ՝ ամենայն սրբոց: Չորրորդ՝ առաջին այս կեանքս է, եւ վերջին՝ հանդերձեալն: Կնիւն եւ պրտու[37] (Ը 11, հմմտ. Խ 16):

Տե՛ս ի վերջին ճառն, յորում ննջէ վիշապն[38]:

Բան. Խոնաւութիւն արեգականէ (Ը 16):

Լուծումն. Ելիփազ որպէս ցեց ասաց թափեալ զսատանայ. Եւ սա նեխութիւն ի յարեգականէ ապականեալ (Ը 16-17): Եւ այլն յայտնի է ի մեկնիչդ:

Բան. Ոչ ահագին (Ը 18):

Լուծումն. Դիմօք եւ ոչ /34բ/ սպառնացեալ բանիւ եւ ոչ բարկացող գործով, այլ որպէս որդի եւ բարեկամ, այսինքն՝ որպէս որդի եւ վարձկան, եւ ծառայ խրատեալ:

---

[37] Հմմտ. ՍՄ 1166, թ. 25ա. տե՛ս նաեւ **Իսիքիոս Երուսաղէմացի**, էջ 468-470: *Կնիւն* բառն Աստվածաշնչում միայն Հոբի գրքում է գործածվում, իսկ *պրտու*-ն՝ տե՛ս նաեւ Ելք Բ 3, Ես. ԺԹ 6:

[38] Հմմտ. ՍՄ 1115, թ. 114ա:

Գ. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ՅՈԲԱՅ

արց. Զի՞նչ է կրկնելն[39]*:*

Պատասխանի. նախ՝ նշանակէ զպատասխանին, զի պատասխանին կրկին է ի վերայ հարցմանց: Երկրորդ՝ նշանակէ զհակառակելն եւ զընկրկելն: Երրորդ՝ ցուցանէ զգողացեալն ի բանից եւ զնոյնն կրկնել եւ շրջել պատասխանելով: Չորրորդ՝ կրկ[ն]ելն յաւելուլն է յառաջին ճառսն: Արդ առաջին եւ վերջինն վայելչական է Աստուծոյ եւ Յոբայ: Իսկ միջին երկուքն բարեկամացն Յոբայ եւ չար բանսարկուին յարմարի: Դարձեալ, գիտելի է, զի Յոբ կրկնելով զբանսն, ուղղէր զբարեկամսն, եւ ընկրկէր զսատանայ: Զի սոյնպէս ամենայն ոք կարէ յաղթել սատանայի, յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատսն եւ յայլսն, յայնժամ սատանայ թիւրի եւ հեռանայ: Այլ, յորժամ զընկերն թիւրեմք եւ յաղթեմք չար յաղթութեամբ, յայնժամ սատանայ ուղղի եւ ուրախանայ:

Երրորդ ճառս յայտնի եւ է չորրորդ՝ ըստ կարգի: Նկատէ ի խորհուրդ երրորդ եւ չորրորդ օր արարչութեան: Զի նախքան զայս ասաց վասն բանջարաց: Եւ աստ վասն լուսաւորաց, որ արար զբազմաստեղն եւ զայլ լուսաւորս: Եւ ակնարկէ ի խորհուրդ /35ա/ երրորդ եւ չորրորդ դարուն, որ շրջի ի վերայ ծովու իբրեւ յատակի, որ շարժէ ի ներքոյ երկնից ի հիմանց, որպէս եղեւ առ Նոյիւ եւ այլն: Եւ Դատաւոր, եւ Տէր կոչեաց Աբրահամ, եւ աստ բազումս ասէ վասն դատաստանի, եթէ զդատաստան նորա աղաչեցից կամ թէ՝ հասարակ եկեսցուք ի դատաստան եւ այլն: Եւ եթէ սատակեսցէ, ո՞վ դարձուսցէ, որպէս զՍոդոմ միգով սատակեաց: Եւ կարգն անդ ասաց Բաղդատ՝ Սի՞թէ անիրաւ դատիցի Տէր (Ը 3) եւ աստ ասէ՝ Զիա՞րդ լիցի մարդ արդար առաջի Տեառն (Թ 1, նաեւ ԻԵ 4), եթէ կամիցի դատել: Անդ ասաց՝ Աղաւթից քոց լուիցէ

[39] Հմմտ. ՍՄ 1166, թ. 26ա:

(Ը 6), աստ ասէ՝ Իցէ՛ թէ լուիցէ ինձ (Թ 14): Անդ ասաց՝ Ստուեր են կեանք մարդոյ (Ը 9), աստ ասէ՝ Կեանք իմ թեթեւագոյն են քան զսուրհանդակ (Թ 25): Անդ ասէ՝ Խոնաւութիւն յարեգականէ (Ը 16) եւ աստ, որ ասէ՝ Արեգական եւ ոչ ծագէ (Թ 7): Անդ՝ Բերանք արդարոց լցցին ծաղու (Ը 21), աստ ասէ՝ Արդարք ծաղր լինին (Թ 23) եւ այլն:

Բան. Ճշմարտիւ գիտեմ (Թ 1):

Լուծումն. Այսինքն՝ Հոգովն Սուրբ, եւ դարձեալ, դուք ոչ գիտէք ճշմարտիւ զարդարութիւնն Աստուծոյ:

Բան. Զիա՞րդ լիցի մարդ արդար (Թ 1, նաեւ հմմտ. Իե 4):

Լուծումն. Նախ՝ զի Աստուած բնութեամբ է արդար եւ մարդս՝ ստացմամբ: Երկրորդ՝ Աստուած բոլորովիմբ արդար եւ մարդս՝ մասնաւոր: Երրորդ՝ Աստուած միշտ եւ անփոփոխ է արդար, եւ մարդս՝ փոփոխմամբ եւ երբեմն: Չորրորդ՝ Տէր մեր արդար ի սկզբնականէ եւ ի գործոյ, զի ոչ արար մեղս, ասէ, եւ նա է բնութեամբ եւ բոլորովիմբ, եւ անփոփոխ արդար:

Բան. Խստացաւ (Թ 4)[40]*:*

Լուծումն. Չարացաւ անզղջութեամբ: Հրեշտակք եւ մարդիկ լերինք կոչին. նախ՝ վասն բարձրութեան: Երկրորդ՝ վասն անշարժութեան: /35բ/ Երրորդ՝ վասն լուսաւորութեան: Չորրորդ՝ վասն յայտնի գոլոյ: Նոյնպէս եւ դեւք լեառն կոչին. նախ՝ վասն հպարտութեան: Երկրորդ՝ անշարժ ի չարիս: Երրորդ՝ վասն ընդդիմութեան: Չորրորդ՝ վասն ծանրութեան:

ՎԱՍՆ ԱՍՏԵՂԱՑ[41]

Բան. Եւ ընդդէմ աստեղաց կնքէ (Թ 8):

Լուծումն. Տասն մտօք է. նախ՝ յամենայն աւուր տիւ եւ գիշեր տեսանի, որպէս ասէ Երէմիա. «Առաքէ զլոյս եւ ընթանայ» (Բարուք Գ 33), եւ Դաւիթ. «Քո հրամանաւդ է տիւ եւ գիշեր»

[40] Հմմտ. ՍՄ 1166, թ. 26բ:
[41] Հմմտ. ՍՄ 1166, թ. 27ա:

(հմմտ. Սաղմ. ՃԺԸ 91): Երկրորդ՝ տեսանի բանս յառաջին խաւարումն Արուսեկին եւ դիւաց նորին, որ «զերրորդ մասն աստեղաց քարշեաց» (հմմտ. Յայտն. ԺԲ 4): Երրորդ՝ մարդեղութեամբ Բանին՝ խաւարեցաւ բանսարկուն եւ դեւք իւր: Ըստ այնմ. Խաւարեսցին աստեղք գիշերոյն այնմիկ (Գ 9): Չորրորդ՝ խաւարէ ըզ-Նեռն եւ զկարապետ նորին: Հինգերորդ՝ ի կատարածի, որպէս ասէ Տէրն. «Արեգակ եւ լուսին եւ աստեղք թօթափին» (հմմտ. Մարկ. ԺԳ 24-25): Վեցերորդ՝ ի խաչին կատարեցաւ, յորում խաւարեցոյց զլուսաւորսն եւ կնքեաց, այսինքն՝ վկայեաց, թէ սոքա չեն աստուածք: Եօթներորդ՝ արար շարժումն գոչմամբ ի խաչին եւ աւանդեաց զոգին: Կնքեաց, թէ յայսմ հետէ հոգիք ի ձեռս Աստուծոյ են: Ութերորդ՝ մինչ ի լրումն տնտեսութեան ի կարծիս էին հրեշտակք վասն բանսարկուին անկման. ի խաչին կնքեաց եւ հաստատեաց զնոսա: Իններորդ՝ որպէս տերեւ յորթոյ թօթափել կամէին աստեղք (հմմտ. Ես. ԼԴ 4), մինչ ամենազօր ձեռն Արարչին տարածեաց ի խաչին եւ հաստատեաց զնոսա: Տասներորդ՝ զայս ամենայն արար ի խաչին՝ եցոյց, թէ նոյն Աստուածն է եւ Արարիչ, որ հաստատեաց զնոսա ի յերկինս[42]:

Բան. Որ արար զբազմաստեղն (Թ 9):

Լուծումն. Անմոլարքն են:

Եւ գիշերավար (Թ 9, հմմտ. ԼԸ 32): Սոլորակք, զի լուսին զգիշերն վարէ, եւ արեւն՝ զտիւն: Սայլ (Թ 9): Հիւսսւոյ բեւեռն ի վերոյ, եւ հարաւ՝ զներքին բեւեռն, /36ա/ որ ծածկեալն է: Մեծամեծ նշանս առնէ աստեղօք, որպէս ի Ծնունդեան աստղն: Եւ առ խաչին խաւարիլ, որ ի յերկինս եւ ի յերկրի լի էր փառօք, որ անհաս են մտաց մարդկան: Վասն այսոցիկ գրեալ է յԵլիուսայ, Դ (4) ճառն տե՛ս[43]:

---

[42] Տե՛ս **Սարիբեկյան Է.**, *Խաչի վրա Քրիստոսի արտասանած յոթ խոսքը*, Լեւոն Խաչիկյան. Հարյուրամյակ, Նյութեր ակադեմիկոս Լեւոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-30 հունիսի 2018 թ.), Երեւան, Մատենադարան, 2019, էջ 404-416:

[43] Տե՛ս ՍՍ 1115, թ. 81ա:

Հարց. Զի՞նչ է՝ Վերասցի քան զիս, եւ անցցէ առ ինեւ (Թ 11-12):

[Պատասխանի] Եւ այս անքնիւն է եւ հրաշակերտն, որ ասաց ի վերոյ, եւ չորս մտօք է. նախ՝ յորժամ յապաղէ զդատաստան՝ այն վերանալն է, եւ յորժամ այց առնէ մեզ, այն զիջանելն է: Երկրորդ՝ թէ խնամէ եւ թէ պատժէ, ո՞ասէ ընդդէմ: Երրորդ՝ զի երեւեցաւ մարմնով, Աստուած էր մարդացեալ եւ զդատապարտութիւնս մեր լուծանէր, եւ ոչ ոք գիտէր: Չորրորդ՝ զի ել յերկինս եւ սոյնպէս եկեսցէ:

Վասն կշռոց տե՛ս ի ԺԱ ճառն Յոբայ[44]:

Բան. Հզօր է՝ բռնանայ (Թ 19):

Լուծումն. Աստուած նախ զզօրութիւն իւր ածէ ի գործ, որ զարեգակն ծագէ եւ զանձրեւ ածէ ի վերայ մեղաւորաց: Եւ յորժամ չօգտիմք այսու, ապա բարկանայ եւ խրատէ զմեզ: Եւ թէ այսու ոչ զղջանամք, ապա բռնանայ եւ դատէ, եւ ոչ ոք կարէ հակառակել:

Բան. Թէ իցեմ արդար՝ բերան իմ ամբարիշտ է (Թ 20):

Լուծումն. Չորս մտօք է. նախ՝ զի ոչ ոք կարէ մարդ բոլորովիմբ արդար լինել, որպէս ցուցաւ ի վերոյ: Երկրորդ՝ թէ գործով արդար լինի՝ բանիւ ոչ, եւ թէ բանիւ արդար՝ գործով ոչ: Երրորդ՝ եթէ արդար լինի եւ պարծենայ: Չորրորդ՝ թէ արդար լինի եւ յԱստուծոյ ոչ համարի, այլ յինքենէ կարծէ:

ՎԱՍՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ[45]

Բան. Զմեծն եւ զհզօրն կորուսանէ բարկութիւն (Թ 22):

Լուծումն. Այսինքն՝ թէ մեծ է ազգաւ կա՛մ իշխանութեամբ, կա՛մ ընչիւք, կա՛մ իմաստութեամբ, եւ թէ հզօր է զօրութեամբ մարմնով կա՛մ զօրօք, կա՛մ բանիւ, կա՛մ գործով, կորուսանէ բարկութիւնն: Չորս կերպիւ. նախ՝ զասացելոցս /36բ/ զմեծութիւնն

[44] Տե՛ս ՍՍ 1115, թ. 67բ:
[45] Հմմտ. ՍՍ 1166, թ. 29ա:

եւ զօրութիւնն կորուսանէ բարկութիւն, որպէս ասէ Պօղոս. «Բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ» (Յակոբ. Ա 20): Երկրորդ՝ կորուսանէ ի դատաստանի մարմնոյ, եթէ զդատաւորս, եթէ զդատախազս: Երրորդ՝ կորուսանէ մահուամբ մարմնոյ: Չորրորդ՝ կորուսանէ ի դատաստանին Աստուծոյ: Տե՛ս՝ անմեղութիւնն էր պատմուճանն Ադամայ, որ ո՛չ ամաչէր:

Բան. Յանկարծ գոյր մեզ միջնորդ (Թ 33):

Լուծումն. Տե՛ս, զի առ Աբրահամու խորհուրդն Քրիստոսի յայտնեցաւ, եւ նա կոչեաց Տէր եւ Դատաւոր:

Բան. Միջնորդն Աստուծոյ եւ մարդկան (Ա Տիմ. Բ 5):

Լուծումն. Վեց կերպիւ է միջնորդ. նախ՝ ի մէջ երից անձանց է ծնունդ ի Հօրէ: Երկրորդ՝ զի յաստուածութիւն իւր միացոյց զմարդկութիւնս: Երրորդ՝ հաշտեցոյց զՀայր ընդ արարածս: Չորրորդ՝ հրէից եւ հեթանոսաց միջնորդ է: Հինգերորդ՝ հրեշտակաց եւ մարդկան խաղաղութիւն արար: Վեցերորդ՝ մեռելոց եւ կենդանեաց:

ՎԱՍՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ[46]

Չորս ազգ է հեծութիւն. նախ՝ ընդ ունայն, զի հեծուկ կոչեմք: Երկրորդ՝ հպարտիցն, որ հենգնելով հեծեն: Երրորդ՝ հիւանդաց հեծումն: Չորրորդ՝ հեծելումն նեղելոց, որ ի ցաւոց սրտին փղձկեալ սրտին եւ ոլորեալ հեծումն գործէ, եւ շոգոլին[47] ի գլուխն ելեալ որպէս ամպ թանձրացեալ եւ իջեալ յաչսն՝ լինի արտասուք, զոր երանելին Յոբ սոյնպէս հեծելով գոչէր առ Տէր վասն խստութեան ցաւոցն: Զայս ըղձայր մարգարէն Երէմիա. «Ո՛ տայր զգլուխս ի մի ծով, եւ զաչս յաղբիւրս արտասուաց» (Երեմ. Թ 1), այսինքն՝ զի լայի զբեկումն զժողովրդեանն Աստուծոյ:

---

[46] Հմմտ. ՍՍ 1166, թ. 29բ:

[47] Նույնն է, ինչ՝ շոգի, գոլորշի. տե՛ս ՆԲՀԼ, հտ. Բ, էջ 487:

Բան. Տէ՛ր, մի՛ ուսուցանէր զիս ամբարշտել (Ժ 2):

Լուծումն. Նախ՝ մի թողուր յերկար ի վիշտս, զի մի կարծիցեն զիս ամբարշտել: /37ա/ Երկրորդ՝ մի թողուր զիս կոխան թշնամոյն, զի նա ուսուցանէ ինձ ամբարշտել, զնեել զՅոբ, թէ է՞ արդար, եւ նա ասէ, թէ ո՛չ է:

ՀՈՂ ՕՐՀՆԵԱԼ ԳԵՐԵԶՄԱՆԻ[48]

Բան. Հիշեա՝ զի կաւ ստեղծեր զիս եւ յերկիր դարձուցանես զիս (Ժ 9):

[Լուծումն.] Այս է էութիւն, որ զառաջին հողն օրհնեմք գերեզմանին՝ ասելով. «Յիշեա՝ զի հող էիր եւ ի հող դարձցիս» (Ծնն. Գ 19): Եւ յորժամ զդին դնեմք ի գերեզմանն, զայս ասեմք. «Հող օրհնութեան իջցէ ի գերեզման ծառայիս Աստուծոյ, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. երիցս խաչակնքէ՝ ասելով զայս, եւ ապա ծածկեն հողով»[49]:

ՎԱՍՆ ՅՂՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ[50]

Բան. Որպէս կաթն կթեցէր (Ժ 10):

Լուծումն. Սերմն ծնողացն ունի զտնկական զօրութիւնն ի ջերմութենէն եւ ի վեց օր մակարդեալ լինի որպէս պանիր: Եւ ի Ի (20) աւուրս լինի զգայական եւ ի Խ (40) եւ հինգ օրն տպաւորի բանական հոգին: Տե՛ս, դու զգեցուցեր, ասէ, զի նախախնամութեամբն Աստուծոյ կազմէ սերմնական զօրութիւն[51]: Եւ ոչ է պակաս գործս այս ի յառաջին ստեղծանելոյն ի հողոյ եւ վերստին յարուցանելոյն, զի ի սակաւ հիւթոյն զոսկերս եւ զջիլս, եւ զմարմին, եւ զայլ մասունքն ստեղծագործէ ի նեղ եւ ի խաւար արգանդի:

---

[48] Հմմտ. ՍՍ 1166, թ. 30ա:

[49] Հմմտ. *Ծիսարան, որ կոչի Մաշտոց*, Շուշի, 1858. Կարգ թաղման ննջեցելոց. էջ 342:

[50] Հմմտ. ՍՍ 1166, թ. 30ա:

[51] Տե՛ս *Գիրք հարցմանց*, հտ. Ե, պրակ ԻԱ, էջ 261:

Բան. Հանար[52] *(Ժ 11):*

Լուծումն. Հինուլ կամ կազմել ասէ: Տեսցե՛ս վասն այսոցիկ ի Գիրս հարցմանց, Ե (5) հատորն, Ի (20) համարն[53]:

Բան. Իմաստութիւն եւ արքայութիւն, եւ որդէգրութիւն (Ժ 12-13):

Լուծումն. Նախ՝ երեք շնորքն Ադամայ: Դարձեալ երեք օրէնք, այսինքն՝ բնական, գրոյն եւ շնորհաց, եւ դարձեալ ի մեզ՝ մտաց եւ կամաց, եւ հոգւոյ:

Բան. Թոյլ տուր ինձ (Ժ 20):

Լուծումն. Զայս եւ Դաւիթ ասէ. «Թոյլ /37բ/ արա ինձ զի հանգեայց» (Սաղմ. ԼԸ 14):

Բան. Յերկիր մթին եւ խաւարի (Ժ 22):

Լուծումն. Զայս եւ Դաւիթ ասէ. «Նստոյց ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից» (Սաղմ. ՃԽԲ 3), եւ դարձեալ. «Մինչեւ յաւիտեան զլոյս մի տեսցէ» (Սաղմ. ԽԸ 20): Զգալի լոյսս ոչ ունի եւ յիմանալին ոչ է հասեալ: Այս խաւարս է տանջանք հոգւոյն վասն սկզբնական մեղաց. զայս կրեն անմկրտել մանկունք: Զայս ունէին նահապետքն եւ մարգարէքն մինչ ի Քրիստոս, այլ զլոյս օրինացն ի հոգիսն ունէին: Նոյնպէս այժմ լոյս շնորհաց ի մկրտեալսն է, մինչ ի յարութիւնն ընկալցին զլոյս փառացն: Տե՛ս յանցեալ ճառին վերջն ասաց վասն մարմնոյն ի հող դառնալ, աստ՝ վասն հոգւոյն ասէ ի խաւար մնալ, յորոց փրկեսցէ զհոգիս մեր յաւիտենից խաւարէն. Ամէն:

ՎԱՍՆ ԽԱՒԱՐԻ, ԱՅԼԵՒ ԼՈՒՍՈՅ[54]

Խաւարն Ժ (10) կերպիւ լսի, այսինքն՝ իմանալի եւ զգալի: Նախ՝ խաւար է սատանայ անկեալ Արուսեակն, որ ոչ ետես զլոյս: Երկրորդ՝ խաւար է մեղք: Երրորդ՝ անհաւատութիւն: Չորրորդ՝

---

[52] Հմմտ. ՍՄ 1166, թ. 30ա: Հիւսել, նիւթել, կցել. տե՛ս ՆԲՀԼ, հտ. Բ, էջ 85:
[53] Տե՛ս *Գիրք հարցմանց*, հտ. Ե, պրակ Ի, էջ 252-261:
[54] Հմմտ. ՍՄ 1166, թ. 31ա:

տգիտութիւն: Հինգերորդ՝ տրտմութիւն: Վեցերորդ՝ անօրէնութիւն: Եթներորդ՝ զգալի պակասութիւն լուսոյ: Ութերորդ՝ կուրութիւն աչաց: Իններորդ՝ մահ մարմնոյ: Տասներորդ՝ խաւարն արտաքին: Ապա ուրեմն ընդդէմ այսմ լոյսն ասի տասն կերպիւ. նախ՝ Քրիստոս. «Ես լոյս յաշխարհ եկի» (Յովհ. ԺԲ 46): Երկրորդ՝ բարի գործք: Երրորդ՝ հաւատքն: Չորրորդ՝ իմաստութիւն: Հինգերորդ՝ ուրախութիւն եւ շնորհք: Վեցերորդ՝ օրէնք: Եթներորդ՝ լոյսքն զգալի: Ութերորդ՝ աչաց լոյս: Իններորդ՝ կեանք: Տասներորդ՝ փառք /38ա/ արդարոց, որպէս «աստղ քան զաստղ առաւել է փառօք» (հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 41), ասէ առաքեալ:

Ա. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ՍՈՓԱՐԱՅ[55]

Բան. Անանց է յիշատակ (հմմտ. Բ 9, ԺԴ 13, ԺԸ 17):

Լուծումն. Որպէս Դաւիթ ասէ. «Յաւիտենից յիշատակ» (Սաղմ. ՃԺԱ 6): Եւ այս է ի չորս դէմս. նախ՝ առ Աստուած: Երկրորդ՝ առ հրեշտակս: Երրորդ՝ առ մարդիկ: Չորրորդ՝ առ գործողս: Դարձեալ գործողն անցանի, եւ ժամանակն անցանի, եւ աշխարհս ծերանայ, եւ գործքն մանկանայ եւ մնայ: Որք նոր ուսանիմք որպէս նոր պատկեր տեսանեմք:

Աղեղն, կինն եւ բանսարկուն[56]: Սուրճք՝ բարեկամքն, խռիւ եղեգանց՝ դեւքն:

Բան. Որ շատ խօսի (ԺԱ 2):

Լուծումն. Նոքա շատ խօսէին, զի շատք էին: Եւ Յոբայ բանքն առ ամենեսեան էր եւ յերկար:

Բան. Զհետս Տեառն (ԺԱ 7):

Լուծումն. Զոր արար կամ զոր առնէ՝ ոչ գիտեմք: Ծով եւ երկիր տապալեցաւ ի ջրհեղեղն եւ ի Սոդոմ:

---

[55] Հմմտ. ՍՄ 1166, թ. 31ա-38բ:

[56] Ըստ երեւոյթին ԽԱ գլխի մասին է՝ *կին* (ԽԱ 7), *աղեղ* (ԽԱ 19), *եղեգ* (ԽԱ 20):

Բան. Եթէ սրբես զսիրտդ եւ տարածես զձեռնդ (ԺԱ 13):

Լուծումն. Երեք դէմք է բանիս. նախ՝ ի դէմս Յոբայ ի վերստին նորոգիլն: Երկրորդ՝ ի դէմս աղօթողաց Ժ (10) մտօք: Երրորդ՝ ի հանդերձեալն լինիցին սոքա մարգարէութեամբ տեսեալ:

Ասէ Ժ (10) թուով:

Նախ՝ Ծագեն երեսք (ԺԱ 15):

Լուծումն. Այսինքն՝ յորժամ ի թագաւորութիւնն էհաս, այլեւ աղօթողին միտքն լուսաւորի, իսկ ի յարութեանն փայլեն արդարքն իբրեւ զարեգակն:

Երկրորդ՝ Մերկասցիս զաղտ վիրացդ (ԺԱ 15):

Լուծումն. Այլեւ աղօթողն մերկանայ /38բ/ յամենայն իրաց: Եւ անդ՝ մերկանայ զաղտ ապականութեան մեղաց (ԺԱ 15):

Երրորդ. Ոչ երկիցես (ԺԱ 16):

Լուծումն. Յոբ այլ ոչ հիւանդացաւ: Այլ եւ աղօթողն ոչ երկնչի: Եւ անդ բարձեալ է հիւանդութիւն մարմնոյ:

Չորրորդ՝ Մոռացումն աշխատութեան (ԺԱ 16):

Լուծումն. Զի Յոբ կրկին ստացաւ զամենայն: Եւ ճշմարիտ աղօթողքն մոռանան զվաստակսն եւ ի յարութեանն մոռասցին նեղութիւնք վասն մեծ հատուցմանց:

Հինգերորդ. Աղաւթք քո որպէս զլոյս (ԺԱ 17):

Լուծումն. Յոբայ յայտնի է: Այլ աղօթողին տրտմութիւնն լուսաւորի, եւ ի յարութեանն արեգակն այլ ոչ մտցէ:

Վեցերորդ. Հեռասցի հուսահատութիւն (ԺԱ 17):

Լուծումն. Յոբայ յորժամ առողջացաւ: Այլ աղօթողին յոյսն հաստատի, եւ յարուցելոցն յոյս դէմ յանդիման տեսանի:

Եւթներորդ՝ Լիցի, ասէ, խաղաղութիւն (ԺԱ 18):

Լուծումն. Զամենայն ժամանակն խաղաղութեամբ անցոյց: Այլ աղօթողին տրտմութիւն եւ հոգն դադարեսցին: Եւ ի յարութեանն ուրախութիւն է յամենայն կողմանց, եւ խաղաղութիւն՝ սահման նորա (հմմտ. Սաղմ. ՃԽԷ 14), ասէ Դաւիթ:

Ութերորդ՝ Պատերազմողքն կորեան ի Յոբայ:

Այլ եւ ջերմ աղաւթք սրբոց զթշնամիսն այրեն եւ ոչ իշխեն մերձենալ, իսկ յարուցելոցն մեղք եւ գործողք չարեաց, եւ թշնամին սատանայ կորիցէ ի դժոխս:

Իններորդ՝ Ոյք նախատէին, աղաչեսցեն զքեզ:

Յոբայ այնպէս եղեւ, զի պատարագ մատոյց վասն նոցա: Եւ դեւքն աղաչէին զՏէր մի յառաջ, քան զժամանակն տանջէր զմեզ, նոյնպէս եւ սրբոցն ասէին: Եւ ի յարութեանն տեսեալ զարդարս, ամաչեսցեն /39ա/ ամբարիշտք եւ աղաչեն, եւ ոչ լուիցեն սուրբք, որպէս յիմար կուսանացն ոչ լսեցին իմաստունքն:

Տասներորդ՝ Ասէ. Աչք ամբարշտաց հալեսցին (ԺԱ 20):

Լուծումն. Բարեկամքն Յոբայ ի տեսանել զառողջութիւնն աչքն հալեցան, այլեւ յարտասուելն զոջմամբ: Այլեւ աչք թշնամոյն ի յաղօթելն մեր հալի եւ մաշի նախանձով: Եւ ի յարութեանն, յորժամ տեսցեն զփառս արդարոց, մեղաւորն տեսցէ եւ բարկասցի, եւ ամբարիշտն սատանայ ի հուրն յաւիտենական հալեսցի: Տե՛ս Ելիփազի վերջքն ասաց. Յարկք ամբարշտաց կորիցէ (հմմտ. Ը 22): Եւ այսպէս Սոփար ասաց. Աչք ամբարշտաց հալեսցին (ԺԱ 20):

Դ. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ՅՈԲԱՅ, ՉՈՐՐՈՐԴ ՃԱՌՍ ՅԱՅՏՆԻ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԸՍՏ ԿԱՐԳԻ

Ոնի զխորհուրդ արարչութեան հինգ շաբաթոջն, զի անդ՝ ասաց վասն լուսաւորաց եւ աստ՝ վասն լօղակաց եւ թռչնոց, եթէ պատմեսցէն քեզ թռչունք երկնից եւ ձկունք ծովու: Այլեւ նկատէ ի խորհուրդ Ե (5) շաբաթին, այն, որ ասէ. Առեալ զմարմին իմ յատամունս իմ (ԺԳ 14): Այլեւ վասն դարուն Սովսէսի օրինացն ասէ. Որ մի անգամ բարկացուցանեն զՏէր, խնդիր լինիցի նոցա (ԺԲ 6): Եւ ի նմանէ է իմաստութիւն եւ զօրութիւն (ԻԲ 2): Եւ վասն քահանայութեան առաքէ զքահանայս ի գերութիւն, սփոռ զազգս եւ առաջնորդէ ժողովրդեանն (ԺԲ 19), եւ շօշափեսցէն զխաւար եւ ոչ զլոյս (ԺԲ 25), որպէս եգիպտացիքն: /39բ/ Եւ կարգն. Անդ ասաց Սովփար՝ դու, զի խելամուտ լիցիս երկրի (ԺԱ 8), եւ աստ ասէ՝ Ճառեա երկրի, եթէ խելամուտ արասցէ զքեզ (ԺԲ 8): Անդ ասաց՝ Եթէ տապալեսցէ զամենայն, ո՞վ ասասցէ ցնա (ԺԱ 10-11), աստ ասէ՝ Եթէ փակեսցէ, ո՞վ բանայցէ, եւ թէ թոյլ տացէ՝ կործանեսցէ (ԺԲ 15): Անդ ասաց՝ Մարդ ի խօսելն բանիւք ղօղի (ԺԱ 12), աստ ասէ՝ Բայց սակայն ես ընդ Տեառն խօսեցայց եւ յանդիմանեցայց՝ եթէ կամեսցի (ԺԳ 3): Անդ ասաց՝ Այր կանանցածին հանգոյն է ցռոյ (ԺԱ 12), աստ ասէ՝ Այր կանանցածին սակաւակեաց է եւ լի բարկութեամբ (ԺԴ 1) եւ այլն:

Բան. Ճգունքն հասարակաց (Թ 32):

Լուծումն. Առաքեալ ասէ. «Ընթանալ ամենեքեան ընթանան, այլ ոչ ամենեքեան պսակին» (Ա Կորնթ. Թ 24): Երեք ինչ հասարակաց է, այսինքն՝ կոչումն եւ խոստումն, եւ ճգնութիւնք: Այլ ընթացողքն որոշին, զի ոմանք կաղ եւ թիւր, եւ ոմանք՝ տգէտ, եւ

ոմանք թոյլ ընթանան եւ ոչ առնուն զպսակն, այլ արիքն եւ ուղիղք եւ ճշմարիտք եւ գիտունք առնուն:

Բան. Արդ եւ դո՞ւք մարդիկ իցէք (ԺԲ 1):

Լուծումն. Վեց միտք է. նախ՝ ի դէմս հակառակին ասէ, զոր յաղթեաց: Երկրորդ՝ առ անմիտս ասէ, զի հաւանեսցին: Երրորդ՝ առ բարեկամսն ասէ, զի ուղղեսցեն: Չորրորդ՝ անդ ի վերջքն ասաց՝ Յերկիր մըթին եւ ոչ տեսանել զկեանս մարդկան (Ժ 22), աստ ասէ՝ Եւ դո՞ւք մարդիկ իցէք (ԺԲ 2): Եւ ի խաւար անդ գնալոց, զայս ասէ Սուրբն Եփրեմ[57]: Հինգերորդ՝ չէք մարդիկ եւ ոչ իմաստուն: Վեցերորդ՝ զձեզ միայն կարծէք մարդ:

Բան. Այր արդար ի կատականս (ԺԲ 4):

[Լուծումն]. Նախ՝ զինքէն /40ա/ է ասէ: Երկրորդ՝ զամենայն արդար: Երրորդ՝ ի դէմս Ադամայ: Չորրորդ՝ զՔրիստոս:

Բան. Արբեալ Ելիփազ:

[Լուծումն]. Մեղաւոր՝ Բաղդատ: Մանուկ՝ Սովփար:

Բան. Սահմանն չափ է:

[Լուծումն]. Եւ չորս չափ տեսանէ Աստուած ի փորձանս. նախ՝ յորժամ: Երկրորդ՝ զերկարութիւնն: Երրորդ՝ զչարութիւն փորձողին: Չորրորդ՝ զչափ համբերողին:

ՎԱՍՆ ՅՕՆԱՆՈՒ[58]

Չորս եղեն սքանչելիք առ Յօնան. նախ՝ ի փոր կետին մնաց կենդանի: Երկրորդ՝ անապական: Երրորդ՝ նաւ եղեալ ձուկն: Չորրորդ՝ զայնքան ամսոյ ճանապարհ յերիս աւուրս ընդ ծովն եւ ընդ Դպլաթ բերեալ եւ ի Նինուէ արտաքս թքեալ (հմմտ. Յովնան Ա, Բ գլ.):

---

[57] Հմմտ. ՍՍ 1166, թ. 33ա:
[58] Հմմտ. ՍՍ 1166, թ. 33բ:

Բան. Որպէս քիմք առաստաղ բերանոյն է, որ զհամն առնու, նոյնպէս եւ միտք (ԺԲ 11):

[Լուծումն]. Իմաստութիւն մարդոյն չորիւք որոշի. նախ՝ զի ոչ գիտեն: Երկրորդ՝ յայլմէ ուսանին: Երրորդ՝ զի մոռանան: Չորրորդ՝ շատ ուսեալ շատ գիտեն: Իսկ իմաստութիւնն Աստուծոյ ընդդէմ է ասիցելոցս:

Բան. Ազդմունք (ԺԲ 12):

Լուծումն. Ներգործութիւնք: Կամքն Աստուծոյ գործ է կատարեալ, եւ ոչ ոք ընդդիմանայ:

Բան. Նորա է հանճար (ԺԲ 13):

Լուծումն. Իմաստութիւնն Աստուծոյ եւ հանճար՝ Որդին, եւ Հոգին Սուրբ, որ է անծնաւոր գոյացութիւն կատարեալ: Իսկ հանճարս մեր շնորհք է ի նմանէ, որպէս ճառագայթ յարեգականէ: Թագաւորք են առաքեալք. նախ՝ հաւատացելոց: Երկրորդ՝ օրինաց: Երրորդ՝ հոգւոց կապել եւ արձակել: Չորրորդ՝ ի հանդերձեալն դատել: Վասն գօտոյ տե՛ս յերկրորդ Ծաղկազարդի քարոզն[59]. «Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս» (Ղուկ. ԺԲ 35): /40բ/

Բան. Ստուերք մահու (ԺԲ 22):

Լուծումն. Նման մահու: Չորս են սոքա. նախ՝ նինջն է: Երկրորդ՝ մեղքն է: Երրորդ՝ մարմինք մեռելոյն: Չորրորդ՝ տանջանք դժոխոցն. «Ոյք նստէին ի խաւարի եւ ի ստուերս մահու» (Սաղմ. ՃՁ 10):

ՎԱՍՆ ԲԺՇԿԱՑ ԵՒ ՄԽԻԹԱՐՉԱՑ[60]

Բժիշկ մեղանչական էք, ասէ Յոբ (ԺԳ 4): Երեք են բժիշկ, այսինքն՝ ճարտար եւ տգէտ, եւ մեղանչական: Ճարտար են, որք զցաւն հանեն եւ զառողջութիւն ի ներքս բերեն ի մարմին: Եւ

---

[59] *Չմեռան*, գլ. ՃԽՁ. Նորին քարոզ երկրորդ Ծաղկազարդին..., էջ 664-669:
[60] Հմմտ. ՍՄ 1166, թ. 35ա:

տգէտ, որ ո՛չ ցաւ հանեն եւ ո՛չ առողջացուցանեն: Իսկ մեղանչական, որ զառողջութիւն հանէ եւ զցաւս ի ներքս ածէ: Նոյնպէս հոգեւոր բժիշկ են ճարտարք եւ տգէտք, եւ մեղանչական, որպէս ցուցաւ: Նոյնպէս եւ մխիթարիչք երեք են՝ ոմն բարի, ոմն չար, ոմն միջակ: Բարի մխիթարիչ է, որ զտրտմութիւն եւ զվիշտ փարատէ ի սգաւորաց: Եւ չար է, որ այլեւս վիրաւորէ եւ տրտմեցուցանէ, եւ միջակ, որ ոչ սփոփէ եւ ոչ վիրաւորէ:

Բան. Ճարտասան (ԺԳ 7):

Լուծումն. Զերեք մասունս հոգւոյն ասէ:

Բան. Թանգուզիցէք (ԺԳ 8):

Լուծումն. Պատճառ իցէք:

[Բան]. Զանխօս մարգարիտն (հմմտ. ԺԳ 12):

Լուծումն. Քրիստոս է անգին մարգարիտ:

Բան. Լուարուք լուարուք (ԺԳ 17):

Լուծումն. Նախ՝ ականջօք եւ սրտիւ: Երկրորդ՝ բանից եւ գործոց: Երրորդ՝ զներկայս եւ զհանդերձեալն: Չորրորդ՝ որք սի/41ա/ռելիք էք եւ ատելիք: Վասն ցեցոյ ասացաւ յառաջին ճառն Ելիփազու:

Բան. Հրապուրանք (հմմտ. ԺԴ 1):

Լուծումն. Խաբեութիւնն է:

Բան. Ո՞վ իցէ սուրբ յաղտոյ, թէպէտ միօրեայ իցէ (ԺԴ 5):

Լուծումն. Ամենեւին սուրբ յաղտոյ միայն Տէր մեր, իսկ միօրայն ունի զմեղս սկզբնական ծնօղացն: Եւ սկզբնական մեղք չորիւք որոշի: Աստ գրէ զանազանութիւն սկզբնականին[61]:

Յիրաւի սկզբնական մեղք, զի յայլմէ գայ ի մեզ, յայլմէ սրբիմք: Եւ զի մի է՝ միով մկրտութեամբն սրբիմք: Եւ առհասարակ, ամենայն ոք միապէս սրբի: Իսկ ներգործական մեղք ի մէնջ գործեալ՝ ի մէնջ սրբի եւ առաւել, եւ նուազ: Տե՛ս, զի ասէ՝ ամենայն մարդոյ ժամանակ թուեալ է տարի եւ ամիս, եւ օր, եւ ժամ,

[61] Գրված է լուսանցքում, եւ մի քանի տող բաց է թողնված:

եւ ոչ ոք կարէ անցանել ընդ թիւ սահմանին այնմիկ: Այլ, արդարութիւն եւ մեղք կարեն յաւելուլ եւ նուազել զկեանս մարդոյ, որպէս Եզեկիայ յաւելաւ ԵԺ (15) ամ: Եւ յաւուրս Նոյի պակասեցաւ Ի (20) ամ վասն մեղաց նոցա:

ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ[62]

[Բան]. Գոյ հոյս ծառոց (ԺԴ 7):

Լուծումն. Տապարն մահն է, եւ որպէս հատեալ ծառոյ արմատն մնայ յերկրի, նոյնպէս յետ մահու հոգին կենդանի է: Եւ ծաղկի աստ հաւատով եւ մկրտութեամբն, եւ յուսով: /41բ/ Եւ յետ մահու ծաղկի հոգին շնորհօքն Քրիստոսի եւ բարի գործովն իւր: Եւ պտուղն հանդերձեալ պսակն է:

Բան. Ծով եւ գետք ցամաքեալ (ԺԴ 11):

Լուծումն. Զփոփոխումն տարերացս ասէ, զի նորոգեսցին յանապականութիւն. յայնժամ եւ մարդոյս լինի յարութիւն եւ անապականութիւն: Տե՛ս, զի զմկրտութիւն եւ զյարութիւնն ասէ աստ, որ ի դարս Մովսէսի օրինակեցաւ մկրտութիւնն ի ծովուն եւ ի սրբութիւնս խորանին: Իսկ յարութիւնն ի յօրէնսն օրինակեցաւ: Եւ այն, զի ասաց առ նա. «Ես եմ Աստուած Աբրահամու եւ Աստուած Սահակայ եւ Աստուած Յակոբայ» (Ելք Գ 6): Եւ Աստուած ոչ էյար մեռելոց, այլ կենդանեաց:

Բան. Ժամանակէիր ինձ ժամանակ (ԺԴ 13):

Լուծումն. Ոչ զայն ասէ՝ թէ յայսմ ժամանակի ժամանակս յերկարի, զի զայս Աստուած ոչ կամի, այլ յետ վախճանի զխոստումն Աստուծոյ խնդրէ:

Բան. Վասն որո՞ֆ[63] (հմմտ. ԺԴ 15):

Լուծումն. Վասն իւր թէ՞ վասն այլոյ գործեաց:

---

[62] Հմմտ. ՍՄ 1166, թ. 37բ:
[63] Հմմտ. ՍՄ 1166, թ. 38ա:

Բան. Ո՞ր[64]*:*

Լուծումն. Սահացու թէ՞ ներելի է:

Բան. Որո՞յ ազգական (հմմտ. ԺԴ 17-18):

Լուծումն. Չարի թէ՞ բարւոյ: Լեառն զԱդամ կոչէ, որպէս յառաջն ասացաւ: Այսպէս վասն դիւաց:

Բան. Տնկագործեաց (հմմտ. ԺԴ 19):

Լուծումն. Փոխանակ անապական տնկոց դրախտին զապականացուս տնկագործեաց ի յերկրի: Սարգարէն Զաքարիա ասէ. «Քարինք սուրբք թաւալեցան ի յերկրի մերում» (Զաք. Թ 16): Այսինքն՝ կա՛մ մարտիրոսքն սուրբք եւ կա՛մ մկրտեալքն աւազանաւ, կա՛մ Ադամ ի յերկիր անկեալ, որպէս Դաւիթ ասէ. «Ընկլայ ես ի խորս անդնդոց» (Սաղմ. ԿԸ 2):

Բան. Զգայ ցաւի (հմմտ. ԺԴ 20):

Լուծումն. Անդ ասաց՝ Հոգիքն ի խաւար երթիցեն (Ժ 22), աստ ասէ՝ Զգայ ցաւի (ԺԴ 20):

Հարց. Մեծատունն ասէր զԱբրահամ վասն եղբա՞ր, զի մի գայցեն ի տանջանս եւ սա ասէ՝ զբազում որդիքն /42ա/ ոչ գիտէ (հմմտ. Ղուկ. ԺԶ 19-31):

Պատասխանի. Որքան առաւել են մեղաւորք, առաւելուն տանջանք նոցա, որպէս փայտն առաւելու զհուր: Վասն այն մեծատունն աղաչէր, զի մի առաւելացի տանջանքն իւր: Եւ սա զառաւել ցաւն ասէ, որպէս թէ զամենայն տանջանս դժոխոց ինքն միայն կրէ: Յորոց փրկեսցէ զմեզ Փրկիչն մեր Քրիստոս. Ամէն:

Բ. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ԵԼԻՓԱԶՈՒ[65]

Կրկին ճառս Ելիփազու ասէ վասն անկմանն դիւաց, այլեւ՝ բնութեանս, զի յառաջինն ասաց նման ցեցոյ (Դ 19) եւ աստ՝

[64] Հմմտ. ՍՍ 1166, թ. 38ա:
[65] Հմմտ. ՍՍ 1166, թ. 39ա:

զկերպարանս անկելոյն (ԺԵ գլ.): Եւ աստ ասէ՝ վասն հաստատութեան երկնից, ուստի անկան դեւք եւ չեն սուրբ առաջի նորա (ԺԵ գլ.):

Բան. Համեստ (հմմտ. ԺԵ 2-3):

Լուծումն. Հանդարտ:

Սանձք լռութիւնն է, եւ ճաշակ՝ խորհուրդն (ԺԵ 6):

Բան. Ումն զձեռն (ԺԵ 25):

Լուծումն. Որք ասէին զրկեցէր զաղքատս:

Բան. Ումն զոտն (ԺԵ 26):

Լուծումն. Ոչ գնացէր յօրէնս:

Բան. Զականջն (ԺԵ 21):

Լուծումն. Ոչ լուար զլուր Տեառն (հմմտ. ԼԷ 2), ասէին:

Բան. Հանճարեղն ոգւով (ԺԵ 2):

Լուծումն. Որ հանճարեղն է ոգւով նմա է պարտ, ասէ, պատասխանել եւ հարցանել:

Բան. Յառաջ քան զամենայն բլուրս (ԺԵ 7):

Լուծումն. Այն է, որ ասաց լեառն, որ փլանելոց է:

Բան. Իմաստունքն ասեն (ԺԵ 18):

Լուծումն. Իմաստուն եմք. նախ՝ ի Հօրէ իմաստնոյ: Երկրորդ՝ յիմաստնոյ ուսեալք: Երրորդ՝ հարք եմք իմաստնոց: Չորրորդ՝ եւ աշակերտք մեր իմաստունք:

ՎԱՍՆ ԱՆԿՄԱՆՆ ՍԱՏԱՆԱՅԻ[66]

Ասի ի գիրս Յոբայ. նախ՝ զօրավար էր հրեշտակա/42բ/կան դասուն, կործանեցաւ: Երկրորդ՝ ամբարձ ասէ, զձեռն ընդդեմ Տեառն (ԺԵ 25): Երրորդ՝ ընդվզեցաւ անհնազանդութեամբ: Չորրորդ՝ գնաց հպարտութեամբ, այսինքն՝ թշնամօք, զի զբարին ի

[66] Հմմտ. ՍՄ 1166, թ. 40բ:

չար փոխեաց, այս ոչ էր հաճոյ Աստուծոյ: Հինգերորդ՝ զվահանն եդ զերեսօքն:

Չորս ինչ նշանակէ. նախ՝ զխստութիւն սրտին: Երկրորդ՝ զի ոչ հայի յերեսս Արարչին: Երրորդ՝ զի նստի դարանեալ: Չորրորդ՝ մեղքն մեր է նմա վահան եւ ճարպ, որ օծանէ զերեսս իւր եւ պարարի: Վեցերորդ՝ զի ասէ. Եդ զերկսայրին յազդեր իւր (ԺԵ 27): Այսինքն՝ է խռովութիւն եւ ցանկութիւն, նախ զերկինս խռովեցոյց եւ ապա զԱդամ ցանկացոյց, եւ սոքօք պատերազմի ընդ ամենայն ոք: Եօթներորդ՝ ասէ. Բնակութիւն նորա անշէն եւ քաղաք աւերեալ (ԺԵ 28): Այսինքն՝ է դժոխքն, եւ որք ամայի են ի բարի գործոց: Եւ այլն յայտնի է բնագիրքն:

Ե. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ՅՈԲԱՅ ՃԱՌՍ ԱՅՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ Է ՅԱՅՏՆԻ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ՝ ԸՍՏ ԿԱՐԳԻ[67]

Ունի զխորհուրդ վեց աւուրն, յորում փտեալ ապականացու եղեւ մարդն Ադամ: Յարոյց զստութիւն իմ վասն Եւայի ասէ. Զմահ կոչեցի ինձ հայր եւ մայր (ժԷ 14): Այն է, որ ասացաւ Ադամայ. «Հող էիր եւ ի հող դարձցիս» (Ծնն. Գ 19): Այլեւ ունի զխորհուրդ վեց դարուն վասն չարչարանացն Քրիստոսի, որ յաւուր ուրբաթու: Եւ կարգն. անդ ասաց՝ Իմաստութեամբ տաց պատասխանի (ժԵ 2), աստ ասէ՝ Թախանձէ ոք, զի տացես պատասխանի (ԺԶ 3): Անդ ասաց՝ Ընդէ՞ր լկնեցան աչք քո (ժԵ 12), աստ ասէ՝ Շլացան ի բարկութենէ /43ա/ աչք իմ (ժԷ 7): Անդ ասաց՝ Ամք թուով տուեալ են հզօրի (ժԵ 20), աստ ասէ՝ Ամք թուով հասին ին [այսպէս] ինձ (ԺԶ 22) եւ այլն:

Բան. Հունձք (ԺԸ 16):

Լուծումն. Գործնականք եւ կութք տեսականքն: Եւ մեծապէս, այսինքն՝ Լ (30), Կ (60) եւ Ճ (100): Զի կուսութիւնն Ճ (100) է եւ այրութիւնն՝ Կ (60), եւ ամուսնութիւնն՝ Լ (30):

Բան. Համբերութիւն հիմն է[68] (հմմտ. ԺԶ 2-4):

[Լուծումն]. Որպէս Աբրահամու եւ խարիսխ Իսահակայ, աթոռ Յակոբայ եւ սիւն առ Յակոբ եւ աստիճան, զի նա յերկրի կայր հաստատուն եւ դեւքն յօդոյն գլորէին: Չորս կերպիւ բանն անընդունելի է. նախ՝ թէ անկարգ խօսի: Երկրորդ՝ առանց մեծարելոյ: Երրորդ՝ անօգուտ խօսի: Չորրորդ՝ թէ անմտութեամբ՝ կա՛մ անիծանէ, կա՛մ այլ ինչ:

---

[67] Հմմտ. ՍՍ 1166, թ. 41ա:
[68] Հմմտ. ՍՍ 1166, թ. 42ա:

Բան. Զկծեցուցից (ԺԶ 5):

Լուծումն. Զայրացուցից:

Շարժէին զգլուխս, որպէս թէ արժանի ես այդմ չարի:

Հարց. Աստ ասէ՝ Զի թէ խօսիմ՝ ոչ ցաւին վերք իմ (ԺԶ 7), եւ յառաջն ասաց՝ Յորժամ խօսիմ՝ կտտեն զիս (Զ 4):

Պատասխանի. Անդ՝ վասն հասարակ խօսից ասէ եւ աստ՝ զաղօթքն ասէ, որ բժշկութիւն է ցաւոց, այլեւ՝ խրատն արդարոց:

Բան. Առեալ զվարսից իմոց փետեաց (ԺԶ 13):

Լուծումն. Գլուխ է Քրիստոս, եւ վարսք՝ առաքեալքն. նախ՝ զի զարդ է գլխոյն: Երկրորդ՝ ի գլուխն հաստատեալ: Երրորդ՝ առ մեզ խոնարհեալ: Չորրորդ՝ միշտ աճեն յեկեղեցի:

Բան. Հեղին յերկիր զլեղի իմ (ԺԶ 13):

Լուծումն. Քացախ ընդ լեղի խառնեալ եւ երբ զճաշակն առեալ՝ ոչ ըմպեաց, յերկիր հեղին: Ասեն, թէ անօթն խոզի գանգ էր[69]: Վասն /43բ/ այն զմնացորդն յերկիր հեղին: Եւ վասն լեղոյն

---

[69] Այս հատվածը Վանական Վարդապետի քաղվածո մեկնության մեջ բացակայում է: Հավանաբար ավանդապատում է կամ հեղինակը եւս մեկ անգամ շեշտադրում է խոզի անմաքուր կենդանի լինելը. հմմտ. *Գիրք հարցմանց,* Ընդդէմ տաճկաց. Ժ. Տասներորդ մոլորութիւն այլազգեաց, էջ 148-152: Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն յառաջ. եւ ծանօթ. առաջին անգամ ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապոլ, 1910, ԿԵ. Առ Հայրն Վարագայ, էջ 69: Բնագիրը տե՛ս նաեւ Գրիգոր Մագիստրոս, բն. կազմ. եւ ծնթ.՝ Գ. Մուրադյանի, ՄՀ, հտ. ԺԶ, ԺԱ դար, Երեւան, 2012, էջ 368: Եգիպտացիները եւս խոզը պիղծ կենդանի էին համարում. հմմտ. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Գիրք երկրորդ, § 47, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի, Երեւան, 1986, էջ 107: Մակաբայեցիների առաջին գրքում (Ա 50) Անտիոքոս Դ Եպիփանեսի ավերածությունների եւ տաճարի զոհասեղանի վրա ի նշան պղծության խոզ զոհաբերելու մասին՝ տե՛ս *Գիրք պատմութեանց Յովսեպոսի Եբրայեցւոյ արարեալ յաղագս Պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցիս եւ աւերման Երուսաղէմի,* Էջմիածին, 1787, Ա դպրութիւն, Ա ճառ, էջ 14. «...զիրէայս սկսաւ բռնադատել՝ թողուլ զհայրենի օրէնս եւ խափան առնել զպաշտամունս պատարագաց, եւ զզոհս սրբութեան. զմանկունս նոցա ո՛չ թլպատել եւ զխոզս ի վերայ սեղանոյն մատուցանել»: ՄՄ 2720, թ. 192ա. *Գիրք մատենի հնագոյն պատմութեանց շարադրեալ եւ արարեալ ի Յովսեպոսէ Փլավիանոսէ Եբրայեցւոց քահանայէ Երուսաղէմացւոյ՝ յամենիմաստ պատմչէ: Իսկ թարգմանութեամբ ի լոյս ածեալ յիտաղացւոց բարբառոյ ի հայ լեզու Սիմոնեան Աթանաս վարդապետէ եւ եպիս-*

չորս ինչ գիտելի է. նախ՝ զի պտուղն Ադամայ քաղցր էր ի կերակրիլն եւ դառնացաւ ի գործն: Եւ լեղին Տեառն մերոյ դառն էր եւ քաղցրացաւ ի գործն, զի քաղցրացոյց զՀայր Աստուած: Երկրորդ՝ գիտելի է, զի քաղցրահամ դեղքն վնասակար է եւ մահարար, եւ դառն՝ առողջարար է առ բժշկութիւն մարմնոց: Երրորդ՝ ըստ այնմ օրինակի գիտելի է եւ զմեղքն, զի քաղցր թուի գործն եւ յետոյ դառնանայ ի պատիժն, որպէս ասէ ի տեսիլն. «Քաղցր է ի բերան իմ, եւ դառնացաւ յորովայնի իմում» (Յայտն. Ժ 10): Նոյնպէս եւ բարին դառն է ի գործելն, եւ քաղցր՝ ի հատուցանելն: Որպէս եւ Տէրն հրամայէ՝ նեղ եւ անձուկ է ճանապարհն, որ ի կեանսն, լայն եւ ընդարձակ է ճանապարհն, որ տանի ի կորուստն (հմմտ. Մատթ. Է 13-14): Չորրորդ՝ ըստ այսմ օրինակի եւ ամենայն խրատ ի լսելն դառն է եւ ի կատարելն՝ քաղցր, որպէս արմատ ծառոյ դառն է, եւ պտուղն՝ քաղցր: Ըստ այնմ. Ամենայն խրատ առ ժամայն դառնութիւն է, բայց յետոյ պտուղ քաղցրութեան բերէ ընդունողացն զնա (հմմտ. Եբր. ԺԲ 11):

ՎԱՍՆ ԱՐԵԱՆ ԵՒ ՋՐՈՅ ԿՈՂ[ՈՅ][70]

Արիւն եւ ջուր կողին Քրիստոսի հինգ իր նշանակէ. նախ՝ արիւնն ցուցանէր, զի կենդանի էր աստուածութեամբն, եւ ջուր՝ զի մեռեալ էր մարմնով: Երկրորդ՝ արիւնն աստուածութեան էր ցոյց, ջուր՝ մարդկութեան: Երրորդ՝ ջրովն սրբիմք եւ զարիւնն՝ ըմպեմք: Չորրորդ՝ ջուրն շիջոյց զհուրն Եւայի, եւ արիւնն կենդանացոյց զմեզ: Հինգերորդ՝ /44ա/ ջրովն մկրտին հաւատացեալք, եւ արեամբն՝ վրկայք:

կոպոսէ, Կ. Պոլիս, 1760-1761, Գիրք երեքտասաներորդ, գլուխ հնգետասաներորդ. «Եւ այս Անտիոքոս հզօրագոյն եղեւ ի զօրն, քան զԱնտիոքոս Եպիփանն, քանզի յորժամ էառ զքաղաքն ի զոհ մատոյց զխոզս եւ եհեղ զտաճարաւն զարգանակն մսոց....»:

[70] Հմմտ. ՄՄ 1166, թ. 42բ:

Բան. Կարեցին քուրծ (ԺԶ 15):

Լուծումն. Զայս եւ Դաւիթ ասէ. «Ի նեղել նոցա քուրծ զգենուի» (Սաղմ. ԼԴ 13): Քուրծ զգեցուցին Տեառն՝ ի ծածկոյթ ուխտին Աբրահամու: Եւ չորս ինչ նշանակէ. նախ՝ զբազում տանջանքն նշանակէ: Երկրորդ՝ զտրտմութիւն զերծ զքուրծ եւ զգեցոյց: Երրորդ՝ զթզենի տերեւն Ադամայ: Չորրորդ՝ զմաշկեղէն զգեստն:

Բան. Արտեւանաց ստուերք մահու (ԺԶ 16):

Լուծումն. Տէր մեր ի խաչին եխից զակնն: Եւ սոքա երեքեան ցուցանեն թէ կամաւ մեռաւ, այսինքն՝ ձայն բարձր եւ գլխոյն խոնարհումն, եւ խցումն աչացն:

Բան. Որ համբառնայ զձեռս եւ զսիրտս (ԺԶ 17):

[Լուծումն]. Եւ խնդրէ որպէս ի թագաւորէ, զի կարող է, եւ ի Տեառնէ, զի կամեցող է, եւ ի դատաւորէ, զի գիտուն է, եւ ի բարեկամէ, որ սիրելի է: Եթէ այսպէս խնդրեմք՝ զամենայն ստուգապէս առնումք:

ՎԱՍՆ ԼԱԼՈՅ[71]

Բան. Խարշեցաւ փոր իմ ի լալոյ (ԺԶ 16):

Լուծումն. Զորս դիմօք է. նախ՝ ի դէմս Յոբայ զախտակցութիւնն նշանակէ վասն ուստերաց եւ դստերաց, որ մեռան եւ անթաղ մնացին, եւ վասն հարուածի մարմնոյ իւրոյ զայս ասէր: Երկրորդ՝ ի դէմս Տեառն մերոյ, յորժամ ելաց ի վերայ Երուսաղէմի, վշտակից եղեալ նոցա զմերժումն եւ զկորուստ ազգի նոցա ողբալով (հմմտ. Ղուկ. ԺԳ 34): Երրորդ՝ ի դէմս խընամոցն Աստուծոյ, որպէս մայրն ի վերայ զաւակաց ի սէր եւ ի գութ փորն իւր շարժէ, այսպէս եւ Աստուած ի խնայումն մեղաւորաց: Չորրորդ՝ ի դէմս մեր, յորժամ տեսանեմք /44բ/ զհոգիս կորուսեալ մեղօք, խարշին եւ գլորին աղիք իմ ի ցաւոյ, զի խարշելն հրով եւ

[71] Հմմտ. ՍՄ 1166, թ. 43ա:

ջրով լինի: Այսպէս հուր ջերմութեան սրտին, եւ ջուր արտասուացն խարշէ զփորս իմ եւ կսկծիմք վասն գործեցեալ մեղացն:

Բան. Մի՛ ծածկէր զարիւն (ԺՁ 18):

Լուծումն. Արիւնն Աբելի եւ Յոբայ եւ Տեառն, որ ի խաչին էհեղ ոչ ծածկեցաւ յերկիր. նախ՝ զի մի մոռասցի: Երկրորդ՝ զի տեսողք ի նոյն նախանձեսցին: Այլեւ, Տեառն մերոյ անապականութեան ցոյցք, եթէ ի խաչին եւ թէ այլ ուրեք մնացեալ իցէ:

ՎԱՍՆ ՎԿԱՅԻՑ ԵՒ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՑՆ[72]

[Բան]. Վկայն իմ յերկինս (ԺՁ 19):

[Լուծումն]. Երեք են դասք վկայից. առաջին՝ մարդիկ եւ գործակիցք: Երկրորդ՝ խղճմտանքս մեր: Երրորդ՝ ստեղծիչն հոգւոց: Եւ մի քան զմի առաւել են վկայք, որպէս ասէ Պօղոս. «Եթէ զանձին խիղճ ոչ գիտեմ, այլ ոչ եթէ այսու արդարանամ, զի Տէր է, որ դատէ» (Ա Կորնթ. Դ 4): Զի բազում ինչ մոռանամք եւ ի պատճառս բարոյ մեղք գործեմք: Իսկ որ ասէ. Վկայն իմ յերկինս է (ԺՁ 20), նախ՝ ի դէմս Յոբայ, զի Գ (3) անգամ վկայեաց Աստուած ի վերայ արդարութեանն Յոբայ, երկուս՝ նախքան զփորձանսն եւ մին՝ յամպոյն եւ ի միգէն: Իսկ ի դէմս Տեառն, զի երիցս վկայեաց Հայր: Եւ դարձեալ «Հոգին, եւ արիւն, եւ ջուրն» (Ա Յովհ. Ե 8), որպէս ասէ ի կաթողիկեացն: Իսկ ի դէմս ամենայն սրբոց աւրէնքն է վկայ հաւատարիմ, եթէ ոք գործակից ունի զօրէնսն, նա է որ անմոռաց յիշէ եւ յառաջ բերէ զխորհուրդս, /45ա/ զբանս եւ զգործս իբրեւ ի գրոց, եւ դարձեալ օրէնքն է վկայ ոչ գործողացն զնա: Առաջին գործ օրինացն այս է, որ ճշմարիտ վկայէ անմոռաց: Երկրորդ գործ օրինացն է պսակել եւ պատժել, որ զպահողսն պսակէ եւ զյանցաւորսն պատժէ, եթէ հոգւով եւ եթէ մարմնով: Երրորդ՝ գործն, զի օրէնքն է գիրն կենաց, որպէս ասէ Դանիէլ. «Դպրութիւնք բացան» (Դան. Է 10): Զի պահողացն է գիր կենաց, ըստ այնմ. «Անուանք ձեր գրեալ են յերկինս»

[72] Հմմտ. ՄՄ 1166, թ. 43ա-44բ (թ. 43բ-ն՝ այլ բան է գրված, թ. 44ա՝ չգրված):

(Ղուկ. Ժ 20): Եւ ոչ պահողացն է գիր մահու, ըստ այնմ. «Ցնջեսցին նոքա ի դպրութենէ քումմէ կենաց, եւ ընդ արդարս [քո մի՛ դրեսցին]» (Սաղմ. ԿԸ 29): Եւ սոյնպէս ապա մեք գրեմք եւ ջնջեմք զմեզ ի կրկնակի գիրն երկնաւոր: Այսքան առ այս:

Բան. Հասցեն խնդրուածք իմ (ԺԶ 20):

Լուծումն. Որպէս ջուր խողովակով ի վերուստ իջուցեալ այնքան ի բարձունս ելանէ, նոյնպէս կսկիծ սրտին ի գագաթն ելեալ եւ ծանրացեալ իջեալ ընդ աչքն՝ լինի արտասուքն եւ գլորի ի վայր: Այսպէս արտասուօք աղօթքն ելեալ ի յերկինս գլորէ զթշնամին մեր յերկիր, որպէս նետածիգ եղեալ զթռչունս յերկիր գլորեմք: Եւ որքան նա գլխակորի, այնքան մեք յերկինս բարձրանամք մտօք:

ՎԱՍՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՑ[73]

Բան. Զճանապարհս անդարձ գնացից (ԺԶ 22):

Լուծումն. Չորս են իմանալի ճանապարհք. երկուքն դարձ ունին, եւ երկուքն՝ ոչ: Առաջին ճանապարհք օրէնքն է Աստուծոյ, ըստ այնմ. «Զճանապարհս քո, Տէր, ցոյց ինձ» (Սաղմ. ԻԴ 5): Երկրորդ ճանապարհ է իւրաքանչիւր վարք մարդոյ՝ չար եւ բարի: Վասն չարին /45բ/ ասէ գիր. «Երթալով երթային եւ չար էր ճանապարհք նոցա» (Ա Թագ. Գ 21): Եւ վասն բարւոյ ասէ Դաւիթ. «Երանեալ են ամբիծք ի ճանապարհի» (Սաղմ. ՃԺԸ 1): Եւ այս երկու ճանապարհքս դարձ ունին: Է եւ այլ Բ (2) ճանապարհ անդարձ: Առաջին՝ է ճանապարհ կենցաղոյս ի ծնանէ մինչեւ ի մահ, եւ սա անդարձ է, զի ոչ դառնամք ի ծերութենէ ի մանկութիւն կամ ի տղայութիւն: Երկրորդ՝ ճանապարհ է մահուն, որ ամենայն մարդոյ գնալի է, որպէս ասէր Դաւիթ. «Ես գնամ զճանապարհ ամենայն մարդկան» (հմմտ. Սաղմ. Զ 14): Եւ զի անդարձ է, նոյն մարգարէն Դաւիթ ասաց ի մեռանել որդւոյն. «Ես առ նա երթայց, եւ նա առ իս ոչ դարձցի» (Բ Թագ. ԺԲ 23): Եւ թէ ոք ասիցէ, վասն

[73] Հմմտ. ՍՄ 1166, թ. 44բ:

է՞ր Տէրն մեռեալս յարոյց, որպէս զՂազար եւ զայլսն: Եւ մարգարէն Եղիա եւ Եղիսէոս, եւ առաքեալքն բազում մեռեալս յարուցին, ասեմք, եթէ այսոքիկ սքանչելիք եղեն, զի հաւատասցեն մարդիկք, թէ յարութիւն լինելոց է հասարակ մարդկան: Եւ զի առանց ապականութեան յառնեմք, վասն այն Տէր մեր անապական յարեաւ ի գերեզմանէն մարմնովն իւրով, որպէս «Առաջին պտուղ ննջեցելոց» (Ա Կորնթ. ԺԵ 20), ասէ առաքեալ: Եւ թէ ոք ասիցէ, յորժամ մեռեալք յարեան, վասն է՞ր զայն կենացն ոչ պատմեցին լիով, ասեմք, նախ՝ եթէ խնամքն Աստուծոյ արգել զայս ի մտաց նոցա, զի մի յետոյ դեւք ի կերպարանս մեռելոց երեւեսցին մարդկան եւ բազում հայհոյութիւնս խօսեսցին՝ խաբելով զմարդիկ, եւ զյոյս անտի կենացն բարձցեն: Դարձեալ օրէնքն եւ մարգարէք, Աւետարանն եւ առաքեալք, եւ ամենայն Սուրբ Գիրք քարոզեն զանտի կենացն վասն յարութեան, վասն դատաստանի, վասն արքայութեան, վասն դըժոխոցն եւ այլն: /46ա/ Նոցա պարտ է լսել եւ զմեզ ուղղել: Եւ գիտելի է, զի վեց զարմացումն է ի դառնալ ճանապարհի մահուն: Առաջին՝ զի առանձին գնամք եւ առհասարակ դառնամք: Երկրորդ՝ ի բազում ժամանակս մեռանիմք եւ համանգամայն յառնեմք: Երրորդ՝ զանազան դէմք մեռանին եւ ի մի չափ հասակի՝ երեսնամեայ յառնեմք: Չորրորդ՝ ի ժամանակի մեռանիմք եւ յաւիտեանն կենդանանամք: Հինգերորդ՝ մահուամբ երթամք եւ անմահութեամբ դառնամք: Վեցերորդ՝ մերկ իջանեմք ի գերեզման եւ զարդարեալ փառօք յառնեմք, որպէս հատն ցորենոյ մերկ անկեալ յերկիր եւ բուսանի ոչ մերկ, այլ զարդարեալ, որպէս ասէ առաքեալ (հմմտ. Յովհ. ԺԲ 24):

Բան. Գողացան օտարք (ԺԷ 3):

Լուծումն. Աւտար են դեւք վասն չորից. նախ՝ բնութեամբ: Երկրորդ՝ տեղեաւ: Երրորդ՝ կամաւք: Չորրորդ՝ գործով:

Բան. Լոյսն մերժեցաւ ի խաւարէ (ԺԷ 12):

Լուծումն. Վեց մտօք է. նախ՝ զի չէ արժանի խաւարն, որ ընդունի զլոյսն: Վասն այն մերժի ի նմանէ: Երկրորդ՝ տունն հրէից: Երրորդ՝ ի չար մարդկանէ լոյս օրինացն մերժի: Չորրորդ՝ ի լոյս

արանց մերժի խաւար մեղաց: Հինգերորդ՝ ի դիմաց իւր ասէ եւ բարեկամացն: Վեցերորդ՝ լոյս կոչէ զկեանս եւ խաւար՝ զմահ:

Բան. Զմահ կոչեցի հայր, մայր եւ քոյր ինձ՝ զերր[74] *(ԺԷ 14):*

[Լուծումն]. Չորս է միտք. առաջին՝ նախքան զյանցումն, Ադամ հայր կոչէր զԱստուած փչմամբն եւ մայր՝ զհողն, եւ քոյր՝ զայլ տարերս ծննդական: Երկրորդ՝ յետ յանցմանն հայր կոչեաց զմահն, ըստ այնմ. «Մահ հովուեսցէ զնոսա» (Սաղմ. ԽԸ 15): «Յորում աւուր ուտիցես՝ մահու մեռցիս» (Ծնն. Բ 17): Կերաւ եւ մեռաւ: Եւ մայր՝ ապականութիւնն, յայնմանէ. «Հող էիր եւ ի հող դարձցիս» (Ծնն. Գ 19): Եւ նոյն քոյր՝ շարաւ եւ հոտ զերր փոշինէ եւ զունկ: Երրորդ՝ ընդդէմ այսմ յուսովն ի Քրիստոս Հայր կոչեմք զԱստուած շնորհօք, եւ մայր՝ /46բ/ զեկեղեցի սուրբ աւազանաւն, եւ քոյր՝ իմաստութիւն եւ այլ առաքինութիւն: Չորրորդ՝ ի հանդերձեալն Հայր կոչեմք զԱստուած փառօք եւ մայր՝ զյարութիւնն անապական, եւ քոյր՝ զիրեշտակս (հմմտ. Երգ Ա 12, 13, Դ 10), որպէս ասի յԵրգս երգոց[75]: Տե՛ս զամենայն ճառ ի վերջք ի մահն աւարտէ եւ ի հող: Դարձեալ տե՛ս, որ զՆախերգանն ի վերջին բանն յարմարէ:

Բ. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ԲԱՂԱՏԱՅ ԱՍԷ[76]

Յիշումն մահու վասն չորից բարի է. նախ՝ զի ծառայեսցուք մեղաց եւ ցանկութեանց: Երկրորդ՝ զի փութասցուք այնմ կենաց: Երրորդ՝ զի համբերեսցուք նեղութեանց: Չորրորդ՝ զի արիասցուք ընդդէմ չարին:

Բան. Իբրեւ զչորքոտանիս (ԺԸ 3):

Լուծումն. Ի վեց աւուրն ստեղծան չորքոտանիք:

---

[74] Հմմտ. ՍՄ 1166, թ. 45բ: Իբր եռացումն ապականաբար, նեխութիւն, փտութիւն. տե՛ս ՆԲՀԼ, հտ. Ա, էջ 703:

[75] Հմմտ. **Գրիգոր Տաթեւացի**, *Երգ երգոցի մեկնությունը*, Երեւան, 2005, էջ 29-30, 44:

[76] Հմմտ. ՍՄ 1166, թ. 45բ:

Բան. Թէ դու մեռանիս անշէն մնայ աշխարհ (ԺԸ 4):

Լուծումն. Նախ՝ զի մեռելոյն անցանի աշխարհ եւ շրջին կեանք: Դարձեալ յորժամ վերջին մարդն մեռանի, անցանի աշխարհ, եւ տարերք շրջին եւ նորոգին:

Բան. Լոյս եւ ճրագ (ԺԸ 6):

Լուծումն. Նախ՝ զգալի կեանս: Երկրորդ՝ զյորդիսն Յոբայ: Երրորդ՝ լոյս խղճի մտացն խաւար է մեղաւորաց:

Բան. Թաքուցեալ տոռունք (ԺԸ 10):

Լուծումն. Ասաց Բաղդատ յառաջին ճառն վասն անկման չարին եւ հանգստեան ի չարիս: Աստ ասէ վասն որոգայթից նորա, որ ամենայն մարդոյ պատրաստ է, այսինքն՝ արդարոյ՝ հպարտութիւն, մեղաւորի՝ յուսահատութիւն, աղքատաց՝ տրտունջ, մեծատանց՝ ագահութիւն եւ այլն, որպէս եւ Դաւիթ ասէ. «Լարս /47ա/ ձգեցին որոգայթ ոտից իմոց շուրջ շաւղօք» (Սաղմ. ՃԼԹ 6):

Բան. Կինք ոտից (ԺԸ 12):

Լուծումն. Այժ կամ զօրութիւն, կամ՝ որպէս մեկնիչդ ասէ. Ծունգք կամ շաւիղ ոտից[77] (ԺԸ 10):

Բան. Արմատ եւ հունձք (ԺԸ 16):

Լուծումն. Նախ՝ յերկրէ եւ յերկնից բարկութիւն: Երկրորդ՝ ի հոգի եւ ի մարմին: Երրորդ՝ ի ծնօղս եւ ի ծնունդս: Չորրորդ՝ աստ՝ արմատ եւ անդ՝ հունձք: Յետինք են, որ ի մետասան ժամուն մտին յայգին, այսինքն՝ ապաշխարութեամբ արդարացան: Եւ առաջինք են արդարքն, որք ի սկզբանէ զգործ Տեառն գործեցին: Նոքա հեծեն ի վերայ մեղաւորաց, թէ ընդէ՞ր ոչ ապաշխարեցին: Եւ նոքա զարմանան. նախ՝ վասն հասարակ վարձուցն: Երկրորդ՝ վասն հատուցման մեղաւորաց: Երրորդ՝ վասն տանջանաց նոցա, որ է հուրն յաւիտենից, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած. Ամէն:

---

[77] Հմմտ. ՍՄ 1166, թ. 46բ:

Զ. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ ԱՍԷ ՎԵՑ ՃԱՌՍ ՅՈԲԱՅ ՅԱՅՏՆԻ ԵՒ ԵՕԹՆ՝ ԸՍՏ ԿԱՐԳԻ[78]

Ունի զխորհուրդ վեցերորդ աւուրն, յորում Ադամ մոլորեցաւ եւ հատաւ որպէս ծառ, եւ փտեցաւ մարմինն, զի ապականացու եղեւ: Այլեւ ունի զխորհուրդ վեց դարուն, յորում Տէր մեր վասն Ադամայ չարչարեցաւ եւ անգոսնեցաւ ի բարեկամաց, եւ զամենայն տնօրէնութիւնն կատարեաց, վասն որոյ ասէ. Ամենայն ինչ վախճանեցաւ ի ծոց իմ (ԺԹ 27): Այլեւ վասն եւթն դարուն, որ մեռելոցն է, ասէ. Ողորմեցարո՛ւք, ողորմեցարո՛ւք ինձ, ո՛վ բարեկամք իմ, յարուցանել զմորթ իմ (ԺԹ 21, 26) եւ այլն: /47բ/ Իսկ կարգն անդ ասաց Բաղդատ՝ Մինչեւ յե՞րբ ոչ դադարես (ԺԸ 2), աստ ասէ՝ Մինչեւ յե՞րբ աշխատ առնես զիս (ԺԹ 2): Անդ ասաց՝ Խաւար ի յարկի իւրում (ԺԸ 6), աստ ասէ՝ Եդ ի վերայ երեսաց իմոց խաւար (ԺԹ 8): Անդ ասաց՝ Կալանք ոտից նորա շուրջանակի (ԺԸ 10), աստ ասէ՝ Ծուրջ պատեալ են, եւ շուրջ պարուրեալ, եւ ոչ կարեմ անցանել (ԺԹ 8): Անդ ասաց՝ Արմատ նորա ցամաքեսցին (ԺԸ 16), աստ ասէ՝ Արմատ բանից գտցուք ի նա (ԺԹ 28) եւ այլն:

Բան. Ոք կրէ ջուր ի ծովէ (հմմտ. ԺԹ 2):

Լուծումն. Դօլապով ծովն ոչ սպառի եւ ոչ լեզուօք՝ գովութիւն սրբոց: Ապա՝ ծով եւ լեառն եւ վէմ են առաքինութիւնք սրբոց անհատանելի, եւ վարդապետք ողորկեն եւ կոփեն ի շինուածս հոգեւոր: Աշխատութիւն է մարմոյն եւ հոգւոյն, եւ մտացն:

Բան. Արժան էր ամաչել[79] *(հմմտ. ԺԹ 3):*

[Լուծումն]. Նախ՝ զի Աստուած էած ի յայս հանդէս: Երկրորդ՝ ի վիրացս: Երրորդ՝ ի հրեշտակացն: Չորրորդ՝ ի բանիցս իմ:

---

[78] Հմմտ. ՍՍ 1166, թ. 47ա:
[79] Հմմտ. ՍՍ 1166, թ. 47բ:

Բան. Թէ մոլորեցայ (ԺԹ 4):

Լուծումն. Ըստ ձեր կարծեացդ կա՛մ մտօք մոլորեցայ, կա՛մ բանիւ, կա՛մ գործով, կա՛մ ընդդէմ, կա՛մ զարտուղի: Պարտ էր ձեզ վասն առաջնոյն՝ ուսուցանել, վասն երկրորդին՝ խրատել, վասն երրորդին՝ յանդիմանել, վասն չորրորդին՝ սաստել, վասն վերջնոյն՝ առաջնորդել:

Բան. Ամուրս բարձր[80] *(ԺԹ 6):*

Լուծումն. Ամուր պարիսպ կանգնեաց ինձ. նախ՝ զհրամանն իւր: Երկրորդ՝ զհամբերութիւնն իմ: Երրորդ՝ զվկայութիւնն իւր: Չորրորդ՝ զօրինակն, որ եղէ ես Քրիստոսի, ասէ: /48ա/

ՎԱՍՆ ԽԱՒԱՐՄԱՆ ԽԱՉԻՆ[81]

Վեց ինչ նշանակէ արեգական խաւարում. նախ՝ զի մի տեսցեն արարածք զմերկութիւն Տեառն: Երկրորդ՝ փոխանակ, որ ստուերացաւ Ադամ ընդ թզենեաւն: Երրորդ՝ զկուրութիւն հրէիցն: Չորրորդ՝ զխաւարումն օրինացն: Հինգերորդ՝ զանհաւատից կորուստն: Վեցերորդ՝ զխաւարն արտաքին:

Բան. Յարեաւ բազում ոստովք (ԺԹ 10):

[Լուծումն]. Նախ՝ բազում հոգւովք, որ ազատեաց ի տանջանաց: Երկրորդ՝ բազում մարմինք յարեան: Երրորդ՝ զի արդարացեալք ելին յերկինս: Չորրորդ՝ զի եւ մեղաւորք արձակեցան, թէպէտ չելին յերկինս:

---

[80] Հմմտ. ՍՄ 1166, թ. 47բ:
[81] Հմմտ. ՍՄ 1166, թ. 48ա:

ՎԱՍՆ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՏԵԱՌՆ[82]

[Բան]. Ասէ Յոբ. Չարաչար բարկացաւ (հմմտ. ԺԹ 11):

Լուծումն. Չարչարանքն Քրիստոսի հատուցումն էր մեղացն Ադամայ եւ ծնունդոց նորա: Եւ երեք է մեծութիւնն. նախ՝ մեղքն Ադամայ, որ զհրամանն էանց եւ ոչ զղջացաւ: Երկրորդ՝ մեծ էր դատապարտութիւնն, որ եդ Ադամայ: Երրորդ՝ զի բազմացաւ ի ծնունդս նորա: Արդ այնմ. «Որ բառնայր զմեղս աշխարհի» (Յովհ. Ա 29): Գ (3) իր պիտոյ էր. նախ՝ զի լիցի անմեղ: Երկրորդ՝ զի չարչարեսցի: Երրորդ՝ զի Աստուած: Եւ ապա՝ չարչարանօք նորա փրկեսցի աշխարհ:

ՎԱՍՆ ՈՒՐԱՑՈՒԹԵԱՆՆ ՊԵՏՐՈՍԻ[83]

Վասն վեց իրաց ծանր է մեղք ուրացութեան Պետրոսի. նախ՝ զի ուրացումն է: Երկրորդ՝ գիտէր զՔրիստոս Որդի Աստուծոյ, ուստի դաւանեաց: /48բ/ Երրորդ՝ զի երիցս ուրացաւ: Չորրորդ՝ զի երդմամբ ուրացաւ: Հինգերորդ՝ զի առաջի աղջկան: Վեցերորդ՝ զի տեսանէր զՔրիստոս, զոր ուրախացաւ:

ՎԱՍՆ ԱՂԱԽՆԵԱՑ ԵՒ ՀԱՐՃԻՑ[84]

Աղախին էր հին տաճարն, եւ տիկին՝ նորս եկեղեցի, զոր շինեաց Քրիստոս: Եւ զի տիկին էր Եւա՝ եղեւ աղախին մեղաց, վասն որոյ Տէրն նախ զաղախինն ընտրեաց եւ ապա՝ զտիկինն ընտրեաց: Եւ գործ է աղախնոյն, զոր ինչ նուաստականք են: Սոյնպէս հին տաճարն ունէր զմոխիր երընջոցն եւ զոհս մարմնական: Իսկ հարճն միջին է ամուսնութեան եւ պոռնկութեան, զոր վասն որդէծնութենէ ունէին նահապետքն: Եւ երիւք որոշի ի հալալ կնոջէ. նախ՝ զի ոչ է պսակեալ: Երկրորդ՝ զի թողլի է: Երրորդ՝

---

[82] Հմմտ. ՍՄ 1166, թ. 48ա:
[83] Հմմտ. նույն տեղում:
[84] Հմմտ. ՍՄ 1166, թ. 48աբ:

զի վարձով: Այսպէս հին ժողովուրդն որպէս հարճ էր, եւ նորս՝ հարսն եւ թագուհի երկնաւորին: Եւ այժմ այլազգիք, որպէս հարճք են ի մէջ քրիստոնէից եւ կռապաշտից:

ՎԱՍՆ ՈՐԴԻՈՅ[85]

Որդիք կոչիմք Աստուծոյ հինգ կերպիւ. նախ՝ բնութեամբ որպէս Տէր մեր: Երկրորդ՝ արարչութեամբ, որպէս ասէ. Ո՞չ է սա ինքն է հայրն քո, որ արար եւ ստեղծ քեզ (հմմտ. ԼԱ 18): Երրորդ՝ որդէգրութեամբ որպէս հրեայքն. «Որդիս ծնայ եւ բարձրացուցի» (Ես. Ա 2): Չորրորդ՝ շնորհօք, որպէս քրիստոնեայք. «Այսուհետեւ չեմք ծառայք, այլ որդիք» (Գաղ. Դ 7): Հինգերորդ՝ փառօք, որպէս յարութեամբն, «Զի յարութեանն որդիք եմք եւ Աստուծոյ» (Ղուկ. Ի 36), ասէ Տէրն:

ՎԱՍՆ ՄԱՐՄՆՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ[86]

Երեք երեւի մարմինն Քրիստոսի. նախ՝ որ ի Կուսէն էառ: Երկրորդ՝ որ զհացն օրհնեաց: Երրորդ՝ զեկեղեցի /49ա/ կոչեաց: Այն, որ ի Կուսէն է՝ միաւորեալ է, այն, որ հացն է՝ փոխարկեալ է, այն, որ մարդս է՝ հաղորդեալ է, որ ի Կուսէն մարմին միաւորեալ է Բանիւն եւ երեւի մարդ: Այն, որ հացն է, գոյացութիւնն փոխեալ է ի գոյացութիւն մարմնոյն Քրիստոսի, եւ պատահմունքն մնացեալ է: Նոյնպէս եւ մեք հոգով եւ մարմնով հաղորդեալ մարմին եմք Քրիստոսի, այլ զհաց մարմնոյն մի՛ ասիցէս օրինակ կամ նշանակ մարմնոյն Քրիստոսի, այլ ճշմարիտ մարմին Քրիստոսի, զի չասաց Քրիստոս, թէ այս է նշանակ կամ օրինակ մարմնոյ իմոյ, այլ ասաց. «Այս է մարմին իմ» (Մատթ. ԻՁ 26) եւ «Այս է արիւն իմ» (Մատթ. ԻՁ 28):

---

[85] Հմմտ. ՍՍ 1166, թ. 48բ:
[86] Հմմտ. նույն տեղում:

Բան. Ողորմեցարո՛ւք, ողորմեցարո՛ւք (ԺԹ 21):

Լուծումն. Չորս դիմաւք է. նախ՝ ի դէմս Յոբայ: Երկրորդ՝ ի դէմս Տեառն: Երրորդ՝ ի դէմս հրէիցն: Չորրորդ՝ իմ դէմս մեռելոց: Եւ կրկին ասէ. ողորմեցարուք. մին՝ վասն ցաւոց մարմնոյն, եւ մին՝ վասն վշտաց հոգւոյն: Դարձեալ, զի առաւել ի գութ շարժեսցէ:

Առաթուր՝ առ ոտն կոխելն է[87]:

Բան. Զեռն Տեառն (ԺԹ 21):

Լուծումն. Այն, որ ասաց ի թշնամին, թէ տամ զնա ի ձեռս քո (Ա 12): Դարձեալ վասն Հաւր ասի, որ նա ետ զՈրդին ի չարչարանս վասն մեր:

ՎԱՍՆ ԳՐՈՅ[88]

Բան. Ո՛տայր ինձ գրել զբանս իմ (ԺԹ 23):

Լուծումն. Գրեալ բանն անջինջ մնայ, մանաւանդ՝ յորժամ մելանն կապար լինի եւ ի վէմս գրեալ, զի ոչ ի ջրոյ եւ ոչ ի հրոյ եղծանի: Այլ գիտելի է, զի գրիչ ասի, որ գրեն մարդն, եւ գրիչ գործիքն՝ եղէգն, զի մինն ներգործական է պատճառ, եւ մինն՝ գործական: Եւ չորս է բաղդատութիւնն. /49բ/ նախ՝ որպէս բանն անմարմին է ի մէջ գրոյն, եւ միտքն ի մէջ բանին ծածկեալ: Ապա Գ (3) են սոքա՝ գիրն եւ բանն, եւ միտքն, որպէս մարդն՝ մարմին, հոգի եւ միտք: Երկրորդ՝ որպէս գրիչն միաւորէ եւ բաժան՝ ճեղքելովն, սոյնպէս հոգի եւ մարմին միաւորէ եւ բաժան՝ գործելովն: Եւ այն, որ թեքն է հատեալ, առաջինն կարճ մարմինս է եւ վերջինն յերկար՝ հոգիս: Երրորդ՝ որպէս յերկուցն մի գիծ լինի, նոյնպէս ի հոգւոյն եւ ի մարմնոյն մի գործ լինի, զինչ եւ իցէ: Չորրորդ՝ եւ որպէս կարեմք գրել եւ ջնջել, նոյնպէս կարեմք զբարի եւ զչարն գրել եւ ջնջել: Այսքան առ այս:

---

[87] Հմմտ. ՍՄ 1166, թ. 48բ. «....զի ձեռն տալ արժան է անկելոյն յերկիր եւ ոչ առաթուր հարկանել»:

[88] Հմմտ. ՍՄ 1166, թ. 49ա:

ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ[89]

Վասն հասարակ յարութեանն երեք են հերձուածք, զոր Յոբ խափանէ զնոսա. նախ՝ որ ասեն չիք յարութիւն: Իսկ Յոբ ասէ՝ Գիտեմ, զի յարուցանէ զմորթ իմ (ԺԹ 26), այսինքն՝ զմարմին իմ: Երկրորդ՝ որ ասեն, թէ այլ մարմին յառնէ: Ասէ ընդդէմ նոցա. Մորթ իմ, որ կրեաց զայս ամենայն (ԺԹ 26): Երրորդ՝ որք ասեն անօսր եւ ուրուական, որպէս ստուեր լինի մարմինք: Ասէ. Զոր ետես ակն իմ (ԺԹ 27): Զայս եւ Տէրն ասէ. «Ծօշափեցէք եւ տեսէք, զի ես նոյն եմ, զի ոգի մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի ունիմ» (Ղուկ. ԻԴ 39): Սոյնպէս վասն հասարակ յարութեանն է լինելոց է ամենայն մարդկան: Ի վեցերորդ ճառիս ասէ՝ *վասն Յարութեան Տեառն,* զի ի վեց դարուն եղեւ սկիզբն յարութեան մարդկան, որ երեւեցաւ ի Տէր մեր եւ ի մեռեալքն, որք յարեան[90]: Այլեւ պարտ էր մերձ չարչարանացն եւ զյարութիւնն կարգել, զի փութով յարեաւ եւ ոչ յամեցաւ: Այսքանն առ այս: /50ա/

ԿՐԿՆԵԱԼ ՍՈՎՓԱՐԱՅ[91]

Զկործանումն ամպարշտաց ցուցանէ, այլեւ զմեծատանց յափշտակողաց, այլեւ զպատուհաս վերջին դատաստանին նկատէ:

---

[89] Հմմտ. ՍՍ 1166, թ. 49աբ:
[90] Տե՛ս ՍՍ 1115, թ. 45բ. հմմտ. նաեւ ՍՍ 1115, թ. 61աբ, 122աբ:
[91] Հմմտ. ՍՍ 1166, թ. 49բ:

ՎԱՍՆ ԾԱՂԿԻ[92]

Չորս է ծաղիկ եւ պտուղ հոգեւոր. նախ՝ բանն ծաղիկ է, եւ գործքն՝ պտուղ: Երկրորդ՝ հաւատն ծաղիկ է, եւ սէրն՝ պտուղ: Երրորդ՝ իմացումն ներքին ծաղիկ է, եւ կատարումն՝ արտաքին պտուղ: Չորրորդ՝ աստ ամենայն առաքինութիւնքն ծաղիկ է, եւ անդ արդիւնքն՝ պտուղ:

Բան. Ազդեցութիւն[93]:

Լուծումն. Ներգործութիւն:

Բան. Բայց ես ոչ այդպէս (Ի 2):

Լուծումն. Այլ նախ՝ ի խրատողաց ամաչեմ: Երկրորդ՝ իմաստութեան ունկն դնեմ: Երրորդ՝ հնազանդիմ հանճարեղաց: Չորրորդ՝ մտաց ականջովս ուսանիմ:

Բան. Ամպարշտաց բեկումն (Ի 5):

Լուծումն. Կա՛մ ուրախութիւն ամպարըշտաց ի բեկումն յանգի, կա՛մ կորուստ ամպարշտաց խնդութիւն է բազմաց:

Բան. Յերկինս ելին պատարագք (Ի 6):

Լուծումն. Որպէս պատարագն Աբիլի յերկինս ել, եւ Նոյին յամպս, զի հոտոտեցաւ Աստուած:

Բան. Գիշերական տեսիլն[94] (Ի 8):

Լուծումն. Որպէս թռիչ աստղ աւդն է ի հուրն մերձեալ եւ շիջեալ:

Բան. Երեք կանգուն թաղել (Ի 10-11):

Լուծումն. Չափ գերեզմանին ասէ զերկայնքն, նոյնպէս՝ խորութիւնն Գ (3) կանգուն է պարտ փորել:

---

[92] Հմմտ. ՍՍ 1166, թ. 49բ:

[93] ՍՍ 1166 գրչագրում օգտագործված է *ազդողութիւն* բառը. տե՛ս ՍՍ 1166, թ. 49բ. «ազդողութիւն պայծառեցուցանէ....»:

[94] ՍՍ 1166, թ. 50ա. «....թռուցեալ իբրեւ նմանէր ազոյ եւ գիշերական տեսլեանց»:

Բան. Հուր անշէջ (Ի 26):

Լուծումն. Երեք են հուր անշէջ. նախ՝ տանջանքն յաւիտենից: Երկրորդ՝ տարրական հուրն: Երրորդ՝ սատանայ, զորմէ ասէ Դաւիթ. «Արկցես ի վերայ նոցա կայծակունս հրոյ» (Սաղմ. ՃԼԹ 11):

Հարց. Յորժամ այսպէս չարք էին, զնոցա բանքն ընդէ՞ր գրեաց Հոգին Սուրբ:

Պատասխանի. Ասեմք, եթէ բազում շահ եւ օգտութիւն է ի բանս նոցա աշխարհի արդարոց եւ մեղաւորաց, նախ՝ զի թէպէտ ի դէմս Յոբայ սուտ էր խօսք նոցա, այլ ի դէմս ամենայն մեղաւորաց ճշմարիտ է: /50բ/ Եւ դարձեալ, որպէս իշովն Բաղամու զաւգուտն խաւսեցաւ (հմմտ. Թիւք ԻԲ 22-33) եւ զլեզուս սուտ մարգարէին շարժեաց յանիծիցն յաւրհնութիւն, սոյնպէս բարեկամքն Յոբայ, թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ Աստուծոյ Հոգւովն զաւգտակարս բարբառէին: Վասն այն գրեաց «անբանք» (հմմտ. Սաղմ. ԽԸ 13, 21) նոցա ի Սուրբ Գիրս:

Է. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ ԵԹՆ ՃԱՌՆ ՅԱՅՏՆԻ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ԸՍՏ ԿԱՐԳԻ[95]

Ոգնի զխորհուրդ է (7) աւուրն հանգստեան եւ օրինութեան, որ ասէ. Ամբարիշտք կեան ի հանգստեան եւ խաշինք նոցա՝ յաւիտենական (հմմտ. ԻԱ 10-11) եւ այլն: Այլեւ զխորհուրդ է (7) աւուր շաբաթուն, որ Տէր մեր եդաւ ի գերեզմանի: Այլեւ զէ (7) դարն ննջեցելոց, զի Հանգստեամբ ննջեցին ի դժոխս (ԻԱ 13), ասէ: Այլեւ զութերորդին՝ հատուցումն ամբարշտաց. Եկեսցէ ի վերայ նոցա կործանումն (ԻԱ 17):

Իբրեւ զյարդ եւ փոշի առաջի հողմոյ (ԻԱ 18) եւ այլն: Եւ կարգն նախ ընդդէմ նոցա ասէ, թէ ոչ ամենայն ամբարշտի աստ է հատուցումն, այլեւ՝ ի հանդերձեալն, զի ասէ զամբարշտելն նոցա եւ ասէ զկնի զհատուցումն: Անդ ասաց՝ Ոգի իմաստութեան պատասխանէ (հմմտ. Ի 3), աստ ասէ՝ Տէր ուսուցանէ զհանճար եւ զիմաստութիւն (ԻԱ 22): Անդ ասաց՝ Նեղեսցի եւ լնուցու որովայն նորա (հմմտ. Ի 23), աստ ասէ՝ Փոր նորա լի է ճարպով, եւ ուղիղ նորա շճեսցի (ԻԱ 24) եւ այլն:

Բան. Լուարուք (ԻԱ 2):

Լուծումն. Որպէս ասացաւ. նախ՝ ականջով եւ մտաւք: Երկրորդ՝ լեզուիս եւ մտացս: Երրորդ՝ բանից եւ գործոց եւ այլն:

Բան. Եղեալ ծեռն ի ծնօտ[96] (ԻԱ 5):

Հարց. Զի՞նչ է, որ զծեռն ի տրտմելն /51ա/ ի վերայ երեսացն դնեն:

Պատասխանի. Որպէս թէ ի ճաշակմանէ պտղոյն Ադամայ եղեւ այս:

---

[95] Հմմտ. ՍՍ 1166, թ. 51բ:
[96] Հմմտ. նույն տեղում:

Հարց. Վասն Է՞ր ի հասարակ պատուհասն զմարդ եւ զանասուն կորուսանէ, որպէս ի դարն Նոյի եւ Ղովտայ[97]*:*

Պատասխանի. Նախ՝ զի զծառայս ընդ տեառն պատուհասէ: Երկրորդ՝ զի ընչիւք մեղանչեցին, պարտ էր եւ ընչիւքն պատժիլ: Եւ ի չորս բաժանին: Ոմանք ընչիւքն պատժին, որպէս ցուցաւ: Ոմանք ընչիւքն մնան. նախ՝ զի զղջացին: Երկրորդ՝ զի անպատասխանիք լիցին: Ոմանց ինչքն պատուհասի, զի տէրն երկիցէ: Ոմանք՝ միայն տեարքն պատժին, զի այլքն երկիցեն:

Բան. Սպառեն զորդիսն ինչքն նորա (ԻԱ 19):

Լուծումն. Նախ՝ թէ պակասին ինչքն նորա, եւ սպառին որդիքն: Երկրորդ՝ յետ մահուան հօրն բռնաւորքն շոպռեն[98] զինչսն: Երրորդ՝ եւ ի կեանքն վասն ընչիցն սպանանեն որդիք զմիմեանս:

ՎԱՍՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՆՃԱՐՈՅ[99]

Հարց. Զի՞նչ է գիտութիւն եւ հանճար (հմմտ. ԻԱ 22):

Պատասխանի. Գիտութիւնն ուսմամբ է, եւ հանճարն՝ բնական: Դարձեալ գիտութիւն Սուրբ Գրոց է, եւ հանճար՝ արտաքին իմաստնոց: Դարձեալ գիտութիւն բանից է, եւ հանճար՝ արուեստից: Եւ դարձեալ որպէս կամքն սկիզբն է սիրոյն, սոյնպէս՝ հանճարն սկիզբն է ճանաչմանց: Այլ երեք են սոքա եւ սոյնպէս յարմարին. նախ՝ գիտութիւն՝ անցելոյն, իմաստութիւնն՝ ներկային, հանճարն՝ հանդերձելոյն: Երկրորդ՝ գիտութիւն բանին է, իմաստութիւն՝ ցասման, հանճարն՝ ցանկութեան մասին: Երրորդ՝ գիտութիւն մըտացն է, իմաստութիւն՝ տեսութեանն, հանճարն՝ կամաց մասին: Չորրորդ՝ եւ յաստուածայինսն տեսանի, գիտութիւնն՝ Հօր, իմաստութիւնն՝ Որդւոյ, հանճարն՝ Հոգւոյն Սրբոյ: /51բ/

---

[97] Հմմտ. ՍՍ 1166, թ. 51բ-52ա:
[98] Յափշտակել, կորզել, ի բաց հանել, շորթել եւ այլն. տե՛ս ՆԲՀԼ, հտ. Բ, էջ 489:
[99] Հմմտ. ՍՍ 1166, թ. 52ա:

ՎԱՍՆ ԿԱՐԾԵԱՑ ԵՒ ԱՅԼ ՄԱՍԱՆՑ[100]

Հարց. Զի՞նչ է կարծիս:

Պատասխանի. Կարծիսն է ի մէջ ստութեան եւ ստուգութեան, իսկ գիտութիւն ճշմարիտն է:

Հարց. Զի՞նչ է խոնարհութիւն, հեզութիւն եւ հնազանդութիւն: Եւ կամ որո՞ մասանց են հոգւոյ:

Պատասխանի. Խոնարհութիւնն է բարութիւն բանական մասին, եւ հպարտութիւնն է չարութիւն նմա: Իսկ հեզութիւնն ցասմանն է բարութիւն, եւ բարկութիւնն ընդդէմ նմա, գութ եւ սէրն՝ ցանկականին: Դարձեալ մտացն կրկին մասն է, տեսականին՝ բարութիւն է, հաւանութիւնն, եւ կամացն՝ խաղաղութիւնն է բարութիւն: Այլեւ հաճութիւնն կամացն է, եւ ամբարհաւաճն, որ է ինքնահաճն, ընդդէմ նմին: Նոյնպէս՝ կամացն է հնազանդութիւն եւ անհնազանդութիւն, եւ տեսականին՝ խնդութիւնն է, եւ տրտմութիւնն՝ ընդդէմ նմին:

Հարց. Եւ վասն է՞ր ասի, տրտմութիւն պակասութիւն ախորժակաց[101]:

Պատասխանի. Որ յինքենէ խնդութիւն մտացն է, եւ յարտաքուստ՝ ուրախութիւն կամացն, նոյնպէս եւ տրտմութիւնն է:

Բան. Ուղիղ նորա շճեսցի (ԻԱ 24):

Լուծումն. Որպէս շիճուկ եւ ցորեան ապականեալ հոտեսցի, նոյնպէս ուղիւղ գլխոյ նոցա՝ ի պարարտութենէն: Դարձեալ ի մահն ամենայն ուղիղ թիւրեսցի եւ փոխեսցի:

Բան. Ընդ հարութեամբ այլոց (ԻԱ 26):

Լուծումն. Դիմահարութիւն եւ ծածկոյթ է:

---

[100] Հմմտ. ՍՍ 1166, թ. 52բ-53ա:

[101] *Ամառան*, գլ. Կ. Նորին քարոզ վասն ծիծաղելոյ, էջ 239-242:

ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆ[102]

Թէ յետ մահուն չորս ինչ փոշիմանին մեղաւորք եւ ոչ հասանեն. նախ՝ թէ վասն է՞ր զաշխարհս բարի կարծեցաք, զոր սնոտի եւ ունայն ասաց Սողոմոն (հմմտ. Ժողով. Ա 2): Երկրորդ՝ թէ վասն է՞ր զհանդերձեալն բարի ոչ իմացաք եւ զրկեցաք: Երրորդ՝ թէ կարէաք զբարիս գործել յաշխարհի եւ ոչ գործեցաք: Չորրորդ՝ թէ ընդէ՞ր /52ա/ զչարիս գործեցաք, զի կարող էաք առանց չարի ապրիլ, որպէս ընկերքն մեր:

Բան. Փոխադարձ (ԻԱ 30-31):

Լուծումն. Հատուցումն է չարեացն:

Հարց. Զի՞նչ է ի մեռեալս ազատ (ԻԱ 33):

Պատասխանի. Չորս ինչ. նախ՝ ազատ յապականութեանց: Երկրորդ՝ զի Աստուած էր մեռեալն: Երրորդ՝ զի զմահն մեռոյց: Չորրորդ՝ զի զմեռեալս կենդանացոյց:

Հարցումն. Որպէ՞ս մահակից լինիմք Քրիստոսի:

Պատասխանի. Չորս իրօք. նախ՝ մկրտութեամբն: Երկրորդ՝ հաղորդութեամբն: Երրորդ՝ անախտութեամբ խաչիւն: Չորրորդ՝ զգալի արեամբ: Այսպէս յառաջն նահապետքն էին մահակից Քրիստոսի. նախ՝ հոգւով տեսութեանն: Երկրորդ՝ հաւատով եւ յուսովն: Երրորդ՝ օրինակաւ սրբութեանն: Չորրորդ՝ զգալի արեամբ, որպէս Աբէլ եւ այլք: Եւ տե՛ս, զի անդ ի վեց ճառին վասն չարչարանացն ասաց, աստ՝ ի յեւթներորդիս վասն թաղման գերեզմանին, վասն զի յուրբաթին խաչեցաւ եւ ի շաբաթի թաղեցաւ:

ՎԱՍՆ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԿՈՒՍԻՆ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ[103]

Միեւնոյն է խորհուրդ Աստուածածին Կուսին եւ Յարութեան սուրբ գերեզմանին, վասն որոյ բազում են համեմատութիւնքն: Եւ

---

[102] Հմմտ. ՍՍ 1166, թ. 53աբ:
[103] Հմմտ. ՍՍ 1166, թ. 53բ

ասեմք Ի (20) գլխով. նախ՝ զի մարգարէն Էսայի վասն երկուցն վկայեաց. «Ահա Կոյս յղասցի ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմանուէլ» (Ես. Է 14), որ է մարդացեալ Աստուած: Եւ վասն գերեզմանին ասէ առ Սոմնաս Ռ (1000)-պետն. «Ընդէ՞ր փորեցէր քեզ յարկ ի վիմիդ. ո՛չ մտցես ի նա»[104] (հմմտ. Ես. ԻԲ 15): Եւ սոյնպէս եղեւ ըստ բանի մարգարէին, եւ մնաց գերեզմանն անխնամ ի գերութեան Երուսաղէմի եւ լցաւ ի խճէ հեղեղատի: Եւ յետոյ Յովսէփ Արեմաթացին /52բ/ գնեաց զտեղին ի պարտէզ, եւ ի փորելն եգիտ զգերեզմանն, եւ սրբեաց զնա վասն իւր, եւ յորժամ խաչեցաւ Քրիստոս, ի գերեզմանն իւր եդ զնա: Այս առաջինն, զի գերեզմանն եւ կոյսն յԵսայի մարգարէէն վկայեցաւ (հմմտ. Ես. ԻԲ 15): Երկրորդ՝ զի Սողոմոն ասէ վասն Կուսին. «Պարտէզ փակեալ, քոյր իմ հարսն» (Երգ Դ 12): Եւ գերեզմանն էր ի պարտիզին փորեալ: Երկրորդ [=երրորդ]՝ անդ «Յովսէփ խօսեցեալ էր զԿոյսն» (հմմտ. Մատթ. Ա 16, Ղուկ. Ա 27), եւ աստ՝ «Յովսէփ գնեալ զպարտէզն» (հմմտ. Մատթ. ԻԷ 60, Մարկ. ԺԵ 46, Ղուկ. ԻԳ 53): Չորրորդ՝ կոյս էր մայրն, որ ընկալաւ զԲանն, եւ կոյս էր գերեզմանն, յորում ոչ ոք էր եդեալ անդ: Հինգերորդ՝ նոր էր կոյսն աստուածակիր, նոր էր գերեզմանն աստուածընկալ: Վեցերորդ՝ անդ՝ կոյս եւ մայր, աստ՝ գերեզմանն եւ յարութիւն: Եւթներորդ՝ անդ վէմն ի վէմն ծնաւ այրին, աստ՝ վէմն եդաւ ի վէմն գերեզմանին: Ութերորդ՝ անդ՝ անապական մարմնով ծնաւ, աստ՝ անապական մարմնով յարեաւ: Իններորդ՝ անդ՝ ի խանձարուրս պատեցաւ, աստ՝ պատանեօքն կապեցաւ: Տասներորդ՝ անդ՝ յարգանդի մօրն եւ յաթոռ Հօրն բազմեալ, աստ՝ ի գերեզմանն անքուն ակամբ զԻսրայէլ հովուեալ: Մետասաներորդ՝ անդ՝ ի մէջ գիշերի ծնաւ, եւ աստ՝ ի մէջ գիշերի յարեաւ: Երկոտասաներորդ՝ անդ՝ անխախտ մնաց կուսութիւնն, աստ՝ անխախտ մնաց կնիք գերեզմանին: Երեքտասաներորդ՝ անդ՝ զըմուռ եւ

[104] Աստվածաշնչյան բնագրում՝ Սոմնաս հանդերձապետ (Ես. ԻԲ 15):

խունկ, աստ՝ զըմուռ եւ խունկ պատանացն, եւ իւղ, եւ խունկ իւղաբէր կանանցն: Չորեքտասաներորդ՝ անդ՝ մոգքն երկրպագեցին, աստ՝ զինուորքն վկայեցին: Հինգետասաներորդ՝ անդ՝ աստղն լուսաւորեալ, աստ՝ հրեշտակն /53ա/ լուսափայլեալ: Վեցտասաներորդ՝ անդ՝ հրեշտակք եւ հովիւքն համաձայնեալ, աստ՝ հրեշտակք եւ կանայք զՅարութիւնն երգեալ: Եւթնեւտասաներորդ՝ անդ՝ Խ (40) շաբաթ յարգանդին ժուժկալեալ, աստ՝ Խ (40) ժամուք ի գերեզմանի յամեալ, մինչեւ երեւեալ: Ութեւտասաներորդ՝ կոյսն արեւելք եղեւ արեգականն ծագեալ, արեւելք եւ գերեզմանն՝ ընդ ա[ր]շալուսն առ մեզ երեւեալ: Իններեւտասաներորդ՝ կոյսն դուռն եղեւ արքային ի յերկիր իջեալ, դուռն եղեւ գերեզմանն՝ ի յերկինս ելեալ: Քսաներորդ՝ զերկունս նախամօրն ի ծնանդեանն ելոյծ, եւ զմահն Ադամայ ի Յարութեանն ազատեաց: Եւ սոյնպէս, եւ առաւել, քան զայս, մի է խորհուրդ Աստուածածին Կուսին եւ կենսաբեր Սուրբ Գերեզմանին: Վասն որոյ, ընդ Յարութեան ծնիցելոյն եւ զՅարութիւն ծնօղին տաւնեմք, եւ զմեծացուսցէ Կուսին ընդ կոյս յարութեանն վերախմբեմք ի փառս եւ ի գովեստ յարուցելոյն Քրիստոսի. Ամէն:

Գ. ԿՐԿՆԵԱԼ ԵԼԻՓԱԶՈՒ[105]

Այս վերջին ճառն է Ելիփազու, որ նախ յանդիմանէ զՅոբ, եւ ապա՝ ի յօրհնութիւն աւարտէ:

Բան. Ամբարհաւաճ (ԻԴ 1, հմմտ. ԻԲ 2-3):

Լուծումն. Ամբարտաւան կամ անհաճ լսի, եւ չորս է յատկութիւն. նախ՝ կամի ամբարհաւաճ մտօք, թէ ամենայն մարդոյ յաղթող լինի: Երկրորդ՝ թէ յաղթեսցէ գործով: Երրորդ՝ եւ զԱստուծոյ դատաստանն գիտել համարի: Չորրորդ՝ եւ պարսաւէ զդատաստանն Աստուծոյ իբր ոչ իրաւացի:

[105] Հմմտ. ՄՄ 1166, թ. 54ա:

Բան. Աղունք (հմմտ. ԻԲ 4-5):

Լուծումն. Աղետից եւ թշուառութեան է ցոյցք:

Բան. Գրաւեցէր զեղբարս (ԻԲ 6):

Լուծումն. Զամենայն զրպարտութեամբ ասէ եւ զբարին ի չար դարձուցանէ, /53բ/ որպէս յայտ է ի ԺԱ (11) ճառն վասն ճշմարիտ վարուցն իւր: Եւ ի միւս ճառդ ինքն Յոբ վասն ամբարշտաց ասէ զայս:

Բան. Ակիժ[106] *(հմմտ. ԻԲ 10):*

Լուծումն. Կաթուած շարաւոյն:

Բան. Միթէ որ ի բարձունս նայի (ԻԲ 12):

Լուծումն. Եւ մարգարէն ասէ՝ «Աստուած յերկնից նայեցաւ» (Ես. ԾԲ 3): Չորս է իմացումն. նախ՝ զի բարձր է էութեամբ եւ փառօք: Երկրորդ՝ անտես ի մէնջ: Երրորդ՝ զի իսկապէս տեսանէ: Չորրորդ՝ եւ զամենայն տեսանէ: Չորիւք զանազանի տեսութիւնն Աստուծոյ. նախ՝ զի մարդն յերեսն նայի, եւ Աստուած՝ ի սիրտն: Երկրորդ՝ զանցեալն եւ զհանդերձեալն: Երրորդ՝ եւ զանգործն տեսանէ: Չորրորդ՝ եւ ի խաւարն տեսանէ, եւ մարդն՝ ոչ: Նոյնպէս եւ արեգակն. նախ՝ զի ամպն արգելու: Երկրորդ՝ մարմին խափանէ: Երրորդ՝ զմերձակայն լուսաւորէ: Չորրորդ՝ շրջելով տեսանէ: Չորս է յատկութիւն բարի գործոց. նախ՝ զի մի է: Երկրորդ՝ շաւիղ է նուրբ: Երրորդ՝ յաւիտենական է: Չորրորդ՝ զի բարեացն է գնալի: Եւ տե՛ս զբանս Ելիփազու երեք ճառ է: Առաջինն՝ ի դէմս Յոբայ էր՝ աւրհնեաց: Վերջինս՝ ի դէմս ապաշխարողաց՝ աւրհնութեամբ կնքեաց: Միջինն՝ ի դէմս բանսարկուին խօսեցաւ եւ զի անզեղջ են՝ ոչ աւրհնեաց: Այսքան առ այս:

---

[106] Հմմտ. ՍՍ 1166, թ. 54բ:

Ը. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ ՈՒԹԵՐՈՐԴ ՃԱՌՍ ՅԱՅՏՆԻ ՈՒՆԻ ԶԽՈՐՀՈՒՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ[107]

Զի ի սմա նշանակէ զյարութիւն մարդկան եւ զհատուցումն մեղաւորաց, եւ սատանայի: Այլեւ զանկումն թշնամոյն եւ զչարութիւն նորա: Այլեւ վասն վեց շարժման աստ գտցես ի Դ (4) դէմս: /54ա/ Իսկ կարգն անդ ասաց, եթէ՝ Յանդիմանեսցէ զքեզ (ԻԲ 4), աստ ասէ՝ Յանդիմանութիւն ի նմանէ է (ԻԳ 7): Անդ ասաց, թէ՝ Պարզեսցես զճանապարհս քո (ԻԲ 3), աստ ասէ՝ Զճանապարհս քո պահեսցի (ԻԳ 11): Անդ ասաց՝ Զհաց քաղցելոց հատէր (ԻԲ 7) եւ Զորբս չարչարեցէր (ԻԲ 9), աստ ասէ՝ Հատին զհաց քաղցելոց (ԻԴ 10) եւ Զորբս ի ստեղէ յափշտակեցին (ԻԴ 9): Անդ ասաց՝ Լոյսն քեզ խաւար դիպեցաւ (ԻԲ 11), աստ ասէ՝ Ոչ գիտէի թէ գայցէ ի վերայ իմ խաւար (ԻԳ 17): Անդ ասաց՝ Հատուսցէ քեզ իբրեւ զարծաթ զընտեալ (ԻԲ 25), աստ ասէ՝ Քննեաց զիս իբրեւ զոսկի (ԻԳ 10) եւ այլն:

Բան. Ի ձեռանէ իմէ (ԻԳ 1):

Լուծումն. Նախ՝ ի ներգործութենէ մտացս: Երկրորդ՝ ի զգայութեանցս: Երրորդ՝ ի ձեռանէ Տեառն, զի թոյլ ետ: Չորրորդ՝ ի յիմ ձեռանէս յանդիմանութիւնդ ձեր: Իրաւացի է անգիտութիւնն Աստուծոյ. նախ՝ զի եղանակեմք: Երկրորդ՝ չափաւոր յիրաւի զանեղն եւ զանչափն ոչ գիտեմք: Դարձեալ ի վեր, քան զմիտս Աստուած է հաւասար մտացս անմարմինքն: Ի ներքոյ մտաց՝ զգալիքս են: Եւ վերջին ասի տնօրէնութիւնն Քրիստոսի չորս կերպիւ. նախ՝ խոնարհութեամբն, որ էառ զբնութիւն մարդոյ: Երկրորդ՝ ժամանակաւ: Երրորդ՝ տնտեսութեամբն: Չորրորդ՝ նորոգութեամբն:

---

[107] Հմմտ. ՄՄ 1166, թ. 56ա:

ՎԱՍՆ ՎԵՑ ՇԱՐԺՄԱՆՑ[108]

Վեց շարժումն է մարդոյ ի վեր եւ ի վայր, յառաջ եւ յետ, յաջ եւ յահեակ: Նմանութեամբ ասէ Աստուծոյ սոյնպէս. ի վեր շարժումն՝ զգերամբարձն էութեամբ եւ փառօք, ի վայր՝ խոր իրաւունքն եւ խորհուրդ Փրկչին, յառաջ եւ յետ՝ զի անսկիզբն է եւ անվախճան, այլեւ՝ սկիզբն եւ կատարած աշխարհի: /54բ/ Այսպէս եւ սերովբէն ըստ որում զերեսս եւ զոտս ծածկէին (հմմտ. Ես. Զ 2): Ահեակ է փորձութիւն արդարոց եւ տանջանք մեղաւորաց: Աջ ասի Բանն Աստուծոյ եւ խնամք սրբոց, նմանապէս եւ առ հրեշտակս տեսանի, որ մշտաշարժ են ի բարիս եւ անշարժ ի չարիս: Ի վեր շարժին յառաւաւտեան գիտութիւնն Աստուծոյ, ի վայր՝ գիտութիւն արարածոցս, որ երեկոյ ասի: Յառաջ եւ յետ, զի միշտ յաստուածային սերն յառաջ են եւ զվերջինսն ի նոյն յորդորէն: Յաջ եւ յահեակ շարժին ի խնամս մարդկան եւ ի պատուհաս չարին: Այսպէս եւ դիւաց ասի, զի միշտ շարժին ի չարիս եւ անշարժ են ի բարիս: Ի վեր շարժին հպարտութեամբ, ի վայր՝ նախանձու, սիրեն զչարիս եւ ատեն զբարիս: Եւ յաջ եւ յահեակ մոլորին կամաւ եւ զայլս մոլորեն: Այսպէս եւ վասն մարդկան ասասցի, թէ յառաքինութիւն շարժին, եւ թէ ի մոլութիւն: Եւ չորիւք մերձենամք յԱստուած, այսինքն՝ հաւատով, յուսով, սիրով եւ բարի գործով: Եւ սոքաւք հեռանամք ի Տեառնէ, այլեւ սոքաւք ճաշակեմք զմարմին եւ զարիւն Փրկչին:

Հարց. Զի՞նչ է՝ զհօտ հանդերձ հովուօք յափշտակեցին[109] *(հմմտ. Մատթ. Դ 20, Մարկ. Ա 18, Ղուկ. Ե 28):*

Պատասխանի. Վեց է իմացումն. առաջին՝ յերկինս յափշտակեաց բանսարկուն ի հրեշտակաց եւ ի պետութեանց նորա, եւ ընկէց ի յերկիր: Երկրորդ՝ զԱդամ եւ զիշխեցեալքն ընդ նման: Երրորդ՝ զհօտ եւ զհովիւսն Յոբայ զայս անընդմիջաբար: Չորրորդ՝ հերձուածողք զհօտս եւ զհովիւս յափշտակեն: Հինգերորդ՝

---

[108] Հմմտ. ՍՍ 1166, թ. 56բ:
[109] Հմմտ. ՍՍ 1166, թ. 57ա:

հրէայքն /55ա/ զառաքեալս եւ զՔրիստոս չարչարեցին: Վեցերորդ՝ բռնաւորք յափշտակեն ի մարդկանէ: Եւ զայս միջնորդօք առնէ բանսարկուն:

Հարց. Զի՞նչ է՝ վասն իմ թողին զգործս իւրեանց[110]*:*

Պատասխանի. Ոմանք յայսմանէ իմանան յետ մարդոյն ստեղծման զանկումն դիւաց: Այլ ես ասեմ թէ ոչ, զի նախքան զստեղծումն Ադամայ է անկումն նոցա, եւ յայտ է չորից. նախ՝ զի ի տեղի անկելոցն ստեղծաւ մարդն: Երկրորդ՝ զի հրեշտակք ոչ նախանձին ընդ փառս մարդոյն: Երրորդ՝ զի հպարտութեամբ անկաւ եւ ոչ նախանձովն, որպէս ինքն Յոբ սակաւ ինչ յառաջ ասաց. Ամբարհաւաճութեամբ անկանել ամբարշտին (ԻԴ 1): Չորրորդ՝ զի Տէրն ասէ վասն նորա. Երբեք ի ճշմարտութեան ոչ եկաց, զի թէ կացեալ էր ընդ այլ հրեշտակացն՝ երանեալ էր (հմմտ. Յովհ. Ը 44): Վասն որոյ ասեն վարդապետք, եթէ՝ յառաջին կէտն ստեղծան եւ յերկրորդ կէտն անկան[111]: Այլ զի՞նչ է ասելն՝ Վասն իմ թողին զգործս իւրեանց, այսինքն՝ ընդ փառս մարդոյն նախանձեցան եւ թողին զբարի նախանձն, զոր ունին հրեշտակք եւ ընկալան զչար նախանձն, ուստի մահ եմուտ ի բնութիւնս մեր, ըստ Սողոմոնի. «Նախանձու բանսարկուին մահ եմուտ յաշխարհ» (Իմաստ. Սող. Բ 24):

Բան. Ի նմանապէսն ամբարշտութիւն (Լե 8):

Լուծումն. Այսինքն՝ կա՛մ մարդս նմանապէս դիւացն ամբարիշտ է, կա՛մ անօրէնութիւնն նըման է ամբարշտութեան:

---

[110] Հմմտ. ՄՄ 1166, թ. 57բ-58ա:

[111] Հմմտ. *Ամառան,* գլ. ՃԽԶ. Նորին քարոզ, վասն հրեշտակաց եւ դիւաց, եւ մարդկան ընտրելոց, ի բանն (Ծառայ իմաստուն տիրեսցէ տէրանց անմտից եւ ընդ եղբորս բաժանեսցէ մասն ժառանգութեան), էջ 579:

ԿԱՄԱՒ ԵՒ ԱԿԱՄԱՅՆ[112]

Հարց. Վասն է՞ր ոչ գիտելն ներելի է, քան զոչ կամելն:

Պատասխանի. Երկուքն զօրութիւնք են մտացն, այսինքն՝ գիտելն եւ կամելն: Այլ ոչ գիտելն անկատարից է եւ ոչ կամելն՝ կատարելոցն: Դարձեալ ոչ գիտ/55բ/ելն մի է եւ ոչ կամելն կրկին յանցանք:

Հարց. Զի՞նչ է ոչ կամելն եւ ակամայն:

Պատասխանի. Ոչ կամելն գիտութեամբ է, ակամայն՝ անգիտութեամբ: Դարձեալ ոչ կամելն կարողութեամբ է, եւ ակամայն՝ տկարութեամբ: Նմանապէս եւ ոչ գիտելն եւ անգիտութեամբն զանազանի, սոյնպէս, զի ոչ գիտելն է, որ չէ ուսեալ, եւ անգիտութիւնն, որ մոռացեալ է: Այսպէս կարողութիւնն է, որ կամաւ եւ գիտութեամբն լինի, եւ տկարութիւն, որ ո՛չ կամաւ եւ ո՛չ գիտութեամբն ներգործի:

ՎԱՍՆ ՄԵՂԱՑ ԽԱՒԱՐԻ[113]

Չորք խաւարաւ գործէ ոք զմեղս. նախ՝ մոլորի ի խաւարէն, որ է բանսարկուն: Վասն որոյ ասէ. «Մոլորեցան զհետ խաւարին» (հմմտ. Բ Պետ. Բ 15, 17, նաեւ հմմտ. Թիւք ԺԱ 28, Եզեկ. ԽԴ 10, ԽԸ 11): Երկրորդ՝ մտօքն խաւարին եւ կամին ծածկել, որպէս ասէ՝ Աչք շնացելոյն պահեն զխաւար (ԻԴ 15): Երրորդ՝ ընտրէն զժամանակն խաւար, որպէս ասէ՝ Ի գիշերի եղիցին իբրեւ զգող (ԻԴ 14): Չորրորդ՝ առնեն զտեղին խաւար, որպէս ասէ՝ Փորեն ընդ մութն զտունս (ԻԴ 16): Եւ ապա՝ գործեն զչարս, որ է գործ խաւարի: Վասն որոյ Աստուած տանջէ զնոսա չորիւք խաւարաւ. նախ՝ երկիւղիւ խաւարաւ զմիտսն: Երկրորդ՝ խաւարաւ տանջանօք զմարմինս: Երրորդ՝ խաւարաւ մահուամբ ի գերեզման վասն տեղոյն: Չորրորդ՝ ի խաւարն արտաքին վասն ժամանակին: Առաքէ զբանսարկուն եւ զմեղաւորն, որպէս ասէ՝ Ծանուցեալ

---

[112] Հմմտ. ՍՍ 1166, թ. 58աբ:
[113] Հմմտ. ՍՍ 1166, թ. 58բ-59ա:

զգործս նոցա մատնեաց ի խաւարն (ԻԴ 14): Արդ անպտղութիւն գործոցն յետ մահուն տեսանի, այլեւ յիշումն մեղացն յետ մահուն լինի, զի գործողն անմոռաց յիշէ զմեղս եւ սատանայ յիշէ, զոր ետ նմա գործել: Թէ յետ յարութեանն է հատուցումն:

Բան. Եւ հատուցանէ /56ա/ նմա, զոր արար (ԻԴ 20):

Լուծումն. Եւ հատուցումն լինի ի յարութեանն: Եւ յայտ է յերից. նախ՝ ի կողմանէ դատաւորին: Երկրորդ՝ ի կողմանէ դատեցելոյն: Երրորդ՝ ի կողմանէ ժամանակին: Նախ՝ ի կողմանէ դատաւորին սոյնպէս, զի հատուցումն հետեւի դատաստանին եւ դատաստանն՝ դատաւորին: Արդ չեւ է եկեալ դատաւորն եւ ո՛չ լինի դատաստան եւ ո՛չ հատուցումն, որպէս ասէ Սուրբն Կիւրեղ ի Գիրս պարապմանց[114]: Երկրորդ՝ ի կողմանէ մեր, զի հոգին եւ մարմին ի միասին գործեցին եթէ չար, եթէ բարի, ի միասին հատուցցի նոցա: Սոյնպէս ասէ եւ սուրբն Դիոնիսիոս[115], նաեւ առաքեալն Պաւղոս ի հ[յ]Եբրայեցիսն. Աստուծոյ՝ վասն մեր լաւագոյն համարել, զի մի առանց մեր կատարեսցին (հմմտ. Եբր. ԺԱ 40), այսինքն ոչ առաջ ինքն առանց վերջնոցն եւ ոչ հոգիքն առանց մարմնոց: Երրորդ՝ ի կողմանէ ժամանակին, զի ութ են դարք կենցաղոյս: Արդ վեց դարն է գործոց եւ կենդանեաց մարդկան, որպէս վեց օր է գործոց շաբաթուն: Եւ եւթն՝ դարն հանգստեան եւ

---

[114] Տե՛ս **Կիւրեղ Աղեքսանդրացի**, *Գիրք պարապմանց*, Կ. Պոլիս, 1717, Հաւատարիմ քահանայապետի Քրիստոսի, մտերիմ ծառայի Աստուծոյ Սրբոյ Կիւրղի Աղէքսանդրացւոյ ի Տիբերեայ քահանայէ եւ յեղբարցս, Խնդիր Ը, էջ ՂԳ (93), Լուծումն նորին, էջ ՃԺ (110): Նույն հեղինակին վկայակոչում է նաեւ Քարոզգրքի Ամառան հատորում. տե՛ս *Ամառան*, գլ. ՃԿԵ. Նորին հաւաքեալ քարոզ Յարութեանն, ի բանն (Փող հարկանի եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն: Կամ յարիցեն մեռեալք կամ այլ ինչ), էջ 625:

[115] *The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite*, edited by Robert W. Thomson, Lovanii, in Aedibus E. Peeters, 1987. /Corpus Scriptorum Christianorum Orientalium. Scriptores Armeniaci. Tomus 17. vol. 488/. Առ քահանայակիցդ Տիմոթէոս ի Դիոնիսէ քահանայէ, VII, 1.2, p. 115. տե՛ս նաեւ *Գիրք հարցմանց*, հտ. Ժ, պրակ ԺԲ, էջ 691. *Ամառան*, գլ. ՃԿԵ. Նորին հաւաքեալ քարոզ Յարութեանն, ի բանն (Փող հարկանի եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն: Կամ յարիցեն մեռեալք կամ այլ ինչ), էջ 625:

մեռելոց, որպէս օր շաբաթուն, որ հանգիստ լսի: Եւ ութ դարն է յարութեան եւ հատուցման ըստ գործոց, որպէս օր Կիրակէին Յարութեան, որպէս ասէ Աւետարանն. «Մեռեալք լսիցեն, եւ եկեսցեն ոմանց՝ յարութիւն կենաց, եւ ոմանց՝ յարութիւն դատաստանաց» (հմմտ. Յովհ. Ե 25-27): Իսկ թէ հոգիք արդարոց եւ մեղաւորացն որպէս իցեն՝ ասացաւ յառաջին ճառն[116]: Տե՛ս, զի եւ ինքն երանելին Յոբ հոգոյ ակամբն տեսեալ զյարութիւնն եւ զհատուցումն ասէ ի յԸրդ (8-րդ) ճառիս[117]:

Անբժշկական փայտ (ԻԴ 20)՝ զայրեցումն /56բ/ մարմնոյն ասէ անշէջ հրով: Ոչ հաւատասցէ կենաց չարչարանք մտացն է, հիւանդ առանց ողջութեան զհոգոյն չարչարանս: Ցճշմարիտ բանն ոչ լսողքն ի սուտ փոխարկեն, եւ զլոյսն՝ ի խաւար, եւ զբարին՝ ի չար, որպէս հիւանդք զառողջ կերակուրն ի մաղձ փոխարկեն:

Գ. ԿՐԿՆԵԱԼ ԲԱՂԴԱՏԱՅ[118]

[Բան]. Դարանակալ[119] *(հմմտ. Իե 3):*

Լուծումն. Ծածուկ բարկութիւնն է: Յոբ եւ բարեկամքն իւր մի ունին զդիտումն, այսինքն՝ զամբարշտաց պատուհասն եւ բարեացն պարգեւս: Այլ զանազանին, զի Յոբ երկայնամտել ասէ, եւ ի վերջոյ՝ զհատուցումն, եւ նոքա ի մերձակայս, եւ աստ ի մարմնի: Եւ դէմք ամբարշտաց զՅոբ դնէին:

---

[116] Տե՛ս ՍՍ 1115, թ. 15բ:
[117] Տե՛ս ՍՍ 1115, թ. 54աբ:
[118] Հմմտ. ՍՍ 1166, թ. 59ա:
[119] Հոբի գրքի աստվածաշնչյան բնագրում եւ Վանական Վարդապետի նույնանուն քաղվածո մեկնության մեջ՝ *դարանակալութիւն*. հմմտ. ՍՍ 1166, թ. 59բ. «Յո՞յր վերայ ոչ եկեսցէ դարանակալութիւն առ ի նմանէ»:

ՎԱՍՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՄԵՂԱՑ ԱԴԱՄԱՅ[120]

Մեղք ամենայն մարդոյ ի նախնի ծնօղացն է, սոյնպէս չորիւք. նախ՝ զի լուաւ օձին: Երկրորդ՝ ցանկացաւ պտղոյն: Երրորդ՝ հեշտացաւ ի տեսն: Չորրորդ՝ կերան զպտուղն եւ մերկացան եւ այլն: Եւ սոյնպէս յանցաւոր եղեւ Ադամ եւ ամենայն ծնեալքն ի նմանէ, որպէս արմատ ծառոյ ապականեալ եւ ստեղունքն չորացեալ: Իսկ յիւրաքանչիւր ծնունդս չորիւք ժողովին սկզբնական մեղքն, այսինքն է ցանկութիւն, հեշտութիւն, աղտեղութիւն, ապականութիւն: Արդ ցանկութիւն միայն հոգւոյն է, եւ աղտն միայն մարմնոյն: Հեշտութիւն՝ հոգւոյն եւ մարմնոյն, եւ ապականութիւն՝ գործոյն, որ է հատումն երկուց սկզբանցն: Յայսցանէ լինի մի մարմին զաւակին: Ըստ այնմ. /57ա/ «Եղիցին երկոքին ի մարմին մի» (Ծնն. Բ 24): Եւ յասմանէ լինի ապականացու մարմին, զայս ասէ մարգարէ. «Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ» (Սաղմ. Ծ 28):

ՎԱՍՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՄԵՂԱՑ

Հարց. Զի՞նչ է սրբութիւն սկզբնական մեղաց:

Պատասխանի. Երեք ինչ. նախ՝ զբնական օրէնքն սերմ եդ Աստուած ի բնութիւնս մեր ընդդէմ սկզբնականին: Եւ սովաւ արդարացան նահապետքն մինչ յԱբրահամ: Երկրորդ՝ զթլփատութիւնն եդ ընդդէմ սկզբնականին ի նոյն ծնունդական մասն հատումն եւ կսկիծ, եւ արիւն: Եւ սոքա տկարացան, զի մարմնականք էին եւ մասնաւորք: Երրորդ՝ զմկրտութիւնն կացոյց Քրիստոս ընդդէմ սկզբնական մեղացն, զի կատարեալ սրբութիւն է. եւ հոգեւոր, եւ աստուածային ծնունդ: Եւ կատարելութիւն սորա է յերկուց իրաց. նախ՝ զի մկրտութիւնն ընդդէմ է սկզբնական մեղացն Ադամայ այնու, զի նախ հրաժարեմք ի սատանայէ եւ ճաշակեմք զպտուղն կենաց եւ զայլն: Այլեւ ընդդէմ է իւրաքանչիւր

[120] Հմմտ. ՄՄ 1166, թ. 59բ:

սկզբնական մեղաց այնու, զի դաւանեմք զհաւատն եւ սրբիմք ջրով, եւ զգենումք զանապականութիւն: Այսպէս ընդդէմ է մկրտութիւնն ծնօղաց մեղացն եւ սկզբնականին: Դարձեալ ունի զխորհուրդ տնօրէնութեանն Քրիստոսի. նախ՝ զկուսական արգանդին, զի հոգովն ծնանիմք ի կոյս աւազանէն: Երկրորդ՝ զմկրտութեանն ի Յորդանան, զի յԵրրորդութիւնն մկրտիմք եւ լինիմք շնորհօք որդիք Աստուծոյ: Երրորդ՝ ունի զխորհուրդ Խաչին, զի ի մահն Քրիստոսի մկրտիմք թաղմանն եւ Յարութեանն, եւ Համբարձմանն ի յերկինս: Յաղագս այսորիկ մկրտութիւնն կատարեալ սրբութիւն է ամենայն մեղաց: Այսքան առ այս: /57բ/

ՎԱՍՆ ԱՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱԾՈՑ[121]

Հարց. Զի՞նչ է՝ արարածոցս ապականութիւն եւ նորոգութիւնն, որպէս ասէ առաքեալ. Արարածք հեծեն զի ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան (հմմտ. Հռոմ. Ը 21):

Պատասխանի. Մարդն գլուխ էր երեւելի արարածոց եւ ի Դ (4) տարերց: Յորժամ ապականեցաւ մեղօք՝ ապականեցան եւ ընդ նմա արարածք. նախ՝ չորս տարերք եւ ապա՝ լուսաւորքն, զի ի տարերացս են եւ երեւելիք: Եւ յորժամ դատապարտեցաւ մարդն անիծիւք, ընդ նմին դատապարտեցան եւ այլ արարածք: Արդ յառաջին գալուստն Քրիստոսի, որ ազատեաց զմարդն ի մեղաց, ազատեցան եւ այլ արարածք յապականութեանց մեղաց, ըստ որում թաղեցաւ եւ մկրտեցաւ եւ այլն: Իսկ յերկրորդ գալուստն, յորժամ ազատին մարդիք ի դատապարտութեանց մահու եւ յապականութեանց, ազատեսցին եւ ամենայն արարածք յանիծիցն եւ յապականութեանց իւրեանց: Թէ որպէ՞ս որդն կոչի Տէր մեր (հմմտ. Յովհ. ԺԵ 1, 5), տե՛ս ի Քաղուածոյ Սաղմոսին[122]:

---

[121] Հմմտ. ՄՄ 1166, թ. 59բ:

[122] Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, *Մեկնութիւն Սաղմոսաց* (համառոտ տարբերակ), աշխատ.՝ Ա. Քյոշկերյանի, Երեւան, 1993, էջ 72:

Հարցումն. Զի՞նչ է՝ ամենայնիւ նմանեաց մեզ,
բաց ի մեղաց[123]*:*

Պատասխանի. Այսինքն զի բոլոր զհոգի, զմարմինն եւ զմիտս եւ զգայութիւնս ներքին եւ արտաքին, եւ այլովն ունէր, այլ ոչ ունէր զմեղս սկզբնական եւ ոչ զներգործական: Դարձեալ վեցիւք անանման է մեզ. նախ՝ զի ամենայն ոք սկզբնական մեղօքն ծնանիմք, որպէս ցուցաւ, այլ Քրիստոս ի սրբեալ արենէ Կուսին: Երկրորդ՝ ի հօրէ եւ ի մօրէ, այլ Քրիստոս միայն ի մօրէ: Երրորդ՝ զի ապականացու մարմին, այլ նա անապական մարմին յանապական արգանդէ: Չորրորդ՝ զի մարդ միայն եմք, այլ Տէր մեր Աստուած մարդացեալ: /58ա/ Հինգերորդ՝ զի Բ (2) գոյացութիւն է մեր, այսինքն՝ հոգի եւ մարմին, այլ նա Գ (3) գոյացութիւն, այսինքն՝ բանն եւ հոգի, եւ մարմին միաւորեալ: Վեցերորդ՝ մինչ ի Խ (40) օրն կատարիմք, այլ նա ի քթթելական[124] Խ (40) օրեայ մանուկ գոյացաւ, զի հինգ սքանչելիք ասեն վարդապետք ի վայրկեան ժամու, այսինքն՝ բաժանումն արեան եւ թարձրանալ, եւ ձեւանալ, եւ հոգեւորիլ, եւ աստուածանալ: Ի նոյն կէտն եղեւ յորժամ էջ Բանն Աստուած ի յարգանդ Կուսին: Այսքան առ այս:

---

[123] Հմմտ. ՍՍ 1166, թ. 59բ-60ա:

[124] Թարթափել, թօթափել ական, թարթել աչաց. տե՛ս ՆԲՀԼ, հտ. Բ, էջ 1005:

Թ. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ՅՈԲԱՅ ԻՆՆԵՐՈՐԴ ՃԱՌՍ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ, ԱՒԱՐՏԵԱԼ ՁԽՈՐՀՈՒՐԴ ՈՒԹԵՐՈՐԴԻՆ[125]

Այժմ ասէ վասն Արարչին արարածոց կրկին ճառս ի դէմս Սրբոյ Երրորդութեանն: Եւ գիտելի է, զի արարչութիւնն կրկին է. նախ՝ առնել: Երկրորդ՝ նորոգել: Եւ սոքա եւս կրկին բաժանին: Առնելն. նախ՝ ստեղծանել, երկրորդ՝ նախախնամել: Եւ նորոգելն կրկին. նախ՝ ի մեղաց, երկրորդ՝ յապականութեանց: Զոր ցուցանէ ի ճառիս ընդդէմ այնմ, որ ասաց Բաղդատ. Լուսին եւ աստեղք չեն սուրբ առաջի նորա (Իե 5): Ի չորս բաժանին խօսել եւ լռելն այսպէս. է՛, զի խօսել եւ լռելն բարի է, եւ է՛, զի խօսել եւ լռելն չար, է՛, զի լռելն բարի եւ խօսելն չար, եւ է՛, զի լռելն չար եւ խօսելն բարի, եւ ի չորիցս այս: Դարձեալ չորս է ընտրելն, այսինքն զժամանակն եւ զտեղին, եւ զդէմքն, եւ զբանն: Եւ այսոքիկ պիտոյ են ամենայն իմաստնոց:

Բան. Յո՞մտիցիս (ԻՁ 2):

Լուծումն. Զի անմատչելի է եւ անճառ եւ անհաս:

Բան. Ո՞ւմ օգնես (ԻՁ 2):

Լուծումն. /58բ/ Բանք բարեկամացն չորիւք անյարմար է. նախ՝ սուտ խօսին, զի զԱստուած արդար ասեն եւ զվկայութիւն նորա անիրաւ: Երկրորդ՝ անարժան, զի կցկցուն բանիւ օգնեն: Երրորդ՝ անհաճոյ [է] Աստուծոյ տկարին ոչ օգնել: Չորրորդ՝ չար է բանիւ խոցելն: Զօրութիւն եւ իմաստութիւն եւ այլն, այն է, որ ասէ Դաւիթ. «Մեծ է Տէր մեր եւ մեծ է զօրութիւն նորա, իմաստութիւն նորա ոչ գոյ բաւ» (Սաղմ. ՃԽՁ 5): Եւ կրկին է զօրութիւնն, այսինքն ի ներքս առ Աստուած անձն է եւ գոյացութիւն, իսկ արտաքս ներգործութիւն է զօրութիւնն Աստուծոյ: Նոյնպէս իմաս-

[125] Հմմտ. ՄՄ 1166, թ. 60ա:

տութիւնն անձնաւոր գոյացութիւն, եւ ի մեզ հասեալ իմաստութեանն ներգործութիւն: Այսպէս Բանն Աստուծոյ էութիւն անձնաւոր եւ առ մեզ հրամանն Աստուծոյ եւ ներգործութիւն բանին: Նմանապէս եւ շունչ, եւ կենդանութիւն եւ այլն: Դժոխք երեք են. նախ՝ սիրտ ամբարշտաց: Երկրորդ՝ գերեզմանք մեռելոց: Երրորդ՝ տանջանք հոգւոց: Զի դժոխք է տեղիք դժուարին անմաքուր հոգւոց տխուր կապարան: Տե՛ս յարարչութիւն. նախ՝ զերկիրս ասէ վասն Դ (4) պատճառի. նախ՝ որպէս Դաւիթ ասաց: Երկրորդ՝ յերկրէս ի վեր ելանէ: Երրորդ՝ եւ Տէրն նախ մարմին եղեւ եւ ել յերկինս: Չորրորդ՝ եւ մեք խոնարհիմք եւ ապա բարձրանամք:

Բան. Զգեաց զհիւսիսի (ԻԶ 7):

Լուծումն. Հիւսիսոյ կողմ բարձր է, եւ հարաւ՝ խոնարհ: Եւ երկինքն շրջի ոչ որպէս երկանաքար եւ ոչ որպէս սայլ, այլ որպէս ձիթաղացի քար ի վերայ բեւեռան հիւսսւոյ, որ բարձր է եւ հարաւոյն՝ ի խոնարհ: /59ա/ Եւ արեգակն, յորժամ խոնարհի, վերին ծիրն փոքր է եւ ներքինն՝ մեծ, զի ստորոտ լերանցն լայն է, գիշերն մեծ լինի: Եւ յորժամ բարձրանայ ի վերին ծիրն, գլուխ լերանցն նուրբ է, գիշերն փոքր է, եւ ծիր արեգական հաւասար է: Վասն այն ԻԴ (24) ժամն ո՛չ առաւելու եւ ո՛չ նուազի: Իսկ թէ ծանր եւ թանձր երկիրս ի մէջ այլ տարերցն որպէս է, տե՛ս ի Գիրս հարցմանց, ի Դ (4), ժէ (17) համարն[126]:

Բան. Ի վերայ ոչընչի (ԻԶ 7):

Լուծումն. Այսինքն զի ոչ է յէիցս եւ ոչ տեսանելի կամ շօշափելի, այլ զօրութիւնն Աստուծոյ: Առաքեալ ասէ. «Որ կրէ զամենայն բանիւ զօրութեան նորա» (Եբր. Ա 3): Եւ մարգարէն. «Ի ձեռս նորա են ամենայն տիեզերք» (Սաղմ. ՂԴ 4): Եւ դարձեալ. «Հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի սասանեսցի յաւիտեան» (Սաղմ. ՃԳ 5): Արեւելք է հայր, որպէս արեգակն՝ ծագման լուսոյն: Արեւելք է մայրն որպէս կողմ երկրի:

---

[126] Տե՛ս *Գիրք հարցմանց,* հտ. Դ, պրակ ժէ, էջ 181-182:

Բան. Անծրեւ կանուխ եւ անագան (ԻԹ 23):

Լուծումն. Չորս է իմացումն. նախ՝ հին օրէնքն եւ նորս: Երկրորդ՝ Տեառն քարոզելն եւ Հոգւոյն իջումն: Երրորդ՝ Բանն գրեալ եւ մեկնութիւն յետոյ: Չորրորդ՝ աստ եւ ի հանդերձեալն: Այդն աթոռ է. նախ՝ ամպոյ: Երկրորդ՝ թռչնոց: Երրորդ՝ լուսոյ: Չորրորդ՝ տեսչութեանց: Հինգերորդ՝ բանից: Վեցերորդ՝ ձայնից եւ այլոց:

Բան. Հրաման Տեառն զերեսօք ջուրց (ԻՁ 10):

Լուծումն. Նախ՝ հոգին, որ շրջէր ի վերայ ջուրց եւ պտղաձնէր զկենդանիս: /59բ/ Երկրորդ՝ ձայն Տեառն ի վերայ ջուրց աւազանին: Երրորդ՝ նախախնամութեան բանն, որ փոխէ ի սառն եւ ի ձիւն: Չորրորդ՝ գիտութեանց ջուրց, զի յայտնիքն՝ մեզ, եւ ծածուկքն՝ Տեառն Աստուծոյ:

ՎԱՍՆ ԼՈՒՍԱՒՈՐԱՑ[127]

Բան. Սիւնք երկնից (ԻՁ 11):

Լուծումն. Նախ՝ լուսաւորք, եւ ապա՝ հրամանն Աստուծոյ, որ վարէ զնոսա: Եւ բազում է պիտանութիւնք լուսաւորացդ եւ ասեմք Ժ (10) կերպիւ. նախ՝ զի ցուցանեն զբարձրութիւնս երկնից: Երկրորդ՝ ցուցանեն զգօտիս իւրեանց: Երրորդ՝ զշարժութիւնն երկնից: Չորրորդ՝ զչորս կողմունքն: Հինգերորդ՝ զբոլոր ձեւն երկնից: Վեցերորդ՝ առնեն զժամանակն: Եւթներորդ՝ գործեն զԴ (4) յեղանակս: Ութերորդ՝ լինին նշանք: Իններորդ՝ զարդարեն զարտաքին սրահն երկնից: Մետասաներորդ՝ օրինակ են յարութեան արդարոց, որպէս ասէ առաքեալ: Զի մեք ի բարձունս տեսեալ զայս ամենայն ի միտ ածցուք:

ՎԱՍՆ ՇԱՐԺՄԱՆՑ[128]

Շարժումն երկրի լինի նախ բնական, սոյնպէս յորժամ հողմն, որ է ի մէջ երկրի, վտարի ի ճանապարհէ իւրմէ եւ խնդրէ ելս, եւ

---

[127] Հմմտ. ՍՍ 1166, թ. 61ա:
[128] Հմմտ. նույն տեղում:

շարժէ զերկիր, մինչեւ պատառէ եւ ելցէ, որպէս ասէ յԱշխարհացն Արիստոտէլի[129]: Այլեւ լինի շարժումն ի խնամոցն Աստուծոյ, ո՞հայի յերկիր եւ դողայ, որպէս առ Խաչին եւ Յարութեանն եղեւ:

Ախն (ԻՁ 13) փակն է, եւ հիմն՝ երկրի:

ՎԱՍՆ ՈՐՈՏՄԱՆՑ[130]

(ԻՁ 14) Եւ լինի որոտն ի հողմոյն, յորժամ պատառէ զամպն, զի գոլորշիքն ելեալ յերկրէ նիւթ/60ա/ական օդ է եւ ջերմ գիջութեամբ: Եւ յորժամ թարձրանայ եւ լինի ամպ գիջութիւնն՝ հոսի անձրեւ, հողն խտացեալ լինի կայծակ, եւ ջերմութիւնն՝ փայլակ: Եւ օդն պատառէ զամպն եւ լինի որոտ:

Հարցումն. Վասն է՞ր է, որ ի ձմեռն որոտ ոչ լինի:

Պատասխանի. Վասն զի գարնան ամպն ի գոլորշեաց ժողովի, որպէս ցուցաւ, եւ ձմեռն երեսն երկրի պաղեալ է, ոչ լինի գոլո[ր]շի: Այլ ամպն ի գիջութենէ ջուրց ժողովի եւ լինի ձիւն եւ այլն: Անկումն դիւաց մահ է նոցա եւ որպէս մեռեալն անզեղջ մնայ, նոյնպէս եւ դեւք: Եւ որպէս մեռեալն յետոյ տանջի, նոյնպէս եւ դեւք ի կատարածի:

---

[129] **Արիստոտէլ**, *Յաղագս աշխարհի,* էջ 615-616:
[130] Հմմտ. ՄՄ 1166, թ. 61բ:

Ժ. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՃԱՌՍ[131]

Ա նդ ասաց վասն զօրութեանն Հօր (ԻԳ գլ.), աստ ասէ վասն իմաստութեանն Որդւոյ եւ Հոգւոյն Սուրբ (ԻՁ 2, 12): Եւ զի լռեցին բարեկամքն յաւելու զայս յառակն իւր, որ ասաց յԹ (9) ճառին:

Բան. Կենդանի է Տէր (ԻԷ 2):

Լուծումն. Նախ՝ շնորհակալի վասն յաղթութեանն: Երկրորդ՝ կենդանի բանիւն եհար զնոսա: Երրորդ՝ զի կենդանի պահեաց զնա: Չորրորդ՝ ճշմարիտ է ի դատելն: Այրէնքն հին մարմնական էր եւ մասնաւոր, եւ տկար, եւ ժամանակեայ, եւ նորս ընդդէմ է չորիցս: Չորս կերպ է արդարութեան. Ե՛ն, որ մասամբ են արդար, որպէս հինքն կամ որ հաւատք ունին եւ ոչ գործք: Ե՛ն, որ փոխին յարդարութենէ, որպէս Սողոմոն, այս ան/60բ/կատար են: Ե՛ն, որ բոլոր ունին զարդարութիւնն հոգւոյն եւ մարմնոյն: Եւ ե՛ն, որ ոչ փոխին՝ ո՛չ բանիւ եւ ո՛չ գործով, այս կատարեալ է: Վեց մեղս ունէին բարեկամքն Յոբայ. նախ՝ զի անհաւատ էին վկայութեանն Աստուծոյ: Երկրորդ՝ զի մեղաւոր կարծէին զՅոբ: Երրորդ՝ զի բամբասէին: Չորրորդ՝ նախատէին: Հինգերորդ՝ զի ոտնհար լինէին: Վեցերորդ՝ լուտական բանիւք:

Բան. Արուեստք[132] (հմմտ. ԻԷ 10-11):

Լուծումն. Նշանքն եւ իմաստութիւնն ի ձեռքն, որ գրելովն լինի: Անհաս է Աստուած վեցիւք. նախ՝ զի ոչ իմանի: Երկրորդ՝ զի ոչ տեսանի: Երրորդ՝ զի ոչ ճառի: Չորրորդ՝ ոչ ըմբռնի: Հինգերորդ՝ ոչ պարագրի: Վեցերորդ՝ ոչ սահմանի: Զանհասն ասաց յառաջին ճառս. Յո՞ մօտիցիս (ԻՁ 2) եւ այլն[133]:

---

[131] Հմմտ. ՍՍ 1166, թ. 61բ:
[132] Հմմտ. ՍՍ 1166, թ. 62բ:
[133] Տե՛ս ՍՍ 1115, թ. 58բ:

Բան. Սնոտին սնոտեօք պատեալ[134] *(ԻԷ 12):*

Լուծումն. Չորս կերպիւ է. նախ՝ բանն սուտ եւ սուտ բանիւ պաճուճեալ, որպէս ստախաւսքն: Երկրորդ՝ գործքն սուտ եւ սուտ գործով ծածկեն, որպէս կեղծաւորք: Երրորդ՝ գործք սուտ եւ սուտ բանիւ ծածկեն եւ պատճառեն: Չորրորդ՝ բանն սուտ եւ սուտ գործով պատեն, որպէս մարդահաճոյք:

Բան. Ի վերայ ամբարշտաց ստացուած
հզօր եկեսցէ (ԻԷ 12):

Լուծումն. Նախ՝ որպէս մարդն բարի է բնութեամբ, այլ գործով զչարն ստանայ, նոյնպէս Աստուած բարի է բնութեամբ եւ ներգործութեամբ տանջէ: Երկրորդ՝ մեծ մեղացն մեծ է պատիժ, ըստ այնմ. «Հզօրք հզօրագոյնս տանջին» (հմմտ. Իմաստ. Սող. Զ 7): Երրորդ՝ որք մեղանչեն նովին եւ տանջին, որպէս փարաւոն տանջեցաւ: Չորրորդ՝ որ պատրաստէ այլոց չար եւ իւրն պատրաստ /61ա/ ի չար, որպէս սատանայի: Այժմ ասէ զպատիժն մարմնոյ ըստ կարգի, յետոյ ասէ զհատուցումն հոգւոց չարեաց: Վասն ցեցոյն ասացաւ նախ սարդն (հմմտ. ԻԷ 18) չորս յատկութիւն ունի[135]. նախ՝ ի բնութենէն հանէ զթելն: Երկրորդ՝ որոգայթ կազմէ: Երրորդ՝ անպիտան է: Չորրորդ՝ դիւրաւ պատառի:

ՎԱՍՆ ՄԵԾԱՏԱՆՑ[136]

(ԻԷ 19) Կրկին է մեծատուն՝ բարի եւ չար, եւ չորիւք որոշին: Բարի մեծատուն է. նախ՝ զի հալալ է ինչքն: Երկրորդ՝ գոհանայ զտուողէն: Երրորդ՝ ոչ տրտմի եւ ոչ ուրախ լինի: Չորրորդ՝ ի պէտս

---

[134] Հմմտ. ՍՍ 1166, թ. 63ա:

[135] Հմմտ. *Փիլոնի Եբրայեցւոյ Բանք երեք չեւ ի լոյս ընծայեալք*, աշխատ. հ. Մկրտիչ վրդ. Աւգերեանց, Վենետիկ, 1822. Յաղագս կենդանեաց, էջ 163. *Վեցօրեայք Գէորգայ Պիսիդեայ իմաստասիրի*, տպ. հանդ. յոյն բնագրաւ եւ լուսաբանեալ ի հ. Աթ. վ. Տիրոյեան, Վենետիկ, 1900, էջ 122:

[136] Հմմտ. ՍՍ 1166, թ. 62բ-63ա:

կարօտելոց բաշխէ: Իսկ չար մեծատուն է. նախ՝ զի ագահութեամբ ժողովէ: Երկրորդ՝ մոռանայ զՏէր: Երրորդ՝ զյոյսն ի յինքենէ կապեալ: Չորրորդ՝ ի չարիս ծախէ:

ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՀՈՒ[137]

Յարութիւնն երկու ինչ հասարակաց է. նախ՝ յարութիւնն: Երկրորդ՝ անմահութիւնն: Վասն շնորհացն Աստուծոյ եւ վասն բնութեան մերոյ: Եւ այլն ամենայն ըստ գործոցն զանազանի:

Հարց. Վասն է՞ի մեռելոյն աչքն ի բաց մնայ:

Պատասխանի. Վասն չորից. նախ՝ զի շարժականն ջիլք պաղի, վասն որոյ զգայարանքն ի բաց մնան: Երկրորդ՝ վասն մեծի վշտին ոչ կարէ խփել: Երրորդ՝ զի անքթիթ եւ ողորմագին հայի ընդ եկեալ հրեշտակն: Չորրորդ՝ զի յայնժամն եբաց ի հոգեւորն, որ անօգուտ է խաւար մեղացն եւ յիշումն տանջանաց յետ մահուն ըմբռնէ զհոգին: Եւ /61բ/ զայլն վասն դատաստանին ասէ:

Ծափն (ԻԷ 23) երիս նշանակէ. նախ՝ հեշտութեան, որպէս դիւաց վաշվաշ անծանց, զի ընկլուզաք զնա: Երկրորդ՝ զղջանաց, որպէս մեղաւորն բերանք հաշին ասէ: Երրորդ՝ այպանաց, բնակեալն յերկինս ծիծաղեսցի: Ոսկին տեսականն է, եւ արծաթն՝ գործնական (ԻԸ 1-2): Զի բանիւն եւ հաւատովն եմք պատկեր Աստուծոյ, որպէս դահեկանն եւ այլ արծաթք:

Բան. Կղկղել (ԻԸ 1):

Լուծումն. Ընտրել եւ սրբելն է ի հողոյ է (7) պատիկ մինչեւ լինիցի դրամ:

---

[137] Հմմտ. ՍՍ 1166, թ. 63բ:

ՏԻՒ ԵՒ ԳԻՇԵՐ[138]

(ԻԸ 3) Չորս կարգ է տունջեան եւ գիշերոյ. նախ՝ զի փոխեն զմիմեանս կարգաւ: Երկրորդ՝ ի միմեանս ոչ փոխին, զի միշտ տիւ է ընդ արեգական: Եւ միշտ գիշեր է, ուստի պակասի: Երրորդ՝ ի կատարածի միշտ լոյս ի վերայ երկրի, եւ միշտ խաւար՝ ի ներքոյ: Չորրորդ՝ ի լուսոյ սկսեալ ի լոյսն վախճանի: Այսպէս եւ սուրբք ի մարդկանէ են, իսկ չարքն որպէս գիշեր: Այժմ յուսով ապրեցաք, եւ ի վախճանի արդեամբ փրկէ եւ ազատէ ի մեղաց եւ յապականութեանց:

Բան. Բնութեամբ մարգարէութիւնք (հմմտ. ԻԸ 4, հմմտ. նաեւ Սիրաք ԼԹ 1):

Լուծումն. Որպէս մարգարէքն բանիւ ուսուցանեն, նոյնպէս պատուական նիւթքս բնաբար ուսուցանեն զԱրարիչն, որ պատուական է բնութեամբ եւ ծածուկ:

ՎԱՍՆ ՁԱՐԴՈՒՑ ԵՐԿՐԻ[139]

Երկիր եւ ի նմանէ հաց, եւ ի ներքոյ նորա հուր շրջեցաւ (ԻԸ 5): Չորս են զարդք երկրի. /62ա/ նախ՝ պատուական նիւթք՝ ակն, մարգարիտ, ոսկի, արծաթ, որպէս ասաց: Երկրորդ՝ բոյսք եւ տունկք: Երրորդ՝ կենդանիք ի վերայ երկրի: Չորրորդ՝ մարդն զարդարէ զերկիր: Այժմ վասն բուսոց ասէ: Եւ վեց մտաւք ասեն վարդապետք. նախ՝ երկիր չորս ինչ ցուցանէ. նախ՝ զի երկու իր է՝ հող եւ ջուր: Երկրորդ՝ երկու որակ ունի: Երրորդ՝ կրակ անէ: Չորրորդ՝ երկիւղ ունի: Եւ հուր շրջեալ, զի նախ գերազանցիկ լոյսն յերկիր իջեալ եւ զջերմութիւնն, որ ի սիրտն է, ժողովեալ շարժէ: Եւ ապա՝ բուսանին դալարիք: Երկրորդ՝ երկիր կոչէ զԿոյսն սուրբ վասն խոնարհութեան նորա, եւ հաց՝ մարմինն Տեառն: Եւ ի ներքոյ հուրն, զի նախ էջ Բանն Աստուած, եւ ապա զհոգի եւ զմարմին միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն,

---

[138] Հմմտ. ՄՄ 1166, թ. 64ա:
[139] Հմմտ. ՄՄ 1166, թ. 64ա-65ա:

որպէս ենթակայ: Եւ նախ՝ եդեալ հիմն: Եւ շրջեցաւ, զի ոչ կիզեաց զյորովայն Կուսին: Երրորդ՝ երկիր՝ եկեղեցի, եւ հաց՝ սուրբ մարմինն պատարագեալ, որ ի յերկնից իջեալ, եւ հաստատէ զսիրտ մարդոյ եւ հուրն մաքրիչ, զոր եկն արկանել Տէրն, զի նախ՝ խոստովանիմք եւ ապա՝ հաղորդիմք: Եւ արիւնն Յիսուսի սրբէ զմեզ ի մեղաց: Չորրորդ՝ երկիր՝ հոգիս բանական, եւ հաց՝ գործք բարեաց, եւ հուր՝ ջերմութիւն սիրոյն, որ առ Աստուած, որպէս հուրն ի ներքոյ եփէ զհացն եւ ապա լինի կերակուր: Հինգ եւ վեցերորդ՝ երկիր՝ սիրտ առաքելոցն, յորում թաղեցաւ խորհրդաբար, այլեւ գերեզմանն, յորում եդաւ մարմինն կենարար ան/62բ/բաժանելի ի հրոյ աստուածութեանն: Նոյնպէս հոգին էջ ի դժոխս միաւորեալ աստուածութեամբն, եւ լոյս ծագեաց խաւարեալ հոգւոցն, եւ զթշնամին այրեաց եւ կապեաց: Ըստ այնմ. «Հուր բորբոքեցաւ ի բարկութենէ [իմմէ], այրեսցէ եւ իջցէ ի դժոխս» (հմմտ. Բ Օրէնք ԼԲ 22):

Բան. Ծափիւղա տեղի նորա (ԻԸ 6):

Լուծումն. Ակն է ծիրանէգոյն եւ ի հնդիկս գտանի: Եւ մի է յԲժն (12) ականց քահանայապետին, զոր ետես մարգարէ ի տեղի ոտիցն Աստուծոյ աղիւսանման, որ նշանակէր զԽաչն, իսկ աստ՝ զԿոյսն սուրբ չորիւք առաքինութեամբ: Այսպէս եւ ամենայն սուրբք. նախ՝ զի յերկրէ: Երկրորդ՝ ի յազդմանէ լուսաւորացն: Երրորդ՝ պարզեալ: Չորրորդ՝ լուսափայլ:

Սրատես է արծուի եւ հեռահայաց անգղ (ԻԸ 7): Իշխանութիւն եւ պետութիւն ոչ է կրկնաբանութիւն. նախ՝ զի ոչ ծանեաւ զաստուածութիւնն եւ ոչ արկածիւք զմարդկութիւնն: Երկրորդ՝ ոչ զիջանելն եւ ոչ զելանելն: Երրորդ՝ ոչ զտնօրէնութիւն Տեառն եւ ոչ զփրկութիւն մարդկան: Եւ ոչ միայն դեւք, այլեւ երկնաւորքն յեկեղեցւոյ ուսան:

Վէմ՝ Քրիստոս, եւ օձ՝ թշնամին, նաւ ի ծովու՝ տնօրէնութիւնն, արծուի՝ յօդս վերանալն:

Բան. Որք զխորհուրդն Աստուծոյ գիտեն:

Լուծումն. Այլեւ զգան զխորհուրդ չարին:

Տեղիք ջերմ եւ խոր եւ դժուարին դժոխքն է (ԻԸ 3): Եւ օրինակս Եպիփանու կրկին իմացումն տայ. նախ՝ զի զամենայն հոգիսն ազատեաց Քրիստոս, զի ոչ միայն զակն, այլ /63ա/ եւ աւազ ըմբռնէ շաղիղն[140]: Երկրորդ՝ քարանձաւն է կայանք հոգւոցն, ուստի սրբոց հոգիքն ելանեն յերկինս, եւ մեղաւորացն՝ ի դժոխս, ըստ Դաւթի. «Դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս» (Սաղմ. Թ 18): Ապառաժ (ԻԸ 9) էր խորհուրդ եւ սիրտ հեթանոսացն, զորս պտղաբերս արար: Մոլեկան դիւականն է: Մարգարէք եւ առաքեալք գետք եւ աղբիւրք (ԻԸ 10) կոչին վասն չորից. նախ՝ զի մշտաբուխք են: Երկրորդ՝ ընթացողք ի վերայ երկրի: Երրորդ՝ շահաւէտք: Չորրորդ՝ ի ծովէ ելեալ եւ ի ծով մտեալ իմաստիցն Աստուծոյ:

ՎԱՍՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՆՃԱՐՈՅ[141]

(ԻԸ 12) Վասն սոցա ասացաւ յառաջագոյն: Եւ այժմ ասելի է երեք կերպիւ. նախ՝ իմաստութիւն է Որդին եւ հանճար Հոգին Աստուծոյ: Երկրորդ՝ իմաստութիւն է Բանն եւ հանճար, յորժամ երեւեցաւ մեզ: Երրորդ՝ իմաստութիւն է աստուածպաշտութիւն, եւ հանճար՝ գործք սուրբ, որպէս ասէ յետոյ: Դրոյլ[142]՝ դռնապանն է (հմմտ. ԻԸ 13): Մովսիսի ասացաւ՝ անհնար է տեսանելն զԱստուած: Ի չորս բաժանին եւ մինն է անհնար, այսինքն՝ մարմին զանմարմինն Աստուած տեսանել եւ այս հնարաւոր եղեւ

---

[140] Հմմտ. **Սուրբ Եպիփան Կիպրացի**, *Ճառք*, աշխատ.՝ Հ. Քեոսեյանի, Ս. Էջմիածին, 2013, Ճառ ԼԵ. Նորին ի նոյն խորհուրդ թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, էջ 538-541: Հարկ է նշել, որ Վանական Վարդապետի քաղվածո մեկնության՝ ՄՄ 1166 ընդօրինակության մեջ առկա է *Եպ* լուսանցային հապավումը:

[141] Հմմտ. ՄՄ 1166, թ. 65ա:

[142] Նույն իմաստով է բացատրում նաեւ Բարսեղ Մեծը. հմմտ. **Բարսեղ Կեսարացի**, *Գիրք պահոց*, աշխատ.՝ Կ. Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2008, ԼԳ. Յաղագս ողորմածութեան եւ յաղագս աղաւթից, էջ 460:

մարդեղութեամբն, իսկ անմարմին՝ զմարմին տեսանել: Եւ անմարմին զանմարմին, որպէս յետ մահու: Եւ մարմին զմարմին տեսանեմք ի կեանս:

ՎԱՍՆ ԱՆԴԸՆԴՈՑ[143]

(ԻԸ 14) Անդունդն չորս ինչ նշանակէ. նախ՝ զներքին խորս, որպէս դժոխք: Երկրորդ՝ զանշարժն, որպէս մահ: Երրորդ՝ զանբաւն, որպէս ծովք: Չորրորդ՝ զունայնն, որպէս կորուստ:

ՎԱՍՆ ՄԱՀՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ճշմարիտ էր մահն Քրիստոսի, այնու, զի հոգին բաժանեցաւ /63բ/ եւ էջ ի դժոխս եւ մարմինն եդաւ ի գերեզմանի: Այլ երիւք զանազանի. նախ՝ զի կամաւ մեռաւ: Եւ յայտ է, զի խոնարհեցոյց զգլուխն: Եւ ի ձայն աղաղակեաց եւ խնուլ աչացն, զոր ոչ լինին ամենայն մեռելոց: Երկրորդ՝ զի անմահն մեռաւ: Եւ յայտ է յայսցանէ, զի ի խաչին մեռեալ էր եւ կենդանի աստուածութեամբն, եւ զմահ մեռոյց, եւ զմեռեալս կենդանացոյց, եւ ի գերեզմանի անապական էր, եւ անքուն ակամբ: Այլեւ զապականութիւն ելոյծ եւ զապականեալսն յարոյց: Այսպէս ի դժոխս ոչ տանջէր, այլ զտանջեալսն ազատէր եւ զթշնամին տանջէր: Երրորդ՝ զի փութով յարեաւ, այսինքն՝ Գ (3) տիւ եւ գիշեր, սոյնպէս զի մարմինն եկաց ի գերեզմանի Լ (30) ժամ եւ հոգին յամեաց ի դժոխս ԼԴ (34) ժամ: Եւ սոյնպէս է թիւ ժամուն ըստ ճշմարիտ վարդապետացն եւ Ոսկեբերանին, որ ասէ. Կիրակէն ի մէջ գիշերի յարուցեալ զՔրիստոս եւ յԹ (9) ժամու ուրբաթուն աւանդեալ զոգին[144]: Եւ մարգարէն կնքէ. «Ոգի նորա ոչ թողաւ ի դժոխս եւ մարմինն ոչ ետես զապականութիւն» (Գործք Բ 31):

---

[143] Հմմտ. ՍՍ 1166, թ. 65բ:

[144] Հմմտ. *Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպօլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս,* Գիրք Գ, Վենետիկ, 1826, Ճառ ԼԶ, էջ 137. հմմտ. նաեւ *Մեկնութիւն Սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,*

ՎԱՍՆ ԱՌԵՒՏՐՈՅ[145]

Առեւտուր ըստ աշխարհի վեց կերպիւ լինի. նախ՝ գրաւել: Երկրորդ՝ գնել, որպէս աստ ասէ: Երրորդ՝ փոխ տալ, որ ասէ. Ոչ բարձցի ընդ ոսկւոյն (ԻԸ 16): Չորրորդ՝ փոխել, որ ասէ. Ոչ զուգեսցի ընդ ապակի (ԻԸ 17): Չորք սոքա հաւասարիցն է: Հինգերորդ՝ տուրքն է մեծաց, որ ասէ. Բարձրութիւնք [եւ խորութիւն] ոչ յիշեսցին (ԻԸ 18): Վեցերորդ՝ ընծայքն է փոքունց. Ոչ հաւասարի տպազիոն (ԻԸ 19): /64ա/ Եւ գիտելի է, զի նիւթքս այս պատուական հինգ իմն պակասութիւն ունին. նախ՝ զի յերկրէ: Երկրորդ՝ յերկիր լուծանի: Երրորդ՝ յերկիր կապէ զմիտս: Չորրորդ՝ զի դժուարաւ գտանի: Հինգերորդ՝ ոչ ամենեցուն է: Այլ իմաստութիւնն ընդդէմ այսոցիկ է: Դարձեալ սոքա պատուական են վասն չորից. նախ՝ վասն նիւթոյն: Երկրորդ՝ վասն պարզութեանն: Երրորդ՝ վասն խասիաթին: Չորրորդ՝ վասն գունոյն գովելիք են (հմմտ. Երգ Ե 10): Եւ տե՛ս, զի կողմ Հնդկաց, որ ջերմ է եւ յազդմանէ աստեղաց կազմին պատուական ակունք[146]: Եւ տե՛ս, զի երեքեան սոքա մաքրեցան, այսինքն՝ կոյսն Մարիամ, որ զհուրն Աստուած կրեաց յարգանդի: Եւ մարդացեալն Աստուած եւ Աւետարանիչն, որ անկաւ զլանջօքն Յիսուսի: Եւ մաքրեցան ի կրկին կրից, այսինքն՝ ի ցանկութեանց եւ յաւելորդ ծորմանց: Եւ թէ ասես թերի մտօք, թէ որպէս ասեմք. նախ՝ թէ որպէս ցանկութիւն սերմանցն զսպի եւ ոչ նեղի, նոյնպէս եւ աւելորդ ծորմունքն զսպի: Երկրորդ՝ ջուր լցեալ յապակի եւ խցեալ, ջերմութիւն արեւուն քարշէ զնա եւ ցամաքի:

որ ըստ Մատթէոսի, արարեցեալ եւ շարադրեցեալ ի Սխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ, Վենետիկ, 1737, էջ 290, Մատթ. ԺԲ 40 համարի մեկնութիւն:

[145] Հմմտ. ՍՍ 1166, թ. 65բ-66ա:

[146] Հմմտ. **Վարդան Արեւելցի**, *Ճառք, Ներբողեանք,* աշխատ.՝ Հ. Քյոսեյանի, Երեւան, 2000, էջ 352. «Եւ նիգ եդեալ տանի շփէ ընդ յատակ եւ ջերմ աւդոյ մերձ յարփին, եւ յայնմանէ ճապաղին փայլատակմունք լուսոյ, զոր կոչեմք աստեղս թռուցեալ», էջ 138. «Յաղագս գունոց ասեն իմաստասէրք, թէ ջերմոյ եւ ցրտոյ եւ կծու եւ տտիպ տեսակաց կիրք են գոյնք»:

ՎԱՍՆ ԳՐԱՒԱԿԱՆԱՑ

[Հարց]. Զի՞նչ է գրաւականն Աստուծոյ եւ մեր, որպէս ասաց (ԻԸ 15) ասէ եւ Աւետարանիչն՝ ունիք զԱստուծոյ ծերոյ զգրաւականն (հմմտ. Մատթ. Ժ 39):

Պատասխանի. Երկոտասան՝ ասին գրաւականք. չորսն՝ միայն յԱստուծոյ առ մեզ, եւ չորսն՝ միջակ, եւ չորս՝ միայն ի մէնջ առ Աստուած: Այն, որ միջակն է, առաջինն՝ Քրիստոս: Երկրորդ՝ սէրն: Երրորդ՝ գիտութիւնն սուրբ: Չորրորդ՝ պատուիրանքն: Եւ միջակ ասին սոքա, /64բ/ զի յԱստուծոյ առ մեզ են գրաւական: Եւ ի մէնջ առ Աստուած: Եւ որ միայն յԱստուծոյ են առ մեզ. նախ՝ հոգին որդեգրութեան: Երկրորդ՝ մարմինն սուրբ: Երրորդ՝ սրբութիւնն: Չորրորդ՝ խոստմունք աւետեացն: Իսկ ի մէնջ միայն առ Աստուած. նախ՝ դաւանութիւն հաւատոյն: Երկրորդ՝ յոյսն: Երրորդ՝ բարի գործք առհասարակ: Չորրորդ՝ հեղումն արեանց վկայիցն: Սոքա ամենեքեան գրաւականք, որ ասի ի Գիրս Սուրբս:

Բան. Ուստի՞ գտաւ իմաստութիւնն (ԻԸ 12, 20):

Լուծումն. Կրկնէ զայս, զի առաջինն բացարձակաւն էր եւ աստ՝ դրականաւն ցուցանէ: Նախ՝ ծածուկ ի խորհրդեանն Աստուծոյ, զի՝ «Բանն էր առ Աստուած» (Յովհ. Ա 1): Եւ ապա՝ ի լսելոյ մարգարէիցն զփառացն նորա: Եւ ապա՝ ի տեսանելոյ զճանապարհ տնօրէնութեան նորա (հմմտ. Ես. ԼԳ 17, ԿՁ 18, 19):

ՎԱՍՆ ՏԵՂՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ[147]

[Հարց]. Զի՞նչ է տեղին Աստուծոյ, որ ասէ՝ Ինքն գիտէ զտեղի նորա (ԻԸ 23):

Պատասխանի. Չորս է իմացումն. նախ՝ որպէս ասաց Սողոմոն առ դշխոյն հարաւոյ հարցեալ ի նմանէ[148] (հմմտ. Մատթ.

[147] Հմմտ. ՍՍ 1166, թ. 66ա:
[148] Հմմտ. *Գիրք հարցմանց*, հտ. Է, պրակ ԻԲ, էջ 442:

ԺԲ 42, Ղուկ. ԺԱ 31), ասէ՝ ամէնարարն Աստուած, նախքան զլինելն աշխարհի ինքն յինքեան էր: Եւ այժմ ինքն յինքեան է եւ ի կատարածի ինքն յինքեան եղիցի: Այս ըստ միութենէ: Երկրորդ՝ ասէ Տէրն յԱւետարանն. «Ես ի Հայր եւ Հայր ի յիս է» (Յովհ. Ժ 38): Զի ոչ ոք լնու զՀայր՝ եթէ ոչ Որդին եւ անդրադարձեալ (հմմտ. Յովհ. Ե 19, 26-27, 36-37): Նոյնպէս եւ զՀոգին իմացիս: Այս ըստ հաւասար անձանցն է: Երրորդ՝ հաւատն է տեղիք Աստուծոյ, /65ա/ որ ընդունի զհաւատալին: Ապա եւ հաւատացեալն է տեղիք վասն հաւատոյն: Չորրորդ՝ բարի գործքն է տեղիք Աստուծոյ, այսինքն՝ սէրն, խոնարհութիւն, սրբութիւնն եւ այլն: Ապա եւ հեզն, եւ սուրբն սրտիւ տեղիք է նմա եւ այլն: Դարձեալ գոյ եւ այլ յեղանակ չորս կերպիւ, զի Որդին Միածին նոյն էութեամբ առ Հայր է: Երկրորդ՝ միութեամբ ի մարմնի: Երրորդ՝ շնորհօք ի սուրբս: Չորրորդ՝ խնամօք յամենայն էակքս: Այսքան վասն տեղոյն Աստուծոյ:

ՎԱՍՆ ՏԵՍՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ[149]

Եւ գիտելի է, զի տեսութիւնն Աստուծոյ կրկին է. նախ՝ ի ներքս ի յինքեան: Երկրորդ՝ արտաքս ի գործս ինքեան, որ են արարածք: Եւ չորս կերպիւ որոշի. նախ՝ զի զանգործսն տեսանէ: Երկրորդ՝ զի առանց միջնորդի եւ օրինակի: Երրորդ՝ զգոյացութիւն եւ զքանակ, եւ զորակ տեսանէ: Չորրորդ՝ զսեռն, զտեսակ եւ զանհատս ի միասին տեսանէ: Եւ չորս կերպիւ ի ներքոյ նորա են ամենայն արարածք. նախ՝ բնութեամբ, որպէս եղեալք: Երկրորդ՝ ժամանակաւ, որպէս յետինք: Երրորդ՝ պատուով, որպէս ծառայք: Չորրորդ՝ դասիւ, որպէս աթոռք: Եւ երկիրս, որ ի ներքոյ է, բնակարան է ամենեցուն, այսինքն՝ երից տարերց եւ բուսոց, եւ մարդկան, եւ ամենայն կենդանեաց, եւ դիւաց, եւ հրեշտակաց, եւ Աստուծոյ:

[149] Հմմտ. ՍՍ 1166, թ. 66աբ:

Բան. Եւ գիտէ զկշիռս հողմոց եւ զչափս ջուրց (ԻԸ 25):

Լուծումն. Որպէս ասէ Էսայի. «Ո՞ չափէ զերկինս թզաւ եւ զերկիր [ամենայն]՝ քլաւ» (Ես. Խ 12) եւ այլն: Եւ Դաւիթ ասէ. «Թուէ զբազմութիւն աստեղաց» (Սաղմ. ՃԽՁ 4) եւ այլն: Դարձեալ ասէ Արիստոտէլ /65բ/ վասն չափոյ տարերաց, եթէ՝ ջուրն Ժ (10)-պատիկ պարզ է, քան զերկիր եւ թեթեւ եւ օդն՝ Ճ (100)-պատիկ եւ հուրն՝ Ռ (1000)-ապատիկ, ուստի ի յայտէ, որպէս յորժամ Ժ (10) լիտր փայտն այրի՝ մին լիտր մնայ հողն եւ այլն լուծանի[150]:

ՎԱՍՆ ՀՈԳԻՈՑ ԵՒ ՀՈՂՄՈՑ[151]

Եւ գիտելի է, զի հոգին հոմանուն է, նշանակէ զկենդանական հոգիս եւ զանկենդան, որ է հողմ եւ օդ: Արդ, վեց են տեսակ հոգւոց. նախ՝ հոգին աստուածեղէն: Երկրորդ՝ իմանալեացն, որպէս հրեշտակաց: Երրորդ՝ բանական, որպէս մարդիկ: Չորրորդ՝ չար հոգիք, որպէս դիւաց: Հիգերորդ՝ զգայական կենդանեաց: Վեցերորդ՝ տնկական հոգիք: Ոմանք յաւելուն եւս յավերժահարսանց, որ ոչ է հասարակաց ընդունելի, զի նոքա ազգէն դիւաց եւ քաջք անուանեալ, եւ յաւէրժահարսունք եւ այլն: Նոյնպէս եւ հողմն կրկին է. նախ՝ սաստիկ հողմ, որ Բժ (12)-ան ասէ Արիստոտէլ ի Դ (4) կողմանց հնչեցեալ[152]: Երկրորդ՝ սիւք հանդարտ եւ նա ի Դ (4) բաժանի յերեսաց ջրոց շնչեցեալ: Նմանապէս եւ այսն չարութեան հողմ չար կոչի, որ ի ներքոյ երկնից: Ետես Հայր, զի բարի են յոյժ: Պատրաստեաց Որդի, զի ծանոյց մեզ: Քննեաց Հոգին, զի ուսոյց մեզ զամենայն, որում փառք յաւիտեանս. Ամէն: /66ա/

---

150 Հմմտ. **Արիստոտէլ**, *Յաղագս աշխարհի*, էջ 607-608:
151 Հմմտ. ՍՍ 1166, թ. 66աբ:
152 Հմմտ. **Արիստոտէլ**, *Յաղագս աշխարհի*, էջ 612:

ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ, ՃԱՌՍ ԱՅՍ ԱՐՏԱՔՈՅ ԹՈՒՈՅ Է, ՎԱՍՆ ՈՐՈՅ ՀԱՄԱՐՔ ՈՉ ՈՒՆԻ[153] (ԻԹ 2)

ի ասացեալ է վասն ութ դարոյս խրատ, այլեւ վասն աստուածաբանութեան՝ կրկին ճառ: Աստ ի վերջին ճառիս պատմէ վասն առաջին կենաց բարութեան. նախ՝ յօրինակ բնութեանս, որ ցանկամք առաջին կենացն Ադամայ: Երկրորդ՝ որպէս ապաշխարողք անմեղութեանն ցանկան: Երրորդ՝ որպէս հիւանդք՝ առողջութեան: Չորրորդ՝ որպէս հարքն զծածուկ վարքն պատմեն, զի այլքն օգտեսցին: Եւ ճառս այս, որպէս Գործքն Առաքելոցն պատմէ եւ որպէս Երկրորդ Օրէնքն զմիտս առաջին ճառիցն յիշատակէ: Եւ նոքա լռեցին վասն չորից. նախ՝ զի յաղթեցան: Երկրորդ՝ զառակաւոր իմաստքն լսէին: Երրորդ՝ զդատաստանն Աստուծոյ ուսանէին: Չորրորդ՝ զի մարգարէութեան բանիցն անսային, որպէս աստ մարգարէութիւն է վասն Տեառն, այլեւ՝ դատաստանին վերջին: Եւ այլ եւս վեց միտք դնէ յետ աշխարհին վասն լռութեան նոցա: Աթոռ էր համբերութիւնն, եւ ոտքն՝ չորս առաքինութիւնն:

ՎԱՍՆ ՃՐԱԳԱՅ[154]

Ճրագն չորս ինչ յայտնէ. նախ՝ կեն/66բ/ցաղոյս բարութիւնն: Երկրորդ՝ որդիքն: Երրորդ՝ խղճի մտացն. «Դու լուսաւոր առնես զճրագ իմ» (Սաղմ. ԺԷ 29): Չորրորդ՝ «Պատուիրանք Տեառն լոյս են» (Սաղմ. ԺԸ 9), ասէ:

Հարց. Զի՞նչ է, որ ի գիշերի ճրագ վառեմք (ԻԹ 3):

Պատասխանի. Չորս ինչ նշանակէ. նախ՝ զի խաւար է կենցաղս, եւ նուազ՝ բարութիւնք սորա: Երկրորդ՝ ոմն մեծ վառէ, եւ

---

[153] Հմմտ. ՍՍ 1166, թ. 66բ:
[154] Հմմտ. նույն տեղում:

ոմն՝ փոքր: Երրորդ՝ զի ստուէր ունի: Չորրորդ՝ դարձեալ ի գիշերի շիջանի, սոյնպէս բարութիւնք մարմնաւոր, իսկ հոգեւորն է որպէս արեգակն պայծառ:

Հարց. Զի՞նչ է ասելն՝ գլուխն ոտից խոնարհեցաւ (ԻԹ 3):

Պատասխանի. Նախ՝ գլուխ է միտքն, եւ ոտք՝ ցանկութիւնն: Երկրորդ՝ հոգին եւ մարմին: Երրորդ՝ այր եւ կինն: Չորրորդ՝ Ադամ եւ օձն:

ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ[155]

Հարց. Զի՞նչ նշանակէ շուրջ ծառայքն (ԻԹ 5):

Պատասխանի. Ի տիպ երկնաւորին են, որպէս Տէր նստեալ ի յաթոռ, եւ սերովբէքն շուրջ զնովաւ. նախ՝ փառք թագաւորի զօրք իւր: Երկրորդ՝ սպասաւոր են: Երրորդ՝ պահապանք են: Չորրորդ՝ պատժեն զայլս:

Հարց. Ընդ առաւօտն նախ զդատաստանն առնէր, թէ զպատարագն (ԻԹ 7):

Պատասխանի. Այս էր կարգն՝ յամենայն աւուր նախ զպատարագն բաշխէր, եւ ապա՝ դատաստան առնէր, եւ ապա՝ եկեալ ի թագաւորական սեղանն կերակրէր: Եւ յայտ է յերկուց. նախ՝ զի պատարագն աղօթք էր՝ ընդ Աստուծոյ խօսէր, եւ ապա՝ դատաստանաւն՝ ընդ մարդկան: /67ա/ Երկրորդ՝ զի Տէր մեր նախ զպատարագն մատոյց, եւ ապա՝ զդատաստանն արար: Եւ դարձեալ առնէ ի հանդերձեալն, եւ ապա՝ ի սեղան հօրն կերակրէ:

Հարց. Զի՞նչ է յոտն յառնելն, յորժամ գան հեռաւորք (ԻԹ 8):

Պատասխանի. Նախ՝ նշանակէ զըպատուելն: Երկրորդ՝ ծառայելն: Երրորդ՝ խոնարհութիւն: Չորրորդ՝ ընդունել: Այլեւ զիմաստութիւնն իւր: Եւ որք ոչ առնեն, չորիցս ընդդէմ են, այլեւ անմիտ եւ անպատիւ ինքեանք: Այլեւ նմանին, որ յիւրսն եկն եւ ոչ ընկալան (հմմտ. Յովհ. Ա 11): Այլեւ Պիղատոս նստէր, եւ Տէրն

[155] Հմմտ. ՍՍ 1166, թ. 67ա:

կանգնէր (հմմտ. Մատթ. ԻԷ գլ., Մարկ. ԺԵ գլ., Ղուկ. ԻԳ գլ., Յովհ. ԺԹ գլ.):

Հարց. Զի՞նչ է զմատն ի բերան դնել (ԻԹ 9):

Պատասխանի. Չորս ինչ նշանակէ. նախ՝ զարմանալ: Երկրորդ՝ մոռանալ: Երրորդ՝ զղջանալ: Չորրորդ՝ ափ ի բերան լինել եւ լռել:

ՎԱՍՆ ՈՐԲՈՑ ԵՒ ԱՅՐԵԱՑ[156]

(ԻԹ 12) Երեք դասք են որբոց եւ այրեաց, այսինքն՝ մարմնաւոր, հոգեւոր եւ մտաւոր: Նախ մարմնաւոր՝ որբացեալն ի ծնողաց: Իսկ հոգեւոր. նախ՝ զրկեալն ի հայրենի խնամոցն Աստուծոյ եւ յեկեղեցւոյ մօրէ: Երկրորդ՝ աշակերտք առանց վարդապետաց: Երրորդ՝ ժողովուրդք, որ չունին քահանայ: Իսկ մտաւոր որբ. նախ՝ վանք առանց հայրապետի: Երկրորդ՝ մշակք, որ չունին տեարք: Երրորդ՝ քաղաք, որ չունին դատաւորք եւ վերակացու: Նոյնպէս եւ այրիք. նախ՝ մարմնով զրկեալն ի յարանց: /67բ/ Իսկ հոգեւորն. նախ՝ որ հոգին անխնամ թողեալ է ի մտացն: Երկրորդ՝ այրի ի փեսայէն Քրիստոսէ: Երրորդ՝ վիճակն, որ չունի տեսուչ հոգեւոր: Իսկ մտաւոր այրի նախ՝ տունն, որ չունի տանուտէր: Երկրորդ՝ գեղ, որ չունի ձեռնաւոր: Երրորդ՝ քաղաք, որ չունի իշխան եւ թագաւոր: Այսքան վասն որբոց եւ այրեաց:

Բան. Յօնն[157] (ԻԹ 10):

Լուծումն. Պատիւն է, եւ յոյնն՝ քաջութիւնն:

Բան. Յանկացելոյ (ԻԹ 11):

Լուծումն. Կարօտելոց, եւ ցանկացեալն՝ տառապեալն է:

Բան. Կորուսեալք (ԻԹ 13):

Լուծումն. Որք յընչիցն են պակասեալ կամ հաշմեալ ի յանդամոց:

---

[156] Հմմտ. ՍՍ 1166, թ. 67բ:
[157] Հմմտ. ՍՍ 1166, թ. 69բ:

ՎԱՍՆ ԿԾՈՈՑ[158]

Կշեռքն արդար է (ԻԹ 20, հմմտ. ԼԱ 6) եւ ի մեզ թաթն, հոգի եւ մարմին:

Լարք (ԻԹ 20)՝ հոգին եռամասնեայ է, այլեւ մարմնոյն երեք է խառնուած, այսինքն՝ ծանր, թեթեւ եւ միջակ:

Լուծն (հմմտ. Ջ 6)՝ տեսութիւն եւ քննելն հաւասար:

Նժարն (հմմտ. Իմաստ. Սող. ԺԱ 23)՝ կամքն անձնիշխան:

Կշռորդ՝ օրէնքն Աստուծոյ: Ջբան, զգործ եւ զախորժակսն ամենայն յայտնէ վասն չորից. նախ՝ վկայութեանն Աստուծոյ: Երկրորդ՝ ընդդէմ բարեկամացն կարծեաց: Երրորդ՝ զի վիշտն մի թուեսցի ապաշխարութիւն մեղաց: Չորրորդ՝ զի մեք ուսցուք ի նմանէ:

ՎԱՍՆ ՀԱՍԱԿԻ ՄԱՐԴՈՅՍ[159]

(ԻԹ 18) Գիտելի է, զի չորս բաժանի հասակ մարդոյս. նախ՝ յէ (7) /68ա/ բաժանի: Առաջին՝ տղայն է մինչեւ յէ (7) ամն: Երկրորդ՝ մանուկ ԺԴ (14) ամն: Երրորդ՝ պատանեակ Ի (20) ամն: Չորրորդ՝ երիտասարդ Լ (30) ամն: Հինգերորդ՝ հասակ կատարեալ մինչ ի ԽԵ (45): Վեցերորդ՝ ալեւոր Կ (60) ամն: Եւթներորդ՝ ծեր Հ (70) կամ Ջ (80) ամն: Այս ըստ աւուրց շաբաթուն եւ դարու կենցաղոյս: Երկրորդ՝ բաժանի հասակն ի չորս ըստ տարեաց. տղայն՝ օդոյ, երիտասարդն՝ հրոյ, հասակն՝ հողոյ, ծերն՝ ջրոյ: Երրորդ՝ յեղանակ բաժանի հասակն յԳ (3) ըստ երից մասանց ժամանակի. որպէս առաջին հասակն եւ միջինն եւ վերջինն՝ ծերութիւն: Չորրորդ՝ ոմանք սոյնպէս Ի (20) ամն առանց մուրուաց, եւ Ի (20)՝ մուրուօք, եւ Ի (20)՝ ալիք, եւ Ի (20)՝ ծեր:

---

[158] Հմմտ. ՍՍ 1166, թ. 70բ:
[159] Հմմտ. ՍՍ 1166, թ. 70ա:

Բան. Ծեր (ԻԹ 18):

Լուծումն. Էրէց լսի եւ հին աւուրց[160], եւ ի ծայրքն ելեալ ժամանակի, բարեաց եւ իմաստութեանց:

ՎԱՍՆ ԾԱՌՈՑ[161]

Բան. Ծառ (ԻԹ 18):

[Լուծումն]. Չորս ինչ նշանակէ. նախ՝ ծառայ: Երկրորդ՝ ծուռ, զի գլուխն ի վայր է: Երրորդ՝ ծեր, զի ի սկ[ի]զբն է: Չորրորդ՝ ի ծայրքն ունի զպտուղս, այլեւ ծիւրի միշտ: Սոքա մարմնապէս ոչ լինին մեզ, այլ հոգեպէս, որպէս ասէ Դաւիթ. «Ծերութիւն իմ ի ձէթ պարարտութեան» (Սաղմ. ՂԱ 11): «Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին» (Սաղմ. ՂԱ 13): «Եւ ծառն, որ տնկեալ է ի գնացս ջուրց» (Սաղմ. Ա 3): Եւ «Ի ցօղել նորա՝ զուարթ եղիցի բոյսք» (Սաղմ. ԿԴ 11), այսինքն՝ ցօղն կենաց եւ ողորմութեան ի հոգին, որ յետ մահու է: /68բ/

Բան. Երկիր ծարաւ անձրեւոյ (ԻԹ 23):

Լուծումն. Երկիրն չոր է եւ տապացեալ, անձրեւն՝ գէջ եւ ցուրտ: Վասն որոյ բարեխառնէ զնա եւ բուսուցանէ: Այսպէս բանն ուսուցանէ զիմաստութիւն եւ զարդարութիւն ի միտս:

---

[160] *Հին աւուրց*ի մասին տե՛ս ՍՄ 1115, թ. 74ա, 122ա. ՍՄ 1166, թ. 39բ, 73աբ. *Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք*, հտ. 4, Վենետիկ, 1836, էջ 35. *The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite*, edited by Robert W. Thomson, Lovanii, in Aedibus E. Peeters, 1987. /Corpus Scriptorum Christianorum Orientalium. Scriptores Armeniaci. Tomus 17. vol. 488/. *Դիոնիսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոցն առ Տիմոթէոս եպիսկոպոպ՝ Յաղագս <Աստուածայնոցն> անուանց*. Յաղագս ամենակալին, <հնոյն> աւուրց, յորում եւ յաղագս յաւիտենի եւ ժամանակի, X, 1, p. 209-211. *Վեցօրեայք Գէորգայ Պիսիդեայ իմաստասիրի*, տպ. հանդ. յոյն բնագրաւ եւ լուսաբանեալ ի հ. Աթ. վ. Տիրոյեան, Վենետիկ, 1900, էջ 186. «Հայրական լոյս՝ նախ քան զարեգական ճառագայթ, /Հինաւուրցն որդի մանուկ, /Սատակեաց զնա գեղարդեան փայտիւ». *Գիրք հարցմանց*, հտ. Գ, պրակ ԺԱ, էջ 114-115. *Ամառան*, գլ. ՃԽԵ. Նորին քարոզ հրեշտակապետաց, ի բանն, որ ասէ «Աթոռք անկանէին եւ հին աւուրցն նստաւ ի վերայ» (Դան. Է 9), էջ 564-570:

[161] Հմմտ. ՍՄ 1166, թ. 67բ:

ՎԱՍՆ ԾԻԾԱՂԵԼՈՅ[162]

(Լ 1, հմմտ. ԻԹ 24) Ծաղր կրկին է, այսինքն՝ քամահել եւ խնդալ, մին՝ ակնառութիւն է, եւ միւսն՝ կորուստ ընտրողութեանն: Սոքա գազանաց են նման, ասէ եւ կատաղի եւ գաղտառ շանց: Ի *դէմս* բարեկամացն ասէ, այլ ի բանսարկուն ակնարկէ:

Բան. Մի վասն իմ տկարութեանս (ԼԹ 24):

Լուծումն. Մին՝ վասն կարօտութեան իւրեանց մահ խնդրեն եւ ոչ հասանեն, եւ մի՝ վասն իմ տկարութեանս, զի չեմ վրէժ, մահն կորեաւ նոցա:

ՎԱՍՆ ՉՈՐՈՒԹԵԱՆ[163]

(Լ 3) Սերմն ոչ բուսանի եւ բուսեալն չորանայ, եւ անասունք ոչ յղանան ի ծարաւն: Եւ ամուլն վասն չորութեան լինի բնական:

Ցորեանն մարդոյս է կերակուր, եւ խոտն՝ անասնոց, եւ արմատն՝ սողնոց եւ խառնակերաց:

Դատապարտեն եւ անարգեն (Լ 5):

ԱՋ ԵՒ ՁԱԽ[164]

(Լ 12) Աջ եւ ձախ չորս կերպիւ է. նախ՝ բնութեամբ, որպէս աջ կողմ կենդանոյն զօրաւոր է վասն ջերմութեան լեղոյն, եւ ձախն թոյլ՝ վասն փայծղանն: Երկրորդ՝ պատահմամբ որպէս քարն կամ փայտ, թէ պատահի յաջմէ մեր աջ ասի կամ ձախ: /69ա/ Երրորդ՝ իմացմամբ որպէս արեւելք աջ կողմէ եւ արեւմուտք՝ ձախ: Չորրորդ՝ փառօք, որպէս աջակողմեանքն:

Եւ ոտքն բանսարկուին լայն ասի վասն չորից. նախ՝ վասն լայն եւ արձակ ճանապարհին: Երկրորդ՝ վասն փոյթ ընթացիցն:

---

[162] Հմմտ. ՍՍ 1166, թ. 68ա:
[163] Հմմտ. ՍՍ 1166, թ. 68աբ:
[164] Հմմտ. ՍՍ 1166, թ. 69ա:

Երրորդ՝ զի առ բարիս եւ չարս ընթանայ: Չորրորդ՝ զի յամենայն կողմ շարժի, ըստ այնմ. Ցածեալ եւ շրջեալ ի վերայ երկրի (Ա 6):

ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ՅՈՒՍՈՅ[165]

(Լ 15) Գիտելի է, զի յոյսն կրկին է. մին՝ ճշմարիտն, որ մնացականէ եւ առ Աստուած, եւ միւսն՝ սուտ, որ անցաւոր է եւ առ երկրաւորս: Նոյնպէս եւ հաւատն է ճշմարիտ, որ հաւատամք ճշմարտիցն եւ աստուածայնոցն, եւ միւսն՝ սուտ, որ ստոցն հաւատայ եւ երկրաւորիս հաւանի: Այսպէս եւ սէրն ճշմարիտ է, որ հոգեւորն է եւ առ Աստուած, իսկ սուտ, որ մարմնաւորն է եւ չար:

ՄԱՐՄԻՆ ՊԱՏՄՈՒՃԱՆ Է[166]

Մարմինն պատմուճան է հոգւոյն վասն չորից. նախ՝ զի ծածկէ: Երկրորդ՝ զարդարէ: Երրորդ՝ ցուցանէ: Չորրորդ՝ ի բաց հանէ: Այլ մարմին Տեառն ոչ բաժանեցաւ ի մահուն, զի գիտէ զօգուտն մեր: Վասն այն ոչ լսէ ի նեղութեան:

ՎԱՍՆ ՓՈՓՈԽՄԱՆ[167]

(Հմմտ. Լ 22-28) Վասն չորս պատճառի հանապազ փոփոխիմք. նախ՝ զի մարմինս ի փոփոխական երկրէ է: /69բ/ Երկրորդ՝ զի միտքս մեր կրականէ: Երրորդ՝ ի ժամանակի եմք: Չորրորդ՝ զի վճիռ ունիմք ըզհրամանն Աստուծոյ: Եւ բազում իրօք փոփոխիմք. նախ՝ հասակաւ ի տղայութիւն եւ ի ծերութիւն: Երկրորդ՝ առողջ եւ հիւանդ: Երրորդ՝ բարի եւ չար: Չորրորդ՝ ուրախ եւ տրխուր: Հինգերորդ՝ յագ եւ քաղց: Վեցերորդ՝ հարուստ եւ աղքատ: Եւթներորդ՝ կեանք եւ մահ: Այս է, որ ասաց Դանիէլ. «է (7) ժամանակք փոխեսցին ի վերայ քո» (Դան. Դ 22, 29):

---

165 Հմմտ. ՍՍ 1166, թ. 69ա:
166 Հմմտ. նույն տեղում:
167 Հմմտ. ՍՍ 1166, թ. 70ա:

Բան. Համբարուաց[168] *եւ ջայլամանց ընկեր (Լ 29):*

Լուծումն. Նախ՝ զի ի գիշերի գազանք եւ սողունք բնակէին ընդ նմա: Երկրորդ՝ զի սոքա կրկնադէմք են, զինքն նմանեցնէ նոցա, զի բացօթի էր եւ բանական:

Բան. Շփեցան (Լ 31):

Լուծումն. Հպեցան: Եւ կողկողել՝ արտասուելն է (ԼԱ 16):

Բան. Չհայեցայ ի կոյս (ԼԱ 1):

Լուծումն. Նախ՝ ցանկութեամբ չնայեցայ: Երկրորդ՝ աչօք ի չարսն կեղծաւորեալ, քան զբարիսն մխիթարէր:

ՎԱՍՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՒԹԵԱՆՍ[169]

Բան. Բաւական բաժին (ԼԱ 2):

Լուծումն. Հինգ ինչ բաւական բնութեանս օգնական եդ. նախ՝ անծնիշխան կամք: Երկրորդ՝ զբարի սերմն: Երրորդ՝ ի բարի տեղւոջ: Չորրորդ՝ զօրէնքն: Հինգերորդ՝ զփոխարէնքն բարեաց: /70ա/ Այլեւ վեցերորդ՝ զպատիժ չարեացն:

ՎԱՍՆ ԿՇՌՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՅ[170]

(ԼԱ 6) Ի վերոյ ասացաւ վասն կշռոց մարդկան: Նոյնպէս, թէ կամիս Աստուծոյ բաղդատել, սոյնպէս նըժարն իցէ ամենակալ իշխանութիւն դատողին: Լուծն՝ ուղիղ եւ անաչառ քննութիւնն (ԼԹ 10), առասանքն՝ Գ (3) կղի (հմմտ. Ժողով. Դ 12) ի դիմաց Երրորդութեանն, արդարութեան եւ ողորմութեան՝ զօրութիւնքն

---

[168] Հմմտ. ՍՍ 1166, թ. 70ա. «Եղբայր եղէ համբարուաց եւ քոյր ջայլամանց, զհամբարու սայլք *յուշկապարիկ* թարգմանեցին եւ համբաւ է, վասն որոյ ծովա[յ]ին կենդանի է ի միջոյն ի վայր ծուկն եւ ի վեր կնոջ կերպարան եւ այնքան քաղցրածայն մինչ զի պակնուն լսողքն, յուշկապարի կամ հաւ է քաղցրածայն անապատասէր կամ դեւ մարդատեսիլ: Ջայլամն ոմանք զիշտրմուղն անուանեն, նոցա նմանեցուցանէր, զի արտաքո[յ] աւթագացեալ նստէր յանդի ի մտանել արեգականն գազանք եւ սողունք նեղէին զնայ»:

[169] Հմմտ. նույն տեղում:

[170] Հմմտ. նույն տեղում:

առ մեզ խոնարհեալ ունելով զյիշատակ բարեաց եւ չարեացն մերոց: Այսպէս բաղդատի կոչումն կշռոյ ի վերայ Աստուծոյ:

Ոտն (ԼԱ 7) կոչ զմարմինն վասն չորից. նախ՝ զի անարգէ եւ վերջին, քան զհոգին: Երկրորդ՝ զի երկրաքարշ: Երրորդ՝ զի բարձեալ կրէ: Չորրորդ՝ զի գործիք է հոգւոյն:

Երբ միտքն աչացն հետեւի (ԼԱ 9), մոլորի մարդն, եւ երբ աչքն մտացն հետեւի, ուղղի մարդն, վասն չորս պատճառի. նախ՝ զի աչքն երկրաւոր է, զերկիրս տեսանէ, եւ միտքն՝ զերկնայինս: Երկրորդ՝ աչքն զներկայս տեսանէ, եւ միտքն՝ զհանդերձեալն: Երրորդ՝ աչքն պատրի, եւ միտքն ստուգիւ տեսանէ: Չորրորդ՝ աչք երբեմն տեսանէ, եւ միտք՝ միշտ: Վասն որոյ յորժամ միտքն զվերինն /70բ/ խոկայ, հոգին նմա հետեւի եւ շունչն եւ արիւնն ի նմա կապեալ, այլեւ մարմին եւ զգայարանքն նոցին հետեւեալ, լինի մարդն երկնային: Եւ յորժամ զգայարանքն յերկիր կապի եւ մարմին, եւ արիւն, եւ շունչն ի վայր խարշի, եւ հոգին եւ միտքն նոցա հետեւի, եւ լինի մարդն երկրաւոր:

ՎԱՍՆ ՇՆՈՒԹԵԱՆ[171]

Բան. Սրտմտութիւն անժոյժ է պղծել զկին այլոյ (ԼԱ 11):

Լուծումն. Մի է գործ շնութեան, եւ չորեքին՝ պղծութիւն. նախ՝ իւր եւ կնոջն այն, եւ երկրորդ, եւ երրորդ՝ տանց նոցա եւ անկողնոց, զի մի մարմին են եւ պղծեցաւ անկողինն սուրբ: Չորրորդ՝ զի թէ լիցի զաւակ նոցա շնութենէ է որդի: Եւ ի Դ (4) դիմաց վառի սրտմտութիւն. նախ՝ կնոջ առն, զի ասէ Սողոմոն. «Բուռնէ նախանձ առն զկնոջ իւրոյ» (Ժողով. Դ 4): Երկրորդ՝ բարկութիւն մարմնաւոր դատաւորաց: Երրորդ՝ բարկութիւն հոգեւոր առաջնորդաց եւ կանովնաց: Չորրորդ՝ բարկութիւն դատաստանին Աստուծոյ, որ լինի շնացողաց:

---

[171] Հմմտ. ՍՍ 1166, թ. 70բ-71ա:

ՎԱՍՆ ՈՒՂԻՂ ԴԱՏԱՍՏԱՆԻ[172]

(Հմմտ. ԼԱ 13, 15) Չորս ինչ զմտածելի է դատաւորաց, զի ուղիղ դատեսցէ. նախ՝ զհասարակ կազմուածն յարգանդի մօրն: Երկրորդ՝ զի հաւասար ծնանիմք հոգեւոր աւազանաւն: /71ա/ Երրորդ՝ զի հաւասար ունիմք զաստիճան կարգաց: Չորրորդ՝ զի հաւասար ունիմք զուսումն շնորհաց: Եւ վատ արանց է զայս ոչ գիտել, այլեւ թէ լինի վատ ուսումն յայսոսիկ, պարտ է զնոսա քննել:

ՎԱՍՆ ՄԵԾԱՏԱՆՑ[173]

Վասն չորս պատճառի անվայելուչ է մեծատան աղքատօրէն միայն ուտել. նախ՝ զի բազում է ինչքն: Երկրորդ՝ զի ոչ է իւրն վաստակ, որպէս աղքատին: Երրորդ՝ զի ի բազմաց է ժողովեալ: Չորրորդ՝ զի բազում են սպասաւորքն, վասն որոյ պարտ է բազմօք ուտել: Ասաց վասն դատաստանին Աստուծոյ, թէ հարց եւ փորձ առնէ (ԼԱ 14), այսինքն՝ զմարմնոյս հարցանէ եւ զհոգոյս քննէ, տուելեացն խնդիր առնէ: Այժմ զայն ասէ. «Քաղցեայ եւ կերակրեցիք, մերկ եւ զգեցուցիք» (Մատթ. ԻԵ 35-36) եւ այլն:

Բան. Ակրակ (ԼԱ 22):

Լուծումն. Բոլոր ոսկրն է վզին:

Եւ առած՝ պատիժն դատաստանին:

ՎՆԱՍ ՄԵԾՈՒԹԵԱՆ[174]

(ԼԱ 25) Չորս ոմանց չար է մեծութիւնն, զոր աստ կարգէ. նախ՝ որ թաղէ: Երկրորդ՝ որ յուսայ: Երրորդ՝ որ ուրախանայ: Չորրորդ՝ որ անչափ ժողովէ: Առաջին՝ որ թա/71բ/ղէ, չորիւք մեղանչէ. նախ՝ ընդդէմ է մարդկան, որ յերկրէ սրբեցին: Երկրորդ՝ զի

---

[172] Հմմտ. ՍՍ 1166, թ. 71ա:
[173] Հմմտ. նույն տեղում:
[174] Հմմտ. ՍՍ 1166, թ. 71բ:

նիւթ մսխելոյ է: Երրորդ՝ զի այլոց գանձապան է: Չորրորդ՝ վասն Նեռինն թաղէ: Երկրորդն՝ որ յուսայ. նախ՝ ի Տեառնէ հատանէ զյոյսն: Երկրորդ՝ կռապարիշտ է: Երրորդ՝ սրտիւ սիրէ: Չորրորդ՝ պատճառէ զծերութիւն կամ զհիւանդութիւն: Երրորդն՝ որ ուրախանայ: Այս է, որ ի ստանալն խնդայ եւ ի մսխելն տխրի եւ ի պահելն ցաւի: Չորրորդ՝ որ զանչափն խնդրէ. նախ՝ զի ագահ է: Երկրորդ՝ զի ոչ հանգչի: Երրորդ՝ զբազումն կորուսանէ: Չորրորդ՝ զունողն վնասէ: Այս նոցա է, որ զաւելին խնդրեն: Այլ զչափաւորն բարի է ի լրումն պիտոյից, որպէս զչափաւոր կերակուրն եւ ջուրն: Այլ մեզ իմանալի ակն է լուսատու պատուիրանքն Աստուծոյ եւ իմաստութիւն, եւ գործք բարիք՝ փոխանակ ոսկւոյ եւ արծաթոյ: Այլ ի յերկինս են տեսանելի ակունք լուսաւորք, որով սփոփիմք հանապազ:

ԹԷ ՓՈՓՈԽԻՆ ԵՐԿՆԱՒՈՐՔ[175]

(ԼԱ 26) Եւ դարձեալ երկնաւորքն փոփոխին, երկրաւորս զի արդ անփոփոխ մնայ: Եւ չորս կերպիւ փոփոխին նոքա. նախ՝ արեգակն ամենայն յօր մըտ/72ա/տանէ, զմահ մեր նշանակէ: Երկրորդ՝ լուսինն նուազէ եւ աճէ, նոյնպէս եւ մեք ի ստացուածս մարմնոյ: Երրորդ՝ արեգակն խաւարի, զմեղքն մեր ցուցանէ: Չորրորդ՝ աստեղքն ծածկին, նոյնպէս եւ մեք ի հանդերձեալն:

ՁԵՌՆ ՀԱՄԲՈՒՐԵԼ ԽԱՉ ԱՌՆՈՒԼ[176]

(ԼԱ 27-28) Հարց. Զի՞նչ է, որ համբուրել զձեռն անօրէնութիւն ասէ, եւ մեք զսրբոցն համբուրեմք:

Պատասխանի. Որպէս զկուռս համբուրել անօրէնութիւն է, եւ զխաչն՝ սրբութիւն, նոյնպէս որ համբուրէ զձեռս, թէ նորա է զօրութիւն եւ ճարտարութիւն՝ չար է, եւ համբուրել զսուրբ ձեռս, որպէս ընդունակ է շնորհացն Աստուծոյ՝ բարի է:

---

[175] Հմմտ. ՍՍ 1166, թ. 71բ:
[176] Հմմտ. ՍՍ 1166, թ. 71բ-72ա:

Հարց. Զի՞նչ է, որ ի քահանայէն խաչ առնումք եւ զձեռն համբուրեմք:

Պատասխանի. Այն է խորհուրդն, յորժամ Թումաս էարկ զձեռն ի կողն Տեառն եւ հաւատաց, յայնժամ հուր ցոլաց ի ձեռնէն եւ պարզ մնաց (հմմտ. Յովհ. Ի 27-28): Եկին առաքեալքն եւ զաջ նորա ի գլուխս ընկալան եւ համբուրեցին: Սոյնպէս եւ քահանայն շօշափեաց զմարմին եւ զարիւն Փրկչին:

Բան. Եթէ (ԼԱ 29):

Լուծումն. Կրկին է: Մին՝ կապ բառի է, այն եչ-ով է: Եւ միւսն՝ բան է ի տեղի բացասութեան, որպէս այն, թէ մտցեն ի հանգիստ իմ (հմմտ. Եբր. Դ 3, 5, Գ 11, 18), այսինքն՝ ոչ մտցեն: Նոյնպէս եւ աստ: /72բ/

Բան. Զգուիլն (ԼԱ 30):

Լուծումն. Նեղիլն է, եւ դսրովիլ՝ անարգիլ:

Բան. Սրտնէութիւն (ԼԱ 31):

Լուծումն. Սրտմտութիւն մեծին է, բարկութիւն՝ ընկերին, սրտնէութիւն՝ փոքունց: Դարձեալ սրտմտութիւն՝ գործով, բարկութիւն՝ լեզուին, սրտնէութիւն՝ սրտին:

ՎԱՍՆ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ[177]

(ԼԱ 32) Զհիւրընկալութիւն. նախ՝ ի յԱբրահամէ ուսցուք, որով զԱստուած ընկալաւ (հմմտ. Ծնն. ԺԸ 1-2): Երկրորդ՝ ի Ղովտայ, որ ի հրոյն զերծաւ (հմմտ. Ծնն. ԺԹ 23-25): Երրորդ՝ ի Տեառնէ, որ զժողովուրդն յանապատին Խ (40) ամ հիւր պահեաց (հմմտ. Թիւք ԺԴ 13) եւ զԵգիպտոս տանջեաց, որ զհիւրսն չարչարեցին (հմմտ. Ելք Է-ԺԱ գլ.): Չորրորդ՝ ի յանասնոց, որ զԱդամ հիւր ընդունեցան, եւ գազանքն՝ խաճանողք եղեն: Հինգերորդ՝ ի Փրկչէն. «Յիւրսն եկն եւ ոչ ընկալան հրէայքն» (Յովհ. Ա 11) եւ քրիստոնեայք ընկալան, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ

[177] Հմմտ. ՍՍ 1166, թ.72ա:

լինել: Վեցերորդ՝ ի վերջին օրն ասէ. «Եկայք օրհնեալք Հօր իմոյ» (Մատթ. ԻԵ 36) եւ դասակից հրեշտակաց առնէ, այլ սատանայ զմեղաւորսն տանջէ:

ՎԱՍՆ ՄԵՂԱՑ[178]

(ԼԱ 33) Ի չորս իրաց գործին մեղք. նախ՝ սատանայ խաբող: Երկրորդ՝ մարմինս տկար: Երրորդ՝ հոգիս սխալոտ: Չորրորդ՝ միտս ընդունակ: /73ա/ Այլ յետ մեղացն. նախ՝ ածէ ամօթ: Երկրորդ՝ երկիւղ: Երրորդ՝ դատաստան: Չորրորդ՝ պատուհաս, որպէս եղեւ Ադամայ: Եւ գիտելի է, զի մեղքն է ցանկութեան, երկիւղն՝ ցասման, եւ ամօթն՝ բանական մասին: Դարձեալ մեղքն է մարմնոյ, երկիւղն՝ հոգւոյ, ամօթն՝ մտաց: Եւ կրկին է ամօթ, որ նախքան զմեղքն բարի է եւ յետ մեղացն՝ չար: Նոյնպէս եւ երկիւղ, որ վասն մարմնոյն երկնչի՝ չար է, որ վասն հոգւոյն՝ բարի:

ՎԱՍՆ ԳՐՈՅՆ[179]

(ԼԱ 35, 36) Գիրն կրկին է. մին՝ մեղացն Ադամայ: Երկրորդ՝ դատապարտութեանցն: Զայս կրկին գիրս պատառեաց Քրիստոս Խաչիւն իւրով:

ՑՈՐԵԱՆ ԵՒ ԳԱՐԻ[180]

(ԼԱ 40) Հարց. Զի՞նչ է ցորեան եւ գարին:

Պատասխանի. Ցորեանն կատարեալ է եւ բանականաց, եւ գարին՝ անկատար եւ անասնոց: Նախ՝ ցորեան է հոգւոյ առաքինութիւն, եւ գարին՝ մարմնոյ: Երկրորդ՝ ցորեան նորս, եւ գարի՝

---

178 Հմմտ. ՍՍ 1166, թ. 72ա:
179 Հմմտ. ՍՍ 1166, թ. 72աբ:
180 Հմմտ. ՍՍ 1166, թ. 72բ:

հին օրինացն: Երրորդ՝ գարին անկատար, եւ ցորեան կատարեալ առաքինութիւն: Չորրորդ՝ գարին՝ աստ, եւ ցորեան՝ ի հանդերձեալն:

ՎԱՍՆ ՓԾՈՑ[181]

(ԼԱ 40) Եւ փուշն անիծից. նախ՝ տնկոց փուշք: Երկրորդ՝ մեղք ի հոգին: Երրորդ՝ վէրք ի մարմին: /73բ/ Չորրորդ՝ խեղճ ի միտքն: Այլեւ զալիքն ասեն փուշ (ք-ն՝ ջնջուած):

Հարց. Վասն է՞ր անիծանէ:

Պատասխանի. Նախ՝ զի հաւատարիմ լիցի: Երկրորդ՝ ի դէմս բարեկամացն, զի զրկողք էին: Երրորդ՝ զի մեք երկիցուք: Չորրորդ՝ զի այնէ հատուցումն ամենայն չարեաց, որպէս ասէ. «Անիծեալք ի հուրն յաւիտենից» (հմմտ. Մատթ. ԻԵ 41), իսկ բարեացն. «Եկայք օրհնեալք ժառանգեցէք զկեանս» (հմմտ. Մատթ. ԻԵ 34), որում եւ զմեզ արժանի արասցէ Քրիստոս: Եւ աստ դադարումն Յոբայ (ԼԱ 40), զի ասաց վասն ութ դարոյս, այլեւ վասն արարչութեանն Հօր եւ իմաստութեանն՝ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այլեւ վերջին դատաստանի եւ հատուցմանցն: Իսկ զի բարեկամքն լռեցին ասացաւ Դ (4) պատճառ: Եւ աստ ասէ վեց. նախ՝ զի լուան զպատասխանին եւ լռեցին: Երկրորդ՝ զի Աստուած լռեցոյց վասն լուտական բանից, որ է անէծք եւ հայհոյութիւն: Երրորդ՝ զի ի չարէն շարժէին: Չորրորդ՝ զի ցուցաւ ժուժկալութիւն նորա (ԼԱ 24): Հինգերորդ՝ զի մի դատեսցին վասն նորա (ԼԱ 30): Վեցերորդ՝ զի մի յաղթեսցեն ճշմարտաբանին (ԼԱ 27, հմմտ. նաեւ Ա Եզր Գ 3), ասէ: Առաջին բանս Ելիուսայ, զի բարկացաւ, ասէ, ընդդէմ այնմ, որպէս Յոբ ի սկիզբն եբաց զբերանն եւ անէծ զօր ծննդեանն: Եւ ամենայն բանից նորա կարգաւ յանդիմանութիւն խօսի հինգ ճառովս ընդդէմ Ժ (10) ճառիցն Յոբայ: /74ա/

---

[181] Հմմտ. ՍՍ 1166, թ. 72բ:

Տե՛ս, զի բամբասել զարդար ի Դ (4) կողմանէ վնասէ. նախ՝ արդարոյն: Երկրորդ՝ լսողացն: Երրորդ՝ ասողացն: Չորրորդ՝ զի Աստուած բարկանայ:

ՎԱՍՆ ԾԵՐՈՑ[182]

(ԼԲ 4) Վեց կերպիւ լսին ծերք. նախ՝ ժամանակաւ: Երկրորդ՝ իմաստութեամբ: Երրորդ՝ առաքինութեամբ: Չորրորդ՝ աստիճանաւ: Հինգերորդ՝ իշխանութեամբ: Վեցերորդ՝ պատուով: Նոյնպէս եւ մանուկ ընդդէմ այսմ:

ՎԱՍՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ[183]

(ԼԲ 5) Տե՛ս զվնաս բարկութեանն. նախ՝ զամբարտաւանութիւն ցուցանէ: Երկրորդ՝ յանդգնութիւն: Երրորդ՝ անիմաստ: Չորրորդ՝ անամաւթ: Հինգերորդ՝ անկատար: Վեցերորդ՝ մանկաբարոյ առնէ, ասէ Սողոմոն. «Բարկութիւն կորուսանէ զիմաստուն» (Առակ. ԺԴ 35):

ԿՐԿՆԵԱԼ ԵԼԻՈՒՍԱՅ[184]

(ԼԲ 6) Առաջին ճառս Ելիուսայ զդառնութիւն սրտին կրկնէ եւ յաւելու ի բանն: Աստ յանդիմանէ զտգիտութիւն բարեկամացն:

Բան. Երկակողմ (ԼԲ 6):

Լուծումն. Լռեաց, մինչ զերկու կողման դիմադրութիւնն լուաւ, այսինքն՝ զՅոբայ եւ զբարեկամացն: Եւ ապա ինքն երկուցն ընդդէմ հակադրէ զիւր բանն:

Բան. Գտաք զիմաստութիւն (ԼԲ 13):

Լուծումն. Ուսանելն է գտանելն, եւ ընկալաքն յԱստուծոյ, /74բ/ եւ ոչ ոք ինքնեղ, ասէ, զիմաստութիւն (հմմտ. Առակ. Բ 6):

---

[182] Հմմտ. ՍՍ 1166, թ. 73աբ:
[183] Հմմտ. ՍՍ 1166, թ. 72բ-73ա:
[184] Հմմտ. ՍՍ 1166, թ. 73ա:

Այսպէս նախատէ, թէ ուսմամբ չէք իմաստուն եւ ոչ շնորհօքն Աստուծոյ եւ ոչ ի բնէ ունիք, զի չկարացիք պատասխանել Յոբայ:

Բան. Հնացուցին[185] *(ԼԲ 15):*

Լուծումն. Նախ՝ կորուսին եւ մոռացան: Երկրորդ՝ մտախոհ լինէին, թէ պատասխանեն:

ԿՐԿՆԵԱԼ ԵԼԻՈՒՍԱՅ[186]

(ԼԲ 17) Երկրորդ ճառս Ելիուսայ: Ասաց անդ՝ վասն յանդիմանութեան բարեկամացն (ԼԲ 6-7), ասէ աստ՝ վասն յանդիմանութեանն Յոբայ (ԼԳ 1):

Բան. Լի բանիւք (ԼԲ 18):

Լուծումն. Իմաստուն բան որպէս ապուրն է պուտկին, եւ տգէտն՝ որպէս փրփուրն, որ թափի անպիտան: Դարձեալ որպէս ծառն, որ ունի ծաղիկ եւ պտուղ, եւ միւսն՝ տերեւ եւ փուշ:

ՎԱՍՆ ԳԻՆՈՅ[187]

Հարց. Վասն է՞ր քաղցուն եփի (ԼԲ 19):

[Պատասխանի.] Ջերմութիւնն եփէ եւ զայլ տարերքն բաժանէ, զի փրփուրն օդն է, եւ մրուրն՝ հող, եւ գինին՝ ջուրն, եւ զօրութիւնն՝ հրոյն: Դարձեալ ի գինին թանձրութիւն՝ հողն, եւ լոյծն՝ ջուր, համն եւ հոտն՝ օդ, եւ զօրութիւնն՝ հուր:

ՎԱՍՆ ԱՉԱՌԵԼՈՅ[188]

/75ա/ (ԼԲ 22) Աչառելն ի չորից լինի. նախ՝ վասն ամօթոյ: Երկրորդ՝ վասն երկիւղի: Երրորդ՝ ի սիրոյ: Չորրորդ՝ յատելոյ: Եւ որպէս բամբասել զբարիսն Դ (4) է վնասն, նոյնպէս չխրատել

---

185 Հմմտ. ՄՄ 1166, թ. 73բ:
186 Հմմտ. ՄՄ 1166, թ. 74ա:
187 Հմմտ. նույն տեղում:
188 Հմմտ. նույն տեղում

զչարս Դ (4) է վնասն. նախ՝ թիւրի արդարութիւնն: Երկրորդ՝ չարն ոչ փոփոխի: Երրորդ՝ խղճիւ դատի: Չորրորդ՝ ի մարմինն պատուհասի:

Բան. Փաղաղել[189] *(ԼԲ 22):*

Լուծումն. Ճարակել եւ ուտելն է, որպէս ասէ:

ՎԱՍՆ ԲԱՆԻՑ ԵՒ ԽՕՍԻՑ[190]

Հարց. Զի՞նչ է բան, եւ զի՞նչ՝ խօսք (ԼԳ 1):

Պատասխանի. Նախ՝ բան ներտրամադրեալն է, եւ խօսք՝ յառաջ բերեալն: Երկրորդ՝ բան սրտին է, եւ խօսք՝ լեզուին: Երրորդ՝ բան ծածուկն է, եւ խօսքն՝ ծածկոյթն եւ յայտնին: Չորրորդ՝ զբան միտքն իմանայ, եւ զխօսք՝ ականջն: Եւ այն, որ ասէ. Լո՛ւր, լո՛ւր (ԼԳ 1, 31, 33): Նախ՝ զի պատրաստ է: Երկրորդ՝ զի պիտանի է: Երրորդ՝ զբանս եւ զմիտս: Չորրորդ՝ ականջով եւ սրտով:

ՎԱՍՆ ՀՈԳԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ[191]

(ԼԳ 4) Եւ զի Աստուած է Հոգին՝ յայտնի չորս վկայութեամբ. նախ՝ Մովսէս ասէ. «Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» (Ծնն. Ա 2): Երկրորդ՝ աստ ասէ. Հոգի աստուածեղէն է եւ արարիչ (ԼԳ 4), զնոյնս եւ Յոբ ասաց: /75բ/ Երրորդ՝ Աւետարանն ասէ. «Հոգի է Աստուած եւ երկրպագուացն [նորա]» (Յովհ. Դ 24): Չորրորդ՝ Պետրոս ի Գործքն ասէ. «Զի՞ է, զի ստեցէր Հոգւոյն, ոչ ստեցէր մարդկան, այլ Աստուծոյ» (հմմտ. Գործք Ե 4): Իսկ Հոգի Տեառն ե՛ւ Սուրբ, ե՛ւ բարի եւ այլն, բազում է գտանել: Իսկ որ ասէ՝ հոգի եւ շունչ, նախ՝ միեւնոյն է հոգի եւ շունչ (հմմտ. Փիլիպ. Ա 27, Ա Թես. Ե 23): Դարձեալ Հոգի է, որ յինքեան մնայ եւ շունչ, որ

---

[189] Հմմտ. ՄՄ 1166, թ. 74ա. «Զի սատակիչ են /ա/անձինն մինչ լուռ կա եւ ի խաւսելն փաղաղէ եւ զայլս»: «Զուրուք արդար մարմին ցեց եւ որդն ոչ փաղաղեաց»:

[190] Հմմտ. նույն տեղում:

[191] Հմմտ. ՄՄ 1166, թ. 74աբ:

արտաքս հեղու (հմմտ. Է 15): Եւ դարձեալ. Հոգի գոյացական անձն է, եւ շունչ՝ շնորհաւքն է (7) արփեան, վասն որոյ գիրք Աստուածաշունչ կոչեմք:

Բան. Յապահովս (ԼԳ 5):

Լուծումն. Անհոգս:

(ԼԳ 6) Զչորից ոմանց բանս ոչ է պարտ լսել. նախ՝ թշնամեաց: Երկրորդ՝ զտգիտաց: Երրորդ՝ հպարտաց: Չորրորդ՝ բարկութեան:

(ԼԳ 11) Կոճեղս, ասէ, զմարմնոյ հարուածն, եւ պահել զճանապարհ մտաց, զի ոչ գտցէ ելս, որպէս ասէր. Ծո՞վ եմ կամ վիշապ, զի կարգեցէր պահս (Է 12):

Բան. Յաւիտենական է Աստուած (ԼԳ 12):

Լուծումն. Այսինքն՝ զի անսկիզբն է եւ անվախճան, եւ ի մէջս անփոփոխ, ճշմարիտ, բարի եւ այլն ամենայն: Իսկ մարդս ժամանակեայ, զի սկիզբն ունի եւ վախճան, եւ ի մէջն փոփոխական է ամենայն ինչ մարդոյ:

Իսկ որ ասէ մեկնիչն. Սպառնալիս, պատուէր, խոստմունս[192]: /76ա/

Լուծումն. Այն է, որ ասէ ի Գիրն. Խօսի Աստուած խոստմունքն, զգուշութիւն երազոյն, սպառնալիք, արհաւիրք (ԼԳ 15):

(ԼԳ 15) Զայս եւ Ելիփազ ասաց ի սկիզբն՝ տեսիլ երազոց, արհաւիրք, դողումն եւ այլն: Իսկ ըստ մտաց. նախ՝ սպառնալիք հեթանոսացն, պատուէրք հրէիցն, խոստմունք՝ Աւետարանն մեզ: Երկրորդ՝ միանն երկիւղ ծառայական եւ վարձականն եւ որդիական: Երրորդ՝ սպառնալիք չարեաց, զգուշութիւն զղջացելոց, խոստումն՝ բարեաց: Չորրորդ՝ զարհուրումն՝ մարմնոյս, զգուշութիւն՝ հոգւոյս, խոստումն՝ մտաց:

Բան. Կշտամբել (ԼԳ 19):

Լուծումն. Յանդիմանել եւ տանջել:

---

[192] Հմմտ. ՄՄ 1166, թ. 74բ-75ա:

Բան. Բազմակոյտ[193] *(ԼԳ 19):*
Լուծումն. Որպէս հողակոյտ:

Բան. Վստահ[194]*:*
Լուծումն. Համարձակ կամ յոյսն:
Եւ խելամուտն հմուտն է[195]:

ՎԱՍՆ ԿԵՐԱԿՐՈՅՆ ՅՈԲԱՅ[196]

(ԼԳ 20) Նախ՝ ունէր զվիշտն: Երկրորդ՝ զցանկութիւնն: Երրորդ՝ զկարօտն: Չորրորդ՝ չքաւոր էր:

Բան. Յամր (ԼԳ 21-22):
Լուծումն. Հեղգամիտ եւ բռնամիտ:

Բան. Ռ (1000)-ք հրեշտակաց (ԼԳ 23):
Լուծումն. Չորս ինչ ցուցանէ. նախ՝ զի հրեշտակն աւանդէ: Երկրորդ՝ խոցէ զչարս: /76բ/ Երրորդ՝ զսաստկութիւնն ասէ Ռ (1000)-ք: Չորրորդ՝ ակնարկէ զառաջին ասպատակն:

ՎԱՍՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ[197]

(ԼԳ 24) Ապաշխարութեանն Գ (3) են մասունք. նախ՝ զղջումն, որ ասէ՝ դառնալ առ Տէր (հմմտ. Ես. ԾԵ 7): Երկրորդ՝ խոստովանել, որ ասէ մարդոյ պատմել (հմմտ. Հռոմ. Ժ 9): Երրորդ՝ փոխարէն գործքն, որ ասէ՝ ցուցանել (հմմտ. Գործք ԻՁ 20):

Հարց. Վասն է՞ր Գ (3) մասունք:
Պատասխանի. Նախ՝ զի երիւք մեղանչեմք կա՛մ սրտիւ, կա՛մ բանիւ, կա՛մ գործով: Եւ սոքաւք ապաշխարեմք: Դարձեալ Աստուծոյ մեղանչեմք եւ կանոնաց, եւ ընկերին: Եւ արդ

---

[193] Հմմտ. ՄՄ 1166, թ. 75ա:
[194] Հմմտ. ՄՄ 1166, թ. 75բ:
[195] Հմմտ. նույն տեղում:
[196] Հմմտ. ՄՄ 1166, թ. 75աբ:
[197] Հմմտ. ՄՄ 1166, թ. 75բ:

զղջմամբն Աստուած թողու, եւ խոստովանութեամբ՝ կանոնքն, եւ հատուցմամբ՝ ընկերն: Եւ Ժ (10) շահ եւ օգուտ խոստովանութեան, զոր աստ ասէ. նախ՝ պահէ զհոգին ի մահու: Երկրորդ՝ ծածկէ զմեղս, որպէս ծէփ՝ զորմն (ԼԳ 25): Երրորդ՝ շնորհօք լցցի հոգին, որպէս ոսկերքն ըղղով (ԼԳ 25): Չորրորդ՝ խոնարհի հեզութեամբ, որպէս մարմին տղայոյ (ԼԳ 25): Հինգերորդ՝ արիանայ ի գործս, որպէս երիտասարդ (ԼԳ 25): Վեցերորդ՝ զաղօթս ընդունի Աստուած (ԼԳ 26): Եւթներորդ՝ պայծառ երեսօք մտցէ առ նա, որ լուրջ երես ասէ (ԼԳ 26): /77ա/ Ութերորդ՝ հատուցէ նմա ըստ արդար գործոյն (ԼԳ 26): Իններորդ՝ փրկէ զանձն յապականութենէ տանջանացն (ԼԳ 27): Տասներորդ՝ ի լոյս կենացն հասուցանէ (ԼԳ 28): Այսպէս լոյս է խոստովանիլն եւ լուսաւորէ զհոգին եւ ի լոյսն հանգուցանէ (ԼԳ 30): Այլեւ յարմարի բանս ի դէմս Յոբայ, որպէս ասէ մեկնիչդ: Այլեւ ի դէմս յարուցելոցն, որ նորոգեսցին մարմնով եւ հոգով:

ՎԱՍՆ Գ (3) ԳՈՐԾՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ[198]

Բան. Զայս ամենայն գործէ հզօրն երիս ճանապարհաւ ընդ առն (ԼԳ 29):

Լուծումն. Բազում է տեսութիւնն, եւ ասեմ Ժ (10) մտօք. նախ՝ որպէս ասացաւ՝ զղջմամբ եւ խոստովանութեամբ, եւ արդար գործով: Երկրորդ՝ մարմնով եւ հոգւով, եւ մտօք որպէս ասացաւ: Երրորդ՝ երեք որպիսութեամբ՝ աստ եւ յետ մահու, եւ ի հանդերձեալն: Չորրորդ՝ ասէ Սուրբն Ստեփանոս Սիւնեցի «Աստուածային խրատն երեք պատիկ է, այսինքն՝ դառնալն ի չարեաց, գործել զբարիս եւ առնուլ զխոստումն»[199]: Հինգերորդ՝ առ Յոբ տեսանի, այսինքն՝ ի կործանումն ստացուածոց, երկրորդ՝ մահ զա-

---

[198] Հմմտ. ՄՄ 1166, թ. 75բ-76ա:

[199] Հմմտ. ՄՄ 1166, թ. 75բ. «Աստուածա[յ]ին խրատն երեք պատիկ է, հեռանալ ի չարութենէ, ստանալ զառաքինութիւն, խոստումն աւետեաց հանդերձելոց»:

ւակացն, երրորդ՝ հարուածք մարմնոյն: Վեցերորդ՝ ասէ վարդապետն /77բ/ Դաւիթ. Աստուած երեք կերպիւ խրատէ զմարդ. նախ՝ այլոց պատուհասիւ: Երկրորդ՝ թէ այնու ոչ խրատի՝ զանձն նորա գանէ: Երրորդ՝ թէ այնու ոչ ուղղի՝ ի մահուամբ խրատեսցէ[200]: Եւթներորդ՝ այն Գ (3) կերպն, որ ասաց, նախ՝ թէ մի անգամ խօսի Աստուած, եւ թէ մոռանան՝ երազ տեսանեն, եւ թէ զայն մոռանան՝ ահ եւ դողումն տայ: Ութերորդ՝ այլեւս Գ (3) է կարգ ճանապարհին Աստուծոյ, այսինքն՝ նախքան զստեղծանելն, որ է տեսութիւնն Աստուծոյ եւ ի ստեղծանելն, եւ յետոյ՝ նախախնամելն: Զայսմանէ ասէ Պորփիւր. Նախքան զբազումս, ի բազումս եւ ի վերայ բազմաց[201]: Իններորդ՝ երեք կերպ է արարչութեանն Աստուծոյ. նախ՝ ստեղծանէ յոչ գոյից: Երկրորդ՝ նորոգէ ի մեղաց: Երրորդ՝ յարուցանէ եւ փրկէ յապականութեանց: Տասներորդ՝ միտք զդէմս Երրորդութեանն յայտնէ, զմինն առնէ Հայր, նորոգէ Որդի, յարուցանէ Հոգին Սուրբ: Եւ նմա փառք յաւիտեանս:

Գ. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ԵԼԻՈՒՍԱՅ[202]

Երրորդ ճառն Ելիուսայ յանցեալն ասաց վասն գործոց, աստ՝ վասն դատաստանին Աստուծոյ եւ /78ա/ հատուցման գործոց:

Բան. Լուռ, լուռ է արդար (ԼԴ 2):

Լուծումն. Այսինքն՝ ի չարէ, ի ստէ, ի բամբասանաց եւ այլն: Իսկ կրկինն որպէս ասէ Յակոբոս. «Ծանր ի խօսել եւ ծանր առ ի բարկանալ» (Յակոբ. Ա 19): Այլեւ, ընդդէմ չարին եւ չար մարդկան որպէս Դաւիթ լռեաց: Եւ հնգիւք իմանի. նախ՝ ի չարէն գործով եւ բանիւ լռել: Երկրորդ՝ սրտիւ եւ լեզուով: Երրորդ՝ ոչ բարկանալ եւ

---

200 Հմմտ. ՄՄ 1166, թ. 75բ:
201 Տե՛ս *Ներածութիւն Պորփիւրի*, էջ 275. բնագիրը տե՛ս նաեւ՝ ՍՀ, հտ. Գ, Ջ դար, էջ 240:
202 Հմմտ. ՄՄ 1166, թ. 76ա:

ոչ բարկացուցանել: Չորրորդ՝ խուլ եւ լուռ լինել: Հինգերորդ՝ կամաւ եւ գիտութեամբ եւ այլովն լռել ի չարէ: Եւ ոչ ամենայն ուրեք պարտ է լռել, այլ զբարին եւ զճշմարիտն, եւ զդաւանութիւն, եւ խոստովանելն պարտ է խօսել եւ ոչ լռել: Միտք՝ զբանս քննէ եւ ունկն՝ զձայն (ԼԴ 3): Կոկորդ՝ բերանն է, քիմք՝ առաստաղն է (ԼԴ 3):

ՎԱՍՆ ՋՐՈՅ[203]

(ԼԴ 7) Նախ՝ ջուր ուրախ առնէ, եւ յանդիմանութիւնն՝ զՅոբ: Երկրորդ՝ մխիթարի: Երրորդ՝ խառնի: Չորրոդ՝ նովաւ ծաղկի եւ պտղաբերի: Այն է արդար, որ ո՛չ ծածուկ եւ ո՛չ յայտնի, ո՛չ յառաջ, եւ ո՛չ յետոյ, եւ ո՛չ չարեաց ընկեր լինի: Եւ չորս կերպիւ ընկեր լինին, այսինքն՝ կամօք ե՛ւ /78բ/ բանիւ, ե՛ւ յարակցիլ, ե՛ւ գործով:

ՎԱՍՆ ՀԱՏՈՒՑՄԱՆՑ[204]

(ԼԴ 11) Իսկ որ կրկին ասէ այցելութիւն, այսինքն՝ խնդիր, չորիւք իմանի. նախ՝ գործոց խնդիր եւ հատուցմանց: Երկրորդ՝ հոգւոյ եւ մարմնոյ: Երրորդ՝ բարեաց եւ չարեաց: Չորրորդ՝ աստ եւ անդ: Դարձեալ հատուցումն ըստ իւրաքանչիւր գործոց: Եւ այս չորս կերպիւ. նախ՝ հատուցումն չարեաց եւ բարեաց: Երկրորդ՝ բարեաց հատուցումն առաւել եւ նուազ, նոյնպէս՝ չարեաց: Երրորդ՝ ըստ իւրաքանչիւր մասանց հոգւոյ եւ մարմնոյ՝ եթէ բարեացն եւ եթէ չարեաց: Չորրորդ՝ պարզապէս ըստ գործոցն հատուցումն, այսինքն՝ կամաւորի եւ ակամայի գիտութեան եւ այլն:

---

[203] Հմմտ. ՍՍ 1166, թ. 76բ:
[204] Հմմտ. նույն տեղում:

Հարց. Վասն է՞ր ասէ մարգարէութիւնն՝ յորս գտայց՝ ի նոյն դատեցայց (հմմտ. Մատթ. Է 2-5) եւ աստ ասէ՝ թէ ի մեղս, թէ յարդարութիւն ի նոյն դատեցայց (ԼԴ 11):

Պատասխանի. Ասէ զայս ի դէմս չորից ոմանց. նախ՝ ի դէմս արդարոց, զի արիասցին օրըստօրէ: Երկրորդ՝ ի դէմս մեղաւորաց, զի զղջասցին եւ մի յուսահատեսցին: Երրորդ՝ ի դէմս ծերոց, զի այլ մի սիրեսցեն զաշխարհ: Չորրորդ՝ ի դէմս հիւանդաց, զի խոստովանեսցեն զմեղս եւ գտցեն զողորմութիւն, որպէս աւազակն խաչեալ:

ՎԱՍՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ[205]

(ԼԴ 12) Չորիւք իմանի պղտորումն դատաստանին. նախ՝ թէ ոչ տեսանէ Աստուած զգործս բարեաց եւ չարեաց, որպէս ա/79ա/սէին. «Ոչ տեսանէ զայս Տէր եւ ոչ ի միտ առնու» (Սաղմ. ՂԳ 7): Երկրորդ՝ թէ ոչ ճանաչէ եւ քննէ, ըստ այնմ. «Ասաց ի սրտի իւրում, թէ ոչ քննի» (Սաղմ. Թ 13): Երրորդ՝ թէ տեսանէ եւ ճանաչէ, այլ ոչ դատի, ըստ այնմ. Որ ոմանք յամր համարեցան զդատաստանն (հմմտ. ԺԳ 5-6) եւ այլն: Չորրորդ՝ թէ դատի պղտոր առնէ, որպէս թէ՝ չարացն բարի եւ բարեացն չար: Իսկ թէ տեսանէ զգործս, յայտ է նախ յայնմանէ, զի ամենակալ է, այսինքն՝ ամենունակ եւ ամենախնամ, եւ ամենատես: Երկրորդ՝ յայնմանէ, զի Տէր է եւ քննօղ, եւ դատող: Երրորդ՝ յայնմանէ, զի Աստուած է եւ արարիչ, զարարեալն յինքենէ գիտէ եւ տեսանէ: Չորրորդ՝ յայտ է, որ ետ շունչ կենդանեաց եւ թէ կամի՝ արգիլէ եւ մահացնէ:

[205] Հմմտ. ՍՍ 1166, թ. 76բ-77ա:

ՎԱՍՆ ՔՐԷԱԿԱՆ ՄԵՂԱՑ[206]

Բան. Ամբարիշտ է, որ ասէ ցթագաւորս, թէ անօրէն ես (ԼԴ 18) եւ այլն:

Լուծումն. Ըստ մարմնոյ գիտելի է, զի Դ (4) կարգ են մարդկան, որպէս ի ներքուստ ի վեր. նախ՝ շինականք: Երկրորդ՝ ազատք: Երրորդ՝ իշխանք: Չորրորդ՝ թագաւորք: Եւ սոյնպէս կոչեմք զպատուաւորս ազատաց ազատ, որ է իշխան եւ իշխանաց իշխան, որ է թագաւոր, իսկ թագաւորաց թագաւոր, որ է կայսր: Իսկ հոգէպէս թագաւոր է Աստուած ի վերայ ամենայնի, եւ իշխանք՝ հրեշտակք, ազատք՝ բանական մարդիկ, /79բ/ շինականք, կենդանիք ամենայն: Արդ, որ զԱստուած հայհոյէ. նախ՝ զի մեծ է յանցանք: Երկրորդ՝ քրէական է պատիժ տամբ կործանումն: Երրորդ՝ զի ոչ ոք պատուէ զնա: Չորրորդ՝ եւ ոչ ոք բարեխօսել կարէ:

ՎԱՍՆ ԱՂՔԱՏԱՑ[207]

(ԼԴ 19) Կրկին է իրաւունք տնանկին. նախ՝ ողորմութիւն: Երկրորդ՝ դատաստան ի զրկողաց, որպէս արար Քրիստոս առաջին գալստեամբն եւ վերջին: Զի աղաղակ՝ վասն ողորմութեան է եւ բողոքելն՝ դատ խընդրելն է: Ըստ այնմ. «Վասն հեծութեան տնանգին» (Սաղմ. ԺԱ 6) եւ այլն:

ՎԱՍՆ ՏԵՍՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ[208]

(ԼԴ 21) Աստուած տեսանէ զգործս մարդկան չորս կերպիւ, այսինքն՝ զխորհուրդն եւ զգործն, զանցեալն եւ զանգործն: Իսկ մարդ զմիւսն տեսանէ, այլեւ ո՛չ ժամանակ, եւ ո՛չ տեղիք, եւ ո՛չ ծածկոյթ, եւ ո՛չ խորհուրդ չկարեն թաքուցանել՝ ո՛չ աստ եւ ո՛չ անդ:

---

[206] Հմմտ. ՍՍ 1166, թ. 77ա:
[207] Հմմտ. ՍՍ 1166, թ. 77աբ:
[208] Հմմտ. ՍՍ 1166, թ. 77բ:

ՎԱՍՆ ՀՐԱՇԻՑՆ ԱՍՏՈՒԾՈՅ[209]

Բան. Որ հասանէ անքննականաց եւ փառաւորաց եւ հրաշակերտաց (ԼԴ 24):

Լուծումն. Զայս Ելիփազ եւ Յոբ ասացին եւ սա զնոյն կրկնէ: Եւ ասեմ Ե (5) մտօք. նախ՝ անքնին է անցեալն, փառաւոր՝ ներկայն, հրաշակերտ՝ հանդերձեալն: Երկրորդ՝ քնէ Հոգին, Տէր փառաց՝ Որդի, հրաշագործէ՝ Հայր: Երրորդ՝ առաջին, միջին եւ վերջին արարչութիւնն: /80ա/ Չորրորդ՝ ի յերկինս եւ յերկրի եւ ի դժոխս: Հինգերորդ՝ անքնին ի վեր, քան զմիտս, փառաւոր՝ ի վեր, քան զգայութիւնս, հրաշակերտ՝ ի վեր, քան զբնութիւնս:

Բան. Որ ճանաչէ զգործս (ԼԴ 25):

Լուծումն. Ասաց, թէ տեսանէ զգործս: Այժմ ասէ՝ ճանաչէ: Չորս կերպիւ. նախ՝ ճանաչէ զբարի եւ զչար: Երկրորդ՝ զպատճառն՝ կամաւ թէ ակամայ: Երրորդ՝ զհատուցումն նոցին: Չորրորդ՝ զժամանակ հատուցման:

Բան. Մատնացոյց (ԼԴ 26):

Լուծումն. Նախ՝ բանսարկուն առ Աստուած մատնեաց: Երկրորդ՝ ի ձեռս ասպատակացն: Երրորդ՝ զբարեկամսն շարժեաց: Իսկ առ Աստուած մատնացոյց. նախ՝ թոյլ տալն է: Երկրորդ՝ պատուհասելն աստ: Երրորդ՝ ի կատարածի, որ յայտնապէս հատուցանէ:

Հարց. Վասն է՞ր ծածուկ գործոցն յայտնի հատուցումն է (ԼԴ 29):

Պատասխանի. Վասն չորից. նախ՝ զի երեւեսցի, թէ ծածկագէտ է: Երկրորդ՝ զի վկայեսցեն արարածք արդար հատուցմանն: Երրորդ՝ յերկիւղ չարեաց: Չորրորդ՝ յորդորումն բարեաց:

---

[209] Հմմտ. ՄՄ 1166, թ. 77բ:

ԴԱՐՁԵԱԼ ՎԱՍՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ[210]

Հարց. Զի՞նչ է, որ զտեսութիւնն Աստուծոյ ծածկէ (ԼԴ 29):

Պատասխանի. Ոչինչ ի յարարածս կարէ ծածկել զերեսն Աստուծոյ կամ ընդդէմ կալ հրամանի նորա՝ բայց միայն զղջումն, խոստովանել եւ ապաշխարել: Եւ այս է /80բ/ պատճառն, զի Աստուած նախ՝ տեսանէ զգործս եւ քննէ, եւ ապա՝ դատէ եւ հատուցանէ: Արդ յորժամ զղջանամք անտես առնէ զգործս եւ ոչ քննէ, եւ յորժամ խոստովանիմք, այլ ոչ դատէ, զի դատաւոր քահանայն լինի:

Եւ հատուցումն կրկին է, այսինքն՝ բարեաց եւ չարեաց, եւ ապաշխարելն կրկին է, այսինքն՝ խոտորել ի չարէ եւ առնել զբարի, որով զերծանի ի պատժոյն եւ առնու զվարձս: Այս է, զոր ասէ մարգարէն՝ «Խոստովանեա զմեղս քո զի արդարացիս» (հմմտ. Սաղմ. ԽԱ 6, 12): Եւ աստ ասէ՝ Այլ ոչ ոք պահանջէ ի քէն (հմմտ. ԼԴ 33): Այսինքն՝ զմեղս խոստովանել ոչ ոք խնդրէ՝ ո՛չ Աստուած եւ ո՛չ հրեշտակք, եւ ո՛չ մարդիկ, եւ ո՛չ դեւք:

Հարց. Վասն է՞ր կամօք պարտ է ապաշխարել (ԼԴ 33), որպէս ասէ Դաւիթ. Ես կամօք իմովք խոստովան եղէց քեզ (Սաղմ. ԻԷ 7):

[Պատասխանի.] Վասն չորից. նախ՝ զի կամօք մեղանչեաց, կամօք զղջացցի: Երկրորդ՝ զի կամօքն վարձք ունի: Երրորդ՝ զի կամաց պտուղն այն է: Չորրորդ՝ զի կամօքն սիրելի է եւ հաստատ մնայ: Այսքան առ այս:

Դ. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ԵԼԻ[Փ]ՈՒՍԱՅ[211]

Չորրորդ ճառն դարձեալ յանդիմանութիւն ընդդէմ Յոբայ: Չորս ճառիւս իմաստուն կարծէ, քան զութ ճառս բարեկամացն: /81ա/

---

[210] Հմմտ. ՍՍ 1166, թ. 77բ:
[211] Հմմտ. ՍՍ 1166, թ. 78ա:

Հարց. Վասն է՞ր այնքան լռեաց Յոբ (ԼԴ 36):

Պատասխանի. Ոչ թէ տըկարացաւ, որպէս բարեկամքն առ Յոբ, այլ վասն ութ պատճառի. նախ՝ վասն բարկութեանն Ելիուսայ լռեաց: Երկրորդ՝ վասն յանդիմանութեանն: Երրորդ՝ վասն անզգամութեանն: Ուսուցանէ զմեզ, թէ յայսոսիկ պարտ է լռել: Չորրորդ՝ վասն աղաչանաց նորա: Հինգերորդ՝ վասն արդարութեան իւրոյ: Վեցերորդ՝ վասն ժուժկալութեան: Եւթներորդ՝ վասն խոնարհութեան: Ութերորդ՝ վասն վկայութեանն Աստուծոյ, զի կրկնեսցի յամպոյն:

Բան. Զի՞նչ իրաւունս համարեցար (ԼԵ 2):

Լուծումն. Նախ՝ մտօքն խորհի, եւ ապա՝ խօսի, յանդիմանէ: Երբեմն արդար ասես, երբ յանցաւոր այդ հակառակեն: Չորս վնաս կայ. նախ՝ անիրաւ: Երկրորդ՝ սուտ: Երրորդ՝ տգէտ: Չորրորդ՝ մոլորումն, որ ասէ եւ որ լսէ:

ՎԱՍՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ[212]

Հարց. Զի՞նչ է անդրէ, քան՝ զամենայն:

Պատասխանի. Չորիւք իմանի. նախ՝ ըստ բառին հեռագոյն, բարձր, առաջին եւ գերագոյն լսի: Երկրորդ՝ էութեամբ, զօրութեամբ, իմաստութեամբ եւ փառօք եւ այլն, զի անեղ եւ անսկիզբն է: Երրորդ՝ զի անիմանալի է վերնոցն եւ անքննելի, անտեսանելի, եւ անճառելի մեզ: Չորրորդ՝ զի անսահմանելի, անպարունակելի եւ անհաս է: /81բ/ Այս է անդր, քան զամենայն Աստուած: Իսկ երկայն եւ լայն, եւ խոր տե՛ս ի Գիրս հարցմանց, Գ (3) հատորն, ԻԳ (23) համարն[213]:

---

[212] Հմմտ. ՍՍ 1166, թ. 78ա:

[213] Տե՛ս *Գիրք հարցմանց*, հտ. Գ, պրակ ԻԳ, էջ 129:

ՈՐՉԱՓՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ[214]

Հարց. Ո՞րչափ իմանամք զբարձրութիւն օդոյ եւ երկնից (Լե 5):

Պատասխանի. Ջերկիրս ի մէջէն ասացեալ, այլ տարերց որպէս կէտ կարակնի[215]: Արդ որչափ ի կիտէն ի բոլոր ծիրն վեց այնչափ է բոլորակ ծիրն, վասն որոյ վեցպատիկ ասեն զջուրս ծովուն, քան զերկիր: Այսպէս էր գնդաձեւ ի սկիզբն ստ[ե]ղծմանն: Այլ, զի ջուրքն բաժանեցան ի վեր ի յերկինս եւ ի ծովս օդն մերձեցաւ ի յերկիր վասն ցամաքութեան երկրի եւ շնչոց կենդանեաց, եւ բուսոց, եւ լուսոյ, եւ այլն: Իսկ օդն ունի զտեղիքն ի վերայ ջրոյ, եւ հուրն ի վերայ օդոյ գնդապէս: Արդ որպէս ջուր վեց չափ է, քան զերկիր, նոյնպէս օդ վեց է, քան զջուր, եւ հուրն վեց չափ, քան զօդ բոլորապէս պատեալ: Այսպէս եւ կամար Լուսնին պարունակեալ է զտարր հրոյ: Նոյնպէս է (7) մոլորակք՝ մին քան զմի մեծ եւ պարունակող միմեանց, մինչեւ յԸ (8) կամարն անմոլար գունդն երկնից[216]: Եւ իւրաքանչիւր կամարք ի միմեանս հպեալք են ոչ ինչ գոլով ի մէջ, որպէս ջուր ընդ երկիր եւ օդ ընդ ջուր հպեալ, վասն որոյ չափեն զմիմեանս: /82ա/ Եւ այս վեց կողմ աշխարհի բարձր երկինք, խոր երկիր, գլուխն՝ ի հարաւ, ոտքն՝ ի հիւսիս, որ է երկայնք, եւ աջն՝ արեւելք, եւ ձախն՝ արեւմուտք, որ է լայն: Իսկ որ ասէ, չարութիւն մեր ոչ վնասեն նմա, վասն զի անդրէ, որպէս ցուցաւ, այլ ի գործողն դառնայ պատիժն, որպէս քար ի վեր ձգեալ դառնայ ի գլուխ ձգողին: Իսկ բարիքն մեր նմա չեն պիտանի, զի անկարօտ է եւ կատարեալ: Անկարօտն ոչ նուազի, եւ կատարեալն ոչ յաւելու: Այլ մարդկան կարեմք չար առնել եւ բարի: Այլեւ տարերք ընդ մեզ ապականեցան եւ ընդ մեզ նորոգին

---

[214] Հմմտ. ՄՄ 1166, թ. 78ա:

[215] Բոլորաձեւ:

[216] Հմմտ. **Արիստոտել**, *Յաղագս աշխարհի*. էջ 606. «....զստորնագոյնն եւ-թանցն պարունակեալ, եւ ամենեցուն ընդ անմոլարիցն պարառողի գնտովն կալով»:

վասն չորից. նախ՝ վասն միոյ նիւթոյն: Երկրորդ՝ վասն ժամանակին: Երրորդ՝ զի գոյակից եմք: Չորրորդ՝ նոյն բնութեամբ:

ՎԱՍՆ ՄԱՐԴԿԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ[217]

Հարց. Վասն է՞ր կարօտ է փրկութեան մարդկան (հմմտ. Լե 6):

Պատասխանի. Նախ՝ վասն պատկերին: Երկրորդ՝ վասն պատուոյն: Երրորդ՝ վասն խոստմանն: Չորրորդ՝ վասն կամացն Արարչին, որ դրժեցաւ ի չարէն: Դարձեալ գիտելի է, զի սկիզբն փրկութեանն է սէրն, եւ հետեւումն է՝ հոգացումն, եւ կատարումն եղեւ Տէր մեր: Եւ հոգացումն սկսաւ ի յօրէնքն եւ եկն ի մարգարէս եւ յԱւետարանս եւ ընթանայ յաւիտենից կեանսն: Այսքան առ այս:

Բան. Ո՞ւր է Աստուած (Լե 10):

Լուծումն. Դատ խնդրելն է: Ասէ ի քեզ կատարեալ է դատաստան հատուցման, ոչ կարես օգնել այլոց, վասն քո տկարութեանդ:

ՎԱՍՆ ՉԱՐ ԳՈՐԾՈՑ[218]

Հարց. Անկարգութիւն (Լե 13):

Լուծումն. Անօրէնութիւնն է եւ չարն: Այլ չորս կերպիւ է. նախ՝ մտաց անկարգութիւն: Երկրորդ՝ բանից: /82բ/ Երրորդ՝ գործոց: Չորրորդ՝ բնութեան: Եւ վասն չորից չարն ոչ է գործելի. նախ՝ զի ատելի է Աստուծոյ, ասէ: Երկրորդ՝ զի սիր[ե]լի է չարին: Երրորդ՝ նախ ատելի է ամենայն սրբոց: Չորրորդ՝ կորուստ է հոգւոց եւ մարմնոց: Ամենակալն որպէս ցուցաւ ի վերոյ. նախ՝ ամենաստեղծ: Երկրորդ՝ ամէնունակ: Երրորդ՝ ամենախնամ: Չորրորդ՝ ամենատես լսի:

---

[217] Հմմտ. ՍՍ 1166, թ. 78բ:
[218] Հմմտ. նույն տեղում:

Բան. Փերեւետեալ[219]*:*

Լուծումն. Զարդարեալ: Մարգարէն. «Ահա մեղաւորք եւ յաջողեալ [է նոցա]» (Սաղմ. ՀԲ 12): Եւ Տէրն. «Երանի աղքատաց, զի նոցա է արքայութիւնն երկնից» (Մատթ. Ե 4-5):

Ե. ԿՐԿՆԵԱԼ ԱՆԴՐԷՆ ԵԼԻՈՒՍԱՅ[220]

Հինգերորդ ճառս հայի ի վերջին ճառն Յոբայ եւ սակաւ ինչ ի վերջքն վասն արարչութեանն Աստուծոյ պատմէ: Եւ չորս կերպիւ յանդիմանէին զՅոբ եթէ՛ Ելիուս, եւ եթէ՛ բարեկամքն. նախ՝ ի բանիցն առեալ յանդիմանէին, թէ արդար ասես զքեզ եւ այլն: Երկրորդ՝ ի գործոցն, թէ ամբարիշտ եւ անիրաւ եւ այլն: Երրորդ՝ ի հարուածոց մարմնոյն: Չորրորդ՝ դատաստանաւն Աստուծոյ, որ արար նմա:

ՎԱՍՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ[221]

Աստ դնէ վասն խոնարհութեան Ժ (10) գովութիւն եւ յատկութիւն. նախ՝ ասէ գովելի է խոնարհութիւն, այսինքն՝ գեղեցիկ է ի յինքեան, զի գովելի են գեղե/83ա/ցիկքն, ասէ իմաստունն[222]: Երկրորդ՝ զարդ ամենայն առաքինութեանց տեսականին եւ գործնականին, զի տգեղ են առանց խոնարհութեան: Երրորդ՝ գլուխ եւ կատարումն է ամենայն բարի գործոց, զի պահք եւ աղօթք, եւ ողորմութիւն սովաւ կատարին: Չորրորդ՝ զի Տէր մեր կատարեաց եւ ուսոյց մեզ. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ» (Մատթ. ԺԱ 29), ասէ: Հինգերորդ՝ ամենայն տեսակ առաքինութեան թէ՛ հոգեւոր եւ թէ՛ մարմնաւոր, ի խոնարհութենէն

---

[219] Հմմտ. ՍՍ 1166, թ. 78բ. «Զիա՞րդ ամբարիշտք փերեւետեալ շրջին ի կենցաղումս»: Փերեւետեալ իմա՛ զարդարեալ. տե՛ս ՆԲՀԼ, հտ. Բ, էջ 941:
[220] Հմմտ. ՍՍ 1166, թ. 78բ-79ա:
[221] Հմմտ. ՍՍ 1166, թ. 79ա:
[222] Հմմտ. **Արիստոտէլ**, *Յաղագս առաքինութեանց*, էջ 629:

սկսանին: Վեցերորդ՝ ընդդէմ է հպարտութեան եւ ամբարտաւանութեան, զի որպէս նա սկիզբն է ամենայն չարեաց եւ սա սկիզբն է ամենայն բարեաց: Եւթներորդ՝ ծնունդ է հեզութեան, մարդասիրութեան, երկայնամտութեան եւ քաղցրութեան:

Սոքա են առաքինութիւնք ներքին մասանց հոգւոյն. հեզութիւն՝ ցասման, քաղցրութիւնն՝ ցանկութեան, մարդասիրութիւն՝ կամացն եւ երկայնմտութիւնն իմացմանն է[223]: Արդ խոնարհութիւնն բնութեամբ ծնունդ է բանական մասին, այլ ներգործութեամբ ի սոցանէ ծնանի եւ երեւի: Ութերորդ՝ ի խոնարհութենէն սէրն յառաջի: Եւ չէ զարմանք, թէ լինի սիրոյն ծնունդք եւ սիրոյն ծնօղ, զի հոգեւորն այնպէս է, որ ծնանիմք ի Հօրէ եւ ծեռնադրեմք կամ մկրտեմք զՀայրն: Իններորդ՝ խոնարհութիւն առիթ եւ պատճառ լինի համբերութեան, /83բ/ որ ծնօղն է ամենայն բարեաց: Տասներորդ՝ խոնարհութեամբ յաղթեմք չարին, զի յորժամ խոնարհիմք եւ ընդ մեղաւորս համարիմք՝ յաղթեմք զչարն, որպէս Յոբ խոնարհութեամբն յաղթեաց զբանսարկուն եւ զայլ հակառակսն: Չորս է բանին ճշմարտութիւն. նախ՝ որ յԱստուծոյ լինի: Երկրորդ՝ ի միտքն պատրաստեալ լինի: Երրորդ՝ որ վկայ լինի: Չորրորդ՝ ի յարդեանցն ճշմարիտ երեւի:

Սանուկն[224] ի մարդկանէ ուսեալ եւ չափաւոր եւ ճարտասանն ի յարելն ճարտար, այլեւ զսուտն ճշմարիտ ցուցանէ (ԼՁ 5-6):

Ընդ ակամբ հայելն՝ ընդ աչիւք առնելն է (ԼՁ 7):

Բան. Կաշկանդելն (ԼՁ 8):

Լուծումն. Կապ ի վերայ կապի կշկռել, այսինքն՝ որ մարդն ռիշտ լինի եւ տմարդի: «Ի գործս ձեռաց կապին մեղաւորք» (Սաղմ. Թ 17), ասէ մարգարէն: Եւ Տէրն. «Կապեցէք զձեռս եւ զոտս» (Մատթ. ԻԲ 13):

---

[223] Հմմտ. **Արիստոտէլ**, *Յաղագս առաքինութեանց*, էջ 629-630:

[224] Հմմտ. ՍՍ 1166, թ. 79ա. «....տակաւին գոն յիս բանք առեալ ի հեռաստանէ զհանճար իմ ոչ որպէս մանկան....»:

Բան. Թէ լուիցեն (ԼԶ 11):

Լուծումն. Թէ դարձցին՝ զաւուրս իւրեանց կատարեն եւ թէ ծառայեն Աստուծոյ՝ զամսն յաւիտենից վայելեն: Յորժամ բնական օրինաւքն խրատին եւ բանիւ խրատին եւ գործով խրատին եւ ոչ զոջանան, զբարկութիւն մահուն շարժեն ի վերայ ինքեանց կա՛մ աստ, կա՛մ ի հանդերձեալն:

Բան. Ոչ գուժել (ԼԶ 13):

Լուծումն. Ոչ աղաղակելն է, զի մեղք եւ բարկութիւնն կապէ զնա:

ՆՇԱՆ ՏԱՐԱԺԱՄ ՄԱՀՈՒ[225]

(ԼԶ 14) Հրեշտակին խոցելն մահտարաժամն է: Եւ ի ներսն կա՛մ զսիրտն խոցէ, կա՛մ զլեարդն, /84ա/ կա՛մ զուղիղն: Նոյնպէս եւ արտաքս խոց գայ ի դուրս, յուղիղն է խոցեալ՝ ի գլուխն ելանէ եւ սակաւք ապրին, թէ ի սիրտն է՝ ի յանթն ելանէ եւ կէսք ապրին, թէ ի լեարդն՝ յաճուկն երեւի նշան եւ սակաւք մեռանին:

Բան. Պարարտ եւ խոնաւ կեանք (ԼԶ 16):

Լուծումն. Կերակուր եւ ըմպելիք մեծատանց, որպէս աղքատացն՝ չոր եւ ցամաք: Այլեւ պարարտն յերկրէ եւ յերկիր լուծանի եւ խոնաւն՝ ի ջուր, եւ այլ ոչ ժողովին:

Մզել եւ քամելն, որպէս պարարտ իրաց եւ ջրոյ, որ կէսն մնայ:

Բան. Լծակից է[226]:

Լուծումն. Նեղութիւն եւ մեղքն մեր: Այլեւ հաւասարք են, երբ մեղքն պակասի եւ նեղութիւնն պակասի:

---

[225] Հմմտ. ՍՍ 1166, թ. 79բ-80ա:
[226] Հմմտ. ՍՍ 1166, թ. 80ա:

ՎԱՍՆ ԿԱՇԱՌՈՑ[227]

(ԼՁ 18) Սարմնաւոր կաշառքն կրկին է. Է՛ ամենեւին չար, որ զարդարն ստէ, եւ Է՛ մասնաւոր չար, որ զարդարն ճշմարտէ կաշառօքն: Այն, որ չար է, յերեք դէմս, այսինքն՝ առնողին եւ տուողին, եւ դատաստանին Աստուծոյ, որ թիւրի: Եւ մասնաւորն չար է առնողին, այլ տուողին եւ դատաստանին ուղղութիւն է: Եւ չորս է վնաս կաշառուց. նախ՝ զմիտս դատաւորին խաւարէ: Երկրորդ՝ զդատաստանն Աստուծոյ թիւրէ (ԼՁ 19): Երրորդ՝ ամբարշտութիւն է, ասէ, զի միապէս աւտարացնեն յԱստուծոյ (ԼՁ 20): Չորրորդ՝ ի խղճէ մտացն դատի, եւ զխնդրուածքն ոչ օրհնէ, այսինքն՝ ոչ շնորհէ (ԼՁ 21): Հզօր է (ԼՁ 22) Աստուած, որ թէ փրկէ զարդարն, /84բ/ եւ պատժէ զչարն. նախ՝ զի ոչ ոք խափանէ: Երկրորդ՝ ոչ ոք քննէ զպատճառն (ԼՁ 23): Երրորդ՝ ոչ ոք անիրաւ (ԼՁ 23) ասէ, զի եւ պատժելն գործ արդարութեան է:

Բան. Յիշեա զմեծամեծ գործս (ԼՁ 24):

Լուծումն. Աստի յառաջ զմեծագործութիւնքն պատմէ վասն երեք պատճառի. նախ զի ասաց, թէ անքնին եւ փառաւոր, եւ հրաշակերտք են, այժմ ընդարձակ մեկնէ: Երկրորդ՝ վասն արարչութեանն ասաց, զնոյն վերստին յիշէ: Երրորդ՝ նախաշաւիղ է այնմ, որ յամպոյն խաւսի, զի զնոյնս պատմէ: Հովանին (ԼՁ 28) մի է ի վերայ բազմաց եւ միատեսակ է ցօղելն, այլ ըստ զանազան բարուց ընդունին: Նոյնպէս եւ ժամանակն մի է, այլ ներքոյքն զանազանին: Այսպէս խնամքն Աստուծոյ մի է, այլ մեք զանազան որպիսութեամբ ընդունիմք:

Եւ աստ գիտելի է, զի յերկար պատմութիւնդ յերեք դէմս գլխաւորի, այսինքն՝ որ առնէ եւ զորս առնէ, եւ որոց առնէ: Որ առնէ՝ արարիչն Աստուած, զորս առնէ՝ տարերաց փոխելն, որոց առնէ՝ մեզ արարելոցս իմաստ: Արդ առաջին՝ ի յԱրարիչն, չորս ինչ իմանամք ի սոցանէ. /85ա/ նախ՝ զզօրութիւնն: Երկրորդ՝

[227] Հմմտ. ՄՄ 1166, թ. 80ա:

զիմաստութիւնն: Երրորդ՝ զարարչութիւն: Չորրորդ՝ զնախախնամութիւն: Երկրորդն՝ ի տարերացս չորս ինչ իմանամք. նախ՝ զի եղականք են: Երկրորդ՝ փոփոխականք: Երրորդ՝ ի հրամանն Աստուծոյ են: Չորրորդ՝ եւ սպասաւոր մեզ: Ձհինգերորդն՝ մեզ արարելոցս, չորս ինչ իմանամք ի սոցանէ. նախ՝ զտկարութիւն մեր: Երկրորդ՝ զփոփոխումն կենաց: Երրորդ՝ զերկիւղ չարեաց: Չորրորդ՝ զպարգեւս բարեաց: Եւ ամենայն միտք ճառիդ յայտնասիկ նային:

Տկարութիւնս[228] (ԼՁ 28) յայտնի է ի զօրութիւն եւ ի գիտութիւնս մեր: Եւ փոփոխումն՝ ձիւն ի մէջ ամպոյն եւ յերկրի, եւ ձմերայնի (ԼՁ 28): Այսպէս ի միտս եւ ի մարմինս, եւ ի կեանս մեր փոփոխիմք, իսկ երկիւղն՝ ի կարկուտ, ի ձիւն, ի ցոլմունս եւ յորոտ, իսկ պարգեւն՝ յանձրեւ, ի ցաւղ, ի պտուղս եւ ի հովանիս: /85բ/ Եւ ամպն ի Դ (4) իրաց ծածկէ. նախ՝ զերեսս երկնի: Երկրորդ՝ զլուսաւորս: Երրորդ՝ զտապն: Չորրորդ՝ զլոյսն (ԼՁ 28):

ՎԱՍՆ ԼՐՈՅ[229]

(ԼԷ 2) Չորս բառ են. լու, որ նշանակէ զլսել մտաց, լուր՝ ականջաց, զլուր՝ համբաւն է, լուռ՝ չխօսել:

Հարց. Զի՞նչ է բարկութիւն եւ սրտմտութիւն (ԼԷ 2):

Պատասխանի. Նախ՝ բարկութիւնն նուազ է եւ սրտմտութիւնն՝ առաւել: Երկրորդ՝ բարկութիւնն բանիւ եւ սրտմտութիւնն՝ գործով: Երրորդ՝ բարկութիւնն՝ խրատ եւ սրտմտութիւնն՝ պատիժ: Չորրորդ՝ բարկութիւնն՝ աստ եւ սրտմտութիւն՝ ի հանդերձեալն:

---

228 Հմմտ. ՍՍ 1166, թ. 80ա:
229 Հմմտ. ՍՍ 1166, թ. 80բ:

Բան. Խորհուրդ ի բերանոյն (Լէ 2):

Լուծումն. Նախ՝ այն է, որ խօսի Աստուած յամպոյն: Երկրորդ՝ օրէնքն է Աստուծոյ: Երրորդ՝ բանն է ծածկեալ խորհուրդն: Չորրորդ՝ Աւետարանն Քրիստոսի: Ոմանք ինքնեղ ասացին, որպէս (մեկ բառ բաց թողնված), ոմանք՝ երկու արարիչ, որպէս մանիքեցիք[230], ոմանք՝ հրեշտակաց միջնորդաւք եղեալ, որպէս ալի բուսին այն[231]: Դարձեալ, ի դէմս Որդւոյ՝ իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի եւ լոյս Աստուած գիտութեանն (Լէ 3): /86ա/

ՎԱՍՆ ՈՐՈՏՄԱՆ ԵՒ ԲԱՐԲԱՌՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ[232]

Հարց. Զի՞նչ է, որ կրկին ասէ բարբառ եւ հրաշալի ձայն (Լէ 4):

Պատասխանի. Ըստ գրոյն յայտ է ի զգալի որոտն, որպէս ասէ մեկնիչդ: Այլ բազում ունի տեսութիւն, զոր ասեմք Ժ (10) գլխով:

Առաջին՝ որ ի Սինայ ձայնն Աստուծոյ բարբառ եւ որոտ, եւ կրկին անգամ գրեաց զօրէնս:

Երկրորդ՝ մարգարէքն եւ օրէնքն խաւսէին, մինչ ի Տէր մեր:

Երրորդ՝ կրկին բարբառ Հօր ի Յորդանան եւ ի Թաբոր:

---

[230] Մանիքեականության հիմնադիր է համարվում պարսիկ Մանին, ով ծնվել եւ գործել է Գ դարում. առավել մանրամասն տե՛ս **Եզնիկ Կողբացի**, *Եղծ աղանդոց*, ՄՀ, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 497-512. *Գիրք հարցմանց*, հտ. Ա, պրակ Դ, էջ 20-21. **Երուանդ վրդ. Տէր-Մինասեանց**, *Ընդհանուր եկեղեցական պատմութիւն*, հտ. Ա. Հին եկեղեցին, Էջմիածին, 2013, էջ 257-261. **Поснов М. Э.**, *История христианской Церкви* (до разделения Церквей - 1054 г.), ч. 1, Киев, 1991, Манихейство.

[231] Հմմտ. *Համառօտութիւն Աստուածաբանութեան երանելոյն Մեծին Այպերտի*, աշխատ.՝ Մխիթարայ վարդ. Սեբաստացւոյ, Վենետիկ, 1715. Յաղագս գործոյ ստեղծողին, էջ 80. *Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի հայս, որ են մեկնութիւն Ծննդոց եւ Ելից*, ճառք ի Սամփսոն ի Յովնան եւ յերիս մանկունս կամ ի հրեշտակս, Վենետիկ, 1826. Փիլոնի այնոցիկ, որ յԵլսն է. խնդրոց եւ լուծմանց. Բ 55. էջ 476, 509:

[232] Հմմտ. ՄՄ 1166, թ. 81ա:

Չորրորդ՝ առ Խաչին բարբառ Հօրն, որք ասէին որոտումն լինել եւ ի խաչին. «Էլի՛, էլի՛» (հմմտ. Մատթ. ԻԷ 46, Մարկ. ԺԵ 34) գոչեաց:

Հինգերորդ՝ ի յերկինս ձայնիւ փողոյ եւ որոտմամբ ել, եւ Հոգին որոտմամբ էջ յառաքեալսն:

Վեցերորդ՝ Աւետարանն եւ առաքելոցն սուրբ. «Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա» (Հռոմ. Ժ 18), ասէ:

Եւթներորդ՝ ի դատաստանին աջեաց եւ ահեկացն, օրհնեալք եւ անիծեալք, անփոփոխ բարբառի:

Ութերորդ՝ աստ զպատիժ յանցաւորաց սոքօք ցուցանէ, որպէս ջրհեղեղն եւ սոդոմացոց: /86բ/

Իններորդ՝ նախ՝ պատուէրքն Ադամայ, եւ ապա՝ դատապարտութեան բարբառն:

Տասներորդ՝ ի սկիզբն ասաց Աստուած եւ եղեւ: Եւ ապա ետես Աստուած եւ բարի են յոյժ: Այսքան առ այս:

ՎԱՍՆ ՁՄԵՐԱՆ[233]

Բան. Ձմեռն (ԼԷ 6):

Լուծումն. Ձիւնամեռ զմահ մեր նշանակէ:

Բան. Գողտր[234]:

Լուծումն. Կակուղ եւ ջերմ:

Բան. Ձեռն ամենայն մարդոյ կնքէ (ԼԷ 7):

Լուծումն. Կրկին ասէ զայս, որ է աստեաց եւ հանդերձեալ հատուցումն:

Հարց. Վասն Է՞ր ծմեռն արեգդէմն ցուրտ լինի,
քան զծմակն:

Պատասխանի. Զի անդ կռուին ջերմ եւ ցուրտ, եւ ոչ ի ծմակն:

---

[233] Հմմտ. ՍՍ 1166, թ. 81ա:

[234] Հմմտ. նույն տեղում. «....զքաղցր սիք եւ գողտրիկ....»:

ՎԱՍՆ ՑՕՂՈՑ ԵՒ ԵՂԵՄԱՆ, ՁԻՒՆԻ, ԱՆՁՐԵՒՈՑ ԵՒ ԱՑԼՆ[235]

(ԼԷ 9-10) Եւ ցօղ է, որ զհիւթն ի գիշերի զօրութիւն աստեղացն քարշեն ի վեր եւ ի ծագել առաւաւտուն հատանին եւ յերկիր անկանին: Եւ զի թեթեւ է, ի ծայրք խոտոցն ելանեն: Եւ յորժամ ցուրտ լինի, սառուցեալ յեղեմն փոխին: Եւ զկարկուտ ապարքտիաս[236] հողմն սառուցանէ եւ բեկէ, եւ ի մէջ օդոյս բոլորի: Նոյնպէս եւ ձիւն, ջերմ եւ գէջն հարեալ ընդ միմեանս, փրփրի: Եւ յօդոյդ ցրտացեալ՝ անգայտ յերկիր իջանէ: Իսկ անձրեւ ի մէջ ամպոյն կալեալ զջուրն որպէս ի տիկ եւ որպէս ասր՝ թոթափեալ զջուրն լինի անձրեւ մեծ շիթ կամ փոքր: Եւ փայլումն է ջերմութիւն ի մէջ ամպոյն: Եւ կայծակն հուրն է կարծրացեալ, /87ա/ եւ որոտն՝ օդն ի նմա, որ պատառէ զամպն: Եւ յամառն լինի որոտ եւ կայծակ, զի ի գոլորշեաց ժողովի ամպն, իսկ ի ձմեռն ոչ լինի, զի պաղեալ է երկիր ի ջրոց առնու ամպն միայն զգիջութիւնն: Այսքան առ այս:

ՎԱՍՆ ԿԱՐԿՏԻ[237]

(ԼԷ 7, 10) Խրատ՝ կարկուտ, երկեւղ՝ կայծակ, ողորմութիւն՝ անձրեւն: Նոյնպէս խրատն՝ մարմնոյ, երկեւղն՝ ոգւոյ, եւ անձրեւ՝ շընորհաց նշանակ:

---

[235] Հմմտ. ՍՍ 1166, թ. 81աբ:

[236] «Իբր յարջականէ կամ արջային, այսինքն՝ հողմն հիւսիսային, որ շնչէ ի կողմանէ սայլից՝ մեծ եւ փոքր արջ կոչեցելոյ». տե՛ս ՆԲՀԼ, հտ. Ա, էջ 274:

[237] Հմմտ. ՍՍ 1166, թ. 81բ:

ՎԱՍՆ ՀԱՆԴԵՐՁԻ[238]

(ԼԷ 17) Հանդերձ ոչ ունէր Յոբ. նախ՝ զի պատառեաց: Երկրորդ՝ վասն մարտին: Երրորդ՝ վասն խոցոյն: Սակայն գոյր ծածկոց վասն ամօթոյ եւ ջերմոյ, եւ ցրտոյ:

Բան. Ռ (1000) բան միոյ բանի[239] *(հմմտ. Թ 3):*

Լուծումն. Նախ՝ Ռ (1000)-ք հրեշտակաց: Երկրորդ՝ անկցին ի կողմանէ Ռ (1000)-ք դիւաց: Երրորդ՝ մարդկան Ռ (1000)-աց: Չորրորդ՝ Ռ (1000) ասեն զկենդանիքդ: Որպէս նոքա առ մարդս անբան են, նոյնպէս եւ սոքա՝ առ Բանն Աստուծոյ, վասն զօրութեան եւ իմաստութեան, եւ արդարութեան Բանին Աստուծոյ: Ոչ եմ, իբր կանգնեալ, զի լռիցեմ:

Բան. Փայլածուն (ԼԷ 21):

Լուծումն. Որ ի /87բ/ վերոյ է, քան զԼուսին: Հոգեպէս ի դարս Աբրահամու: Եւ Լուսին՝ օրէնքն, եւ Արուսեակն՝ մարգարէքն եւ Յովաննէս, Արեգակն՝ Քրիստոս: Դարձեալ, Հրատն՝ ի Սոդոմ, Լուսնթաքն՝ ի ջրհեղեղն, Երեւակն՝ յառաջին դարն, յերկարակեացք էին:

Բան. Ոսկէճաճանչ (ԼԷ 22):

Լուծումն. Տե՛ս յԱւետարանի չորս հատորն: Ամպ ծագեալ յարեւելից եւ յարեւմտից, իսկ հիւսիս՝ բընութիւնս մեր աստուածատեսակ գունեալ, որ էր ցուրտ եւ սեւ: Ծագմամբ Բանին Աստուծոյ միութեամբ Աստուած եղեւ անապական, ջերմ եւ լուսաւոր, որպէս հրացեալ ոսկի: Եւ յայտ է ի Ծնունդն եւ ի Գործն, ի Թաբաւր եւ ի թաղումն:

Բան. Զարդարն դատի (ԼԷ 23):

Լուծումն. Արդարութեամբ դատի: Եւ նմա փառք, պատիւ ամենակալին Աստուծոյ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս. Ամէն: /88ա/

---

[238] Հմմտ. ՍՍ 1166, թ. 81բ:
[239] Հմմտ. ՍՍ 1166, թ. 82ա:

Ի ՆԱԽԵՐԳԱՆ ՅԱՄՊՆ ԵՒ Ի ՄՐՐԻԿՆ[240]

Բան. Ճանապարհ (հմմտ. ԼԸ 1):

Լուծումն. Օրէնքն է, այլեւ՝ ընթացք մեր: Եւ չորս են բազումք. նախ՝ օրէնք: Երկրորդ՝ ընթացք: Երրորդ՝ վարձք: Չորրորդ՝ օթեվանքն (այսպէս):

Բան. Թէ զայս ունիս գիտել[241]:

Լուծումն. Նախ՝ պարտ է զարարածս գիտել, եւ ապա՝ զդատաստանն Աստուծոյ:

Բան. Առաւել վարձ[242]:

Լուծումն. Մին՝ արդարութեան, եւ միւսն՝ տանջանաց:

Հարց. Զի՞նչ է ասելն՝ բարի են յոյժ[243]:

Պատասխանի. Զի բարի եղեն եւ ի նոյն մնացին:

Հարց. Վասն է՞ր ի գործս երկրորդ աւուրն ոչ ասաց բարի: Եւ ի ստեղծանել մարդոյն:

Պատասխանի. Զի յերկրորդ աւրն բաժանումն արար ջուրց իմանալ տայ, թէ բաժանումն չէ բարի: Եւ վասն մարդոյն, զի եղծանելոց էր զպատկերն: Եւ չորիւք բաղդատի Ադամայ. նախ՝ ի ստեղծանելն, զի եղծանելոց էր պատկեր մարմնոյն, որպէս պատկերն Ադամայ հոգւոյն: Երկրորդ՝ հրեշտակական վարուք: Երրորդ՝ թագաւորութեամբն: Չորրորդ՝ անկմամբն ի փշալից հարուածս: Նմանապէս եւ չորիւք աւրինակ էր Տեառն. նախ՝ աղքատութեամբ, որ մեծատունն էր: Երկրորդ՝ յաղթութեամբ չարին: Երրորդ՝ հարուածաւք խաչին: Չորրորդ՝ դարձոյց յառաջին պատիւն:

---

[240] Հմմտ. ՍՍ 1166, թ. 82աբ:
[241] Հմմտ. նույն տեղում:
[242] Հմմտ. ՍՍ 1166, թ. 82բ:
[243] Հմմտ. նույն տեղում:

Հարց. Վասն է՞ր յամպոյն[244] *(ԼԸ 1):*

Պատասխանի. Նախ՝ վասն քաղցրութեան: Երկրորդ՝ վասն բարձրութեան. «Եդից զաթոռ իմ յամպս» (հմմտ. Սիրաք ԻԴ 7, նաեւ հմմտ. Ես. ԺԴ 13-14): Երրորդ՝ սրընթացութեան. «Եդ ամպս զգնացս» (հմմտ. Սաղմ. ՃԳ 3): Չորրորդ՝ վասն անճառ բնութեան. «Ամպ եւ մէգ շուրջ են» (Սաղմ. ՂՁ 2):

Բան. Ո՞վ է դա, որ (ԼԸ 2):

Լուծումն. «Ո՞վ» հիացական դնէ վասն համբերութեան: «Է»՝ յարակաութեան, «դա»՝ ճգնութեան, որ վասն յաղթութեան չարին: Դարձեալ «դա». նախ դերանուն է: Երկրորդ՝ անորիշ: Երրորդ՝ դիմաց ցուցական: Առաջինն՝ թերի անուն, զի որք թաքուցանեն զխորհուրդս՝ թերի են: Երկրորդ՝ անորոշ, զի եւ /88բ/ այլք թագուցին զխորհուրդս՝ որպէս նախաստեղծքն: Երրորդ՝ ցուցանէ զանձն եւ զբնութիւն միաւորի ճգնութիւնս: Դարձեալ, չորս է տեսութիւնն, որ ասէ «*ո՞վ է*». նախ՝ նուաստական, որպէս այն. «Ո՞վ է մարդ, զի յիշես դու զնա» (Սաղմ. Ը 5): Երկրորդ՝ հրաժարական, ո՛չ է թաքուցանող: Երրորդ՝ յանդիմանական, զի անիրաւ կարծէ: Չորրորդ՝ հարցական, զի զգաստասցի ի բանն: Կրկին է խորհուրդ՝ կամ յինքենէ խորհի, կամ յայլմէ ժողովէ:

Բան. Պնդեա զմէջ քո (ԼԸ 3):

Լուծումն. Չորս է մէջն. նախ՝ զմէջ մտացն, որ է խոհեմութիւնն: Երկրորդ՝ մէջ հոգւոյ, որ է արիութիւն: Երրորդ՝ զմէջ մարմնոյդ, որ է առողջութիւն: Չորրորդ՝ զմէջ պատասխանոյդ, ոչ յանդուգն, եւ կամ մեղկ՝ այլ զհաւասարն:

Բան. Լարանք (ԼԸ 5):

Լուծումն. Դաւիթ ասէ. «Ձգեցէր զերկինս, որպէս խորան» (Սաղմ. ՃԳ 2): Ջի՞նչ լարանքն, որ պնդէ զերկինս:

---

[244] Հմմտ. ՍՍ 1166, թ. 82բ:

Հարց. Վասն է՞ր երբեմն զսիրտս, երբեմն զգլուխն ասէ սկիզբն:

Լուծումն. Նախ՝ սիրտն սկիզբն է ջլաց ներքին անդամոց, եւ գլուխն՝ արտաքին: Երկրորդ՝ սիրտն սկիզբն է ջերմութեան կենաց, եւ գլուխն՝ սկիզբն զգայութեանց: Երրորդ՝ սիրտն սկիզբն է որպէս երկիր, եւ գլուխն՝ որպէս երկին: Նախ՝ զի բոլորէ եւ լուսաւոր, եւ իմաստութեանցն տեղիք: Եւ դարձեալ. նախ՝ հիմնէ զգլուխն կենդանոյ: Երկրորդ՝ հիմնէ երկինք երկրի: Երրորդ՝ հիմնէ հաւատոյս աստուածութիւնն: Չորրորդ՝ հիմն է եկեղեցոյ Վերինն Սիոն. «Հիմունք նորա ի լեառն սուրբ նորա» (Սաղմ. ՁԶ 2): Եւ դարձեալ հիմն է երկինք, զի շուրջ պատեալ բոլորակի հրեղէն երկինքն եւ անշարժ կայ: Այլ առաջին շարժի ջրեղէն կամարն[245] ըստ Պտղոմէոսի, եւ /89ա/ ապա՝ հաստատութիւնդ, ընդ նմա եւ եաթն գաւտիքն, եւ այլ տարերք զերկիր է պատեալ:

Վեմ անգեան[246] (ԼԸ 6) է Տէր մեր. նախ՝ միաւորեաց զբնութիւնս մեր ընդ իւրում աստուածութեանն: Երկրորդ՝ հրեշտակաց եւ մարդկան, մարմնով եւ հոգով: Երրորդ՝ զիրեայս եւ զհեթանոսս: Չորրորդ՝ զկենդանիս եւ զմեռեալս յարութեամբ:

---

[245] Հմմտ. **Արիստոտէլ**, *Յաղագս աշխարհի*, էջ 604-605. հմմտ. նաեւ **H. L. Bishop Karapet Ter Mĕkĕrttschian and the rev. S. G. Wilson**, *S. Irenaeus*, Εἰς ἐπίδειξιν τοῦ ἀποστολικοῦ κηρύγματος, The proof of the Apostolic preaching with seven fragments, Armenian version edited and translated with the cooperation of H. R. H. Prince Maxe of Saxony, Fasc. V. Patrologia Orientalis, t. 12. Paris, 1919, pp. 653-746, պարբ. 9 (այսուհետ՝ **Սբ Իրինեոս**, *Յոյզք առաքելական քարոզութեան)*. **Խաչիկյան Լ.**, *Եղիշեի «Մարաթոնց մեկնութիւնը»*, Երեւան, 1992, էջ 235: «Ջրեղէն կամար» կամ «ջրեղէն կամարաց» բառակապակցությունները գտնում ենք նաեւ Թովմա առաքյալի վարքում. տե՛ս *Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց*, Վենետիկ, 1813, հտ. Ե, Թովմայի առաքելոյն. էջ 269: Տարբեր երկինքների մասին հմմտ. նաեւ **Անանիա Ծիրակացի**, ՄՀ, հտ. Դ, է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, [Ծիրակացու տոմարական պատառիկը], էջ 703. Անանիայ Ծիրակունոյ Առ խոստացեալսն ([ընդարձակ խմբագրութիւն]), էջ 715, 729-730. **Հակոբ Ղրիմեցի**, *Տոմարագիտական աշխատություններ*, աշխատ.՝ Ֆ. Էյնաթյանի, Երեւան, 1987. Եթէ կամիցիս գիտել, թէ արեգակ յորում կենդանակերպի է (262-271), էջ 264:

[246] Հմմտ. ՍՍ 1166, թ. 83ա:

Բան. Չափ երկրի (ԼԸ 5):

Լուծումն. Նախ՝ ի տեսութիւնն: Երկրորդ՝ ի յիրն, որ չափէ զբարձրութիւն եւ զերկայնքն, եւ զլայն: Ասէ Արիստոտէլ. Հ (70) հազար ստադիոն զերկայնն եւ Խ (40) հազար զլայնն երկրի[247]: Նոյնպէս եւ աւրէնքն չափէ յանձնառականն եւ հրաժարական:

Հարց. Վասն է՞ր զաւրէնքն ասեն:

Պատասխանի. Զի աստուածխաւսութիւնս զարարչութիւնն պատմէ եւ կրկին է. նախ՝ ստեղծանելն: Երկրորդ՝ նորոգելն, որոյ աւրինակն աւրէնքն է եւ ճշմարտութիւնն՝ Քրիստոս: Հիւսիս անաւսրահող է վասն ջրհեղեղին եւ անպտուղ՝ վասն ցրտոյ եւ անօսր հողոյն:

Բան. Յե՞ր վերայ ախք (ԼԸ 6):

Լուծումն. Այսինքն՝ փակ եւ խառնուրդ տարերաց եւ երկնից կրէ բանիւ զօրութեան իւրոյ:

Բան. Մեծածայն (ԼԸ 7):

Լուծումն. Նախ՝ զմեծն Աստուած: Երկրորդ՝ մեծ է Աստուած: Երրորդ՝ մեծ են աւրհնօղք: Չորրորդ՝ բարձրածայն: Հինգերորդ՝ միածայն: Վեցերորդ՝ յարածայն:

ՎԱՍՆ ԱՆԿՄԱՆՆ ՍԱՏԱՆԱՅԻ[248]

Հարց. Զի՞նչ է ասելն՝ աստ տակաւին չէր անկեալ ապստամբն:

Պատասխանի. Անկմանն սատանայի ժամանակ կոչէ ի մէջի: Եւ յայտ է ի չորից վկայութեանց. նախ՝ Տէրն ասէ. «Ի ճշմարտութեան ոչ եկաց» (Յովհ. Ը 44): Երկրորդ՝ Եսայի ասէ. «Անկաւ

---

[247] **Արիստոտէլ**, *Յաղագս աշխարհի*, էջ 609. «Այլ զտիեզերաց՝ զոր կղզի ասացաք ի խորութիւն ծովու՝ ցամաքային լայնութիւն է սուղ ինչ պակաս՝ ունելով չորս բիւրս ստադիոն՝ որպէս ասացին քաջ երկրագրօղքն, եւ երկայնութիւն բիւրս եւթն»:

[248] Հմմտ. ՍՍ 1166, թ. 83բ:

Արուսեակն՝ որ ընդ առաւաւտն ծագէր» (Ես. ԺԴ 12): Եւ առաւաւտ է ստեղծումն նոցա: /89բ/[249] Երրորդ՝ ինքն ասէ. Լոյսն առաւաւտու թաւթափեաց զամբարիշտն ի նմանէ (ԼԸ 13): Չորրորդ՝ յայտ է, որ ասէ. Աւրհնեցին զիս (ԼԸ 7): Արդ թշնամին, թէ աւրհնեալ էր զԱստուած, ոչ էր անկեալ:

Հարց. Ապա զի՞նչ է ասելն. Ամենայն հրեշտակք աւրհնեցին զիս[250] (ԼԸ 7):

Պատասխանի. Ամենայն բառն ի Սուրբ Գիրս ոչ է ըստ բոլորէ, որպէս յարտաքինս, որպէս այն տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ, եւ թէ առ քեզ ամենայն մարմին եկեսցէ: Զի ամենայն աստ զմնացեալ աստեղս ասէ եւ ոչ զխաւարեալսն նախ: Եւ սոյնպէս ասացաւ ի յոյթ ճառն, որ ասէ. Վասն իմ թողին զգործս իւրեանց (ԻԴ 5) եւ չորս են իմանալի աստեղք. նախ՝ հրեշտակք, որ են բնութեամբ լոյս. «Ո՞ թուէ զբազմութիւն աստեղաց» (Սաղմ. ՃԽԶ 4): Երկրորդ՝ նահապետք աւրհնաւք լոյս. «Եղիցին զաւակ քո որպէս զաստեղս» (հմմտ. Ծնն. ԻԲ 17, ԻԶ 4, Ելք ԼԲ 13): Երրորդ՝ նորածնեալք շնորհաւք լոյս. «Դուք էք լոյս աշխարհի» (Մատթ. Ե 14): Չորրորդ՝ յարուցեալքն փառաւք լոյս, որպէս. «Աստղ քան զաստղ առաւել [է] փառաւք» (Ա Կորնթ. ԺԵ 41):

Հարց. Զի՞նչ է խանձարուր (ԼԸ 9):

Պատասխանի. Պատիչն է, որ վերեւ հանդերձին զտղայն պատեն: Եւ յերեք պատճառ է ի վերայ ծովուն մէգ լինի. նախ զի ամպն ի ծովէ առնու զջուրն եւ յանձրեւէ: Երկրորդ՝ լուսին գէջ է, յորժամ ի ջրային կենդանակերպն մտանէ՝ առնէ զամպ, երբ ի հրայինն մտանէ՝ երաշտ: Երրորդ՝ նշանակ խաւարին, որ էր ի վերայ անդընդոց: Սովսէս ջրածին էր՝ եղեւ ամպածին, վիմածին եւ հրածին:

---

[249] Այս էջի ստորին լուսանցքում այլ ձեռքով ավելացված . «Ծնունդն եւ տնօրէնութիւնն ի չորս յեղանակս: Բացատ թող Զ (6) տող, ի լուրջ գիրքն է գրէ»:
[250] Հմմտ. ՄՄ 1166, թ. 83բ:

Հարց. Ուստի՞լինի այիք ծովուն[251] *(ԼԸ 11):*

Պատասխանի. Նախ՝ զի լոյծէ բնութիւն: Երկրորդ՝ ի ժողովմանէ: Երրորդ՝ ի յաւդոյ: Չորրորդ՝ ի յամպոյ: Արեգակն Արուսեակ կոչի, որ է Քրիստոս: Եւ Լուսաբերն Արուսեակ կոչի, որպէս Յովաննէս: Տե՛ս վասն առաւաւտու ի Սաղմոսն. «Ընդ առաւաւտս պատրաստ եղէց» (Սաղմ. Ե 4): /90ա/

ԶԻ ԱՌԱՒԵԼ Է ՔՐԻՍՏՈՍ, ՔԱՆ ԶՄԱՐԳԱՐԷՍ[252]

Հարց. Զի՞նչ է առաւելութիւնն Քրիստոսի, քան զմարգարէիցն, որպէս ասէ. «Առաջի իմ եղեւ, զի նախքան զիս էր» (Յովհ. Ա 15):

Պատասխանի. Ըստ աստուածութեանն յայտնի է, զի առաւել եւ նախ էր, քան զմարգարէս: Այլ, ըստ մարմնոյն չորիւք առաւել է, քան զամենայն. նախ՝ զի ի կոյս մաւրէ եւ կուսութեամբ եկաց, զի թէպէտ Ադամ ի կոյս երկրէ, այլ ոչ եկաց կոյս, եւ Յովհաննէս կոյս գոլով, այլ ոչ ի կուսէ: Երկրորդ՝ զի մարգարէքն բանիւ խաւսեցան, եւ Քրիստոս գործով կատարեաց: Երրորդ՝ զի բազումք խաւսեցան, եւ նա միայն կատարեաց: Չորրորդ՝ մի մի ունէին գործ սքանչելեաց, որպէս Մովսէս՝ զծովն (հմմտ. Ելք ԺԴ 21), Եղիա՝ յերկինս (հմմտ. Դ Թագ. Բ 11), Եղիսէոս մեռեալս յարոյց (հմմտ. Դ Թագ. Դ 32-35) եւ այլն: Իսկ Տէր մեր զամենայն կատարեաց ի վերայ ծովուն, յերկինս ել, մեռեալս յարոյց եւ այլն:

Բան. Զհողն կաւ[253] *(ԼԸ 14):*

Լուծումն. Կաւ ասէ, զի ցուցցէ ի չորից տարերց զմարմինն: Եւ փչմամբն զբանական եւ զշնորհաց հոգին: Այլեւ կաւն մեղաց է ցոյցք, զոր էառ Տէր մեր զհողեղէն եւ զմեղաւոր բնութիւնս մեր, եւ միաւորելով յինքեան, եղեւ անապական մարմին եւ արդարացեալ հոգի, զի վէմն անապական է: Նա բնութեամբ է Որդի Աստուծոյ եւ մեք շնորհաւք մկրտութեամբն:

---

[251] Հմմտ. ՍՍ 1166, թ. 83բ:
[252] Հմմտ. ՍՍ 1166, թ. 84ա:
[253] Հմմտ. նույն տեղում:

Եւ գիտելի է, զի չորս կերպիւ է կարգ հարցման աստուածախաւսութեանս. առաջինն՝ զմերձակայ եւ զերեւելին հարցանէ, եւ ապա՝ զհեռաւորն: Երկրորդ կարգ՝ ի ներքուստ ի վեր ելանէ, եւ վերուստ ի վայր գայ: Երրորդ կարգ՝ զանցեալն, որ յառաջ է քան զմարդ եւ զլինելոցն, եւ զներկայ անտեսն հարցանէ: Չորրորդ՝ ե՛ս, ո՛վ, ո՛ւր, զինքն ցուցանէ ամենազաւր եւ զՅոբ՝ տկար: Եւ այս է պատճառ, որ զՅոբայ /90բ/ գիրքս հարցմամբ եւ հենգնելով ընթեռնումք, զի Աստուած հարցանելով խաւսի, նոյնպէս Յոբ եւ բարեկամքն՝ հենգնելով: Տե՛ս, զի աստուածական զաւրութիւն ասէ Խաչին, զի Աստուած էր խաչեալն եւ նա՛ է զաւրութիւն Աստուածընկալ Խաչին, ընդդէմ է Նեստորի մարդադաւանի եւ երկաբնակ աղանդոյն Քաղկեդոնի[254]:

ՎԱՍՆ ԴԺՈԽՈՑ[255]

Բան. Որ նստի ի քերովբէս եւ հայի յանդունդս (Դան. Գ 55):

Լուծումն. Նախ՝ զի ամէնահայեաց է տեսութիւնն Աստուծոյ եւ ոչինչ թաքչի ի նմանէ: Դարձեալ ի դէմս Բանին նա է, որ նստի ի քրովբէս եւ մարդս պատկեր ճշմարիտ պատկերի Որդւոյն: Նախատիպն ի պատկերն իւր հայի երեք կերպիւ. նախ՝ ի վերայ երկրի եւ տեսանէ զգործս: Երկրորդ՝ ի դժոխս եւ տեսանէ զտանջանս: Երրորդ՝ էջ ի նոսա եւ ազատեաց, վասն որոյ ասէ Դաւիթ, թէ. «Ելանեմ յերկինս՝ դու անդ ես, թէ իջանեմ ի դժոխս եւ անդր մաւտ ես» (Սաղմ. ՃԼԸ 8):

Բան. Խորշիլ[256] (ԼԸ 15):

Լուծումն. Խուսել:

---

[254] Տե՛ս **Կիւրեղ Աղեքսանդրացի**, *Գիրք պարապմանց*, Կ. Պոլիս, 1717, էջ 460-474. *Կնիք հաւատոյ ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ յուղղափառ եւ ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց*, Ս. Էջմիածին, 1914. Նորին Կիւրղի՝ երկոտասան նզովից, էջ 229-241:

[255] Հմմտ. ՍՍ 1166, թ. 84աբ:

[256] Հմմտ. ՍՍ 1166, թ. 84բ:

Բան. Դրունք մահու (ԼԸ 17):

Լուծումն. Զնոյն մահն ասէ: Այլ կերպիւ՝ ի՞նչ դրունք են. նախ՝ մեղքն: Երկրորդ՝ չարչարանքն. այս արտաքին: Երրորդ՝ ապականութիւնք. ներքին դրունք, եւ ինքն մահ դրունք են դժոխոց: Եւ զի Փրկիչն մեր անմեղ էր, վասն այնորիկ զչարչարանսն եբարձ, զմահն մեռոյց եւ զապականութիւնն ելոյծ:

Բան. Բարապանք (ԼԸ 17):

Լուծումն. Նոյնպէս արտաքին պահապանք դեւք են, եւ ներքինք դըրունք պղընձիք եւ նիգք երկաթիք (հմմտ. Սաղմ. ՃՁ 16), որպէս ասէ Դաւիթ: Եւ զամենայն արդարութիւն կատարեաց՝ իջանելովն ի դժոխս: Աստ [ին]նսուն հազար ասպարէզ զբոլոր ձեւն է իմանալ. խոյն՝ գլուխ, որպէս Պարսիկք (հմմտ. Դան. Ը 20), եւ լանջքն՝ Հայք, ոտքն՝ Հնդիկք[257]: /91ա/

ՎԱՍՆ ԼՈՒՍՈՅ[258]

Հարց. Զի՞նչ երկիր իցէ, յորում լոյսն ագանիցի (ԼԸ 19):

Պատասխանի. Բազում է տեսութիւնն: Այլ ես ասեմ տասն թուով. առաջին՝ անեղական լոյս աստուածութեան «բնակեալ ի լոյս անմատոյց» (հմմտ. Ա Տիմ. Ձ 16), ըստ առաքելոյ:

Երկրորդ՝ եղական լոյսք իմանալեացն, ի լուսոյ գոյացեալ, եւ ի լուսեղէն երկինս բնակեալ:

Երրորդ՝ լոյսն համասփիւռ, յառաջնումն աւուր գոյացեալ եւ զերիս գիշերն ի վերին արփին կցեալ՝ ըստ ոմանց, եւ կամ՝ ի դրախտն ժողովեալ[259], ըստ սրբոյն Բարսղի:

Չորրորդ՝ արեգակն եւ աստեղք յաւուր չորեքշաբաթի արարեալ, որ ծագէ յարեւելից գնայ ընդ հարաւ, եւ մտանէ, եւ պատի ընդ հիւսիսի, որպէս ասեն ոմանք՝ անցեալ ընդ հալամբով, եւ ծգի

---

[257] Հմմտ. **Անանիա Ծիրակացի**, *[Յաղագս կենդանատեսակաց]*, ՄՀ, հտ. Դ, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 770:

[258] Հմմտ. ՄՄ 1166, թ. 84բ:

[259] Հմմտ. *Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոց Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն*, Վենետիկ, 1830. Ճառ Բ, էջ 36, 39-40:

ի տեղի իւր յարեւելս, որ նշանակէ զտնաւրէնութիւն Տեառն (հմմտ. Ժողով. Ա 5-6), ըստ Սողոմոնի: Այլեւ զմահ եւ զյարութիւն ամենայն մարդկան:

Հինգերորդ՝ լոյս Բանն Աստուած, միաւորեալ ի հոգի եւ ի մարմին երկրաւոր, որպէս անաւթ արեգականն, եւ լոյս ընդ աւդ միացեալ. «Լոյսն ի խաւարի անդ լուսաւորէր» (Յովհ. Ա 5), ասէ:

Վեցերորդ՝ Կոյսն Աստուածածին ինանմսեայ զԲանն Աստուած յորովայնին կրեալ, որպէս ետես Մովսէս զաւրինակ մորենին ի հուրն վառեալ եւ անկէզ մնացեալ (հմմտ. Ելք Գ 2):

Եւթներորդ՝ աստուածընկալ գերեզմանն սուրբ զերիս աւուրս զաստուածացեալ մարմինն ի յինքն ընկալեալ, որ եւ զՅարութիւնն լուսով ճառագայթեալ, որ միշտ յերեկոյ շաբաթուն մեծի զգալի լուսով զՅարութիւն Փրկչին ի մեզ հաստատեալ:

Ութերորդ՝ «Որդին Աստուծոյ իջեալ եւ լոյս ծագեալ ի բանտ խաւարին» (Գործք ԺԲ 5-7), որպէս ասէ Պետրոս. «Որք ի կապանսդ էք՝ ելէք, եւ որք ի խաւարի՝ յայտնեցարուք» (Գործք ԻՁ 29): /91բ/

Իններորդ՝ յառաջ քան զայս ի լեառն Թաբաւր յայտնեաց զլոյս աստուածութեան իւրոյ աշակերտաց եւ մարգարէիցն՝ յինքն երեւեցուցեալ զկերպարան նախաստեղծին Ադամայ, եւ այնպէս. «Փայլեսցեն արդարքն յարքայութեան, որպէս զարեգակն» (Մատթ. ԺԳ 43), ասէ:

Տասներորդ՝ զլոյս Աւետարանին ընկալան հեթանոսք: Ըստ այնմ. «Որք նստէին ի խաւարի եւ ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա» (Մատթ. Դ 16): Եւ լոյս առաքեալքն. «Դուք էք լոյս աշխարհի» (Մատթ. Ե 14), ասէ: Եւ «Լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան» (Մատթ. Ե 16) եւ այլ սոյնպիսիք: Այլեւ ի յարութեանն. «Փայլեսցեն արդարքն յարքայութեան, որպէս զարեգակն» (Մատթ. ԺԳ 43), ասէ:

ՎԱՍՆ ԽԱՒԱՐԻ ՀԱՐՑՈՒՄՆ[260]

Հարց. Զի՞նչ տեղի խաւարի (ԼԸ 19):

Պատասխանի. Նոյնպէս եւ տեղիք խաւարին բազում է, զոր ասեն վարդապետք տասն կերպիւ. նախ եւ առաջին՝ խաւարն անգոյ եւ սկզբնածին: Եւ զի գոյութիւն ո՛չ ունի եւ ո՛չ տեղիք, ասի, նման գոյացութեան, այլ պակասութիւն լուսոյ[261]: Եւ ասէ Գիրն. «Խաւար ի վերայ անդընդոց» (Ծնն. Ա 2): Երկրորդ՝ տեղիք խաւարի խաւարասէր թշնամին, ասի: Երրորդ՝ դժոխքն եւ տարտարոսք՝ տեղիք խաւարին սատանայի: Չորրորդ՝ տունն հրէից, որ խաւարեցաւ, ըստ այնմ. «Զոր ասեմ ձեզ ի խաւարասէր տանս Յակովբայ, ասացէք ի լոյս հեթանոսաց» (Ես. ԽԹ 6): Հինգերորդ՝ Նեռն տեղի հանգստեան խաւարին: Վեցերորդ՝ խաւարն արտաքին, ուր հանէ Տէր զմեղաւորս: Եւթներորդ՝ խաւար անհաւատութիւնն է: Ութերորդ՝ խաւար մեղքն է: Իններորդ՝ խաւար տգիտութիւնն է եւ տրտմութիւն, զի անհաւատն եւ մեղաւորն, եւ տգէտն տեղիք են խաւարի: /92ա/ Տասներորդ՝ խաւարն զգալի, ուր արեգակն ընթանայ միշտ լոյս է ի վերին եւ ի ներքին կիսագունդս: Այսքան վասն տեղոյ լուսոյ եւ խաւարի:

ՎԱՍՆ ՏԱՆՋԱՆԱՑ[262]

Բան. Համբարեա՞լ են յաւր մարտի եւ պատերազմի (ԼԸ 23):

Լուծումն. Բազում են զէնք Աստուծոյ, որով պատերազմի ընդ թշնամիս: Եւ ասեմ երկոտասան գլուխ. նախ՝ պարզ տարերք, որպէս ջրհեղեղն եւ հուրն ի Սոդոմ: Երկրորդ՝ պարզ եղանակ՝ ջերմ եւ ցուրտ: Երրորդ՝ փոփոխեալ, որպէս խաւարն Եգիպտոսի եւ գետն յարիւն: Չորրորդ՝ սով եւ հիւանդութիւն: Հինգերորդ՝ ի

---

[260] Հմմտ. ՍՍ 1166, թ. 84բ:
[261] Հմմտ. *Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոց....*, Ճառ Բ, էջ 29-30:
[262] Հմմտ. ՍՍ 1166, թ. 84բ-85ա:

ձեռն կախարդաց թոյլ տայ: Վեցերորդ՝ դեւք տանջեն ի թոյլ տալոյն: Եւթներորդ՝ մահտարաժամ ի ձեռն հրեշտակաց: Ութերորդ՝ գազանք եւ աւձք, որպէս յանապատին: Իններորդ՝ չարք ի մարդկանէ զմիմեանս տանջեն: Տասներորդ՝ Նեռն, յորժամ բանայ զդուռն դարբանդաց: Մետասաներորդ՝ մահն հասարակաց ամենայն մարդկան: Երկոտասաներորդ՝ տանջանքն յաւիտենից ի տարերացս կազմեալ, զի լալ աչացն հրոյ է, կրճել ատամանցն՝ ցրտոյ եւ այլն:

ՎԱՍՆ ՁՄԵՌԱՆ ԵՒ ԱՅԼՆ[263]

Բան. Շտեմարանք ծեան (ԼԸ 22):

Լուծումն. Բնակութիւնք դիւաց վասն չորից. նախ՝ զի փոխի ջուրն ի ցուրտ: /92բ/ Երկրորդ՝ ի հողմոյն: Երրորդ՝ ի յամպն: Չորրորդ՝ անգայտ իջանէ:

Եւ զանձ կարկտի մեղաւորացն ոգիքն ի դժոխս վասն չորից. նախ՝ զի ջուրն փոխի: Երկրորդ՝ ի շնչմանէն ցուրտ: Երրորդ՝ ի պարզոյն կոտրատի: Չորրորդ՝ ծանրացեալ ի վայր թափի:

Ցաւդ են շնորհք Հոգոյն ի սուրբ մարգարէս եւ յառաքեալս զուարթարար: Եւ եղեամն՝ սուտ մարգարէք եւ հերձուածողք վասն չորից. նախ՝ զի փոխէ սատանայ եւ հերձուածողք զբանս, որպէս զցաւղն յեղեամն: Երկրորդ՝ ցրտացուցանէ բանիւ: Երրորդ՝ որպէս խախաց եղեալ մածնու զընդունողս: Չորրորդ՝ չորանան դալարիք հոգւոց: Յորժամ արեւն հեռանայ՝ ցուրտն յաւելու հիւսիսոյ, եւ ի մաւտելն՝ հարաւ շնչէ: Սոյնպէս՝ յորժամ հեռի էր Արեգակն Արդարութեան՝ ցուրտն էր սատանայի եւ ի մերձիլն՝ շնչեաց հարաւ հոգւոյն եւ հալեցան ցրտութիւնք:

---

[263] Հմմտ. ՍՍ 1166, թ. 85ա:

ՎԱՍՆ ՈՒՍՈՒՑՉԱՑ[264]

Երեք են ուսուցիչք հոգեւոր սերմանց, այսինքն՝ ըստ կարգի՝ մարգարէք եւ առաքեալք, եւ վարդապէտք, որպէս ասէ առաքեալք (հմմտ. Ա Կորնթ. ԺԲ 28-29): Եւ ունէին մարգարէքն երիս, այսինքն՝ խլել եւ տնկել, եւ բեղնաւորել զաւրէնս: Եւ առաքեալքն երիս, այսինքն՝ հունձն եւ կալն, եւ ցորեան բանին: Եւ վարդապէտք հինգ, այսինքն՝ աղաւրիս մտաց եւ որոշումն, եւ թրել, եւ ամոքել բանիւ, եւ դնել սեղան հոգեւոր: /93ա/ Դարձեալ ունին վարդապէտք. սերմանել ըստ մարգարէից եւ կասել ըստ առաքելոց եւ կերակրել ըստ վարդապետաց: Յայսքան առ այս:

ԴԱՐՁԵԱԼ ՎԱՍՆ ԱՆՁՐԵՒԱՑ[265]

Բան. Հայր անձրեւի (ԼԸ 28):

Լուծումն. Նախ՝ ծովն: Երկրորդ՝ ամպն: Երրորդ՝ կերպիւ ինչ երկիր, յորմէ գոլոշիքն ելեալ: Չորրորդ՝ հրամանն: Նոյնպէս անձրեւ շնորհաց. նախ՝ Հոգին Սուրբ: Երկրորդ՝ մարգարէքն եւ առաքեալք: Երրորդ՝ վարդապետք: Չորրորդ՝ կամքն Աստուծոյ: Եւ որպէս հրամանն Աստուծոյ կապէ եւ արձակէ զջուրն ի մէջ ամպոյն, այսպէս գիտէ զշիթս անձրեւաց, նոյնպէս զխորհուրդս մարդկան եւ զբան, եւ զամենայն գործ:

Հարց. Վասն է՞ր անչափ անձրեւ հեղու:

Պատասխանի. Նախ՝ նշանակէ զառատութիւնն իւր: Երկրորդ՝ ի ծով եւ ի ցամաք կենդանիք վայելեն: Երրորդ՝ զի երկիրն չոր է եւ ցուրտ, ջերմ եւ գէջն բարեխառնէ զնա եւ բղխէ զբոյս. սոյնպէս հոգիս մեր ծարաւ է շնորհացն Աստուծոյ: Եւ տունկք չորս իրաւք ըմպեն ջուր, եւ թէ մինն պակասէ՝ ոչ ըմպեն: Նախ՝ բնական դալարութիւն: Երկրորդ՝ արմատ: Երրորդ՝ երկիրն իւր: Չորրորդ՝ հիւթն: Եւ ի մեզ. նախ՝ բանական միտք: Երկրորդ՝ արմատ հոգին: Երրորդ՝ մարմինն իւր: Չորրորդ՝ շնորհքն Աստուծոյ:

---

[264] Հմմտ. ՍՍ 1166, թ. 85ա:
[265] Հմմտ. ՍՍ 1166, թ. 85աբ:

Ապա՝ բղխէ հաւատք եւ բարի գործք: Երես երկնից հաւասար է. նախ՝ զի յաւդից է տարածեալ, որպէս պղպջակ ջրոյ: Երկրորդ՝ զի բոլորակ է: /93բ/

ՎԱՍՆ ԲԱԶՄԱՍՏԵՂԱՑ[266]

Բան. Կարգի բազմաստեղաց (ԼԸ 31):

Լուծումն. Չորս են. նախ՝ բազմութիւն աստեղացն: Երկրորդ՝ կենդանակերպք, որ բազումքն գլուխն է: Երրորդ՝ Սայլն, որ Վեցկի ասեն: Չորրորդ՝ Ծիրն աստեղաց, զոր Յարդգող ասեն: Եւ ոգեպէս. առաջինն՝ հրեշտակք եւ սուրբք, որ ցուցաւ նախ: Երկրորդ՝ առաքեալք եւ մարգարէք երկոտասան: Երրորդն՝ Սայլն՝ աւրէնքն ի Սինայէ, եւ Աւետարանն՝ ի Սիոնէ: Չորրորդն՝ որպէս նուաստք ժողովին եւ զշնորհս ցուցանեն, այլեւ նախախնամութիւնն եւ մարդեղութիւնն՝ եզինք, եւ սպասաւոր՝ հրեշտակք: Այլեւ ոգի կենդանակերպիցն՝ հրեշտակք:

Բան. Պատրուակ Հայկին (ԼԸ 31):

Լուծումն. Նախ՝ տեսցուք զՀայկն, եւ ապա՝ զպատրուակն: Հայկն երիւք լսի. նախ ի յանուանէն Հայկայ, որ նախնին հայոց, յորմէ զաղեղն ձեւացեալ եւ զՆեբրաւթ սպանեալ, ասեն: Երկրորդ՝ կոչի Հակ, որ ընդդէմ է Սայլին հիւսուոյ: Երրորդ՝ հայեակ լսի, որպէս դէտ: Թողեալ զերկուսն զվերջինս տեսցուք, զի հայիմք աչաւք եւ մտաւք չորս կերպիւ. առաջինն՝ զի գլխագիր Այբ է եւ Ծա, որ ցուցանէ զԱրարիչն եւ զստեղծուածս չորս կերպիւ. նախ՝ զի առաջին է Արարիչն: Երկրորդ՝ երեք են անձինք: Երրորդ՝ պայծառ փառաւք: Չորրորդ՝ յերեւելեաց տեսանեմք (հմմտ. Եբր. ԺԱ 1) ըստ առաքելոյ: /94ա/ Երկրորդ՝ ի Տէր մեր չորս կերպիւ. նախ՝ զի Աստուած է, երկրորդ՝ մարմին եղեալ, երրորդ՝ երեք գոյացութիւն, չորրորդ՝ զի մարմնովն տեսանեմք: Երրորդ՝ յիմանալիս եւ ի զգալիս չորս կերպիւ. նախ՝ զի ինն դասք, երկրորդ՝ յերիս երրեակս, երրորդ՝ պայծառ բնութեամբ, չորրորդ՝

[266] Հմմտ. ՍՍ 1166, թ. 85բ:

զի առաջինք են, քան զգալիս: Չորրորդ՝ ի մարդ եւ ի կենդանիս չորս կերպիւ. նախ՝ զի բանական, երկրորդ՝ զի յերից եմք, երրորդ՝ զի իշխանական, չորրորդ՝ նոքա յառաջ եղեն:

Այս, թէ որպէս հայիմք: Իսկ պատրուակն յայտ է ի մեկնիչն. նախ՝ պայծառ աստղ, որ ծածկէ զնա: Երկրորդ՝ այն աստղ, որ ի ներքոյ «Ծայ»-ին է ծածկեալ: Երրորդ՝ Որդին Աստուծոյ ծածկեցաւ մարմնով: Չորրորդ՝ խորհուրդն է ի մէնջէ ծածկեալ:

Բան. Մազարովթ (ԼԸ 32):

Լուծումն. Ոմանք զԱրուսեակն ասեն, որ ընդ Արեւուն շրջի: Ոչ է, այլ գիսաւորն է, որ յաւդս երեւի ի նշան փոփոխման թագաւորաց եւ այլն: Երկրորդ՝ որ երեւեցաւ մոգուցն: Երրորդ՝ ասեն առ Նեռն երեւի: Իսկ ընդ միտս. նախ Գաբրիէլ ետ զաւետիս աշխարհի: Երկրորդ՝ Յովհաննէս կարապետ գլուխ մարգարէից: Երրորդ՝ Պետրոս գլուխ առաքելոց: Չորրորդ՝ Եղիայ Երկրորդ գալըստեանն, զի սոքա գիսաւորք են եւ գլուխ:

Բան. Գիշերավարն (ԼԸ 32):

Լուծումն. Նախ՝ լուսին: Երկրորդ՝ սատանայ, վերակացու մեղաց, զոր յաղթեաց նախ: Երրորդ՝ Պօղոս աւրինաւորն, զոր յետոյ կոչեաց: /94բ/ Լուսեղէն երկինքն ոչ շարժի, այլ շուրջանակի պարունակեալ է զամենայն ի միջի իւրում: Դարձեալ գիտելի է չորս կերպ հարցմանցս. նախ՝ ի ներքուստ՝ ի վեր ել յերկինս, եւ վերուստ՝ ի վայր իջանէ[267]: Երկրորդ՝ զանկարելիսն գործոյ եւ բանի: Երրորդ՝ զանտեսն աչաց եւ մտաց: Չորրորդ՝ զաւրինակ եւ զճշմարտութիւն:

---

[267] *Գիրք հարցմանց*, հտ. Դ, պրակ ԺԹ, ԻԲ, էջ 184, 186:

ՎԱՍՆ ԿԱՅԾԱԿԱՆԱՑ[268]

Որպէս ասացաւ գոլորշիք երկրի ջերմ եւ գէջ աւդ է, որ թանձրանայ եւ լինի խիտ ամպ եւ հողմ, որ ի մէջն խստացեալ՝ հարկանէ զամպն, որպէս երկաթ զքար եւ ճնշեալ զհիւթ հողոյն՝ քարանայ հրովն: Եւ պատառեալ զամպն՝ լինի որոտ եւ թափի կայծակ, որպէս կտաւ պատառեալ: Եւ որպէս փչեալ արծարծի հուր, նոյնպէս լինի փայլակն ի մէջ ամպոյն: Եւ է յաւրինակ հրեշտակաց. նախ՝ զի յերկնից: Երկրորդ՝ սուր: Երրորդ՝ հուր: Չորրորդ՝ լոյս: Այլեւ յաւրինակ առաքելոցն, որ եղեն դամբար[269] (ԻԱ 10) եւ այրեն յաջ եւ յահեակ չորս կերպիւ. նախ՝ զկուռս եւ զկռապաշտս: Երկրորդ՝ զմեղս եւ զսիրողս: Երրորդ՝ զիրեայս եւ զհեթանոսս անհաւան: Չորրորդ՝ զբազմութիւն դիւաց. «Անկցին ի կողմանէ քումէ հազարք եւ բիւրք ընդ աջմէ քում[մէ]» (Սաղմ. Ղ 7): /95ա/

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆՃԱՐ ԿՆՈՋ[270]

Բան. Ո՞վ ետ կանանց իմաստութիւն եւ հանճար (ԼԸ 36):

Լուծումն. Նախ՝ իմաստութիւն տեսական, եւ հանճար՝ գործնական: Երկրորդ՝ գիտութիւն եւ արուեստ: Երրորդ՝ զմինն լսելով եւ զմիւսն տեսանելով ուսանի: Չորրորդ՝ միոյն լեզու եւ միոյն ձեռք է գործիք: Հինգերորդ՝ մին ի միտք եւ միւսն ի նիւթ նստի: Վեցերորդ՝ զմինն լըսեմք եւ զմինն տեսանեմք: Այլ ասացաւ յառաջն վասն Աստուծոյ եւ թէպէտ բանական է մարդ՝ այլ մտաց եւ հանճարոյ ընդունակ: Զի գիտութիւնն եւ արուեստն ի շնորհացն Աստուծոյ է եւ ուսմամբ: Եւ շնորհք ի յաւազանն կամ ի յղացումն տայ: Եւ կին կոչի, եւ հարսն եկեղեցի սուրբ, եւ փեսայ՝ Քրիստոս. նախ՝ վասն կատարեալ սիրոյն: Երկրորդ՝ զի ի կողիցն է: Երրորդ՝ միաւորեալ հոգւով: Չորրորդ՝ ծնընդական բարեաց: Այս է

---

[268] Հմմտ. ՍՄ 1166, թ. 86ա:
[269] Ցահ, լոյս, բոց, կանթեղ:
[270] Հմմտ. ՍՄ 1166, թ. 86բ:

իմաստութիւն, զոր յեկեղեցոյ ուսան զզանազան առաքինութիւնս: Եւ չորս գոյն. խոհեմութիւնն՝ թագաւորական ծիրանի, ողջախոհութիւնն՝ բեհեզ, կարմիրն՝ արիութիւն եւ մարտիրոսութիւն, կապոյտն՝ երկնաւոր արդարութիւն:

Անգել՝ գործելն է (ԼԸ 36): Եւ տե՛ս, զի նկարակերտել ասաց եւ ոչ նկարագրել, որպէս կեղծաւորացն ջնջելի:

Բան. /95բ/ Զերկինս յերկիր (ԼԸ 37):

Լուծումն. Անծրեւն է եւ աւդ, այլեւ հրեշտակք եւ շնորհք Հոգւոյն:

Բան. Խորանարդ (ԼԸ 38):

Լուծումն. Կամարածեւ, որպէս ամպ եւ երկինք: Վասն հաստատութեան բոլորածեւ է, իսկ առ մեզ հիմն հաւատն է ի Քրիստոս եւ ժուժկալութիւն մարմնոյ, եւ համբերութիւն հոգւոյ՝ յոյսն ի մէջն, եւ կապն՝ սէրն, որով լինիմք խորան եւ տաճար Աստուծոյ:

Առիւծն[271] (ԼԸ 39) թագաւոր է գազանաց, որպէս եզն՝ անասնոց, եւ արծուի՝ թռչնոց, վիշապն՝ սողնոց կամ իժն, որ նստեալ է ի գլուխն քարբին, լեւիաթան՝ ջրայնոց: Մարդս ամենեցուն թագաւոր, վասն որոյ սարսեն ամենայն կենդանիք եւ փախչին, զի մի վնասեսցեն մարդկան: Վիշապն, ասեն, հազարամեայ լինի:

Աւծ կամ քարթոշ[272] եւ յանջրդիս կեայ եւ չորս է չարութիւն նոցա. նախ՝ շունչն: Երկրորդ՝ ժենիք: Երրորդ՝ թիւնք: Չորրորդ՝ կլանեն: Այսպէս չարք ի մարդկանէ եւ որպէս մերկանան զխորխ. այսպէս ապաշխարէ մարդ:

Ագռաւ կրկին է՝ սեաւ եւ կիսասեաւ, նշանակ հեթանոսաց եւ հրէից: Անսուրբ են եւ սեաւ, խառնակեր եւ խառնածին: Եւ ծնեալք աւազանաւն սրբին: Եւ այլ կենդանիք կրկին որոշին. նախ՝ որք

---

[271] Հմմտ. ՄՄ 1166, թ. 86բ:

[272] «Ազգ մողէզի. կովադիաց փոքր՝ մկնածեւ՝ սեւագոյն». տե՛ս ՆԲՀԼ, հտ. Բ, էջ 995. տե՛ս նաեւ «մողէզ» բառի բացատրությունը. **Աճառյան Հր.**, *Հայերեն արմատական բառարան*, հտ. Գ, Երեւան, 1977, էջ 342:

տնաասունք են, մարդիկք խնամեն: /96ա/ Եւ Աստուած՝ զվայրենիս, նոյնպէս՝ զտունկս: Երկրորդ՝ որ ընտանիք են զանազանեն գունով եւ վայրենիք՝ միակերպ:

ՎԱՍՆ ԱՒԱԶԱՆԻՆ[273]

Սրբութիւն աւազանին եւ Սրբոյ Կուսին վեցիւք բաղդատի. նախ՝ անսերմն ծնանին երկոքին, ոյք ոչ յարենէ եւ այլն: Երկրորդ՝ ի Հոգւոյն Սրբոյ: Երրորդ՝ քառասնաւրեայ մանուկ: Չորրորդ՝ առանց երկանց: Հինգերորդ՝ անապական ծնունդ: Վեցերորդ՝ Որդիս Աստուծոյ: Այլ ունի վեց զարմացումն, որ հիանայ մարգարէն. «Ո՞վ ետես, ո՞վ լուաւ» (Ես. ԿՁ 8) եւ այլն: Նախ՝ զի բազմածին է: Երկրորդ՝ միածին: Երրորդ՝ միշտ կոյս գոլով: Չորրորդ՝ արու: Հինգերորդ՝ անդրանիկ: Վեցերորդ՝ անմեղ: Այլ, որ ասէ. Անդրէն ոչ կրկնեսցի (ԼԹ 4): Նախ՝ զի կնիք է հոգին: Երկրորդ՝ մի է եւ ծնունդ մարմնոյն: Երրորդ՝ մի է Տէր: Չորրորդ՝ մի հաւատ: Հինգերորդ՝ մի մահ Տեառն: Այլ թէ լինի մկրտաւղն արիոսեան կամ մակեդոնեան, կամ նեստորեան, պա՛րտ է վերստին մկրտել, այլ քաղկեդոնիկն՝ պա՛րտ է դրոշմել եւ դաւանել, այլ ոչ մկրտել:

Բան. Ցիոն վայրի ազատ (ԼԹ 5):

Լուծումն. Անլուծ է եւ անբեռն, եւ անկիրթ ի հեծանել, այլ առանձին երամակ, եւ ունին առաջնորդ, եւ յառապարս նշանակ, որք յանապատս բնակեն: /96բ/ Տե՛ս, զի բնէ են ցիռք: Եւ ազատէ Տէր մեր վեցիւք: Նախ՝ ծնունդն զատեալ: Երկրորդ՝ ի հարկաց ազատեն որդիք: Երրորդ՝ ի մեղաց, զի ոչինչ եգիտ չարն: Չորրորդ՝ ի մահն, զի կենդանի էր: Հինգերորդ՝ ի գերեզման, զի անապական էր: Վեցերորդ՝ ի դժոխս. «Զի ի մեռեալս ազատէր» (Սաղմ. ՁԷ 6), ասէ Դաւիթ:

---

[273] Հմմտ. ՍՍ 1166, թ. 87ա:

ՎԱՍՆ ՄԻԵՂՋԵՐՈՒԻՆ[274]

(ԼԹ 9) Նախ տե՛ս, թէ կամիցի ասէ ծառայել եւ տես, զի նախ ինքն ըմպէ, այսինքն՝ նախ զմարմին իւր սրբեաց եւ նախ ինքն մկրտեցաւ, եւ ճաշակեաց եւ այլն:

Բան. Սուր (ԼԹ 9):

Լուծումն. Միս սուրբ, որ է անապական մարմին: Դարձեալ, տեղի մսոյ, որ է մսուրք այրին: Եւ տե՛ս, զի բանն եւ մարմինն ասէ լծեալ ի Խաչ: Եւ դարձեալ տե՛ս զմիութիւնն, ի նա յուսացիս նորա զաւրութիւն եւ Հայր ասէր. «Դա է որդի իմ» (Մատթ. Գ 17) եւ մարգարէն. «Սա է Աստուած, Աստուած մեր» (Սաղմ. ԽԷ 15): Միեղջերու է Բանն Աստուած չորս կերպիւ. նախ՝ զի բժշկական է. «Առաքեաց զբան եւ բժշկեաց» (Սաղմ. ՃՁ 20), ասէ: Երկրորդ՝ բարձր: Երրորդ՝ փրկութիւն: Չորրորդ՝ զաւրութիւն: Եւ այլն յայտնի է մեկնիչդ: Դարձեալ տնաւրէնութեանն ասի եղջիւր չորս կերպիւ. նախ՝ զի մի եղջիւրէ յերկուց միացեալ յազգէ Դաւթի, ըստ այնմ. «Ծագեաց մեզ, Տէր, եղջիւր ի Դաւիթ» (Սաղմ. ՃԼԱ 17): Երկրորդ՝ եղջիւրն ի մարմնոյն է եւ անանման, զի ոչ միս է եւ ոչ ոսկր, եւ այլն, եւ Տէրն ի բնութենէս մեր եւ անանման, զի Աստուած է մարդացեալ: Երրորդ՝ զէնէ եղջիւրն եւ Տեառն մերոյ «եղջիւրք ի ձեռին նորա» (հմմտ. Ամբակ. Գ 4), ասէ Ամբակում, որով եհար զթշնամին մեր եւ եսպան: Չորրորդ՝ ի ճակատն է եւ Տէրն եղեւ նախամարտիկ մեզ եւ առաջնորդ յերկինս ելից: /97ա/ Դարձեալ եւ սուրբ մարդիկ են միեղջերու: Ըստ այնմ. «Բարձր եղիցի որպէս միեղջերուի եղջիւր իմ» (Սաղմ. ՂԱ 11): Որպէս ասէ մեկնիչդ՝ միայն յԱստուած հայել եւ ի նմանէ փրկութիւն եւ նորա ներգործութեամբն յաղթել զթշնամին: Եւ այս չորս կերպիւ. նախ՝ Երրորդութիւնն Սուրբ: Երկրորդ՝ երեք աստուածային առաքինութեամբն: Երրորդ՝ երեք մասամբ հոգւոյս: Չորրորդ՝ միտք, հոգի

[274] Հմմտ. ՍՍ 1166, թ. 87բ-88ա:

եւ մարմին: Իսկ այն, զի սերմ ասէ զքարոզել եւ սերմ զգործելն չորիւք որոշի. նախ՝ մին՝ ասողին սերմ, եւ մին՝ առնողին: Երկրորդ՝ մին՝ ի միտս, եւ մին՝ ի հոգի եւ ի մարմին: Երրորդ՝ մին՝ լոկ սերմ, եւ մին՝ սերմ եւ պտուղ: Չորրորդ՝ մին՝ աստ, եւ մին՝ անդ ունի զպտուղ:

ԱՍԻԴՆ ԵՒ ՆԷԵՍԱՅՆ[275]

Այլ է Նէելասն եւ Ասիդն, եւ Նէեսայն (ԼԹ 13): Ոմանք՝ թռչուն ե՛ւ բազէ, ե՛ւ տառեղ ասեն, այլ նոքա զձուս ոչ թաղեն յերկիր: Այլ սոքա մարախ են եւ ազգ մարախոյ, եւ ջորեակ: Յայսմանէ ասէ առակն «Թանձրասցի մարախ եւ տարածեսցի կապարն» (Ժողով. ԺԲ 5): Եւ Եսայի. «Ժողովեսցի կապոյտն ձեր, զոր աւրինակ մարախ ի գբոյ» (Ես. ԼԳ 4): Եւ թռչելն յետ մահու Հոգւոց Սրբոց ի կայանս ընտրելոց, այլեւ լուսեղէն ամպաւք ելանել յերկինս[276]:

Բան. Ուծացաւ (ԼԹ 16):

Լուծումն. Մոռացաւ զձուս եւ զձագս: Նոյնպէս մեռեալք մոռացեալ են զյետոյսս: Այլեւ զժամ դատաստանին ոչ գիտեն, մինչեւ փող հարկանի: Իսկ որ Բարուախաւսն[277]՝ կենդանի ասէ զԱսիդն եւ ոսկեգոյն ծառ զՆէեսայն, ի ծնունդ Տեառն ոչ բաղդատի այն, որ ընդ բերանն ծնանի, որպէս եւ ոչ ագռաւուցն, /97բ/ այլ չորս կերպիւ. նախ՝ ի կենդանւոյն ծառ բուսեալ: Երկրորդ՝ ոսկեգոյն աստուածակերպ: Երրորդ՝ այլեւ ըզգեստ ստորմակերպ, որ է դեղձան: Չորրորդ՝ զի Ասիդն կերպանայ ի ծառոյն Նէեսայ, որ զծընօղն ծնանի: Եւ այլքն յայտնի է ի մեկնիչդ: Տե՛ս միեղջերու ասաց վասն ծնանդեան Կուսին եւ Նէեսա՝ վասն թաղման եւ համբարձմանն[278]:

---

[275] Հմմտ. ՍՍ 1166, թ. 88ա:
[276] Հոգու կայանների մասին տե՛ս *Գիրք հարցմանց*, հտ. Ժ, պրակ ԺԱ, էջ 686-691:
[277] Հմմտ. ՍՍ 2151, թ. 80ա. ՍՍ 2285, թ. 286բ:
[278] Հմմտ. ՍՍ 1166, թ. 88ա:

ՎԱՍՆ ՁԻՈՅ ԵՒ ԽԱՉԻՆ[279]

Ձին գործի է պատերազմի վասն չորից. նախ՝ զի զօրաւոր է: Երկրորդ՝ սրընթաց: Երրորդ՝ խրոխտ: Չորրորդ՝ ընդել: Այսպէս եւ խաչն: Դարձեալ նախ՝ քառաքեաց եւ քառաթեւ խաչն: Երկրորդ՝ բարձր, յոր բարձրացաւ Տէր: Երրորդ՝ զարդարեալ, որ է արեամբ եւ ջրով: Չորրորդ՝ ահագին, որպէս ի վերայ դիւաց: Եւ դարձեալ. նախ՝ որպէս ձիոյն եւ ձիաւորին մի է զօրութիւն[280]: Երկրորդ՝ նստեալ է եւ գնայ ձիով, այսպէս եւ խաչիւն Տէր մեր: Երրորդ՝ յերկուցն մի պատերազմ, որպէս ցուցանէ: Չորրորդ՝ զմի գործաւորի առնուն: Եւ Տէր մեր խաչիւն պատերազմեալ եւ աւերեալ զդժոխս: Ըստ այնմ. «Ելէր դու ի կառս քո, հեծելութիւնդ քո» (Ամբակ. Գ 8, հմմտ. Երեմ. ԾԱ 20-21):

Եւ վասն պատերազմին ասէ ութ յատկութիւն ձիոյ. նախ՝ զի ելանէ ի դաշտ: Եւ Տէր մեր արտաքոյ քաղաքին խաչեցաւ, եւ քարոզ խաչելոյն ընդ դաշտս տիեզերաց ել: Երկրորդ՝ որոտայ ի դաշտի: Եւ Տէր մեր ձայնեաց ի խաչին, եւ պատառեցան վէմք: Երրորդ՝ դաբր հարկանէ ոտիւք, այսինքն՝ գերեզմանն եւ սիրտ հաւատացելոց: /98ա/ Չորրորդ՝ արհամարհէ զնետ եւ զերկաթ, այսինքն՝ զբանս հայհոյութեան, որ ասէին. «Վա՛հ, որ քակէիր» (Մատթ. ԻԷ 40, Մարկ. ԺԵ 39) եւ այլն: Հինգերորդ՝ ի վերայ նորա շողայ աղեղն եւ սուսեր, վահան եւ նիզակ (ԼԹ 23): Երեք միտք է. նախ՝ ի ժամ պատերազմին, յորժամ երկու կողմն առ միմիեանս արձակին, փայլիւն սուսերաց, եւ ճայթմունք նիզակաց, եւ ձայնք, եւ փոշին մթացեալ ծանաւթ է տեսողաց: Երկրորդ՝ Տեառն մերոյ ի գիշերի խաչին ջահիւք, սուսերաւք եւ բրաւք, եւ տիգաւ ի կողն մատեան, եւ բեւեռք ոտից եւ ձեռաց, եւ խաւարիւն ի խաչին: Երրորդ՝ այսպէս ի զինուք զարթեաւ Տէրն ի վերայ խաւարասէր

---

[279] Հմմտ. ՍՍ 1166, թ. 88աբ:

[280] Հմմտ. *Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի հայս*, Վենետիկ, 1826. Փիլոնի այնոցիկ, որ ի լինելութեանն, էջ 2. «որպէս ձի ասի թագաւորի՝ ամենայն ձիական զօրութիւնն...»:

իշխանին, զորմէ ասէր Սովսէս. «Սրեցից որպէս փայլակն զսուսեր իմ» (Բ Օրէնք ԼԲ 41) եւ այլն:

Վասն որոյ չորիւք զինուք մարտեաւ. նախ՝ աղեղն, որ է խաչն, եւ լար՝ Տէրն պրկեալ ի վերայ, եւ նետ՝ եւթն բան խաւսեցեալն: Դարձեալ մարմինն՝ աղեղն, եւ լար՝ Բանն Աստուած, եւ նետ՝ Հոգին, որ ել ի բարձունս, եւ էջ ի դժոխս եւ աւերեաց: Երկրորդ՝ զէն սուրն, որ է բարկութիւնն, որ կտրեաց ընդ մէջ զզաւրութիւն նորա: Երրորդ՝ վահանն, որ անաչառ դատեցաւ, ազատեաց զգերեալսն եւ զթշնամին կապեաց: Չորրորդ՝ նիզակաւն եհար զկողն եւ սպան զկրկին ցանկութիւն չարին, այսինքն՝ որ զմարդիկ տանջէր, զինքն փառաւորէր: /98բ/ Վեցերորդ՝ ասէ բարկութեամբ ապականէ զերկիր (ԼԹ 24): Հեծելազաւրք յայտնի է, զոր առնեն յերկրի, այլ Տէր մեր խաչիւն ապականեաց զերկու իր, այսինքն՝ զմեղս եւ զանաւրէնութիւն, այլեւ զմահ եւ զապականութիւն, այլեւս տանջանս եւ զկապանս դժոխոց: Եւթներորդ՝ ասէ. Մինչեւ փող հարկանի եւ վաշ, վաշ կարդայ (ԼԹ 25): Աստ գիտելի է, զի կրկին է փողք. նախ՝ պատերազմի: Եւ երկրորդ՝ յաղթութեան: Յաղթութեան փող է, զորմէ ասաց Տէր. «Քաջալերացուք, ես յաղթեցի աշխարհի» (Յովհ. ԺՁ 33) եւ մեղաց, եւ սատանայի, եւ մահու, եւ ապականութեանց, եւ տանջանաց: Իսկ պատերազմի փող երկուց կողմանց է, այսինքն՝ հրէիցն, քահանայապետիցն եւ այլոցն. «Ի խաչ հան՝ ի խաչ բարձ զդա, բարձ» (Յովհ. ԺԹ 6, 15): Եւ փչաւղն սատանայ նոցա: Իսկ ի մեր կողմանէս չորս էին փողք. առաջին՝ Տէր մեր, որ փողեաց ի վերայ խաչին: Եւ հինգ ծակ փողոյն՝ հինգ տեղի խոցուածոց մարմնոյն: Երկրորդ՝ փող հրեշտակին, որ գոչէր զՅարութիւնն: Երրորդ՝ կանայնքն իւղաբերք աւետեցին առաքելոցն: Չորրորդ՝ փող առաքեալքն էին ամենայն տիեզերաց: Եւ փչաւղ սոցա նախքան զխաչն՝ Հայրն, որ ասաց. «Փառաւոր արարի, եւ դարձեալ փառաւոր արարից» (Յովհ. ԺԲ 28): Կէսքն ասէին որոտումն, այլ թէ հրեշտակ խաւսեցաւ որպէս թագաւորք յառաջ հնչեն զփողն, զի վաղիւն պատրաստ լիցին ի պատերազմ: /99ա/ Այսպէս եւ ամենայն սրբոց երեւէր կամ

ծայնէր յերկնից, զի քաջասցին ի պատերազմ: Այս վասն փողոցն: Ութերորդ՝ ասէ. Առնու զհոտ պատերազմի (ԼԹ 25): Այսինքն՝ ձին նախագիտակ լինի եւ վազս առնէ փռընկելով, որ է բարկութեամբ խրոխտանալն: Եւ Տէր մեր գուշակեաց վասն Նեռինն, թէ այլ ոք եկեսցէ յիւր անունն, զնա ընդունել կամիք: Եւ թէ յարիցեն սուտ Քրիստոսք, եւ սուտ մարգարէք, եւ այլն, եւ պատերազմ, եւ խռովութիւն ազգաց, մինչեւ կայցէ ի տեղւոջն սրբութեան: Եւ Յոհաննէս ասէ. «Նեռինք բազումք եկեալ են» (Ա Յովհ. Բ 18) եւ այլն: Եւ Պաւղոս, թէ գալոց է Որդին կորստեան, մարդն անաւրէնութեան, հակառակսն ճշմարտութեան (հմմտ. Բ Թես. Բ 3): Զոր Տէր Յիսուս սատակեսցէ զնա բերանով իւրով. Ամէն: Գտցես եւ զյատկութիւն ձիոց ի յերգս Երգոցն, է համարն[281]:

ՎԱՍՆ ԲԱԶԷԻՑ[282]

Բան. Բազէ տարածեալ զթեւս, դիտելով ընդ հարաւ (ԼԹ 26):

Լուծումն. Որպէս ասէ Փիլոն վարդապետն Եբրայեցւոց. Յաշխարհին Հնդկաց, ընդդէմ հարաւոյ մայրեացն, ի վերայ աւդոյն տարածեալ զթեւս անշարժ կայ բազէ, մինչ շարժի անտառն ի հողմոյ եւ աղաւնիքն անկանին յոստոցն՝ ի վերայ յարձակի[283]: Այս է միտքն, յորժամ հողմն մահուն շնչէ եւ անմեղ հոգիքն անկանին ի դժոխս եւ յարձակի Տէրն եւ ազատէ զնոսա: /99բ/ Այլեւ բազէ կոչէ զՏէր մեր ըստ անուանն վասն հնգից. նախ՝ ի բազուկս: Երկրորդ՝ տարածեաց զբազուկս ի խաչ: Երրորդ՝ բազէ որպէս բարեխաւս: Չորրորդ՝ բազէ որպէս ողորմելով մարդկան: Հինգերորդ՝ զի բազում առնէ որս: Վեցերորդ՝ զի ըմբռնեալ լինի ընտանի: Եւթներորդ՝ զի խաչաձեւ թռչի: Ութերորդ՝ զի մագլովն պատառէ

---

281 Հմմտ. **Գրիգոր Տաթեւացի**, *Երգ երգոցի մեկնությունը*, էջ 26-27:
282 Հմմտ. ՍՍ 1166, թ. 89ա:
283 Հմմտ. *Փիլոնի Եբրայեցւոյ Բանք երեք....* Յաղագս կենդանեաց, էջ 143:

զթռչունս: Եւ ասելն՝ Դիտէ ընդ հարաւ (ԼԹ 26), այն է, յորժամ խոնարհեցոյց զգլուխն ի յուսն, հայեցաւ ընդ հարաւ քաղցրութեամբ՝ դիտել զբնութիւնս մարդկան: Եւ զի Տէրն ի հիւսսւոյ կողմն խաչեցաւ յայտնի է յերից. նախ՝ որ ամենայն զոհքն ի կողմ հիւսսւոյ էր սեղանոյն: Երկրորդ՝ զի ողջակէզն, որ արտաքոյ այրէին, ի հիւսիս էր տաճարին: Երրորդ՝ զի Գողգոթայ հիւսիս է քաղաքին: Իսկ խաչն Քրիստոսի ինքնին դարձաւ յարեւմուտս: Եւ յայտ է յերկուց. նախ՝ զի յարեւելս երկրպագեցին: Երկրորդ՝ որ ի խոնարհել գլխոյն ի յուսն դիտէր ընդ հարաւ:

Հարց. Եւ վասն է՞ի խոնարհեցոյց զգլուխն[284]*:*

Պատասխանի. Վասն երից. նախ՝ որպէս ցուցաւ, զի դիտէր ընդ հարաւ: Երկրորդ՝ ընդդէմ գլխոյն Ադամայ, որ բարձրացոյց: Երրորդ՝ զի ցուցէ, թէ կամաւ մեռաւ: Եւ ի չորից յայտ է, զի կամաւ մեռաւ Քրիստոս. նախ՝ զի ասաց. «Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ առնուլ» (Յովհ. Ժ 18): Երկրորդ՝ զի ի ձայն բարձր աղաղակեաց: Երրորդ՝ զի զաչսն եխից. Ստուերք մահու ի վերայ արտեւանաց իմոց (ԺԶ 17): /100ա/ Չորրորդ՝ զի խոնարհեցոյց զգլուխն եւ ապա աւանդեաց զոգին:

[284] Հմմտ. ՍՄ 1166, թ. 89ա. «շարժեցաւ ի գթոց եւ ի խաչին տարածեաց զբազուկսն եւ խոնարհեցուցեալ զգլուխն յուսն աջոյ՝ հա[յ]ել ընդդէմ հարաւոյ, առ ի դիտել զբնութիւնս մեր»:

ԱՐՓԻ ԵՒ ԵԹԵՐ[285]

Արփին երեք է՝ ներքին, միջին եւ վերին: Ներքին է տարր հրոյ, որ միայն այրէ, վերին՝ հրեղէն երկինն, որ միայն լուսաւորէ, միջին՝ արեգակն, որ այրէ եւ լուսաւորէ: Նմանապէս եւ եթեր կոչի տարր հրոյն, եթեր եւ ութերորդ կամարն, եթեր եւ լուսեղէն երկինք:

ՎԱՍՆ ԱՆԳԵՂ[286]

(ԼԹ 27) Անգղ միայն ի վերայ իւր բունոյն նստի եւ ոչ այլ ուրեք: Եւ երկու բոյնն. նախ՝ երկինքն եւ երկիրս: Երկրորդ՝ եկեղեցի եւ կայանք հոգւոց, ուր ասաց. «Գանձեցէք ձեզ գանձս» (Մատթ. Զ 20): Անախտ ծնունդ. նախ՝ ի Հաւրէ: Երկրորդ՝ ի մաւրէ: Երրորդ՝ աւազանաւն մեք: Չորրորդ՝ յարութիւն մեր ի փառս: Եւ կերակուր է Հաւր փրկութիւն մարդկան: Եւ Որդւոյ՝ բարի գործն մեր, եւ Հոգւոյն՝ փառաբանութիւնն: Դարձեալ փրկութիւն՝ հոգւոյս, բարի գործ՝ մարմնոյս, եւ օրհնութիւն՝ բանից:

Եւ դարձեալ փառաբանութիւն՝ հրեշտակաց, բարի գործ՝ մարդկան, եւ փրկութիւն՝ հոգւոցն, որ ի դժոխս: Եւ եւս բարեբանեն երկնաւորք, բարեգործեն երկրաւորք, փրկեսցին յարուցեալքն ի մեղաց, ի մահու եւ յապականութեանց: Անկղ սրատես է ի վայր, որ է նշանակ նախախնամութեանն:

Եւ արծուի սրատես ի վեր, որ է նշանակ սրբոց եւ երկնայնոց:

Եւ թէ ուր ուրեք գէշ գտանիցի (ԼԹ 30):

Լուծումն. Նախ՝ պատարագ մարմնոյ Տեառն: Երկրորդ՝ պաշտամունք եկեղեցոյ: /100բ/ Երրորդ՝ նահատակութիւն սրբոց: Չորրորդ՝ յարութիւն մարմնոց թէ՛ ի ծովու եւ թէ՛ ի ցամաքի:

---

[285] Հմմտ. ՄՄ 1166, թ. 89ա. «Ահագին եւ թագաւորական թռչունս այս (արծուի մասին է – Է. Ս.) վերանայ բարձրաթռիչ գոլով մերձ յարփին եւ անդուստ իջեալ լանայ աղբերս եւ *մանկանայ զծերութիւնն*.... (հմմտ. Սաղմ. ՃԲ 5)»: Վանական Վարդապետն այստեղ ի նկատի ունի *Հին աւուրց*ին (Է. Ս.):

[286] Հմմտ. ՄՄ 1166, թ. 89աբ:

Արեամբ թաթաւիլն որդոյ (ԼԹ 30)։ Նախ՝ մարմին լինելն Բանին. «Եղբաւր որդին իմ կարմիր է եւ սպիտակ» (Երգ Ե 10)։ Երկրորդ՝ արեամբ ի վերայ խաչին, որք ասէին. «Վասն է՞ր կարմիր են ձորձք քո» (Ես. ԿԳ 2)։ Երրորդ՝ ճաշակումն արեան ի վերնատուն։ Եւ տե՛ս զկարգն ասաց զձին վասն խաչին, եւ զբազէն՝ տարածման ձեռացն, եւ զարծուին՝ վասն մկրտութեան շնորհաց, եւ զարեամբ թաթաւիրլն՝ վասն ճաշակման արեան միածնի Որդւոյն Աստուծոյ, որում փա՛ռք յաւիտեանս։

ԺԱ. ՎԱՍՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ[287]

արց. Զի՞նչ է նախախնամութիւն եւ դատաստան (ԼԹ 32):

Պատասխանի. Երեք են գործք Աստուծոյ, այսինքն՝ առնել, խնամել եւ դատել: Եւ սոքա երեքեան ի նմանէ առ մեզ հային ի յարարածքս: Եւ նախ՝ յարարիչն չորս կերպիւ, առաջին՝ զի ունի կարողութիւն եւ կամք, եւ գիտութիւն: Եւ է ի կարելոյն առնել եւ ի կամացն խնամել, եւ ի գիտութեանցն դատել: Երկրորդ՝ կրկին զաւրութիւն է Աստուծոյ՝ արարչական եւ արքունական: Եւ է արարչութեանն յոչէից առնել եւ զեղեալն խնամել եւ արքունական՝ տիրել եւ դատել: Երրորդ՝ կրկին է գործն Աստուծոյ՝ ողորմութեան եւ արդարութեան: Եւ ողորմութեամբն արար, եւ արդարութեամբն խնամէ, եւ դատէ: /101ա/ Չորրորդ՝ ի դիմաց Երրորդութեանն՝ առնելն Հօր, խնամել Հոգւոյն եւ դատելն՝ Որդւոյ: Որպէս ասէ. «Զամենայն դատաստան ետ Որդւոյ» (Յովհ. Ե 22), նոյնպէս առ մեզ չորս կերպիւ. նախ՝ առնելն ի սկիզբն, խնամելն ի մէջն եւ դատելն ի վախճան: Երկրորդ՝ յանցեալն, ի ներկայս եւ յապայն: Երրորդ՝ զի ունիմք բնութիւն եւ կամք, եւ գործ, արար զբնութիւնս, խնամէ զկամս, դատէ զգործս: Չորրորդ՝ երեք են ներգործութիւնք, այս է՝ ինքեան Աստուծոյ եւ մեր եւ այլոյ: Վասն ինքեան՝ առնէ, վասն այլոյ՝ խնամէ, վասն մեր՝ դատէ թէ՛ բարի եւ եթէ՛ չար:

Բան. Բաւական (ԼԹ 32):

Լուծումն. Ամենազաւր, ամենակար, ամենակալ, ամենիմաստ եւ այլն: Դարձեալ միայն իմաստուն եւ զաւրաւոր եւ այլն: Եւ այս հինգ կերպիւ. նախ՝ զի անեղ է իմաստութիւն նորա: Երկրորդ՝ գոյացութեամբ: Երրորդ՝ յինքենէ: Չորրորդ՝ բոլոր: Հինգերորդ՝ իմաստնացուցիչ: Նոյնպէս զաւրութիւնն եւ ներգործութիւն եւ

[287] Հմմտ. ՍՍ 1166, թ. 89բ:

այլն: Եւ չորս կերպիւ Որդին ուսոյց մեզ զդատաստանն. նախ՝ բանիւ ասաց վասն վերջին դատաստանին առ արդարս եւ մեղաւորս: Երկրորդ՝ ինքեամբք եցոյց, թէ սուրբ եւ սիրելիքն Աստուծոյ ի տանջանս են աստ: Երրորդ՝ աւրինաւք ասաց սիրել զթշնամիս եւ բարի առնել ատելեաց: Չորրորդ՝ առ ազգս, որ մերժեաց զիրեայս եւ սիրեաց զհեթանոսս. «Ի դատաստան եկի, /101բ/ որք ոչ տեսանենն՝ տեսցեն եւ որք տեսանեն՝ կուրասցին» (Յովհ. Թ 39):

Բան. Մի անգամ խօսեցայ եւ ոչ եւս (ԼԹ 35):

Լուծումն. Չորս կերպիւ. նախ՝ ի դէմս բարեկամացն խաւսեցայ եւ ոչ իշխեմ Արարչիդ: Երկրորդ՝ հարցանեմ, այլ ոչ ընդ քննեմ: Երրորդ՝ զաւգուտն եւ զգիտելին խաւսիմ, զանաւգուտ եւ զանգիտելին՝ ոչ: Չորրորդ՝ զիս պատճառեմ եւ զքեզ՝ ոչ, որպէս Ադամ:

ԴԱՐՁԵԱԼ ԿՐԿՆԵԱԼ ՏԵԱՌՆ[288]

Հարց. Վասն Է՞ի կրկին խաւսի ընդ Յոբայ (Խ 1):

Պատասխանի. Վասն չորից. նախ՝ զի անդ յառաջնումն յանդիմանեաց զտկարութիւնն Յոբայ, աստ՝ մխիթարէ եւ արդարութեանն վկայէ: Երկրորդ՝ անդ զհոգին զաւրացոյց, աստ՝ զմարմինն առողջացոյց: Երրորդ՝ ասաց Ելիուս, թէ մի անգամ խաւսի Աստուած եւ յերկրորդն՝ երազ եւ արհաւիրք (հմմտ. ԼԳ 15), աստ՝ կրկին խաւսի Աստուած որպէս ամենայն սրբոց (հմմտ. Խ 3): Չորրորդ՝ անդ ասաց վասն ցամաքայնոց (հմմտ. ԼԳ 20-21), աստ ասէ՝ վասն ջրայնոց եւ զիմանալի վիշապն (հմմտ. Խ 20): Այլեւ նշանակէ, զի Աստուած կրկին խաւսի առ սուրբս, այսինքն՝ աստ եւ ի հանդերձեալն: Դարձեալ անդ Հայր խաւսեցաւ, եւ աստ՝ Որդի:

---

[288] Հմմտ. ՄՄ 1166, թ. 89բ-90ա:

[Բան] Ոչ այդպէս (Խ 2):

Լուծումն. Չորս է իմացումն. նախ՝ առ բարեկամսն, որք կարծէին զՅոբայ, թէ պատրեալ իցէ, ասէ՝ ոչ է այդ, որպէս դուք կարծէք: Երկրորդ՝ ի դէմս առաջին մարդոյ, այլեւ բանսարկուին, որք կարծէին աստուածս լինել, ասէ՝ ոչ այդպէս այլ էակիցն իմ, եւ զաւրաւորն, եւ իմաստունն է Աստուած: Երրորդ՝ ի դէմս Յոբայ, որ զինքն խոնարհ երեւեցոյց, ասէ՝ ոչ /102ա/ այդպէս միայն ի տկարութեանդ, այլեւ ի մեծութեանն լեր: Եւ ոչ միայն առ իս, այլ առ ամենայն ոք լեր խոնարհ: Չորրորդ՝ առ մեզ, որք հպարտութեամբ քնեն զբխորս Աստուծոյ, ասէ՝ ոչ այդպէս, զոր դու իմանաս, զի անքննին է:

Բան. Պնդեա զմէջդ (Խ 2):

Լուծումն. Անդ՝ զմէջ հոգւոյն եւ զմտացն ասաց, աստ՝ զմէջ մարմնոյն, որ է ցանկութիւն եւ առողջութիւն, եւ մեծութիւն, եւ այլն: Եւ զի յամպոյն միայն խաւսի ցուցանէ զհանդարտութեամբ հարցումն:

Բան. Մի՛ զընկենուր (Խ 3):

Լուծումն. Մի՛ զրկեր եւ մի՛ մերժեր:

Բան. Կաւշէ[289]*:*

Լուծումն. Նոյն է գոչել եւ ձայնել: Եւ Աստուած կրկին վկայեաց Յոբայ արդար գոլ նախքան զփորձանս եւ զկնի: Նոյնպէս երկիցս Հայր վկայեաց Որդւոյ, այսինքն՝ ի Յորդանանն, ի Թաբաւր: Տե՛ս ամենայն աստիճանաց. պարտ է նախ՝ բանիւ աւանդել ի հոգին, եւ ապա՝ զնիւթն ի ձեռն: Չարեաւ ոչ յաղթի չար: Չորս է միտք. նախ՝ զի համազգի է: Երկրորդ՝ զի առաւել չար լինի, քան զնա:

Գ (3) միտք ի հարցումն, այլ բարեաւ յաղթի չար. նախ՝ զի ընդդէմ է նմա, որպէս լոյս ընդդէմ է խաւարի: Երկրորդ՝ զի բարեաւն վարձատրի վասն իւր եւ վասն նորայ: Եւ տես յաւրինակաց, զի հողմով ոչ շիջանի հուր, այլ ջրով եւ արեամբ ոչ սրբի արիւն, այլ ջրով:

---

[289] Հմմտ. ՍՍ 1166, թ. 90բ:

ՎԱՍՆ ԱՄՕԹՈՅ[290]

Ամաւթն երեք ծածկոյթ ունի. /102բ/ նախ՝ զշառագունիլն, որ զարիւնն քող ձգէ երեսացն: Երկրորդ՝ ծածկոյթ ինչ հանդերձի: Երրորդ՝ յերկիր հայել, զի նա է առաւել ծածկոյթ, որպէս՝ այն չեմ արժանի հայել զբարձունս երկնից (հմմտ. Յայտն. Ե 4, նաեւ Ես. ԼԸ 14): Եւ յիմար կուսանքն գլուխ խոնարհեալ եւ այլն: Նոյնպէս չորս մտաւք է հարցումնս. նախ՝ զերեւելին ի նշանակ իմանալւոյն: Երկրորդ՝ զտեսեալս, եւ ապա՝ զանտեսն ի խորս: Երրորդ՝ զանգիտելիս: Չորրորդ՝ զարհուրելիս:

Տզրուկ[291] կոչի. նախ՝ զի սողուն է: Երկրորդ՝ սեւաթիւր: Երրորդ՝ ի ջուրս կայ: Չորրորդ՝ զաղտեղիս ծծէ: Եւ գազան կոչի սատանայ եւ բռնաւորք վասն չորից. նախ՝ զի պատառող: Երկրորդ՝ արենարբու: Երրորդ՝ շաղղակեր: Չորրորդ՝ անընտրող սրբոյ եւ պղծոյ: Երկակենցաղ են չորիւք. նախ՝ ջրային եւ ցամաքային, զի ունին շունչ աւդոյ եւ շունչ ջրոյ: Երկրորդ՝ խառնակեր: Երրորդ՝ սողուն եւ ոտնաւոր: Չորրորդ՝ զաւրեղ ի ջուր եւ ի ցամաք: Նոյնպէս իմանալին. նախ՝ անդնդային եւ օդային: Երկրորդ՝ գազան եւ անասուն: Երրորդ՝ սողին եւ գնան ամբարտաւան ոտիւք: Չորրորդ՝ զաւրեղ ի մարդ եւ յանասուն, ի հոգի եւ ի մարմին, ի կղզիս եւ ի ցամաքս: Եւ կէտ կոչին. նախ՝ զի միայնակ շրջին: Երկրորդ՝ զի առաջին է կէտն եւ ապա ծիրն: Երրորդ՝ զի սահման եւ բաժանող: Չորրորդ՝ կէտ, որպէս մեծ եւ ահագին: /103ա/

ՎԱՍՆ ՎԻՇԱՊԻ ՑԱՆԿՈՒԹԵԱՆ[292]

Եւ վիշապ կոչի ցանկութիւնն առ մեզ վասն վեցից. նախ՝ զի պատեալ է զբոլոր մարմինն: Երկրորդ՝ զաւրեղ: Երրորդ՝ գէջ: Չորրորդ՝ սողուն: Հինգերորդ՝ երկակեաց: Վեցերորդ՝ վնասիչ:

---

[290] Հմմտ. ՄՄ 1166, թ. 90բ:
[291] Հմմտ. նույն տեղում:
[292] Հմմտ. ՄՄ 1166, թ. 91ա:

Ցրդի[293] է ամուսնութիւն. նախ՝ զի գետնաքարշ: Երկրորդ՝ գարշահոտ: Երրորդ՝ դառնապտուղ: Չորրորդ՝ կանաչ տերեւ: Հինգերորդ՝ որջ սողնոց: Եւ նոճ[294] է կուսութիւն (Խ 12). նախ՝ զի բարձր է: Երկրորդ՝ անուշահոտ: Երրորդ՝ անփուտ: Չորրորդ՝ մշտասաղարթ: Հինգերորդ՝ թռչնոց դադարք հրեշտակաց:

Բան. Դարաւանք (Խ 12):

Լուծումն. Մարդակ կամ ձեղունք:

ՏՈՒՏՆ ԵՒ ԱԳԻ[295]

(Խ 12, 26) Չորս է տուտն վիշապին. նախ՝ դեւք սպասաւորք նմին: Երկրորդ՝ մարդիկք հետեւողք նորին: Երրորդ՝ յետոյ Նեռն: Չորրորդ՝ գլուխ է մեղքն եւ մահ, եւ դժոխք՝ տուտն նորա:

Հարց. Զի՞նչ է տուտն եւ ագի մարմնապէս:

Պատասխանի. Ագի ցամաքայնոց որպէս չորքոտանեաց եւ սողնոց վայել է, եւ տուտն՝ ջրայնոց եւ թռչնոց: Եւ տուտն եւ տտուն որոշի. նախ՝ տուտն կարճ, եւ տտուն՝ երկայն, որպէս զոսկետտունն: Երկրորդ՝ տտուն զաւրեղ, որպէս տտամբն քարշեաց: Եւ ագի կոչի. նախ՝զի յետ ոտիցն է, որ հագ կոչի: Երկրորդ՝ զի ագուցումն է, եւ ծածկոյթ ամաւթոյ մասանց: /103բ/ Եւ տուտն եւ ագին վարէ զկենդանիս, որպէս ղեակ զնաւս, այլեւ գործի է փոխանակ ձեռին:

ՎԱՍՆ ՖԼԱՑ[296]

(Խ 12) Ֆիլք ի գլխոյն է եւ կապէ զաւդսն, եւ շարժումն տայ, եւ զգացումն մարմնոյ. նախ՝ հոգեպէս միմեանց անդամք եմք, եւ սէրն՝ շաղկապ ի գլխոյն Քրիստոս է, որով շարժիմք եւ կեամք:

---

[293] Փշատերեւ թփատեսակ՝ ցիրդ:
[294] Հմմտ. ՄՄ 1166, թ. 91ա:
[295] Հմմտ. նույն տեղում:
[296] Հմմտ. ՄՄ 1166, թ. 90ա:

Երկրորդ՝ սերն գլուխ է եւ այլ առաքինութիւնք կապին սիրով առ միմեանս եւ անքակտելի մնան: Եւ ի կողմանէ չարին. նախ՝ հպարտութիւնն գլուխ է եւ ցանկութիւնն՝ շաղկապ ամենայն մեղաց: Երկրորդ՝ վիշապն գլուխ է, եւ հետեւեալքն՝ ամենայն անդամք նորա: Պոռնկութիւնն է ոսկեգոյն եւ ծանր, եւ ժահահոտ:

Երկաթն[297] (Խ 13) կարծր է եւ ծանր, եւ սեւ, եւ ժանգոտ, որ է մեղք: Դարձեալ երկաթն գործիք է եւ սրբի, եւ փայլէ, եւ զպատկերս ցուցանէ, որ է բարի գործք: Սատանայ ցուցանի ի վերին դասուցն անկեալ, ուստի յայտ է. նախ՝ զի կոչմանէն, զի Սադիէլ՝ աջ Աստուծոյ լսի: Երկրորդ՝ ի չորեքկերպեան աթոռոյն, եւ այժմ՝ երեք են: Երրորդ՝ զի մարդս ի տեղի անկելոցն ել, որ ի վեր է, քան զսէրոբէսն եւ զքէրոբէս: Չորրորդ՝ ասէ Եսայի. «Դու պատկեր եւ կնիք նմանութեան իմոյ» (հմմտ. Ես. Խ 19): Հինգերորդ՝ անկաւ Արուսեակն, որ է ի ներքոյ արեգական: Վեցերորդ՝ Եզեկիէլ զնոյնս /104ա/ ցուցանէ վասն ականցն գերիվերոյ (հմմտ. Եզեկ. է 20): Եւթներորդ՝ աստ ասէ սկիզբն արարածոց Տեառն (Խ 14), որ նախ ստեղծաւ, կա՛մ նախ էառ զիշխանութիւն եւ զպատիւ, կա՛մ զի սկզբնաչար եղեւ:

ՎԱՍՆ ՊՐՏՈՒԻ[298]

(Խ 16) Պրտու, եղէգն եւ այլն: Նախ՝ ի գաղջս բուսանին եւ բեհմօթ[299] ննջէ ի գիջային տեղիս: Երկրորդ՝ անպտուղ: Երրորդ՝ խոտան: Չորրորդ՝ կերակուր անասնոց: Հինգերորդ՝ դիւրակէզ: Վեցերորդ՝ նիւթ հրոյ, որպէս յայտ է ի մեկնիչդ:

---

[297] Հմմտ. ՍՍ 1166, թ. 91բ:

[298] Հմմտ. նույն տեղում:

[299] Հմմտ. **Ներսէս Լամբրոնացի**, *Մեկնութիւն սրբոյ երկոտասան մարգարէից*, Կ. Պոլիս, 1825-1826, Մարգարէութիւն Ամբակումայ, էջ 142. «Լեւիաթան՝ որոց ի ծովու գլուխ է նա գազանացն, եւ բեհմովթ ի ցամաքի՝ սողնոց թագաւոր»:

Բան. Հեղեղատ ոչ զգայ (Խ 18):

Լուծումն. Նախ՝ ցուցանէ, թէ ջրհեղեղն զծովայինս ոչ սատակեաց: Երկրորդ՝ թէ ինքն բերանովն հեղու եւ թէ յայլմէ իջանէ: Երրորդ՝ երկրի վիշապն յանջրդոջ կայ, զի թոյնքն աճէ: Չորրորդ՝ իմանալին զհեղեղ աստուածգիտութեանս ոչ զգայ, զոր մարգարէքն եւ Աւետարանն եւ այլք: Եւ հեղեղ կոչէ վասն չորից. նախ՝ զի ի վերուստ: Երկրորդ՝ յանջրդոջ: Երրորդ՝ յորդ: Չորրորդ՝ զաւրեղ: Այսպէս ճշմարիտ գիտութիւնս ի յերկնից էջ առ հեթանոսս եւ զամենեսեան ուսոյց եւ յաղթեաց:

ՎԱՍՆ ՅՈՐԴԱՆԱՆՈՒ[300]

Հարց. Զի՞նչ է՝ զգլուխ վիշապին Քրիստոս ջախջախեաց ի Յորդանան (Խ 18):

Պատասխանի. Չորս ինչ է գլուխն. նախ՝ հպարտութիւնն: Երկրորդ՝ սկզբնականն: Երրորդ՝ խորհրդոցն: Չորրորդ՝ զանազան մեղք ի զգայութեանց գլխոյն: Արդ յորժամ խոնարհեցաւ եւ էջ ի ջուրն, զհպարտութիւնն ջախջախեաց, եւ ի մէջն մտեալ՝ զսկզբնականն եւ զայլ մեղս, /104բ/ եւ հեղեալ ի գլուխն՝ զխորհրդոցն: Դարձեալ ի մեղքն չորս իր տեսանի, այսինքն՝ տգիտութիւն, տգեղութիւն, ջերմութիւն եւ անզղջութիւն: Եւ ջուրն ունի չորս որակ, այսինքն՝ պարզութիւն, սրբութիւն, ցրտութիւն եւ լուծութիւն: Եւ սոքաւք սրբեաց զմեղս նախնեացն:

Բան. Խուսափել (Խ 19):

Լուծումն. Խոտորնակ շրջել կամ խլրտալ:

Բան. Շրուշակ (Խ 19):

Լուծումն. Փայտն, որ ի քիթ ուղտուց:

Բան. Անուր (Խ 21):

Լուծումն. Աւղն, որ ի քիթն:

---

[300] Հմմտ. ՍՍ 1166, թ. 92ա:

Բան. Դանդանաւանդ (Խ 21):

Լուծումն. Դամաղ սանձք կամ փայտ դնեն ի ժենիս գազանաց եւ կապեն: Կարթ եւ պախուցք յայտնի են: Այսպէս ի գործեալք. նախ՝ վիշապքն խաղալիք եղեն հրեշտակաց (Խ 14): Երկրորդ՝ խաղալիք եղեն Տեառն մերոյ խաչիւն: Երրորդ՝ խաղալիք եղեն սրբոց ի մարդկանէ: Իսկ չորրորդն՝ նոյն ինքն վիշապն զանսուրբս ի մարդկանէ սոյնպէս խաղալիկ առնէ: Եւ տե՛ս, զի հրաշունչ է վիշապն: Վասն այն զքիթն ասէ ծակել: Եւ տե՛ս զգլուխն, ասէ ջաղխել: Ըստ այնմ. «Նա սպասեսցէ քում գլխոյ» (Ծնն. Գ 15): Նախ՝ զի աւծին գլուխն թոյլ է: Երկրորդ՝ ընդ գլխոյն մարտեաւ: Նոյնպէս վիշապին ասէ. նախ՝ զի ամենայն չարիք ի գլուխն է: Երկրորդ՝ ընդ գլխոյ Տեառն իւրեանց մարտեան:

Բան. Նուաճել եւ հնազանդել (Խ 23) եւ այլն:

Լուծումն. Երեք մասամբ հոգւոյն, որպէս մարմնով եւ բանիւ, եւ հոգով: Եւ չորս իրաւք յաղթեն սուրբք զթշնամին. նախ՝ անուամբն Քրիստոսի: Երկրորդ՝ զաւրութեամբ խաչին: Երրորդ՝ բանիւ Աւետարանին: Չորրորդ՝ բարի /105ա/ գործաւք իւրեանց: Այսու առաքեալքն եւ սուրբքն բժշկեն զդիւահարս:

Բան. Որպէս հաւու (Խ 24):

Լուծումն. Որպէս բազէ ի վերայ հաւու: Եւ վասն երից ոչ թռչի հաւ, թէպէտ ունի զթեւս. նախ՝ զի տկար է: Երկրորդ՝ ծանր: Երրորդ՝ տնենի: Սոյնպէս եւ ճնճղուկն ոչ կարէ թռչել, յաւրինակ սատանայի են սոքա: Սոռնոբայ[301] լերինն յաղթեաց եւ կապեաց՝ մինչ ի Նեռին գալն: Աղուեսն. նախ՝ գարշակեր է: Երկրորդ՝ տկար: Երրորդ՝ խաբող: Չորրորդ՝ ապականիչ այգւոյ: Եւ նախ՝ սատանայ ապականեաց զայգին, որ յերկինս: Երկրորդ՝ զդրախտն: Երրորդ՝ զաւրէնքն: Չորրորդ՝ զեկեղեցիս եւ զհոգիս մեր:

---

[301] Կարելի է ենթադրել, որ խոսքն այստեղ Թաբոր լեռան մասին է: Հենց այս ձեւով է հիշատակում Թաբոր լեռը նաեւ Մխիթար Այրիվանեցին. հմմտ. *Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց*, Մոսկվա, 1860, էջ 44. «....եւ ծիրանի բոցաբորբ բարբառով ի Հօրէ եւ յարփիախաղաց աղաւնակերպ Հոգւոյն վկայեալ ի *Սոռնոբայ*....»:

ՎԱՍՆ ԿԵՐԱԿՐՈՑ[302]

(Խ 25) Մարմին գազանաց եւ վիշապաց անուտելի է վասն չորից. նախ՝ զի դառն է: Երկրորդ՝ մահացու: Երրորդ՝ գարշահոտ: Չորրորդ՝ պիղծ: Եւ սոքա են չար գործք, զոր մեղաւորքն ուտեն եւ ոչ սուրբք: Եւ մարմինն Քրիստոսի ընդդէմ այսմ. նախ՝ զի կենարար է: Երկրորդ՝ քաղցր. «Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր» (Ա Պետ. Բ 3): Երրորդ՝ սուրբ. Արիւնն Յիսուսի սրբէ զմեզ (հմմտ. Եբր. ԺԳ 12): Չորրորդ՝ անուշահոտ, զի. «Հոտոտեցաւ Տէր» (Ծնն. Ը 21) ասէ: Նոյնպէս եւ բարի գործքն զայս չորս յատկութիւնս ունի:

Բան. Եւ զմորթ նորա լնուցուս (Խ 26):

Լուծումն. Որպէս զառիւծու կամ զաղուեսու մորթն հանեն եւ խոտ լնուն կերպարանքն միայն է, նոյնպէս զզաւրութիւնն սատանայի տկարացոյց Քրիստոս: /105բ/ Սպանեն բարեգործաւք զչարս, որպէս խոնարհութեամբ՝ զհպարտութիւն, սիրով՝ զատելութիւն եւ այլն:

Բան. Խալամն (Խ 26):

Լուծումն. Գլխոյն ոսկր մի կամ թասն մեծ է, որ լինի նաւ որսորդաց: Եւ այսպէս հնարիւք ըմբռնեն քարշելով եւ թոյլ տալով, մինչ թուլանայ: Եւ սոյնպէս զբռնաւորս ի մարդկանէ եւ զվիշապն խոնարհութեամբ ըմբռնեն:

Բան. Մկանանց[303] (Խ 27):

Լուծումն. Երես մարմնոյն: Ծոգն յիշումն մեղացն է, որ սատակէ զոգին: Եւ ճառս այս դժուարին է, քան զառաջինսն. նախ՝ զի անծանաւթ է բնաբանն եւ մեկնիչն: Երկրորդ՝ զի երեւելին անտեսէ առ իմանալին բաղդատեալ:

---

[302] Հմմտ. ՍՍ 1166, թ. 92բ:
[303] Հմմտ. նույն տեղում:

Բան. Ոչ տեսեր (Խ 28):

Լուծումն. Չորս է իմացումն. նախ՝ եցոյց զահագնութիւն եւ եցոյց զտկարութիւն վիշապին: Երկրորդ՝ զի լսելովն տեսանէ միտք, որպէս աչաւք: Երրորդ՝ նախ տեսանէ եւ ապա զարմանայ: Չորրորդ՝ փորձիչն Յոբայ, որ ահագին էր եւ տկարացաւ:

Բան. Սուրն սուրբ (ԽԱ 1):

Լուծումն. Խաչն է եւ Աւետարանն, եւ Հոգին Սուրբ՝ աստ եւ վերջին վրճիռն՝ անդ:

Բան. Ինձ հակառակ (ԽԱ 1):

Լուծումն. Չորս է տեսութիւն. նախ՝ մտաւք եւ բանիւ: Երկրորդ՝ անուամբ եւ գործով: Երրորդ՝ ինքեամբ եւ այլով, որպէս Նեռիւն: Չորրորդ՝ ինձ եւ իմոցն հակառակ: Պատրուակ (ԽԱ 4) ըստ մարմնոյ կամ հեր կամ վերին կոպ: Մին՝ զաչս մեր խաբէ որպէս կախարդք, մին՝ զտեսանին գունէ որպէս զպտուղն:

Բան. Զոխերիմս (ԽԱ 4):

Լուծումն. Զմթերսն: Եւ խարդաւա/106ա/նել՝ նենգելն է:

ՎԱՍՆ ԱՏԱՄԱՆՑ[304]

(ԽԱ 5) Ատամունք որպէս առիւծու կամ վարազի է: Սուրբքն Աստուծոյ բերան են եւ ատամունք. նախ՝ զի նովաւ խաւսի: Երկրորդ՝ ընդ Աստուած խաւսի: Երրորդ՝ զհրամայեալսն կերակրի: Չորրորդ՝ զբանն ծաւկէ: Այսպէս վիշապին հերձուածողք, որով զսուտն եւ զչարն ուսուցանէ, եւ պատառէ, եւ զթոյնսն հեղու:

ՎԱՍՆ ՊՂԸՆՁԻ[305]

(ԽԱ 6) Նախ՝ զի կարծր է: Երկրորդ՝ ծանր: Երրորդ՝ ցուրտ: Չորրորդ՝ ոսկեգոյն: Հինգերորդ՝ սպիտակի գունով: Վեցերորդ՝

---

[304] Հմմտ. ՍՍ 1166, թ. 93բ:
[305] Հմմտ. նույն տեղում:

ժանգի: Եւթներորդ՝ դառնահամ: Ութերորդ՝ ժահահոտ: Իններորդ՝ ոչ կցի կտրեալն: Տասներորդ՝ ոչ խառնի ընդ ոսկի:

ՎԱՍՆ ԳԱՅԼԱԽԱՋԻ[306]

(ԽԱ 6) Զըմբռնիտ կոչեն արտաքինք, եւ գայլախազ՝ մեք: Ասեն այսու սպան Կային զԱբել ի գայլ ագռաւուց խազեալ: Այլեւ ունի տասն յատկութիւն. նախ՝ զի խիտ է մասնկունք: Երկրորդ՝ ծանր: Երրորդ՝ ողորկ: Չորրորդ՝ փայլուն: Հինգերորդ՝ սեաւ: Վեցերորդ՝ կարծր: Եւթներորդ՝ անգծել ի երկաթոյ: Ութերորդ՝ սուր է կոտորուածն: Իններորդ՝ օդ ոչ մտանէ: Տասներորդ՝ պատկեր ոչ նկարի, վասն որոյ ոչ պաշտեցաւ: Եւ սովաւ թլփատեաց Սեփորայ զորդիսն իւր (հմմտ. Ելք Դ 25), եւ Յեսու մի սրով զայնքան ժողովուրդն, յետ ութ աւուր ելիցն Յորդանանու, զութաւրեայ սրբութիւնսն կատարելով (հմմտ. Յեսու ԻԱ 42): /106բ/ Եւ տե՛ս, զի նախ անցին Յորդանան եւ յետոյ թըլփատեցան: Նոյնպէս եւ եկեղեցի սուրբ նախ մկրտութեանն տօնէ, եւ ապա՝ թլփատութեան: Եւ զի նախ է՝մկրտութիւնն նորոյս սրբութեամբ եւ շնորհաւք, եւ ճշմարտութեամբ, քան զթլփատութիւն հնոյն աւրինաւք եւ աւրինակաւ: Մեծ ջիլք զթիկունս պնդեն կենդանեաց, եւ մզնաձեւք՝ զփորն: Դարձեալ մեծք զոսկերսն յաւդեն, եւ մանունք՝ ի մարմինն եւ ի մորթն խառնին:

Բան. Աւդ ոչ մտանէ (ԽԱ 7):

Լուծումն. Զի շունչ ջրոյ ունին եւ ոչ շունչ աւդոյ: Եւ երբ արտաքս գան կէտք, զշունչն յըռնգունսն ունին: Նոյնպէս դլբինք: Եւ ի վիշապն ոչ մտանէ հոգին. նախ՝ զի սուրբ է ե՛ւ բարի, ե՛ւ լոյս: Եւ նա՝ պիղծ ե՛ւ չար, ե՛ւ խաւար: Երկրորդ՝ զի անզեղջ է սրտիւ: Եւ երեք դասք են մարդիկ. նախ՝ հոգեւոր, որպէս առաքեալք եւ սուրբք, ի նոսա ոչ մերձենայ ոգին չարութեան: Երկրորդ՝ շնչաւոր,

[306] Հմմտ. ՍՍ 1166, թ. 93բ:

որպէս չարք ի նոսա բնակէ ոգին չար: Երրորդ՝ բանաւոր եւ միջակք, որ զերկուսն ունի իմաստութիւն, ի նոցանէ կէսք զերծանին ի չարէ եւ կէսք ոչ:

Բան. Ամդապատիրն (ԽԱ 7):

Լուծումն. Որ աչօք եւ լսելաւք խաբէ: Եւ թակարդն՝ մարմնոյ գայթակղութիւն եւ հնար իմացէ, որ զմիտսն մոլորէ:

Բան. Այր զեղբաւր (ԽԱ 8):

Լուծումն. Փոխէ աստ կա՛մ զվիշապ երկրաւորս, կա՛մ զԼեւիաթան:

ՎԱՍՆ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆՑ[307]

Ի հինգ բաժանին եղբարք բարիք, /107ա/ առաջին՝ բնութեամբ: Երկրորդ՝ աւրինաւք: Երրորդ՝ շնորհաւք: Չորրորդ՝ ըստ աշխարհի, սոքա՝ աստ: Եւ հինգերորդ՝ փառաւք ի հանդերձեալն: Եւ իւրաքանչիւրքն չորս-չորս բաժանին: Առաջինն՝ բնութեամբ եղբարք չորս կերպիւ. նախ՝ ի միոյ Հաւրէ: Երկրորդ՝ ի մի նախնեաց: Երրորդ՝ սերք: Չորրորդ՝ բանականութեամբ: Այսոքիկ բնութեամբ ասին: Երկրորդ՝ եղբարքն չորս կերպիւ. նախ՝ աւրինաւք: Երկրորդ՝ կանոնաւք: Երրորդ՝ աստիճանաւք: Չորրորդ՝ վարուք: Երրորդ՝ եղբարք շնորհաւք: Եւ այս չորս կերպիւ. նախ՝ սրբութեամբ: Երկրորդ՝ հաղորդութեամբ: Երրորդ՝ հաւատով: Չորրորդ՝ յօժարութեամբ: Չորրորդ՝ եղբարք են ըստ աշխարհի եւ այս եւս չորս կերպիւ. նախ՝ լեզուաւ: Երկրորդ՝ քաղաքաւ: Երրորդ՝ ուսմամբ: Չորրորդ՝ արուեստիւ: Իսկ ի հանդերձեալն եղբարք ասին չորս կերպիւ. նախ՝ յարութեամբ: Երկրորդ՝ անմահութեամբ: Երրորդ՝ փառաւք: Չորրորդ՝ պսակաւն: Նմանապէս եւ եղբարք չարք վիշապին. նախ՝ վիշապակիցք: Երկրորդ՝ դեւք: Երրորդ՝ գործք չարեաց: Չորրորդ՝ չարք ի մարդկանէ: Եւ սոքա թէպէտ գործովք եւ կրիւք բաժանեալք են, /107բ/ սակայն եղբայր

[307] Հմմտ. ՄՄ 1166, թ. 93բ-94ա:

կոչին, զի մի հայր ունին զսատանայ: Եւ որպէս միահարք են նոյնպէս միակամք եւ միաշունչք, եւ միաբանք, եւ միագործք, եւ մի ունելով զտանջանս դժոխոց:

ՎԱՍՆ ՓՈՆՉԵԼՈՅ[308]

Հարցումն. Զի՞նչ է փոնչել (ԽԱ 9):

Պատասխանի. Յորժամ ցուրտ արտաքուստ կամ ցաւ ինչ ի ներքուստ ի գլուխն իցէ, եւ առողջութիւնն առաւել զնա ի դուրս մերժէ եւ առողջանայ: Եւ ասեմք առողջութիւն, զի առողջութեան է նշան:

Հարց. Զի՞նչ է, որ աւրհնէ զԱստուած:

Պատասխանի. Սուտ է, որ առասպելաբանեն, թէ գլուխն Ադամայ ի ներքոյ աթոռոյն Աստուծոյ էր ԼՌ (30000) ամ, եւ ի փոնչելն ասէ մարմին կազմեաց: Սուտ է եւ ընդդէմ Սուրբ Գրոց, զի մարմինն ի հողոյ եւ հոգին ի փչմանէն Աստուծոյ ի միասին եղեն: Այլ ասի, թէ յերբեմն ժամանակի մահ անկաւ ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպալիս, եւ որ փոքնգտայր՝ մեռանէր, վասն որոյ յերազս ասացաւ նոցա, զի աւրհնեսցեն զԱստուած եւ ապրեսցին եւ յայնմ հետէ սովորութիւն եղեւ ամենայն մարդկան:

ՎԱՍՆ ԱՐՈՒՍԵԿԻՆ[309]

Որ նախքան զՔրիստոս գիշեր էր, եւ աստեղք՝ մարգարէքն եւ նահապետք եւ լուսին՝ աւրէնքն ստուերի: Եւ արեգակն՝ Քրիստոս, զի մերժեաց զխաւար եւ ծածկեաց զաւրէնսն: Արուսեակ եւ նախընթաց Յովաննէս /108ա/ չորս կերպիւ. նախ՝ աւետեաւք: Երկրորդ՝ ծնանդեամբ: Երրորդ՝ մկրտութեամբ: Չորրորդ՝ մահուամբ, որ էջ ի դժոխս եւ աւետեաց հոգւոցն:

---

[308] Հմմտ. ՍՍ 1166, թ. 94ա:
[309] Հմմտ. նույն տեղում:

ՎԱՍՆ ՆԵՌԻՆՆ[310]

Եւ Նեռն չորս կերպիւ հակառակի Քրիստոսի. նախ՝ անուամբ: Երկրորդ՝ պաշտամամբ: Երրորդ՝ ժամանակաւ: Չորրորդ՝ նստելով ի տաճարն: Դարձեալ չորս կերպիւ պատրէ. նախ՝ սուտ նշանաւք, զի զաւրութեամբն սատանայի է: Երկրորդ՝ ստաբան քարոզաւք ընդդէմ Քրիստոսի: Երրորդ՝ առատութեամբ ընչից ընդդէմ շնորհացն Քրիստոսի: Չորրորդ՝ խիստ տանջանաւք, որպէս Քրիստոս զդեւսն տանջէր: Այլեւ չորս են կարապետք Նեռինն, որք զինին ընդդէմ Քրիստոսի. առաջին՝ անհաւատ հրեայք, որք ընդդէմ կացին սուրբ առաքելոցն եւ սուտ առաքեալք նոցա: Երկրորդ՝ չար բռնաւորք կռապարիշտք: Երրորդ՝ հերձուածողք, որպէս նեստորականք եւ այլք: Չորրորդ՝ այլազգիք, սուտ պատգամաբերք եւ սուտ աւրէնսդիրք՝ հակառակ եկեղեցոյ քրիստոնէից:

Բան. Հրազինեաց (ԽԱ 10):

Լուծումն. Բորբոքեաց հրով եւ լուսով: Եւ չորս հուր է սատանայի. նախ՝ փորձութեան: Երկրորդ՝ բարկութեան: Երրորդ՝ ցանկութեան: Չորրորդ՝ տանջանաց: Եւ տե՛ս, զի հուր ցանկութեան է նիւթ յաւիտենից հրոյն: /108բ/

ՎԱՍՆ ԾԽՈՅ[311]

Հարցումն. Զի՞նչ է ծուխ (ԽԱ 11):

Պատասխանի. Հուրն բաժանարար է, յորժամ ըմբռնի ի նիւթ՝ բաժանէ զհողն եւ ծախէ զջուրն: Եւ բոցն հուրն է բորբոքեալ յաւդն եւ ծուխն աւդն է վերացեալ: Եւ ունի նա եւս զչորս տարր՝ սեւ գոյնն հողոյն է եւ թանձրութիւն՝ ջրոյն, վերընթաց՝ աւդոյն եւ չոր եւ ջերմ՝ հրոյն, որ կսկծէ զաչս:

---

[310] Հմմտ. ՍՍ 1166, թ. 94ա:
[311] Հմմտ. նույն տեղում:

Հարց. Վասն է՞ր ոչ լինի ամպ եւ անձրեւ:

Պատասխանի. Ջի այրեցեալ է ի հրոյն եւ սեւացեալ որպէս աճիւն եւ խանձող: Իսկ նշանակէ ծուխ. նախ՝ զբարկութիւն, ըստ այնմ. «Ել ծուխ ի բարկութենէ նորա» (Բ Թագ. ԻԲ 9, Սաղմ. ԺԷ 9): Երկրորդ՝ որք մերձենան ի սատանայ, կսկծին եւ շլանան տեսութիւնքն: Երրորդ՝ որպէս ծուխն վնասէ զաչս, սոյնպէս մեղք զտեսութիւնս գործողաց: Չորրորդ՝ որպէս ծուխն նախաշաւիղ է հրոյ, սոյնպէս մեղքն յաւիտենից հրոյն: Հինգերորդ՝ որպէս ծուխն յառաջ երեւի, քան զբոցն, սոյնպէս մթատեսակ խորհուրդ չարին նախ է, քան զյայտնի գործ մեղացն: Վեցերորդ՝ ծուխ նշանակէ զկորուստ մեղաւորացն, ըստ այնմ. «Որպէս պակասէ ծուխ՝ պակասեսցին մեղաւորք յերեսաց Աստուծոյ» (Սաղմ. ԿԷ 3): Այլեւ նշանակէ ծուխ զճենճերս զոհիցն, զոր կուրացեալքն մատուցանէին դիւաց:

Բան. Հնոցի հուրն (ԽԱ 11):

Լուծումն. Բոցն է, նոյնպէս եւ Գեհենն:

Բան. Գելանաղիք[312] *(հմմտ. ԽԱ 12):*

Լուծումն. Ճլմել կամ խարշել: Չորս են լոյսք սուրբ բանից. նախ՝ լոյս է Հոգին եւ Բանն Աստուծոյ: Երկրորդ՝ Հոգին, ուր բնակէ: /109ա/ Երրորդ՝ Բանն, որ խաւսի: Չորրորդ՝ ընդունօղք Բանին լուսաւորին: Նոյնպէս եւ հուրն սատանայի առ հերձուածողս առնէ զայս:

[Հարց] Եւ որպէ՞ս ճանաչեմք զբանս ուղղափառաց եւ չարափառաց:

Պատասխանի. Յերից. նախ՝ ի վկայութեանց Սուրբ Գրոց: Երկրորդ՝ «Ի պտղոյ նոցա ծանիջիք» (Մատթ. Է 16, 20), ասէ Տէր: Երրորդ՝ ի հոգիս լսողաց, որ կանգնէ եւ հաստատէ ճշմարիտ է, եւ որ վնասէ եւ չար է՝ սուտ է եւ հերձուած:

Առիւծն (ԽԱ 16) սիգաճեմ ընթանայ. նախ՝ զի զաւրութիւն ի պարանոց եւ ի լանջքն է: Երկրորդ՝ զի հպարտ է, որպէս աքաղաղ

[312] Հմմտ. ՍՍ 1166, թ. 94ա:

եւ նոխազ: Երրորդ՝ զի ահ արկանէ գազանաց եւ անասնոց: Բազում ուժ ի բազում ոսկերաց է եւ ի բազում մսաց: Միսն մասն լսի:

Սադրելն (ԽԱ 17) խաբելն է: Վասն չորից զարդասէր են կանայք. նախ՝ վասն երիտասարդաց խաբելոյ: Երկրորդ՝ ի մոլեկան տռփումն ինքեանց: Երրորդ՝ զի խայծ դնէ որսորդն սատանայ զնոսա: Չորրորդ՝ վասն ամբարհաւաճութեան իւրեանց, որ սերմանեալ է սատանայ ի սիրտս նոցա, վասն որոյ անհաճ լինին զգեստուց, կերակրոց, տանց եւ արանց, եւ այլն: Եւ սոցա առաջի մահ եւ կորուստ ընթանայ:

ՎԱՍՆ ԱՆԴԱՄՈՑ[313]

(ԽԱ 14) Աստ երեք կերպիւ անդամն ասէ սատանայի. նախ՝ դեւք, մեծամեծ եւ փոքունք: /109բ/ Երկրորդ՝ ախտ մեղացն ի նմանէ, մեծ եւ փոքր: Երրորդ՝ չարք ի մարդկանէ անդամք են Բելիարայ՝ առաւել եւ նուազ:

Բան. Հաստաբեստ[314]*:*

Լուծումն. Հաստաբուն կամ հաստաբոյս: Կամքն չար որպէս ջիլք յաւդէ զնոսա եւ ամենայն ախտ մեղաց ի նմանէ, որ բաժանի ի դեւս եւ ի մարդիկ: Նոյնպէս ի բարի կողմն երեք են անդամք Քրիստոսի: Ոմանք ասեն հրեշտակք եւ մարդիկ, եւ աւրէնքն: Եւ ոմանք, թէ հոգիք մարդկան եւ մարմինք, եւ օրէնք: Այլ հրեշտակք չեն անդամք Քրիստոսի եւ հոգիքն մասն են: Այլ առաջին անդամք Քրիստոսի են առաքեալք եւ մարգարէք, եւ վարդապետք, եւ քահանայք: Երկրորդ՝ ժողովուրդք, որք ի նոցանէ լինին անդամք Քրիստոսի: Երրորդ՝ աւրէնք եւ առաքինութիւնք որպէս կաթն սնուցանող նոցայ եւ անդամք Քրիստոսի:

---

[313] Հմմտ. ՍՍ 1166, թ. 94բ:

[314] Այս բառը չկա ո՛չ Հոբի գրքի աստվածաշնչային բնագրում, ո՛չ էլ Վանական Վարդապետի քաղվածո մեկնության մեջ: Հմմտ. *Հայերէն բացատրական բառարան,* Ստ. Մալխասեանց, հտ. 3, Երեւան, 1944, էջ 60:

ՎԱՍՆ ԼԵՒԻԱԹԱՆԻՆ[315]

Բան. Եթէ զեղցի՝ ոչ խլրտի (ԽԱ 14):

Լուծումն. Աստի յառաջ զԼեւիաթանն ասէ, որ յանդունդս է բնակեալ եւ չորից է աւրինակ. նախ՝ որպէս Լեւիաթանն ոչ նեղի յանդունդս, նոյնպէս եւ ոչ սատանայ ի խաւար դըժոխոցն, այլ հոգիքն նեղէին: Երկրորդ՝ որպէս նա ոչ նեղի ի ներքոյ ջրոցն, նոյնպէս մարդիկ ի ներքոյ աւդոյ ի վերայ երկրի, զի ծնանդեան եւ սն[ն]դեան, եւ կերակրոյ, եւ կենաց շնչոյ տեղիք է: Երրորդ՝ աւրինակ է իմանալի վիշապին, որ ի յանդիմանութեանց սուրբ արանց ո՛չ ամաչէ եւ ո՛չ զդջանայ: Չորրորդ՝ աւրինակ է չարեաց մարդկան, որ թէպէտ խրատեն իմաստունք՝ ոչ լսէ կամ դառնայ: /110ա/ Եւ երեք է կեանք, այսինքն՝ բնութեան եւ շնորհաց, եւ փառաց: Կենդանիք զմինն ունին, եւ մարդիկ՝ զերկուսն, եւ հրեշտակք՝ զերեքն: Արդ սատանայ ի շնորհացն ել, յորժամ ի բարւոյն փոխեցաւ եւ ի փառացն ել, յորժամ անկաւ: Եւ ունի միայն զկեանք բնութեանն, զի յաւելու ի չարս եւ յետոյ ի չարչարանանս: Նոյնպէս զաւրութիւնն երեք է, այսպէս գիտութիւնն երեք է, որպէս ցուցաւ: Եւ սատանայ, յորժամ անկաւ ի փառաց եւ ի շնորհաց զաւրութեանց, եւ տկարացաւ, եւ ի բնական զաւրութեանց առ խաչիւն Քրիստոսի տկարացաւ: Նոյնպէս եւ զգիտութիւնն իմացիս:

ՎԱՍՆ ԴԱՐԲՆԻ

Բան. Սալ դարբնի (ԽԱ 15):

Լուծումն. Չորս յատկութիւն ունի. նախ՝ զի ոչ շարժի: Երկրորդ՝ ոչ հրանայ լուսով: Երրորդ՝ ոչ ձեւ առնու: Չորրորդ՝ զի ջերմանայ անլոյս: Սոյնպէս սատանայ ի սրբոց բանից ոչ աւգտի, սոյնպէս չարք ի մարդկանէ:

---

[315] Հմմտ. ՍՍ 1166, թ. 94բ:

Բան. Անատու[316] *(հմմտ. ԽԱ 16):*

Լուծումն. Անկարգ եւ անհամ, այսինքն՝ անկարգ ի չարս եւ անհամ ի սուրբ գիտութիւնս, եւ անճաշակ:

Բան. Ժահն[317] *(ԽԱ):*

Լուծումն. Ժանդ ախտն է աղտեղի:

Բան. Դարբին (ԽԱ 15):

Լուծումն. Դա է բուն արուեստից, զի ամենայն արուեստից գործիք նոքա տան:

Բան. Խլրտալ (ԽԱ 16):

Լուծումն. Ծարժիլ: Անդ ասաց՝ ոչ խլրտալ, եւ աստ ասէ՝ խլրտալ. նախ՝ ի բարին ոչ շարժի, այլ ի չարն: Երկրորդ՝ առ բարիսն ոչ շարժի, այլ առ չարս: Երրորդ՝ մեղք ի բարիսն մեռեալ է, եւ արդարութիւնն՝ կենդանացեալ: Չորրորդ՝ բարութիւն ի չարք մեռեալ է, եւ մեղքն՝ կենդանացեալ: /110բ/

Բան. Արդնաւորն (ԽԱ 17):

Լուծումն. Ջինուորն է:

ՎԱՍՆ ԱՆԻԾԻՑ[318]

Հարցումն. Պա՞ռտ է անիծանել զսատանայ եւ զայլազգիս թե ոչ:

Պատասխանի. Ոմանք ասեն, թե ոչ է պարտ անիծանել զնոսա եւ բերեն չորս պատճառ: Առաջին՝ ասեն ոչ է պարտ աւրհնել եւ ոչ անիծանել զնոսա, վասն զի ոչ են արժանի աւրհնելոյ, ապա եւ ոչ անիծանելոյ: Երկրորդ՝ ասեն Աւրէնք ոչ ունին, վասն որոյ ոչ աւրհնին եւ ոչ անիծանին: Երրորդ՝ ասեն Տէրն հրամայեաց. «Օրհնեցէք զանիծիչս ձեր» (Մատթ. Ե 44, Ղուկ. Զ 26): Չորրորդ՝ աստ ասէ ոչինչ համարին զսուր անիծից եւ զանարգանս (ԽԱ 17): Առ որս ասեմք, եթէ պարտ է անիծանել զչարն, որպէս

---

[316] Հմմտ. ՍՍ 1166, թ. 94բ:
[317] Հմմտ. ՍՍ 1166, թ. 95ա:
[318] Հմմտ. ՍՍ 1166, թ. 94բ-95ա:

մարգարէքն եւ առաքեալք, եւ Աւետարանն սուրբ: Եւ զայս ասեմ վեց իմն վկայութեամբ. նախ եւ առաջին՝ զի ունին նոքա զանէծս սկզբնական, որպէս Ադամայ ասաց. «Անիծեալ լիցի երկիր» (Ծնն. Գ 17) եւ այլն: Եւ զաւծն անէծ ի դէմս բանսարկուին, որ անկաւ յերկնից: Երկրորդ՝ ասէ Սովսէս. «Անիծեալ ամենայն, որ ոչ կացցէ ի Գիրս Աւրինաց այսմիկ» (Բ Օրէնք ԻԷ 26): Եւ սատանայ է անաւրէն եւ այլ ազգիւք: Երրորդ՝ ասէ Դաւիթ. «Անիծեալ ոյք խոտորեցան ի պատուիրանաց քոց» (Սաղմ. ՃԺԸ 21), որ է բանսարկուն եւ այլազգիք: Չորրորդ՝ ասէ յԱռակսն Սողոմոն. «Անէծք Տեառն ի տունս ամբարշտաց» (Առակ. Գ 33), որ նախ բանսարկուն է ամբարիշտ: Հինգերորդ՝ ասէ իմաստասէրն Արիստոտէլ. Գովելի են գեղեցիկք եւ /111ա/ պարսաւելի են գարշելիք[319], որ է՝ անիծելիք: Վեցերորդ՝ ի վախճանի ասէ Տէր. «Երթայք յինէն անիծեալք, որ զամենայն անէծս ի սկզբանէ ժողովէ ի բանսարկուն եւ ի չար մարդիկ» (Մատթ. ԻԵ 41): Ապա ուրեմն անիծելիք են նոքա: Այժմ պատասխանեսցուք նոցա, առաջինն՝ ասեն, թէ ոչ է պարտ աւրհնել եւ ոչ անիծել: Ասեմք, եթէ կրկին է ներհակն, է՛ն, որ միջոցով, որպէս սեւ եւ սըպիտակ, եւ մէջ ունի զգոշն, նոյնպէս ջերմ եւ ցուրտ եւ մէջ ունի զգաղջ: Եւ է՛ն, որ անմիջոց, որպէս լոյս եւ խաւար, բարի եւ չար: Եւ այնպէս է աւրհնութիւն եւ անէծք, զի անմիջոց են: Եւ հարկ է կա՛մ աւրհնելի գոլ, կա՛մ անիծանելի: Եւ դարձեալ ոչ է հարկ, թէ անարժան են աւրհնելոյ եւ ոչ լինին անիծանելի: Երկրորդին ասեմ՝ թէպէտ աւրէնք ոչ ունին զգրաւոր կամ Աւետարան, այլ ունին զբնական աւրէնս, որ ի բարի ստեղծան եւ ոչ պահեցին: Երրորդին ասեմք՝ Տէրն հրամայեաց զմեր անիծիչն աւրհնել եւ զմեր ատելիսն սիրել եւ ոչ զԱստուծոյ: «Զատելիս քո Տէր, ատեցի» (Սաղմ. ՃԼԸ 21), ասէ մարգարէն: Չորրորդին ասեմք՝ թէպէտ նոքա ոչինչ համարին զանէծս, ոչ թէ այնու զերծանին յանիծից, որպէս ագռաւն ոչինչ համարի զսեւն, այլ ոչ թէ

[319] Տե՛ս **Արիստոտէլ**, *Յաղագս առաքինութեան*, էջ 629:

զերծանի այնու: Նոյնպէս վիշապն ոչինչ համարի զանբաւութիւն ջրոյն, այլ ոչ թէ այնու զերծանի: Այսքան առ այս:

Բան. Եպերել[320] *(հմմտ. ԽԱ 16):*

Լուծումն. Վասն անցելոյն, նախատել՝ /111բ/ վասն ներկային, անիծանել՝ վասն ապագային, զի անզեղջ մնայ:

Բան. Ստնանել (ԽԱ 17):

Լուծումն. Ստանել կամ յաղթել:

Բան. Մեքենայ[321] *(հմմտ. ԽԱ 18):*

Լուծումն. Հնար եւ տլսմ: Այլ չորս զէնք ախոյանից յայտնի են, այսինքն՝ սուր, նիզակ, նետ, ուռն, որ է պէլէթկին եւ նոյնչափ պարսպաց:

Բան. Ըռմբաքար (ԽԱ 19):

Լուծումն. Որ է բէլքեհոն, սնդուկ ծանր լցեալ քարով, որպէս կեղծաւորք եւ պըղինձ բոլոր, զոր թըֆաք կոչեն: Եւ աղեղն պղնձի (ԽԱ 19) չարին է:

ՎԱՍՆ ՓԱՅՏԻ[322]

Բան. Փայտն (ԽԱ 18):

Լուծումն. Փուտ կոչի եւ ծառ զկենդանին ասէ: Տե՛ս, յորժամ զդրախտին ասէր. «Յամենայն ծառոց դրախտիդ եւ ծառ կենացն եւ ծառ գիտութեան» (Ծնն. Բ 16-17): Նախ՝ զի անփուտ է փայտ դրախտին: Երկրորդ՝ անթափ տերեւն: Երրորդ՝ անթառամ ծաղիկն: Չորրորդ՝ անծորելի պտուղ: Իսկ վասն երկրիս ասէր. «Ամենայն փայտ, որ ունիցի պտուղ» (Ծնն. Ա 29), զի ապականացու է եւ փուտ:

---

[320] Հմմտ. ՍՄ 1166, թ. 94բ:
[321] Հմմտ. նույն տեղում:
[322] Հմմտ. ՍՄ 1166, թ. 95ա:

ՎԱՍՆ ԱԲԵՂԱՅԻՑ[323]

[Բան]. Աբեղայ:

[Լուծումն.] Նախ՝ թարքմանի հայր: Երկրորդ՝ քրիստոնեայ: Երրորդ՝ սրբասէր կամ սրբարար ի պատկեր երից անձանցն, զի ծնանի հոգէպէս եւ պատարագէ, եւ սրբէ: Իսկ անարժանք խաբեբայ եւ կեղծաւոր, եւ մամոնասէր կոչի:

Եբէնէս[324] կոչի գազանն հրակեր: /112ա/ Տե՛ս, զի սեւացեալքն մեղաւք եւ ժանգոտք, եւ կեղծաւորք, եւ ոխացողք, եւ բարկացողք, եւ սոյնպիսիք ոչ կարեն հանել զդեւս ի մարդկանէ, թէպէտ Աւետարանն նոյն է եւ խաչն: Այլ սուրբքն ի յայսցանէ կարեն անիծանել եւ հանել:

Բան. Անկողինք տեգ (ԽԱ 21):

Լուծումն. Կա՛մ զի ոտն է չանկաւոր, կա՛մ բոլոր ոսկերք փորոյն պղնձի վահանն, կա՛մ անդունդք ջրոյն հարկանէ ի ներքուստ:

ՎԱՍՆ ՈՍԿԻՈՅ[325]

(ԽԱ 21) Ոսկին պատուական է վասն չորից. նախ՝ զի անապական է նիւթն: Երկրորդ՝ գեղեցիկ գոյնն: Երրորդ՝ քաղցր համ: Չորրորդ՝ անուշ հոտ, անժանգ, առողջարար եւ այլն: Եւ ոսկի է քաջեփ արծաթ, եւ արծաթ է թերեփ ոսկի: Եւ պատճառ է հարստութեան ունողացն: Այլ ոմանք նովաւ զբարիս գործեն ի նուէրս

---

[323] Հմմտ. ՍՍ 1166, թ. 95ա:

[324] Տե՛ս *Ներածութիւն Պորփիւրի*, ԻՁ. Յաղագս յատկի եւ պատահի յատկութեանց, էջ 250. «....որ գոն՝ սեաւն ոչ եթէ ովացւոյ միայնում, այլեւ ագռաւոյ եւ արծւոյ առգոյ է, եւ *եբենոսի* եւ այլոց ոմանց»: Եբենոս – աբանոս, ոպնիազ, փայտ սեաւ, խիտ, ծանր, որ եւ ասի հնդիկ փայտ.... տե՛ս ՆԲՀԼ, հտ. Ա, էջ 645. տե՛ս **Կեղծ-Կալլիսթենես**, *Ալեքսանդր Մակեդոնացու պատմություն: Ապոկրիֆոնս, Ասորականք. Միհրդատականք* (գլ. 1-94), հին հուն. թարգմ. Ս. Կրկյաշարյանը, խմբ., ծնթ. եւ առաջ. գրեց Գ. Մուրադյանը, Երեւան, 2022, էջ 186:

[325] Հմմտ. ՍՍ 1166, թ. 95ա. «Ծով կենցաղ իմանի զամենայն ոսկի....», «....զոսկետեսիլ բարեպաշտութիւն յանձին ստացեալ»:

յաղքատս եւ յայլս: Եւ ոմանք ի չարս չորս կերպիւ. նախ՝ զի հպարտանան: Երկրորդ՝ ագահ են. «Որ ժողովէ զարծաթ՝ ոչ յագեսցի» (հմմտ. Ժողով. Ե 9), ասէ: Երրորդ՝ փառամոլին: Չորրորդ՝ զրկեն եւ անիրաւեն:

Բան. Յականել[326]*:*

Լուծումն. Կարաւտեալք: Եւ հարստահարել յաղթահարելն է: Դարձեալ չորից իրաց պատճառ լինին. նախ՝ որկորընստութեան: Երկրորդ՝ պոռնկութեան: Երրորդ՝ ծուլութեան: Չորրորդ՝ խռովութեան: Եւ դարձեալ հոգեպէս չորս կերպիւ. նախ՝ մտօք կապին. «Ուր գանձք [ձեր են], անդ եւ սիրտք [ձեր եղիցին]» (Մատթ. Զ 21): Երկրորդ՝ հաւատով: Երրորդ՝ ի նա յուսան: /112բ/ Չորրորդ՝ սիրեն: Եւ այլ մասնաւոր բազում չարեաց է պատճառ:

ՎԱՍՆ ԲԱՆՍԱՐԿՈՒԻՆ[327]

Ի չորից յայտ է թէ բանսարկուն յերկինս աստուածանալ կամէր. նախ՝ ի բանից. «Ասաց անզգամն» (Սաղմ. ԺԳ 1, ԾԲ 1), անաւրէն իշխանն իբրեւ աստուածանալ կամեցաւ: Երկրորդ՝ ի կռոցն, որ զոհել տայր: Երրորդ՝ յԱդամայ, որ աստուածանալ խոստացաւ: Չորրորդ՝ ի Տեառնէ, որ զերկրպագութիւն պահանջէր:

Բան. Ժլատ:

Լուծումն. Ընդիշտ եւ տառ:

Բան. Ուխտ կտակի:

Լուծումն. Երեք կերպիւ. նախ՝ այն է, որ Աւետարանն ասէ. Ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ Մամոնայի (հմմտ. Մատթ. Է 24, Ղուկ. ԺՁ 13) եւ վաճառեցէք զինչ ձեր (հմմտ. Ղուկ. ԺԲ 33): Եւ առաքեալ. Բարք անարծաթասէրք (հմմտ. Եբր. ԺԳ 5): Եւ ագահութիւն, որ է կռապաշտութիւն (հմմտ. Կող. Գ 5): Երկրորդ՝ դար-

---

[326] Հմմտ. ՆԲՀԼ, հտ. Բ, էջ 314. «Ետես ասէ ակն՝ որ զամենայն *յականէ*»:
[327] Հմմտ. ՍՍ 1166, թ. 95ա:

ձեալ մեք ուխտեցաք մկրտութեամբն հաւատալ ի Տէր եւ աստիճանաւն յուսալ եւ անընչութեամբն սիրել զՔրիստոս եւ ոչ զինչս: Երրորդ՝ դարձեալ, տալ աղքատին, զի աղքատն պատկեր Քրիստոսի է, եւ դրամն՝ կայսեր: Եւ զդրամն տալ, եւ զհաւատն պահել զինչս կորուսանել, եւ զժամատեղս պահել, եւ զԱստուած փառաւորել:

ԹԷ ԾՈՎ Է ԱՇԽԱՐՀՍ[328]

(ԽԱ 22) Ծով կոչի աշխարհս վասն չորից. նախ՝ զի միշտ խռովութիւն է: Երկրորդ՝ բազում կենդանիք գոն: Երրորդ՝ ոչ զգամք զնաւս մեր: Չորրորդ՝ ոմանք հասանին յեզր եւ բազումք ընկղմին մեղաւք, եւ դաժան է նաւաբեկութիւն մեղաց վասն չորից. նախ՝ աստ հոգի ընկղմի եւ անդ՝ մարմին: Երկրորդ՝ աստ՝ մեղաց ծով եւ անդ՝ ջուր: Երրորդ՝ անդ՝ ժամանակեայ եւ աստ՝ /113ա/ յաւիտենից: Չորրորդ՝ նա ի կէանս յառնէ, եւ սա ի մահ տանջի յարութեամբն:

ՎԱՍՆ ՎԻՇԱՊԱՑ[329]

(ԽԱ 23) Չորս են վիշապք, այսինքն՝ ի յերկինս, ի յերկրի եւ ի ծովս, եւ ի մարդս: Եւ երկու-երկու են ի յերկինս. մին՝ աստեղք, եւ միւս՝ արեգական խառնուած, ի բարձրանալ եւ իջանելն, զոր պարսիկք: Ի յերկրի երկու. մին՝ յաւձ է, եւ միւս՝ ոտնաւոր ի քարթոշ է: Ի ծովու երկու. մին՝ Լեւիաթան, եւ միւս՝ կիտոսք: Եւ ի մարդս երկու. մին՝ ցանկութեան մասն հոգւոյ, եւ միւս՝ երակ երիկամանց մարմնոյ:

---

[328] Հմմտ. ՍՍ 1166, թ. 95ա:
[329] Հմմտ. նույն տեղում:

ՎԱՍՆ ԿԻՏՈՑ[330]

Հարց. Վասն է՞ի ի ծովս են մեծամեծ կէտք:

Պատասխանի. Վասն չորից. նախ՝ զի կերակուրք են Լեւիաթանին մեծի: Երկրորդ՝ ի ջուրս եւ ի ցամաքի կերակրին: Երրորդ՝ զի մի տեսցուք եւ երկիցուք: Չորրորդ՝ զի մի վնասեսցեն զկենդանիս, որ յերկրի:

Հարցումն. Զի՞նչ է մեծութիւն նոցա:

Պատասխանի. Չորս ինչ. նախ՝ զի յաղթանդամք են: Երկրորդ՝ զի զաւրաւորք են: Երրորդ՝ զի ստուար եւ պինդ կաշի: Չորրորդ՝ մեծ վնասեն եւ կլանեն:

ՎԱՍՆ ԼԵՒԻԱԹԱՆԻՆ[331]

(ԽԱ 23) Հարց. Լեւիաթանն որպէ՞ս է թագաւոր ջրայնոց:

Պատասխանի. Չորս կերպիւ. նախ՝ զի առաջին գոյացաւ, քան զայլս: Երկրորդ՝ զի ի սկզբանէ կենդանի է մինչ ի կատարած, իսկ այլք ծնանին եւ մեռանին: Երրորդ՝ զի կերակրի նոքաւք: Չորրորդ՝ զի ահ եւ երկիւղ է ամենայն գազանաց ծովու: /113բ/

Հարց. Ի կատարածի զի՞նչ լինի Լեւիաթանն:

Պատասխանի. Մեռանի. նախ՝ զի ջուրք դադարին, եւ ոչ է պիտոյ փակ ի վերայ անդնդոց[332]: Երկրորդ՝ զի ամենայն կենդանիք մեռանին, բաց ի հրեշտակաց եւ մարդոյ, եւ ի դիւաց, զի տանջեսցին եւ այլ ամենայն կենդանիք աւդայինք, ջրայինք եւ ցամաքայինք ապականին: Վասն որոյ ասէ Պղատոն ի Տարբերութիւնս. Բանական անմահ, բանական մահկանացու, անբան

---

[330] Հմմտ. ՍՍ 1166, թ. 95աբ:
[331] Հմմտ. ՍՍ 1166, թ. 95բ:
[332] Հմմտ. ՍՍ 1166, թ. 84ա. հմմտ. նաեւ *Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդ ի Հայս.* Ցաղագս Յովնանու, էջ 604:

անմահ, անբան մահկանացու, զի մինչ ի կատարած անմահ է եւ յետ այնորիկ՝ ոչ[333]:

ՎԱՍՆ ԴԻՒԱՑ[334]

(ԽԱ 24) Հարցումն. Զի՞նչ է չարութիւն եւ վնասն բանսարկուին:

Պատասխանի. Բազում ինչ. նախ՝ նա եղեւ կամակոր վիշապ եւ գտակ չարեաց: Երկրորդ՝ զերկինս խռովեցոյց եւ խաբեաց զդեւս: Երրորդ՝ զմարդն ընկէց ի դրախտէն: Չորրորդ՝ զմահ եւ զանէծս ժառանգեցոյց: Հինգերորդ՝ զտարերս ապականեաց: Վեցերորդ՝ հանդերձեալ պատուհասն եւ տանջանքն յաւիտենից: Այսոքիկ գլխաւորք եւ մասնաւորք, բազում եւ անթիւ:

Հարց. Որպէ՞ս խաբեաց սատանայ զդեւս եւ իշխեաց նոցա:

Պատասխանի. Թագաւորն ամենեցուն Աստուած է, որ ստեղծ զնոսա եւ պարտին նմա հնազանդել եւ երկնչել: Այլ սատանայ խաբեաց զդեւս նախ խոստմամբ եւ ապա՝ արդեամբք, եւ ապա՝ երկիւղիւ: Եւ նախ խոստմամբ ի յերկինս իմանալի բանիւք ասէ ցնոսա՝ Ես աստուածս լինիմ եւ դնեմ զաթոռ իմ հաւասար բարձրելոյն (հմմտ. Ես. ԺԴ 13): Եւ զձեզ նեքնային դասքդ առնեմ հաւասար /114ա/ վերին դասուց: Եւ այս նշան ձեզ, զի զչարն ես ստեղծի, որ ոչ է ի բարի ստեղծուածս Արարչին: Եւ ի նոյն կէտն, որք հաւանեցան ընդ նմա, անկան: Եւ դարձեալ ի յերկրի խաբեաց զդեւս եւ արար իշխանս տարերաց, աւդոց եւ ծովու, եւ ցամաքի, եւ դժոխոց, եւ զանազան ախտից, եւ մարդկան, եւ կենդանեաց, եւ տանջանաց, եւ այլն: Իսկ յետոյ յորժամ տկարացաւ առ խաչիւն: Դարձեալ երկիւղիւ գրաւեաց, այսինքն՝ ըմբռնեաց, զի

---

[333] *Ներածութիւն Պորփիւրի*, պրակք ԻԳ, էջ 320. Ընդ այսոսիկ հանդերձ Աստծով առաջիկայ տեսութիւն. «Արդ, ըստ Պղատոնի չորս են բաղկացելիքն. *բանական անմահ, բանական մահկանացու, անբան մահկանացու, անբան անմահ*». բնագիրը տե՛ս նաեւ՝ ՍՀ, հտ. Գ, Ջ դար, պրակք Ը, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 265:

[334] Հմմտ. ՄՄ 1166, թ. 95բ-96ա:

երկեան, թէ զիշխանութիւնն առնու ի նոցանէ եւ այնու մնան ի հընազանդութիւն նորա: Եւ այս վասն չորս պատճառի. նախ՝ վասն տգիտութեան նոցա, զի բարձեալ է շնորհաց գիտութիւնն ի նոցանէ: Երկրորդ՝ վասն տկարութեան: Երրորդ՝ վասն խաբէութեան: Չորրորդ՝ վասն անզղջութեան, զի հաստատեալ են ի չարս:

Հարց. Զի՞նչ է՝ ի բարձունս հայի (ԽԱ 25):

Պատասխանի. Երեւելի վիշապն, մի աչաւք յանդունդս նայի եւ միովն՝ ի վեր վասն կերակրոյ: Իսկ իմանալին. նախ՝ ի բարձունս նայեցաւ դնել զաթոռ: Երկրորդ՝ ի դրախտն յԱդամ: Երրորդ՝ ի բարձրացեալ սուրբս: Չորրորդ՝ ի հրեշտակս տանջող նոցա: Եւ աւձ է կիսամեռ, նախ՝ զգլուխն ի Յորդանան ջախջախեաց եւ զզաւրութիւնն առ խաչին տկարացոյց, եւ տուտն Նեռն է, որ սատակի: Դարձեալ ետ սրբոց իւրոց զաւրութիւն կոխել զգլուխ չար վիշապին աստ՝ մարմնով եւ զմէջ, եւ զտուտն, անդ՝ հոգւով ի մահ եւ յապականութեանց: Եւ դարձեալ զգլուխն՝ զղջմամբ, եւ զմէջն՝ խոստովանութեամբ, եւ զտուտն՝ ապաշխարութեամբ կոխեմք: Եւ զմեզ արժանի արասցէ Քրիստոս խնամօք ողորմութեան իւրոյ եւ նմա փառք յաւիտեանս. Ամէն: /114բ/

ԺԲ. ԿՐԿՆԵԱԼ ՅՈԲԱՅ ՎԱՍՆ ԿԱՄԱՅ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ[335]

ան. Գիտեմ (ԽԲ 2):

Լուծումն. Մտաւք, բանիւ եւ գործով: Դարձեալ, վկայեմ մտօք եւ բանիւ, եւ գործով:

Բան. Կարող ես յամենայնի (ԽԲ 2):

Լուծումն. Չորս է տեսութիւնն. նախ՝ յամենայն իրս: Երկրորդ՝ ամենայն ուրեք: Երրորդ՝ ամենայն ումէք: Չորրորդ՝ յամենայն ժամանակս:

Բան. Երեւելիք եւ աներեւոյթք (ԽԲ 3):

Լուծումն. Նախ՝ երեւելի է ի ցամաք, եւ աներոյթ՝ ի ծովս: Երկրորդ՝ յերկրի եւ յերկինս: Երրորդ՝ մարմին եւ հոգի: Չորրորդ՝ մարդիկ եւ սատանայ: Հինգերորդ՝ եղեալք եւ լինելոց են: Այլեւ կամք եւ կարն հաւասար են ի յԱստուած, որպէս լոյս եւ ջերմութիւն յարեգակն, վասն այն, զոր կամի եւ կարէ, եւ զոր կարէ՝ զնոյն եւ կամի: Զչարն ոչ կամի եւ ոչ կարէ:

Բան. Զամենայն ինչ գիտէ (ԽԲ 3):

Լուծումն. Չորս կերպիւ. նախ՝ զանցեալ, զներկայն եւ զապայն, իսկ մեք՝ միայն զներկայն: Երկրորդ՝ զծածուկ եւ զյայտնին, իսկ մեք՝ միայն զյայտնին: Երրորդ՝ նա զբոլոր եւ զմասն, իսկ մեք՝ զմասն: Չորրորդ՝ նա զերկնաւորն եւ զերկրաւորս, եւ զբայլսն գիտէ, իսկ մեք՝ միայն զմեզ: Եւ այս է, զոր ասէ փիլիսոփայն, թէ կարելով եւ կամելով, եւ գիտելով նմանէ իմաստասէրն Աստուծոյ[336]:

---

[335] Հմմտ. ՍՄ 1166, թ. 96բ:

[336] Հմմտ. *Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտելի*, [Պրակք Ա], ՍՀ, հտ. Գ, Ջ դար, էջ 197-199:

ՎԱՍՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ[337]

Բան. Ով թաքուցանէ ի քէն (ԽԲ 3):

Լուծումն. Թէպէտ սրտագէտ է Աստուած, վասն չորից պարտ է խոստովանել քահանայի. նախ՝ զի փոխանորդ Քրիստոսի է եւ ունի իշխանութիւն կապել եւ արձակել: Երկրորդ՝ մեղքն յանցումն աւրին/115ա/ացն Աստուծոյ եւ կանոնաց եկեղեցոյ, վասն որոյ զղջանամք եւ խոստովանիմք: Երրորդ՝ զի վկայք լիցին քահանայք խոստովանութեան մերոյ: Չորրորդ՝ զի մարդով մեղաք եւ մարդով արդարանամք:

Բան. Խնայեալ ի բանս (ԽԲ 3):

Հարց. Վասն է՞ր ոչ խոստովանին:

Պատասխանի. Վեց իրք խափանէ. նախ՝ թերահաւատութիւնն: Երկրորդ՝ յուսահատութիւն: Երրորդ՝ անգիտութիւն: Չորրորդ՝ աներկիւղութիւն: Հինգերորդ՝ չար ամաւթ: Վեցերորդ՝ նոյն ինքն սատանայ:

Բան. Կարծիցէ թաքուցանել (ԽԲ 3):

Լուծումն. Վասն վեցից ոչ է պարտ ծածկել. նախ՝ զի խղճի մտացն տեսանէ, զոր գործէ մարդ: Երկրորդ՝ ընկերակիցն: Երրորդ՝ դեւք, որ գործել տան: Չորրորդ՝ հրեշտակ պահապանք: Հինգերորդ՝ նոյն ինքն ծածկագէտն: Վեցերորդ՝ տարերք եւ տիւ, եւ գիշերք վկայեն, զի ոչ ծածկի: Յոբ աստ ետես զմարդեղութիւն Տեառն (ԽԲ 3), որպէս Աբրահամ՝ ի պատարագելն (հմմտ. Ծնն. ԻԲ 9-10), եւ Մովսէս՝ ի ծերպս վիմին (հմմտ. Ելք ԼԳ 21-23): Ըստ այնմ. Բազում արդարք ցանկացան եւ տեսին (հմմտ. Մատթ. ԺԳ 17):

Բան. Էական աստուածութիւն (ԽԲ 4-5):

Լուծումն. Հինգ մըտաւք է. նախ՝ միշտն: Երկրորդ՝ միանն: Երրորդ՝ ճշմարիտն: Չորրորդ՝ արարիչն: Հինգերորդ՝ տեսողն Աստուած:

---

[337] Հմմտ. ՄՄ 1166, թ. 96բ:

Բան. Խոտեցի զանձն (ԽԲ 6):

Լուծումն. Ձհոգիս:

Բան. Հալեցայ (ԽԲ 6):

Լուծումն. Նուաստացայ ի միտս եւ հող, եւ մոխիր՝ մարմնով:

Բան. Ասէ Տէր ցելիփազ (ԽԲ 7):

Հարց. Վասն է՞ր Հոգին ոչ խաւսի, այլ՝ Հայր եւ Որդի[338]*:*

Պատասխանի. Ոմանք կարծեն, թէ զայս Հոգին խաւսի առ Ելիփազ՝ որպէս կարգն ցուցանէ: Ասեմք, թէ ոչ: Նոյն ինքն Բանն է, որ խօսի առ Ելիփազ, /115բ/ որ սրտագէտ ցուցանէ զինքն եւ պատարագ խնդրէ: Այլ ասեմք, թէ Երրորդութիւնն խաւսի աստ, նախ զի Հայր է՝ որպէս միտք, եւ Որդի՝ որպէս Բան, եւ Հոգին՝ որպէս խաւսք: Արդ թէ՛ Հայրն խաւսի եւ թէ՛ Որդի, Հոգւովն խաւսի: Դարձեալ ասեմք, թէ որպէս Հայր կրկին խաւսեցաւ եւ Որդին այժմ կրկին խաւսի, նոյնպէս եւ Հոգին Սուրբ. նախ՝ ի Յոբ բնակէր եւ խաւսէր, որպէս ինքն ասաց. Հոգի աստուածեղէն շուրջ զինեւ (Իէ 3): Եւ երկրորդ՝ ի Սովսէս բնակեցաւ եւ գրեաց, եւ ի Սողոմոն, յեզր դպիր, եւ յայլսն:

ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆՆ ՅՈԲԱՅ[339]

Արդ ի քահանայութենէն Յոբայ, որ զպատարագն մատոյց վասն բարեկամացն, երեք ինչ գիտելի է. նախ՝ գիտելի է, զի ի ցեղէն Եսաւայ էր Յոբ եւ յառաջ քան զղեւտական քահանայութիւնն Ահարոնի՝ նա պատարագեաց որպէս Մելքիսեդեկ[340] յազգէն Քանանու ի խորհուրդ նորս քահանայութեան քրիստոնէից, որ յառաջ է, քան զհրէից: Երկրորդ՝ գիտելի է, որ Յոբայ հրամայեաց մատուցանել, զի նոքա անարժանք էին, ցուցանէ, թէ ոչ է պարտ

---

[338] Հմմտ. ՍՍ 1166, թ. 97ա:

[339] Հմմտ. նույն տեղում:

[340] Մելքիսեդեկի անունը երբեմն հիշատակվում է նաեւ Սեմ. տե՛ս **Սբ Իրինեոս**, *Յոյզք առաքելական քարոզութեան,* պարբ. 21, 24. **Սուրբ Եպիփան Կիպրացի**, *Ճառք*, Ճառ Զ. Հանգիստ եւ ի կարգի, էջ 123-130, Ճառ ԼԵ. Նորին ի նոյն խորհուրդ թաղման Տեառն Սերոյ Յիսուսի Քրիստոսի, էջ 532-533:

անարժան քահանայից պատարագել, որպէս վասն անառակին ասէր. «Ածէք զեզն պարարակ» (հմմտ. Ղուկ. ԺԵ 23): Նոյնպէս եւ Ադամ յետ յանցմանն ոչ իշխեաց պատարագ մատուցանել, այլ որդիք նորա: Երրորդ՝ գիտելի է, զի Յոբայ հրամայէր մատուցանել վասն չորից. նախ՝ զի յաղթեաց փորձողին: Երկրորդ՝ զի առողջացաւ մարմնով: Երրորդ՝ վկայեցաւ յԱստուծոյ: Չորրորդ՝ զի զարարածոց գիտութիւնս ուսաւ: /116ա/ Զայն տայ իմանալ, թէ որ քահանայ լինի, պարտ է զչորս զայս յինքեան ցուցանել. նախ՝ յաղթել փորձողին: Երկրորդ՝ առողջանալ ի հիւանդութեանց մեղաց: Երրորդ՝ վկայեալ լինել յԱստուծոյ եւ ի մարդկանէ: Չորրորդ՝ զամենայն գիտութիւնս ուղղել եւ ապա՝ քահանայանալ:

ՎԱՍՆ ԵԱԹՆ ԶԳԱՅՈՒԹԵԱՆՑ[341]

Չորս կերպիւ ասին եւթն զգայութիւնք. առաջին՝ հինգք զգայութիւնք մարմնոյ եւ միտք, եւ հոգի: Երկրորդ՝ հինգ զգայութիւնք եւ երկու անյայտ վտառացն մասունք: Երրորդ՝ կերպիւ հինգ զգայութիւնք եւ հոգի, եւ մարմին: Չորրորդ՝ հինգ ներքին զգայութիւնք եւ կամք, եւ յիշողութիւն, որ լինի եաւթն:

ՔՐԻՍՏՈՍ ԶՈՒԱՐԱԿ ԵՒ ՈՉԽԱՐ ԿՈՉԻ[342]

(ԽԲ 8) «Ածէք զեզն պարարակ» (հմմտ. Ղուկ. ԺԵ 23), որ է Քրիստոս վասն վեցից. նախ՝ կոչի եզն, որ է զենլի: Երկրորդ՝ որ է պատարագելի: Երրորդ՝ պարարակ, այսինքն՝ աստուածաբանութեամբն աւծեալ: Չորրորդ՝ զի հերկեաց զսիրտ մարդկան Աւետարանաւ: Հինգերորդ՝ սերմանեաց զԲանն: Վեցերորդ՝ ժողովեաց զարդիւնս: Ոչխար կոչին վասն չորից. նախ՝ հովիւ էր եւ եղեւ ոչխար: Երկրորդ՝ զգեցոյց զմեզ: Երրորդ՝ կերակրելի: Չորրորդ՝ ի սպանդ վարեալ անմռունչ: Գառն կոչի վասն երից. նախ՝ զի

---

[341] Հմմտ. ՍՍ 1166, թ. 97ա:
[342] Հմմտ. նույն տեղում:

գառն ունի զբնութիւն ոչխարին, եւ Քրիստոս՝ Որդի էր Աստուծոյ: Երկրորդ՝ անմեղ ի սպանդ եկեալ: Երրորդ՝ որպէս գառն զմիոյ մեղս քաւէր եւ նա՝ արարիչ աշխարհի, եբարձ զմեղս աշխարհի: /116բ/ Եւ եւթն զուարակ. նախ՝ ի խորհուրդ եւթն դարոյս: Երկրորդ՝ որպէս արեգական է (7) ժամօք կատարէ զամն, այսինքն՝ է չորս յեղանակ եւ աւր, եւ շաբաթ, եւ ամիս, որ լինի է (7), սոյնպէս արեգական արդարութեան զեւթն առաքինութիւնն ի մեզ, երեքն՝ աստուածա[յ]ին, եւ չորս՝ մարդկային: Երրորդ՝ զի եւթն թողուլն Պետրոսի (հմմտ. Մատթ. ԺԸ 21-22) նշանակէ աստի կենացս եւ եւթնից եւթն, որ է թիւ ազատութեան՝ անդի կենաց: Եւ դարձեալ Հ (70)-եկին եւթն, որ տասամբ կատարի զկատարեալ թողութիւն հանդերձելոյն:

Բան. Գտաւ ինչ ի սա[343] *(հմմտ. ԽԲ 8-9):*

Լուծումն. Թիւրութիւն դատաստանին: Բան Սրբոյն Եփրեմի. Հակառակել հոգւոյն է, մարտն՝ մարմնոյ, կռիւ՝ բանիւ: Մի՛ յաճախեցէր, որպէս Ադամ, զի ես հող եմ եւ յերկրէ, եւ տկար, եւ տգէտ: Դու երկնաւոր եւ կարող, եւ իմաստուն, զի՞ հարցանես յինէն: Դու բնութեամբ բարի, եւ ես՝ ստեղծմամբ, այլ չարն՝ կամաւք եւ գործով: Վասն այն ընդ նա կռուիմ եւ ոչ ընդ քեզ: Աջ բազուկ է Աստուծոյ ողորմութիւն եւ ահեակ՝ արդարութիւնն: Տե՛ս, զի երեք շնորհքն Ադամայ, որ ծածկեցաւ մեղաւք, երեւեցաւ ի յարդարն Յոբ մարգարէ, որ ետես զՔրիստոս եւ արդարութիւն, որ աղօթիւք արդարացոյց զայլս:

ԽՈՐՀՈՒՐԴ ՏՆԱՒՐԷՆՈՒԹԵԱՆ[344]

Եւթն դարու վիշտն՝ քաղց, քիրտ, փուշ, մահ եւ այլն, զոր կրեաց Քրիստոս, եւ նորոգումն՝ յարութիւն: Եւ այս է անճառ խորհուրդն ի Քրիստոս, /117ա/ նախ զի Քրիստոս ի տնաւրէնութեան

---

[343] Հմմտ. ՍՍ 1166, թ. 97աբ:
[344] Հմմտ. ՍՍ 1166, թ. 97բ:

իւրում ծածկապէս ունէր զկերպն Ադամայ, որ նախքան զանցանս, եւ յայտնապէս՝ զկիրքն Ադամայ, որ յետ յանցանաց: Իսկ առաւել քան զԱդամ, որ երեւեցաւ ի Ծնունդն եւ ի Թաբաւր, եւ ի վերայ ծովու, եւ այլն, զի Ադամ ո՛չ էր Աստուած եւ ո՛չ անմահ, եւ ո՛չ աւդընթաց, եւ այլն, որպէս Քրիստոս էր: Նոյնպէս եւ առաւել ի կիրքն, զի Ադամ անեղծ ունէր զդատակնիքն եւ Քրիստոս, զորս կրէր, լուծանէր զանէծս, զքիրտ, զմահ եւ զայլն: Իսկ յետ Յարութեան, որ յայտնեաց զանմահութիւն եւ նստաւ ընդ աջմէ Հօր, եւ երկրպագեն հրեշտակք առաւել էր, քան զխոստումն Ադամայ, որ տեղի անկելոցն էր ի կարգս հրեշտակաց: Այս ի Տէր մեր: Դարձեալ եկեղեցի սուրբ են անդամք Քրիստոսի: Ունիմք զկերպն Քրիստոսի ծածուկ եւ զկերպն Ադամայ՝ յայտնի, զի շնորհօքն Քրիստոսի ազատիմք ի պարտուցն Ադամայ եւ առաւել քան զԱդամ, որ նախքան զյանցանս, զի ոչ ի մէջ մահու եւ կենաց, այլ ի մշտենջենաւոր կեանս գրեցաք եւ ոչ ծառ կենաց, այլ զկենարար մարմինն: Նմանապէս եւ յետ Յարութեանն առաւել, քան զԱդամ, զի լինիմք փառաւք Աստուածս ընդ Աստուած միացեալ եւ տեղիք, ուր կարապետն մեր եմուտ եւ անմահ ներգործութեամբ, եւ կերակուր ոչ հացիւ եւ բաժակաւ, այլ անընդմիջաբար փրկութիւն Տեառն: Եւ թէ եկեղեցի ի վեր է, քան զԱդամ եւ քան զհրեշտակս, գտցես ի գիրս, որ կոչի Ոսկիփորիկ գլուխն[345]:

Բան. Հրաւիրանքն[346]*:*

Լուծումն. Նախաընտրութիւնն յառաջ, քան զլինելն աշխարհի, /117բ/ եւ ի յԱդամայ ստեղծանելն, եւ Քրիստոսիւ կոչեցան:

---

[345] Տե՛ս *Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացոյն եօթնալոյս վարդապետի,* Կ. Պոլիս, 1746, էջ 177-182:
[346] Հմմտ. ՍՍ 1166, թ. 97բգ:

Բան. Պատարագ սուրբ[347]*:*

Լուծումն. Որ ասաց. Վասն ձեր եւ բազմաց բաշխի ի փրկութիւն (հմմտ. Մատթ. ԻՁ 26-28):

ՎԱՍՆ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ[348]

Մխիթարել զմարմնով հիւանդս այն է, որ մեք ի վշտաց նորա կրեմք, եւ նա զառողջ եւ զուրախութիւնս մեր կրէ: Ձայս հրամայէ Քրիստոս զհիւանդս տեսանել: Նոյնպէս եւ մեղուցելոց վշտակից լինել եւ զսրբութիւն տալ նմա: Իսկ ի Քրիստոս երեք կերպ է. նախ՝ բանիւ մխիթարեցին մարգարէքն, զի խաչն փառք եւ պսակ էր Քրիստոսի: Երկրորդ՝ չարչարակից լինին մարմնով: Երրորդ՝ որք հաղորդին ի սուրբ խորհրդոյն ուրախութեան Քրիստոսի: Ապա որք ոչ հաղորդին՝ տրտմութիւն է նմա:

ՎԱՍՆ ՆՈՒԻՐԱՑՆ ՅՈԲԱՅ[349]

Բան. Մէն մին որոջ եւ չորս դրամ ոսկի (ԽԲ 11):

Լուծումն. Անգիր բերէին ոսկի, զի ոչ էր պարտ զայլոյ պատկեր Յոբայ ընծայել, եւ ինքն անկեալ էր ի թագաւորութենէ: Իսկ խորհրդապէս. նախ՝ ի Քրիստոս, զի ինքն եղեւ գլուխ հաւտից ո՛ր ի յերկրի եւ ո՛ր ի յերկինս, եւ ոսկի անապական՝ մարմինն եւ հոգին, որ գրեցաւ բանն ի նմա եւ աստուածացոյց միութեամբն յարգանդի: Դարձեալ ի մեզ չորեքնիւթեայ բնութիւնս եւ չորս առաքինութիւն, եւ չորս ծագք, եւ չորս Աւետարանք, եւ մկրտութեամբն պատկեր լինիմք Քրիստոսի: Եւ մէն մի որոջ զիւրաքանչիւր ոք զինքն նուիրեսցէ սուրբ պատարագ ծննդական ի հաւատն սուրբ:

Բան. Վերջին եւ առաջինն (ԽԲ 12):

Լուծումն. Չորիւք իմասցի առ Յոբ. նախ՝ ստացուածք վերջինն կրկին եղեւ, քան զառաջինն: Երկրորդ՝ կեանքն վերջին: Երրորդ՝

---

[347] Հմմտ. ՍՄ 1166, թ. 97գ:
[348] Հմմտ. նույն տեղում:
[349] Հմմտ. նույն տեղում:

գոյքն վերջին է, քան զծնունդսն: Չորրորդ՝ մարմինն, քան զհոգի: /118ա/ Նոյնպէս ի Տէր մեր. նախ՝ «Օրհնութիւն աւծմանն առաւել է, քան զընկերացն» (հմմտ. Սաղմ. ԽԴ 8), ասէ Դաւիթ: Երկրորդ՝ սփռեցան շնորհք ի շրթանց առաւել, քան Ադամայ եւ Յոբայ: Երրորդ՝ որդիք առաքեալք փոխանորդ մարգարէից: Չորրորդ՝ կոչումն հեթանոսաց, առաւել քան զիրէից, որ յաւրինակն էին:

ՎԱՍՆ ԱՃԵԼՈՅ ՀՕՏԻՆ[350]

Հարց. Ուստի՞ աճեցին ստացուածքն Յոբայ (ԽԲ 12):

Պատասխանի. Սուրբ Գիրն ասէ. Տէր աճեցոյց եւ աւրհնեաց զՅոբ (ԽԲ 10): Եւ անպատշաճ է «զուստին» քննել, զի ամենակարող է՝ որպէս զխոյն ի ծառոյն սաբեկայ (հմմտ. Ծնն. ԻԲ 13), եւ զլորամարգն ի ծովէն (հմմտ. Թիւք ԺԱ 31), եւ զսատերն[351] ի բերանոյ ձկանն հրաշագործեաց (հմմտ. Մատթ. ԺԷ 26): Այլ ոմանք ասեն ի ձեռն հրեշտակաց ի միում աւուր ժողովեցան, որպէս ի ձեռն դիւաց ցրուեցան: Այլ այս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն, որք ժողովեցան յետոյ եւ մխիթարեցին զնա, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխար եւ չորս դրամ ոսկի անգիր, ընծայեցին նմայ ի սատար խրախութեանն եւ յայսցանէ աճեցոյց Տէր զինչս նորա, որպէս յանապատին զսակաւն աճեցոյց նկանակ եւ զբազումսն կերակրեաց (հմմտ. Մատթ. ԺԴ 19): Եւ աստ գիտելի է, զի յետ փորձանացն կրկին եղեն ստացուածքն՝ խաշինք բիւր մի եւ չորս հազար, ուղտքն՝ վեց հազար, լուծք եզանց՝ հազար: Եւ էշք արաւտականք հազար: Նոյնպէս եւ եւթն ուստերս, եւ երեք դստերս, որ եւ այն լինի կրկին. նախ՝ զի հոգի եւ մարմին են: Երկրորդ՝ զի յարիցեն ի յարութեանն: Երրորդ՝ զի առաջինքն կենդանի են հոգւով առ Աստուած: Եւ սոյնպէս եւ զաւակքն լինին կրկին: Նոյնպէս եւ կեանք կրկին: /118բ/

---

[350] Հմմտ. ՄՄ 1166, թ. 97գդ:

[351] Տե՛ս **Ս. Գրիգոր Նարեկացի**, *Մատեան ողբերգութեան*, Բան ԽԵ, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 2016, էջ 267. «Իբր զճշդով պահանջումն *սատերն* սակի ի բերանոյ կիտին կորիւնի՝ չորեքդրամեանն կշռութեամբ»:

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ ՅՈԲԱՅ ԵՒ ՏԵԱՌՆ[352]

Բազում իրաւք աւրինակ էր Յոբ Քրիստոսի, որպէս աստ ասէ. նախ՝ մարգարէութեամբ, թագաւորութեամբ եւ քահանայութեամբ: Երկրորդ՝ Յոբ աղաւթեաց ի վերայ բարեկամացն: Եւ Տէրն՝ ի վերայ խաչողացն: Երրորդ՝ զուարակ եւ խոյ էր պատարագն, եւ Տէրն եզն պարարակ, եւ ոչխար փրկութեան կոչեցաւ: Չորրորդ՝ նա եւթն ամ վշտացաւ եւ յութերորդին ողջացաւ: Եւ Տէրն զեւթն դարու վիշտս կրեաց եւ յութերորդին առողջացոյց զբնութիւնս: Հինգերորդ՝ լուան ազգն եւ եկին առ Յոբ, եւ ամենայն ազգ լուան զսքանչելիքն Յիսուսի: Վեցերորդ՝ կերան եւ արբին առ նա, եւ առաքեալք ի վերնատունն զմարմինն եւ զարիւնն Տեառն: Եւթներորդ՝ եւ մխիթարէին զնա, եւ ի Թաբաւր մարգարէքն զՏէրն աղաչէին ի խաչ: Ութերորդ՝ զարմանային ի վերայ Յոբայ (ԻԱ 5) եւ ի Յարութիւն Տեառն: Գնաց, ասէ, ընդ միտս զարմացաւ, թէ զինչ եղեւ (հմմտ. Ղուկ. ԻԴ 12): Իններորդ՝ մէն մի որոջ եւ ոսկի մատուցին, եւ Տէր մեր սկիզբն աճեցեալ հաւտին եւ անապական մարմին, որ առ ի Կուսէն: Տասներորդ՝ աւրհնեաց զվերջին նորա, քան զառաջինն: Եւ Տեառն մերոյ աճեաց ժողովուրդն, քան զառաջինն, որպէս ասէ ըստ կարգի: Է եւ այլ բաղդատութիւն չորս կերպիւ, որ նախ ասացաւ եւ տասն գլխով ի Հարցմունքն է գրեալ[353]:

ՎԱՍՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՒՏԻՆ[354]

Չորք են ոչխարք հաւտին Քրիստոսի. նախ՝ երկնաւորք: Երկրորդ՝ հոգիք անդրանկաց: Երրորդ՝ հրէից: Չորրորդ՝ հեթանոսաց: Եւ այլ են սոքա. /119ա/ ոմանք՝ բնութեամբ, ոմանք՝ ազգաւ, ոմանք՝ լեզուաւ, ոմանք՝ տեղեաւ: Այլ մի եղեն հօտ. նախ՝

---

[352] Հմմտ. ՍՍ 1166, թ. 97դ:
[353] *Գիրք հարցմանց*, հտ. Զ, պրակ ԻԲ, էջ 327:
[354] Հմմտ. ՍՍ 1166, թ. 97գ:

միոյ հովիւին: Երկրորդ՝ մի հաւատով: Երրորդ՝ մի գործով: Չորրորդ՝ մի ճաշակմամբ եւ այլն:

Բան. Չպիտի ինչ ասել (ԽԴ 11):

Լուծումն. Ջծամածուռն եւ զիերծուածողն:

ՎԱՍՆ ԴԱՐՈՒՑ[355]

Հարց. Ո՞րք են եւթն դարք:

Պատասխանի. Առաջին դարն Ադամայ, երկրորդն՝ Ենոքայ, երրորդ՝ Նոյին, չորրորդ՝ Աբրահամու, հինգերորդ՝ Մովսէսին, վեցերորդ՝ Քրիստոսի, եւթներորդ՝ քրիստոնէից, ութերորդ՝ հանդերձեալն: Դարձեալ ասեն ոմանք. առաջին դար՝ Ադամայ, երկրորդ՝ Նոյի, երրորդ՝ Աբրահամու, չորրորդ՝ Դաւթի, հինգերորդ՝ Զորաբաբելի, վեցերորդ՝ Քրիստոսի, եւթներորդ՝ մեռելոց, ութերորդ՝ յարուցելոց:

ՎԱՍՆ ԼԾՈՑ ԵՋԱՆՑ[356]

Լուծ է Խաչն Քրիստոսի, որպէս ցուցաւ, եւ բեռն՝ օրէնքն առնել եւ հրաժարել: Լծվարն Քրիստոս, եւ մաճկալ Հայրն մշակ է: Արաւր Աւետարանն եւ այլն յայտնի է: Եզն ի հազար կենդանեաց ընտիր եւ հարկաւոր է, եւ առաքեալք՝ ընտրեալք եւ հազարապետք՝ ամոլք հաւատոյ են: Արդ լուծք եզանց, որ երկու-երկու առաքէր, չորոց՝ աւետարանիչք, վեցոց՝ երկոտասանք: Գութան, այսինքն՝ գայ ութան, որ են եւթանասունք: Դաշտք՝ մարդիկ, վասն չորից. նախ զի յերկրի: Երկրորդ՝ զի բանական: Երրորդ՝ դաշտ սրտիւ: Չորրորդ՝ կորդ[357]՝ հեթանոսք, եւ հերկեալ՝ հրեայք:

---

[355] Հմմտ. ՍՍ 1166, թ. 97գ:
[356] Հմմտ. ՍՍ 1166, թ. 97գդ:
[357] Անվար, խոպան հող:

Բան. Ձայն մեծ:

Լուծումն. /119բ/ Նախ՝ զի հրեշտակաց եւ մարդկան, զոր նշանակէ զանկակն ընդ երգս հնչեալ: Երկրորդ՝ զի հրէից եւ հեթանոսաց ի միասին: Երրորդ՝ անդադար կենաւք հոգւոյն: Չորրորդ՝ գոչումն սրտին առ Աստուած հասեալ: Ըստ Սովսէսի. Ձի գոչես առ իս (հմմտ. Ելք ԺԴ 15): Նոյնպէս եւ Եղիային:

Բան. Հանգուշ[358]*:*

Լուծումն. Անգուշել անգոսնելն է, եւ հանգուշն՝ հանգիստ ի հեզ եւ ի խոնարհս հանգչի Աստուած (հմմտ. Ես. ԿՁ 2):

ՎԱՍՆ ԵԹԱՆՑ[359]

Հարց. Զի՞նչ է եւթն շրջան կենցաղս:

Պատասխանի. Նախ՝ եւթն դար կենցաղոյս: Երկրորդ՝ աւուրք շաբաթու: Երրորդ՝ շաբաթուց շաբաթ: Չորրորդ՝ չորս յեղանակ, ամիս եւ շաբաթ, եւ աւր, որպէս ցուցաւ նախ: Իսկ եւթն սիւնք լաւին, որպէս ասէ Սողոմոն. «Իմաստութիւն շինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւնս եւթն» (Առակ. Թ 1): Բազում է տեսութիւն: Եւ ասեմ տասն կերպիւ. նախ՝ եւթնարփեան զօրութիւնք Հոգւոյն[360], զոր թուէ Եսայի (հմմտ. Ես. ԺԱ 2-3): Երկրորդ՝ եւթն հրեշտակք, որ ի ներքոյ աթոռոյն Աստուծոյ, որպէս ասէ տեսիլն (հմմտ. Յայտն. Ը 2): Երրորդ՝ եւթն դասք զուարթնոցն, ըստ Երենիոսի[361], որ զերեք դասքն մի թուէ: Չորրորդ՝ երեք երկինքն վերինք

---

[358] Զգուշաւոր, քաջապինդ, զուսպ. հմմտ. ՍՍ 1166, թ. 97դ. «Յորս հանկչի Քրիստոս ի հանգուշն եւ ի հանդարտ կենդանիս»:

[359] Հմմտ. ՍՍ 1166, թ. 98աբ:

[360] Տե՛ս ՍՍ 2080, թ. 22ա. «Եօթնարփեան շնորհք այս է, զոր պարգեւեաց Աստուած յԱդամայ՝ իմաստութեանն, հանճարո[յ], խորհրդո[յ], զօրութեան, գիտութեանն, երկիւղի, աստուածպաշտութեանն»:

[361] **Սբ Իրինեոս**, *Յոյցք առաքելական քարոզութեան*, պարբ. 9. «Իսկ աշխարհն եւթն պարունակի երկինք, յորս զաւրութիւնք եւ հրեշտակք եւ հրեշտակապետք բնակեն....»: Հակառակ հանվանե Սբ Իրինեոսը հիշատակում է հրեշտակների հետեւյալ դասերը՝ պարբ. 85. «....հրեշտակքն եւ հրեշտակապետքն եւ իշխանութիւնքն եւ աթոռքն»:

եւ չորս տարերք: Հինգերորդ՝ եաւթն գաւտիք մոլորակաց: Վեցերորդ՝ մարդս է ի չորս տարերց եւ երեք մասն հոգւոյն: Եւթներորդ՝ եւթն աստիճան քահանայից, զի եպիսկոպոսն եւ կաթողիկոսն քահանայ կոչի: Ութերորդ՝ եւթն խորհուրդք եկեղեցոյ: Իններորդ՝ եւթն առաքինութիւնք աստուածա[յ]ին եւ մարդկային: Տասներորդ՝ եւթն անգամ յաւուր աւրհնութիւնք: Արդ, սոքա ասին եւթն սիւնք լաւին՝ ըստ եւթն որդւոցն Յոբայ: /120ա/

Հարց. Որպէ՞ս ասին կրկին որդիքն:

Պատասխանի. Հինգ կերպիւ. նախ՝ հոգի եւ մարմին: Երկրորդ՝ զի յարիցեն: Երրորդ՝ զի առաջինքն առ Աստուած կենդանի են հոգւով: Չորրորդ՝ տասն եհան յերեսացն Յոբայ եւ տասն պահեաց յառագաստն իւր: Հինգերորդ՝ զի առաջինք եւ վերջինք յարիցեն անդ կրկին տասն մարմին եւ կրկին տասն հոգի:

ՎԱՍՆ ԵՐԵՔ ԴՍՏԵՐԱՑՆ[362]

(ԽԲ 14) Բազում է տեսութիւնն: Եւ ասեն վարդապետք երկոտասան կերպիւ. նախ՝ ըստ երից ժամանակաց, որ է անցեալ ներկայ եւ յապայ, որպէս որդիքն եւթանց շրջանացն: Երկրորդ՝ երեք որպիսութիւն մեր, որ աստ եւ յետ մահու, եւ յետ յարութեան: Երրորդ՝ երեք են ծնունդականք մեր, այսինքն՝ բանս եւ հոգի, եւ մարմին: Չորրորդ՝ որպէս ասէ Սողոմոն. «Երիւք շարժի երկիր» (Առակ. Լ 21): Այսինքն՝ բնական աւրէնք եւ գրաւոր, եւ Աւետարանն: Եւ յետ այնորիկ գործոց հատուցումն: Հինգերորդ՝ ըստ անուանացն, որ է Տիւ, Կասիա, Ամաթեղջիւր, որ է՝ բան, ցասումն եւ ցանկութիւն: Վեցերորդ՝ խոհեմ, արի եւ ողջախոհ: Եւթներորդ՝

[362] Հոբի դստերի մասին տե՛ս ՍՄ 1981, թ. 209աբ. *Որոգինի ասացեալ ի տեսութիւն այլաբանութեամբ.* տե՛ս նաեւ *Clavis Patrum Graecorum*, V. I (Corpus Christanorium). Patres Antenicaeni, Cura et studio Maurith Geerard, Brepols – Turnhout, 1983. Fragmenta in Job, 1505 (2). Այստեղ միայն 209ա թերթն է նշված M. Geerard-ի կողմից, մինչդեռ այն ընդգրկում է 209աբ թերթերը:

տեսական, գործնական, որ է ամենապտուղ եւ կուսական: Ութերորդ՝ հինն Երուսաղէմ, եւ նորս եկեղեցի, եւ վերինն Սիոն: Իններորդ՝ Ամաթեղջն առասպելն հեթանոսաց[363], թէ այծ մի եղեւ, յորոյ եղջերացն ամենայն պէտք առատ բղխէր, այսինքն՝ ի կուսութենէն ամենայն շընորհք բղխէ: Եւ դարձեալ կուսածինն եղջիւր, յորմէ ամենայն շնորհք բխեաց՝ հոգեւոր եւ մարմնաւոր, /120բ/ մեռելոց եւ կենդանեաց, հրէից եւ հեթանոսաց, ի յերկինս եւ յերկրի եւ այլն: Տասներորդ՝ առաջին որդիքն Յոբայ, որ սրբեալ էին պատարագաւն, ցուցանէ զառաջին արդարքն, որ պատարագաւ սրբեցան յԱբելէ մինչ ի Քրիստոս: Եւ երեք դստերքն զսրբեալ կանայքն սկսեալ ի Սառայէ, երեք որոշմամբ՝ ամուլ եւ կոյս, եւ արամբիք: Իսկ յետ փորձանաց ծնեալ որդիքն նշանակէ զնորածնեալքս աւազանաւսն՝ ի մկրտութենէն Տեառն եւ դստերք՝ զսուրբ կանայս նոյնպէս երեք որոշմամբ, սկսեալ յԱստուածածնէն՝ կոյսք եւ այրիք, եւ պարկեշտ: Մետասաներորդ՝ Տիւն ի մեզ է լուսաւոր հաւատ եւ Խունգն՝ անուշահոտ գործք: Եւ Ամաթեղջ, որ է բազմախորհուրդ, նշանակէ ի մեզ զբազում եւ զմեծ խորհուրդն աստուածպաշտութեան: Երկոտասաներորդ՝ եւ շինեալ եկեղեցի. առաջին՝ միշտ լոյսն զգալի վառեալ եւ բանք Աւետարանին ի վերայ բեմին: Երկրորդ՝ խունկն անպակաս յեկեղեցի խնկարկեալ եւ պահեալ տփոք: Երրորդն՝ անապական խորհուրդն միշտ պատարագեալ եւ ի վերայ սրբոյ սեղանոյն անպակաս մնացեալ, որպէս երեսաց հացն եւ գառն ի հնումն (հմմտ. Ելք ԻԵ 30, ԻԹ 40-41):

---

[363] Տե՛ս ՄՄ 1013, թ. 41ա-120ա. *Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Երգ երգոցն մեկնութիւն*: Խաւսք իններորդ, թ. 99բ-100ա. Ամաթեղջն առասպել հեթանոսական ստեղծ զամաղթեայ պատմութիւն, որ այծ էր ասեն, որոյ մի եղջերն խզելոյ ի բաց բղխել ի խոր տեղւոյն զամենապտղութիւն: См. **Григорий Нисский**, *Изяснение Песни песней Соломона*, Беседа 9. Толкование на Песн. 4, 10-15, Москва, 1862.

ՎԱՍՆ ԳԵՂՈՅ[364]

Բան. Ազնուականք (հմմտ. ԽԲ 13):

Լուծումն. Որպէս Դաւիթ ծերաձին էր՝ ցրտացաւ, եւ Կային՝ ապականեալ ծնաւ ի մարմնոյն Ադամայ եւ մարմինն Յոբայ նորոգեալ եղեւ, վասն որոյ ծնունդքն գեղեցիկ էր: Այլեւ, ի յօրինակ նորս եկեղեցոյ եւ ազնուական զհոգի, եւ զմարմին ցուցանէ: Եւ չորիւք է մարմնոյն գեղ. նախ՝ չափաւորութիւն մասանց: /121ա/ Երկրորդ՝ չորս գունոց, որ յերեսն: Երրորդ՝ զի ողորկ եւ փայլուն: Չորրորդ՝ զնստագոյն: Նոյնպէս ի հոգին. նախ՝ միջին չափն մասանց: Երկրորդ՝ չորս առաքինութիւնն է գոյն: Երրորդ՝ հաւատն պայծառ: Չորրորդ՝ խոնարհութիւն:

ՎԱՍՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ[365]

Բան. Ժառանգութիւն (ԽԲ 15):

Լուծումն. Նախ՝ մարմնոյ ժառանգութիւն ըստ օրինացն, որ զստացուածն ի դուրս տանի, վասն որոյ երկու քերցն մին եղբօր բաժին տան: Երկրորդ՝ ի նորս հաւասար արու եւ էգն զշնորհս ընդունին, որպէս յայտ է ի մկրտեալն: Երրորդ՝ հին սուրբքն ընդ նորոյս ժառանգեն, որպէս ասացաւ վասն Սառայի եւ այլոցն: Չորրորդ՝ սուրբ եկեղեցի ընդ հրեշտակացն հաւասար ժառանգէ: Ըստ այնմ. հաւասար հրեշտակաց են եւ որդիք արքայութեան (հմմտ. Ղուկ. Ի 36): Դստերքն Յոբայ գլխօրէն չորիւք օրինակեն զեկեղեցի. նախ՝ ըստ թուոյ: Երկրորդ՝ ըստ անուան: Երրորդ՝ ըստ գեղեցկութեան: Չորրորդ՝ ըստ ժառանգութեան:

---

[364] Հմմտ. ՍՍ 1166, թ. 98ա:
[365] Հմմտ. նույն տեղում:

ՎԱՍՆ ԿԵՆԱՑՆ ՅՈԲԱՅ[366]

Հարց. Քանի՞ ամ եկաց ի փորձութիւնս:

Պատասխանի. Ոմանք եօթն ամ ասեն: Ըստ այնմ. Ի վեցից վշտաց փրկեսցէ, եւ յեօթներորդին ոչ մերձեսցի չար (Ե 19): Ի խորհուրդ եւթն դարու վշտաց կենցաղոյս եւ յութերորդին՝ ազատութիւն բնութեանս: Եւ ոմանք երեսուն եւ ութ ամ ասեն, ըստ անդամալուծին, զոր բժշկեաց Քրիստոս: Որք եօթն ամ ասեն զփորձանսն, այսպէս թուեն, զի յետ փորձանացն, ասէ Գիրն, հարիւր եւ եօթանասուն ամ եւ յառաջ, քան զփորձն՝ եօթանասուն ամ եւ ութ ամ փորձանացն եւ դարձին, լինի բովանդակ կեանքն Յոբայ ԲՃԽ եւ Ը (248) ամ: /121բ/ Եւ որք Լ եւ Ը (38) ամ ասեն զփորձանսն՝ այսպէս թուեն, թէ յետ հարուածոցն եկաց Յոբ ԲՃ (200), այսինքն ՃԽ (140) ամ եւ միանգամայն՝ ՍԽԸ (248) ամ: Ցայտ է յառաջ, քան զհարուածն Հ (70) ամաց էր եւ ԼԸ (38) ամաց ի հիւանդութեանն: Եւ այսպէս կրկին աճեցին եւ կեանքն, որպէս ամենայն ինչքն: Եւ այլք ոմանք ՍԽԸ (248) ամ յետ փորձանացն ասեն:

Բան. Վեհ միութիւն ի Քրիստոս:

Լուծումն. Այսինքն՝ չորեքնիւթեայ մարմինն եւ եռամասնեայ հոգին, եւ Բանն միացեալ է: Եւ դարձեալ մարմինն եւ Հոգին, եւ միտք, եւ Բան, եւ Աստուած Բանն միացեալ: Իսկ վեհագոյն. նախ՝ զի մեր միութիւնս եւթն է, եւ նորայն՝ ութ: Երկրորդ՝ մերս ըստ եւթն կենցաղոյս, եւ նորայն՝ ութ հանդերձելոյն: Երրորդ՝ մերս եղական, եւ նորայն՝ անեղի ընդ եղանակի: Չորրորդ՝ մերս բաժանի մահուամբ, նորայն՝ անբաժանելի մնայց: Ազատիլն Յոբայ չորեքնիւթեայ մարմնով, իսկ մերս՝ մարմնով եւ հոգւով, եւ մտաւք, եւ բանիւ ազատութիւն:

---

[366] Հմմտ. ՄՄ 1166, թ. 98ա:

ՎԱՍՆ ՉՈՐԻՑ

Բազում է խորհուրդ չորից, այլ ես ասեմ Ի (20) թուով. առաջին՝ չորս տարերք եւ Դ (4) յեղանակ, եւ չորս կողմ երկրի, եւ չորս հողմունք: Երկրորդ՝ չորս գետք Եդեմայ եւ չորս կառքն Եզեկիէլի, եւ չորս աւետարանիչք, եւ քառադէմ խաչն: Երրորդ՝ չորս առաքինութիւնք եւ չորս հասակք մեր, եւ չորս ժամք աւուր, եւ չորս պահք գիշերոյ: Չորրորդ՝ չորս թիւք, որ զաւրութիւն է տասն եկին եւ Դ (4) որակ տարերաց՝ ջերմ եւ ցուրտ, գէջ եւ չոր, /122ա/ եւ չորս որակ գունոց՝ սեաւ, սպիտակ, կարմիր եւ դեղին: Հինգերորդ՝ չորս գոյնք խորանին եւ Դ (4) մաղձ կենդանեաց, եւ չորսոտանիք, եւ մարդս քառադէմ, եւ թռչունք քառադէմ թռչին: Այս է չորից խորհուրդք:

Թիւն Յոբայ Ճ (100) ամաւ առաջ է, քան զՄովսէս եւ յերկարածիգ եղեալ՝ մինչեւ յելսն Եգիպտոսի (հմմտ. Թիւք ԼԴ 7): Որպէս սատակեալ ասեմք պղծոց եւ զենեալ սրբոց, մեռեալ մարդիկ եւ վախճանեալ քահանայից, որ է վճարեալ եւ կատարեալ զգործս:

Բան. Ծեր (հմմտ. ԽԲ 16):

Լուծումն. Նախ՝ զծայր կենաց: Երկրորդ՝ զիմաստութիւն: Երրորդ՝ զմաքրութիւն: Չորրորդ՝ զհին աւուրցն[367] տպաւորէ (հմմտ. Դան. Է 9, 13, 22), այսպէս բարի ծերք: Իսկ չարք՝ ծոյլ եւ ծանր, եւ տկար, եւ անժոյժ, եւ այլն, որ գտցես վասն ծերոց ի Գիրս հարցմանց, վեց հատորն, ԾԵ համարին[368]:

Հարց. Զի՞նչ է նահապետք, որ խորհրդովն ի Քրիստոս արդարացան:

Պատասխանի. Այսինքն՝ աւրինաւք եւ աւրինակաւք առաջինքն, իսկ մեք վերջինք՝ հաւատովք եւ ճշմարտութեամբ, նոյնպէս միջինք, որք տեսին զՔրիստոս եւ հաւատացին, միապէս քրիստոնեանք են:

---

[367] Տե՛ս հղում 161:

[368] *Գիրք հարցմանց*, հտ. Զ, պրակ ԾԵ, էջ 378:

ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ[369]

Բան. Գրեալ է յառնել (ԽԲ 16):

Լուծումն. Նախ այն է, որ միայն մարդոյս է յարութիւն: Երկրորդ՝ որ ասէ. «Որդի Մարդոյ երթայ՝ որպէս եւ գրեալ» (Մատթ. ԻԶ 24): Երրորդ՝ «Անուանք ձեր գրեալ են յերկինս» (Ղուկ. Ժ 29): Չորրորդ՝ առաքեալ ասէ. «Նախ Քրիստոս եւ ապա քրիստոսեանք եւ ապա կատարած» (Ա Կորնթ. ԺԵ 23, 24): /122բ/

Հարց. Զի՞նչ է ընդ որս Տէր յարուցէ (ԽԲ 16):

Պատասխանի. Չորս է իմացումն. նախ՝ զի չորքս այս գործ Տեառն են. նախ՝ ի հողոյ ստեղծանել: Երկրորդ՝ յարուցանել: Երրորդ՝ յարգանդի մաւրն: Չորրորդ՝ յաւազանին սրբել: Երկրորդ՝ ընդդէմ է նոցա, որք ասեն զհին աւրէնս եւ զգիշեր, եւ զերկիր այլոյ արարեալ, իսկ նոր աւրէնս եւ լոյսն, եւ երկինք բարւոյն, ասէ զայս, թէ Տէր յարուցանէ զհին եւ զնորս ի միասին: Երրորդ՝ ընդդէմ է նոցա, որ չարք ոմանք ասեն, եթէ հրեշտակք եւ հոգիք մեռանին, եւ անասունք յառնեն: Եւ սուտ են, զի անասունք ոչ ունին բանական հոգի եւ ոչ գոյ հատուցումն նոցա, այլ մարդոյս միայն է յարութիւն եւ հատուցումն, ընդ որս՝ եւ Յոբ յարիցէ: Չորրորդ՝ ասէ, զի այլ է յարութիւն չարեաց եւ այլ՝ բարեաց: Եւ երիւք որոշին. նախ՝ զի չարք ի մարդկանէ թոյլ տալովն Աստուծոյ կեան ի յերկրի եւ մեռանին եւ յառնեն եւ տանջին: Երկրորդ՝ զի տրտմութիւնն են Աստուծոյ ի կեալն, ի մահ, ի յառնել, ի տանջիլ: Երրորդ՝ զի չարքն ոչ յառնեն ի դատաստան, այլ ի տանջանս, ըստ այնմ՝ վասն այսորիկ ոչ ի դատաստան, զի իբրեւ զյայտնի գող ի տանջանս տանին եւ ոչ ի քննութիւն: Այլեւ ինքեանք գիտակ են արժանեաց իւրեանց: Ընդդէմ այսմ նոքա՝ որ բարիքն են. նախ՝ զի կամաւքն Աստուծոյ կեան եւ մեռանին եւ յառնեն եւ փառաւորին: Երկրորդ՝ բարիքն ուրախութիւն են Աստուծոյ ի կեանս, ի մահ, ի յառնել եւ ընդ աջմէ կացուցանել եւ մտանել յուրախութիւն Տեառն: Երրորդ՝ բարիքն յառնեն ոչ ի դատիլ եւ ի քննութիւն, զի մեղս ոչ ունին, այլ

[369] Հմմտ. ՍՍ 1166, թ. 98աբ:

ի դատել եւ քըն/123ա/նել զայլս: Զորմէ ասէ վասն Յոբայ. Ընդ որս Տէր յարուցանէ (ԽԲ 16), ի պսակն եւ ի փառս եւ ի դատել զայլս:

ՎԱՍՆ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՒԱՏՈՅ[370]

Չորիւք որոշի ճշմարիտ հաւատ եւ սուտ. նախ՝ զի ճշմարիտ հաւատ է գործովն: Երկրորդ՝ առանց թերութեան: Երրորդ՝ առանց թիւրութեան: Չորրորդ՝ առանց ուրացութեան: Ընդդէմ այսմ եւ սուտ հաւատն է՝ սոսկ բանիւ եւ թերի, եւ թիւր, եւ ուրացող:

Բան. Անքստերիւր[371]*:*

Լուծումն. Անմոլար. նախ՝ զի ոչ յուսայ յերեւելիս: Երկրորդ՝ զի բարի գործաւք յուսայ, զի յոյսն չար գործաւք յանդգնութիւն է եւ ոչ յոյս, եւ ջերմեռանդ սէրն ի բոլոր սրտէ, եւ յամենայն անձնէ առ Աստուած, եւ վասն Աստուծոյ՝ առ ընկերս:

ՎԱՍՆ ՅԱՋԳԻՆ ՅՈԲԱՅ[372]

Յազգէն Եսաւայ նախ Բաղակ թագաւորեաց եւ ապա՝ Յոբ որպէս յազգն Յակոբայ նախ Սաւուղ եւ ապա՝ Դաւիթ թագաւորեաց: Եւ տե՛ս որքան յառաջ թագաւորեցին ազգն Եսաւայ, քան զՅակոբայ: Եւ Բաղակս այս ոչ է այն, որ անէծ զԻսրայէլ եւ յայտնի է ի ժամանակէն, եւ յազգէն, եւ ի տեղւոյն: Հայրն Յոբայ Զարեհ կոչի եւ մայրն՝ Բոսսոր, եւ անդրանիկն նոյն: Իսկ Կինն արաբացի էր եւ զանունն ոչ յիշէ, զի անզգամութեամբ խաւսեցաւ:

Բան. Յարգանակ[373]*:*

Լուծումն. Որ հրամայեաց Տէրն, թէ՝ «Յարգեցէք զայդ» (Ղուկ. ԺԹ 13), որ է սեղան սրտի եւ լեզուի, ասողաց եւ լսողաց բանին:

---

[370] Հմմտ. ՍՍ 1166, թ. 99ա:
[371] Հմմտ. նույն տեղում. «Ճշմարիտ հաւատով եւ անքստուէր իւր յուսով»:
[372] Հմմտ. նույն տեղում:
[373] Հմմտ. նույն տեղում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ժողովողն մեկնութեանս է Վանական Վարդապետն, աշակերտ Մխիթար Վարդապետի, որ Գոշ անուանի, եւ է սա վարդապետն Վարդանայ, եւ Վարդանն՝ /123բ/ Ներսէսի, եւ նա՝ Եսայեայ վարժապետին, որ եւ Յոհաննու Որոտնեցւոյ՝ լուսաւորչին մերոյ, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն:

Արդ, ես՝ վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ Գրիգոր մականուն խնդրող բանի, որ ի վաղուց հետէ փափագէի բոլոր մեկնութեանս Յոբայ, եւ ի թուականութեանս Հայոց ՊԾԷ (1408) ամի եկեալ մեր յերկիրս Քաջբերունի եւ ծմերեալ ի հրեշտակաբնակ վանքս Մեծոփոյ ի սպասու դամբարանաց վարժապետացն սրբոց: Եւ ընթերցմամբ հաւաքեցի զդժուարալոյծ բանս Յոբայ եւ զմեկնչաց նորա, այլեւ սակաւ ինչ լուծումն Առիստակիսի եւ Գէորգեայ ի Խրատս գրչութեան, ընդ նմին եւ զքաղուածոյ մեկնութեանն Յովհաննու Աւետարանչի եւ ընծայեցի ի պատիւ սուրբ տեղւոյս ուսըմնասէր անձանց ուղղադաւան մտաց, եւ ի գլուխս բաժանելով վասն մտաւոր տեսութեան, եւ ի զարդ ուսման ի պէտս բեմասացութեան, եւ ի խրատս զրուցատրութեան:

Արդ, եթէ գտցի ինչ ի սմա ըստ հաճոյից խնդրողաց Տեառն շնորհք եւ թէ ոչ եւ այնպէս շնորհք եւ պակասն փոքրընկալ անաւթոյս մերոյ, ներեսցի, որ եւ լուսաւոր վարժապետին մերոյ Յովհաննու Որոտնեցւոյ ի սմա մասն բարեաց յիշեալ եղիցի եւ մեզ աշխատողաց՝ բազում եւ անթիւ սխալանաց թողութիւն յեղբայրասէր կամաց ձերոց հայցեսցի: Որ եւ մեզ յուսողաց եւ ձեզ յիշողաց ողորմութիւն Տեառն հասարակեսցի. ամէն: Այլեւ աղաչեմ զմտերիմ գաղափարաւղս, գրել զսակաւ յիշատակս մեր եւ դուք գրեալ լիջիք ի գիրն կենացն յաւիտենից. ամէն. եղիցի:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ[374]

Ձեռ. 1113, թ. 3ա-105ա, 1648, 1662 թթ., Կոստանդնուպոլիս, գրիչ՝ Յակոբ Ակնեցի

Ձեռ. 1114, թ. 117ա-210ա, 1425 թ., Ձագավանք, գրիչ՝ Ստեփանոս կրօնաւոր

Ձեռ. 1115, թ. 2ա-123բ, 1408 թ., Մեծոփավանք, գրիչ՝ Գրիգոր Տաթեւացի (հեղինակը)[375]

Ձեռ. 1116, թ. 3ա-93ա, 1601 թ., գրիչ՝ Ղազար դպիր

Ձեռ. 1167, թ. 128ա-86ա, ԺԷ դար

Ձեռ. 1170, Բ, թ. 182ա-284ա, ԺԷ դար

Ձեռ. 1171, թ. 3ա-95ա, 1628 թ., Սբ Ստեփանոս Նախավկայ, Տաթեւ, գրիչ՝ Սկրտիչ աբդ. Ջուղայեցի

Ձեռ. 1172, թ. 4ա-101ա, ԺԷ դար, գրիչ՝ Հարութիւն

Ձեռ. 1173, թ. 5ա-101ա, 1688 թ., Սպահան, գրիչ՝ Աստուածատուր սարկաւագ

Ձեռ. 1254, թ. 187ա-270ա, ԺԷ դար

Ձեռ. 1344, թ. 258ա-326բ, 1692-93 թթ., Արղնի, գրիչ՝ Պօղոս Ամթեցի

Ձեռ. 1774, Ա, թ. 2ա-64ա, ԺԷ դար

Ձեռ. 3188, թ. 5ա-131բ, ԺԷ դար

Ձեռ. 3939, թ. 1ա-21ա, ԺԵ դար, գրիչ՝ Դիմէս

Ձեռ. 5615, թ. 1ա-166բ, ԺԵ դար, Ս. Անտոնի վանք (Կաֆա), գրիչ՝ Աւգսենդ

---

[374] *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հտ. Ա, կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Երեւան, 1965. *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հտ. Բ, կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Երեւան, 1970:

[375] Գրիգոր Տաթեւացու ինքնագիր ձեռագրերի մասին տե՛ս **Աճէմեան Հ.**, *Գրիգոր Տաթեւացու Աւետարանը*, «Բազմավէպ», 1934, էջ 345-348: **Թերզյան Գ.**, *Գրիգոր Տաթեւացու ինքնագիր ձեռագիրը*, «Էջմիածին», Բ, 2011, էջ 130-133:

Ձեռ. 5657, Ա, թ. 2ա-139բ, ԺԵ դար, գրիչ՝ Խաչատուր
Ձեռ. 5732, թ. 94ա-163բ, ԺԴ դար, 1664 թ., գրիչ՝ Պետրոս երէց
Ձեռ. 6462, թ. 90ա-101ա, 1807-08 թթ., Երուսաղէմ, գրիչ՝ Յովսէփ Ծապինղարահիսարցի
Ձեռ. 7024, թ. 1աբ, 1696 թ., Տիգրանակերտ, գրիչ՝ Յովհաննէս Եղիվարդեցի
Ձեռ. 8964, թ. 208ա-250ա, ԺԵ դար

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ[376]

Ձեռ. 592, էջ 565-785, 1736 թ., Երուսաղէմ, գրիչ՝ Գրիգոր աբեղա Ղափանցի
Ձեռ. 686, էջ 259-421, ԺԸ դար, գրիչ՝ Մարգար սարկաւագ եւ Թորոս վարդապետ
Ձեռ. 800, էջ 10-222, 1745 թ., Երուսաղէմ, գրիչ՝ Սարգիս դպիր
Ձեռ. 906, էջ 497-570, գրիչ՝ Ղուկաս դպիր
Ձեռ. 954, էջ 1-128, 1741 թ., Կոստանդնուպօլիս
Ձեռ. 987, էջ 293-400, 1620 թ., Մարզվան, գրիչ՝ Միքայէլ Մարգուանցի
Ձեռ. 1284, էջ 415-427, ԺԵ դար, Սարգիս Ղրիմեցի
Ձեռ. 1326, էջ 177-486, ԺԵ դար
Ձեռ. 1394, էջ 3-228, ԺԷ դար

[376] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հտ. Բ, կազմ.՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1967, էջ 630, հտ. Գ, Երուսաղէմ, 1968, էջ 124-126, 257-258, 431-432, 508, 586-587, հտ. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 476-478, 586-587, հտ. Ե, Երուսաղէմ, 1971, էջ 40-41:

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ[377]

Ձեռ. 1301 (հմր. 1426), 116բ (հատված), 1677 թ.
Ձեռ. 1018 (հմր. 1440), 3ա-120բ, 1425 թ.

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ[378]

Ձեռ. 593, թ. 260ա-316բ, 1414 թ.

ԶՄՄԱՌԻ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ[379]

Ձեռ. 124, թ. 217ա-236ա, ԺՁ-ԺԷ դդ.
Ձեռ. 201, թ. 1ա-55ա, ԺԷ-ԺԸ դդ.
Ձեռ. 407, թ. 11ա-102բ, ժամանակը նշված չէ:

---

[377] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Է, յօրինեաց Ս. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 935-942, 997-1004:
[378] *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, հտ. Բ, կազմ.՝ Հ. Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 47-50:
[379] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի*, հտ. Ա, կազմ.՝ Մ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 250-257, 480-481, 721-726:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՏԵՂԻՆԵՐԻ ՑԱՆԿ

ԾՆՆԴՈՑ

Ա 2 139, 170
Ա 29 205
Բ 16-17 205
Բ 17 50, 82
Բ 24 105
Գ 15 193
Գ 17 204
Գ. 19 54, 62, 75, 82
Գ 20 26
Ը 21 194
ԺԸ 1-2 134
ԺԹ 23-25 134
ԻԲ 9-10 213
ԻԲ 2 36
ԻԲ 13 219
ԻԲ 17 165
ԻՁ 4 165

ԵԼՔ

Գ 2 169
Գ 6 71
Դ 25 196
Է-ԺԱ գլ. 134
ԺԴ 15 222
ԺԴ 21 166
Ի 10-11 34
ԻԵ 30 224
ԻԹ 40-41 224
ԼԲ 13 165
ԼԳ 21-23 213

ԹԻՒՔ

ԺԱ 28 102
ԺԱ 31 219
ԺԴ 13 134
ԻԲ 22-33 91
ԼԴ 7 227

Բ ՕՐԷՆՔ

ԻԷ 26 204
ԼԲ 22 116
ԼԲ 41 181

ՅԵՍՈՒ

ԻԱ 42 196

ԴԱՏ.

ԺՁ գլ. 42

Ա ԹԱԳ.

Բ 5 39
Գ 21 80

Բ ԹԱԳ.

ԺԲ 23 80
ԺԳ գլ. 46
ԻԲ 9 200

Դ ԹԱԳ.

Բ 11 166
Դ 32-35 166

ՍԱՂՄ.

Ա 3 127
Ե 4 166
Ը 5 162
Ջ 14 80
Է 16 45
Թ 13 145
Թ 17 153
Թ 18 117
ԺԱ 6 146
ԺԳ 1 42, 207
ԺԷ 9 200
ԺԷ 14 15
ԺԷ 29 123
ԺԸ 9 123
ԺԸ 13-14 13
ԻԴ 5 80
ԻԷ 7 148
ԼԳ 22 21, 35
ԼԴ 13 78
ԼԵ 12 55
ԼԸ 14 63
ԽԱ 6, 12 148
ԽԴ 8 219

ԽԷ 15 178
ԽԸ 13, 21 91
ԽԸ 15 82
ԽԸ 20 63
Ծ 28 105
ԾԲ 1 207
ԾՂ 7 49
ԿԲ 10-11 45
ԿՂ 11 127
ԿԷ 3 200
ԿԸ 2 72
ԿԸ 19 29
ԿԸ 29 80
Հ 4 55
ՀԲ 12 152
ՀՂ 9 45
ՁԲ 14 53
ՁՁ 2 163
ՁԷ 6 177
Ղ 7 33, 175
ՂԱ 11 127, 178
ՂԱ 13 127
ՂԳ 7 145
ՂԳ 12 24
ՂՂ 4 109
ՂՁ 2 162
Ճ 5 55
ՃԱ 20 29
ՃԳ 2 162
ՃԳ 3 162
ՃԳ 5 109
ՃՁ 10 69
ՃՁ 16 168
ՃՁ 20 35, 178
ՃԺԱ 6 64
ՃԺԵ 15 35
ՃԺԸ 1 80
ՃԺԸ 60 36
ՃԺԸ 83 53
ՃԺԸ 21 204
ՃԺԸ 91 59
ՃԼԱ 17 178
ՃԼԸ 8 167
ՃԼԸ 21 204
ՃԼԹ 6 83
ՃԼԹ 11 37, 91
ՃԽԲ 3 63
ՃԽՁ 4 122, 165
ՃԽՁ 5 108
ՃԽԷ 14 66

ԱՌԱԿԱՑ

Բ 6 137
Գ 33 204
Գ 34 55
Դ 27 33
Ե 2-3 46
Զ 26 46
Զ 34 47
Է 10 46
Թ 1 222
ԺԱ 22 46
ԺԴ 35 137
Լ 21 223
ԼԱ 3 46

ԺՈՂՈՎՈՂ

Ա 2 95
Ա 5-6 169
Ա 13 34
Դ 4 131
Դ 12 130
Ե 9 207
ԺԱ 2 34
ԺԱ 3 21
ԺԲ 5 179
ԺԲ 6 53

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Ա 12 82
Ա 13 82
Դ 10 82
Դ 12 96
Դ 16 44
Ե 10 119, 185

ԵՍԱՅԻ

Ա 2 87
Ա 3 51
Զ 2 100
Է 14 96
Ժ 14 14
ԺԱ 2-3 222
ԺԴ 12 165
ԺԴ 13 210
ԺԴ 13-14 162
ԻԲ 15 96
ԼԳ 4 179
ԼԳ 17 120
ԼԴ 4 59
ԼԸ 14 189
ԽԲ 12 122
ԽԲ 19 191

ԽԹ 6 170
ԾԲ 3 98
ԾԵ 7 141
ԿԳ 2 185
ԿԶ 2 222
ԿԶ 8 177
ԿԶ 18 120
ԿԶ 19 120

ԵՐԵՄԻԱ

Թ 1 61
ԾԱ 20-21 180

ԵԶԵԿԻԷԼ

Է 20 191
ԻԸ 12 14
ԽԴ 10 102
ԽԸ 11 102

ԴԱՆԻԷԼ

Գ 55 167
Դ 22 129
Դ 29 129
Է 9 227
Է 10 79
Է 13 227
Է 22 227
Ը 20 168

ՅՈՎՆԱՆ

Ա, Բ գլ. 68

ԱՄԲԱԿՈՒՄ

Գ 4 178
Գ 8 180

ԶԱՔԱՐԻԱ

Թ 16 72

ԻՄԱՍՏ. ՍՈՂՈՄՈՆԻ

Բ 24 101
Գ 4 21
Զ 7 113
ԺԱ 23 126

ՍԻՐԱՔ

ԻԴ 7 162
ԼԹ 1 115

ԲԱՐՈՒՔ

Գ 33 58

Ա ԵԶՐ

Գ 3 136

ԱՒԵՏ. ՄԱՏԹ.

Ա 16 96
Ա 21 28
Գ 17 178
Դ 4-5 27
Դ 16 169
Դ 20 100
Ե 4-5 152
Ե 6 27
Ե 14 165, 169
Ե 16 169
Ե 28 45
Ե 29 43
Ե 44 203
Զ 20 184
Զ 21 207
Է 2-5 145
Է 16, 20 200
Է 13-14 77
Է 24 207
Ը 30-32 36
Ժ 39 120
ԺԱ 29 152
ԺԲ 42 120/121
ԺԳ 17 213
ԺԳ 43 169
ԺԴ գլ. 42
ԺԴ 19 219
ԺԶ 26 49
ԺԷ 26 219
ԺԸ 21-22 216
ԻԲ 13 153
ԻԵ 34 136
ԻԵ 35-36 132
ԻԵ 36 135
ԻԵ 41 136, 204
ԻԶ 24 228
ԻԶ 26 87
ԻԶ 26-28 218
ԻԶ 28 87
ԻԷ գլ. 125
ԻԷ 40 180
ԻԷ 60 96
ԻԷ 46 30, 158
ԻԸ 20 29

ԱՒԵՏ. ՄԱՐԿ.

Ա 18 100
Ե 13 36
ԺԳ 24-25 59

ժԵ 34 30, 156
ժԵ 39 180
ժԵ 46 96
ժԵ գլ. 125

ԱՒԵՏ. ՂՈՒԿ.

Ա 27 196
Ե 28 100
Զ 26 203
Զ 45 44
Ը 32-33 36
Ժ 20 80
Ժ 29 228
ԺԱ 31 121
ԺԲ 33 207
ԺԲ 35 69
ԺԳ 34 78
ԺԴ 21 44
ԺԵ 23 215
ԺԶ 13 207
ԺԶ 19-31 72
ԺԹ 13 229
Ի 36 87, 225
ԻԳ 34 29
ԻԳ 43 29
ԻԳ 46 30
ԻԳ 53 96
ԻԳ գլ. 125
ԻԴ 12 220
ԻԴ 39 89

ԱՒԵՏ. ՅՈՎՀ.

Ա 1 120
Ա 5 169
Ա 11 124, 134
Ա 15 166
Ա 29 86
Դ 24 139
Ե 19 121
Ե 22 186
Ե 25-27 104
Ե 26-27 121
Ե 36-37 121
Ը 44 101, 164
Թ 39 187
Ժ 18 183
Ժ 38 121
ԺԲ 24 81
ԺԲ 28 181
ԺԲ 46 64
ԺԵ 1, 5 106
ԺԶ 33 181
ԺԹ 6 181
ԺԹ 15 181
ԺԹ 26 29
ԺԹ 27 29
ԺԹ 28 30
ԺԹ 29-30 30
ԺԹ գլ. 125
Ի 27-28 134

ԳՈՐԾՔ ԱՌԱՔ.

Բ 31 118
Ե 4 139
ԺԲ 5-7 169
ԻԶ 20 141
ԻԶ 29 169

ԹՈՒՂԹ ԱՌ ՀՌՈՄ.

Բ 14 48
Ը 21 106
Ժ 9 141
Ժ 18 158

ԹՈՒՂԹ ԱՌ ԿՈՐՆԹ. Ա

Գ 12 19
Դ 4 79
Զ 9-10 47
Ը 6 38
Թ 24 67
ԺԲ 28-29 172
ԺԵ 20 81
ԺԵ 23-24 227
ԺԵ 41 64, 165
ԺԵ 50 43

ԹՈՒՂԹ ԱՌ ԿՈՐՆԹ. Բ

Զ 16 28
Զ 7-8 33
ԺԱ 14 16

ԹՈՒՂԹ ԱՌ ԳԱՂԱՏ.

Գ 13-14 28
Դ 4-5 28
Դ 7 87

ԹՈՒՂԹ ԱՌ ԵՓԵՍ.

Բ 5 32
Դ 8-9 29
Ե 18 13

ԹՈՒՂԹ ԱՌ ՓԻԼԻՊ.

Ա 27 139

ԹՈՒՂԹ ԱՌ ԿՈՂՈՍ.

Ա 13 28
Բ 13 32
Գ 5 207

ԹՈՒՂԹ ԱՌ ԹԵՍԱՂ. Ա

Դ 16 35
Ե 23 139

ԹՈՒՂԹ ԱՌ ԹԵՍԱՂ. Բ

Բ 3 182

ԹՈՒՂԹ ԱՌ ՏԻՄ. Ա

Բ 5 61
Զ 16 168

ԹՈՒՂԹ ԱՌ ՏԻՏՈՍ

Բ 11-12 32

ԹՈՒՂԹ ԱՌ ԵԲՐ.

Ա 3 28, 109
Բ 14 28
Գ 11, 18 134
Դ 3, 5 134
Ժ 31 24
ԺԱ 1 173
ԺԱ 40 103
ԺԲ 11 77
ԺԳ 4 43
ԺԳ 5 207
ԺԳ 12 194

ՅԱԿՈԲՈՍ

Ա 19 143
Ա 20 61
Գ 2 43
Դ 4 44

Ա ՊԵՏ.

Բ 3 194

Բ ՊԵՏ.

Բ 15, 17 102

Ա ՅՈՎՀ.

Ե 8 79
Բ 18 182
Ե 17 32

ՅԱՅՏՆ. ՅՈՎՀ.

Ե 4 189
Ը 2 222
Ժ 10 77
ԺԲ 4 59

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբէլ (Աբել, Աբիլ) 16, 79, 90, 95, 196, 224
Աբրահամ 35, 36, 57, 61, 71, 72, 75, 78, 105, 134, 160, 213, 221
Ադամ 4, 8, 9, 11, 14, 17, 18, 26, 28, 34, 35, 41, 44, 45, 49, 50, 51, 54, 55, 56, 61, 63, 68, 72, 74, 75, 77, 78, 82, 84-86, 92, 97, 100, 101, 105, 123, 124, 134, 135, 158, 158, 161, 166, 169, 183, 187, 198, 204, 207, 211, 215-217, 219, 221, 225
Ահարոն 214
Ամաթեղջիւր 223, 224
Ամբակում 178
Ամիթ 11
Ամրամ 10
Արիստոտէլ 111, 122, 164, 204

Բաղակ 229
Բաղամ 91
Բաղդատ Սօքեցի 4-6, 54, 57, 68, 82-84, 104, 108
Բարսեղ (Մեծ) 168
Բոսսոր 229

Գողգոթա 183

Դալիլա 42
Դանիէլ 79, 129
Դաւիթ
Սարգարե 21, 29, 35, 36, 45, 51, 53, 58, 63, 64, 66, 72, 78, 80, 83, 91, 108, 109, 122, 127, 143, 148, 162, 167, 168, 177, 178, 204, 219, 225, 229
Վարդապետ (Քօբայրեցի) 143
Դիոնիսիոս (Արիսպագացի) 103
Դկլաթ (Տիգրիս) 68

Եգիպտոս 134, 170, 227
Եդեմ 227
Եզեկիա 71
Եզեկիէլ մարգարէ 14, 191, 227
Եզր դպիր (Եզրաս) 214
Ելիփազ 3, 5, 9, 21, 50 51, 56, 66, 68, 70, 72,

97, 98, 140, 147, 214
Ելիուս 7, 59, 136-138, 143, 149, 152, 187
Եղիա 81, 166, 174, 222
Եղիսէոս 81, 166
Ենոք 221
Եպիփան 117
Երէմայ (Երեմիա) 19, 58, 61
Եսայի (Էսայի) 96, 122, 164, 179, 191, 222
Եսաւ 214, 229
Երուսաղէմ 78, 96, 224
Եփրեմ (Ասորի) 68, 216
Եւա 41, 42, 75, 77, 86

Զարեհ 229
Զաքարիա 72
Զօրաբաբել 221

Թաբաւր (Թաբօր) 157, 160, 169, 188, 217, 220
Թէովնաս 48
Թիլգուրան 11
Թոմաս 134

Իսրայէլ 96, 229

Կահաթ 10
Կայեն (Կային) 225, 196
Կասիա 223
Կիւրեղ (Ալեքսանդրացի) 103
Կոստանդնուպալիս 198

Հայկ 8, 173
Հերովդիադա 42
Հերովդէս 12, 42
Ղազար 81
Ղեւի 10
Ղովտ 93, 134

Մարիամ (Աստուածածին) 5, 95, 97, 119, 169, 224
Մելքիսեդեկ 214
Մովսէս 10, 35, 67, 71, 139, 165, 166, 169, 181, 204, 213, 214, 221, 222, 227

Յակոբ 10, 71, 75, 229
Յակոբոս 143
Յեսու 196
Յիսուս 28, 32, 116, 119, 182, 194, 220
Յոբ 3-13, 15, 16, 18, 19, 21-29, 31, 35-37, 39-43, 45-47, 50, 51, 54-57, 60-62, 64-67, 69, 73, 75, 78, 79, 83, 84, 86, 88, 89, 91, 92, 97-101, 104, 108, 112, 123, 136-139, 141, 142, 144, 147-149, 152, 153, 160, 197, 187, 188, 195, 212-216, 218-220, 223-226
Յովհաննէս
Աւետարանիչ 230
Մկրտիչ (Կարապետ) 42, 160, 166, 174, 198

Յովհան Որոտնեցի 10, 230
Յովսէփ
Նախահայր 42
Արեմաթացի 96
Յորդանան 8, 106, 157, 188, 192, 196, 211
Յունան (Յօնան) 4, 68

Նեբրաւթ 173
Նեստոր 38, 167
Նինուէ 68
Նոյ 34, 57, 71, 90, 93, 221

Ոսկեբերան (Յովհան) 118

Պետրոս 5, 86, 139, 169, 174, 216
Պիղատոս 124
Պղատոն 209
Պօղոս (Պաւղոս) 28, 61, 79, 103, 174, 182
Պորփիւր 143
Պտղոմէոս 163

Սաբէլ 38
Սահակ (Իսահակ) 71, 75
Սամփսոն (Սամսոն) 42, 48
Սառայ 224, 225
Սեկունդոս 47
Սեփովր 196
Սինա 157, 173
Սիոն (Վերին Սիոն) 163, 173, 224
Սոդոմ 57, 64, 160, 170
Սողոմոն 21, 33, 34, 46-48, 53, 55, 95, 96, 101, 112, 120, 131, 137, 169, 204, 214, 222, 223
Սոմնաս 96
Սոռնոբայ 193
Սոփար (Սովփար) 4, 5, 64, 66-68, 89
Ստեփանոս (Սիւնեցի) 142

Տիւ 223

Քաղկեդոն 167
Քանան 214
Քրիստոս 3, 5, 6, 8, 9, 11, 13, 14, 19-21, 25, 28-35, 38, 40, 49, 53, 61, 63, 64, 68, 70-72, 75-77, 82, 83, 85-87, 95-97, 99, 101, 105-107, 116-118, 120, 125, 135, 136, 146, 157, 160, 164, 166, 175, 176, 182, 183, 190, 192-194, 198, 199, 201, 202, 208, 211, 213, 215-218, 220, 221, 224, 226-228

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան V

Աշակերտի Եռամեծի Յովհաննու Որոտնեցւոյ Նորին Գրիգորի համառօտ լուծմունք դժուարիմաց բանից ի մեկնութիւն գրոցն Յոբայ եւ ի բանս մեկնչաց 1

Այս ինչ է ի լուծմունս գրոց մեկնութեանն Յովբայ.....3

Աշակերտի Եռամեծի Յովհաննու Որոտնեցւոյ Նորին Գրիգորի համառօտ լուծմունք դժուարիմաց բանից ի մեկնութիւն գրոցն Յոբայ եւ ի բանս մեկնչաց.... 10

Նորին քարոզ վասն փորձութեանց մեղաց ի բանն Յոբայ, որ ասէ. վեցից վշտաց փրկեսցէ զքեզ, եւ յեւթներորդումն ոչ մերձեսցի առ քեզ չար 24

Նորին քարոզ վասն փորձութեան եւ չարութեան կանանց ի բանն Յովբայ. իբրեւ զմի ի կանանց անզգամաց խօսեցար 36

Բ. Կրկնեալ անդրէն Յոբայ 50

Գ. Կրկնեալ անդրէն Յոբայ 57

Դ. Կրկնեալ անդրէն Յոբայ, չորրորդ ճառս յայտնի եւ հինգերորդ՝ ըստ կարգի..... 67

Ե. Կրկնեալ անդրէն Յոբայ ճառս այս հինգերորդ է յայտնի եւ վեցերորդ՝ ըստ կարգի..... 75

Զ. Կրկնեալ Յոբայ ասէ վեց ճառս Յոբայ յայտնի եւ եօթն՝ ըստ կարգի 84

Է. Կրկնեալ Յոբայ եւթն ճառն յայտնի եւ ութերորդ՝ ըստ կարգի 92

Ը. Կրկնեալ Յոբայ ութերորդ ճառս յայտնի ունի զխորհուրդ ութերորդ աւուրն 99

Թ. Կրկնեալ անդրէն Յոբայ իններորդ ճառս աստուածաբանութեան, աւարտեալ զխորհուրդ ութերորդին..... 108

Ժ. Կրկնեալ Յոբայ տասներորդ ճառս 112
Կրկնեալ Յոբայ, ճառս այս արտաքոյ թուոյ է,
վասն որոյ համարք ոչ ունի 123
ԺԱ. Վասն դատաստանին Աստուծոյ..... 186
ԺԲ. Կրկնեալ Յոբայ վասն կամաց եւ
կարողութեան Աստուծոյ..... 212
Հավելված..... 231
Աստվածաշնչյան տեղիների ցանկ 234
Անձնանունների եւ տեղանունների ցանկ.....239

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՅՈԲԱՅ

Աշխատասիրությամբ Էլյա Սարիբեկյանի

GRIGOR TATEVATSI

COMMENTARY ON THE BOOK OF JOB

Edition of the Armenian text, Introduction and Notes

by Elya Saribekyan

Սրբագրումը՝ Ա. Քոչարյանի
Համակարգչային ձևավորումը՝ Ա. Մարուքյանի
Շապիկի ձևավորումը՝ Ա. Խանզադյանի
Շապիկին՝ ՄՄ 2627 գրչագիր

ISBN 978-9939-897-28-8

9 789939 897288

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտի հրատարակչական բաժին
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (+374) 10 513033
publishing.matenadaran@gmail.com
Տպագրվել է «Copy Print» տպագրատանը:
Չափը՝ 60×84 1/16: Ծավալը՝ 18,5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 150 օրինակ: